


Յ. ՔԱՋԱԶՆՈՒՆԻ

ԱԶԳ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

ԱԶԳ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ

ՄԱՏԵՆԱՀԱՐ
Հ. Յ. Դ. ՋԱՀԱՐԵԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ԹԻՒ 4

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՔԱՋԱԶՆՈՒՆԻ

ԱՋԳ

ԵՒ

ՀԱՅՐԵՆԻՔ

1979
Պէյրութ

Յ. Քաջազնունիի «*Ազգ եւ Հայրենիք*» աշխատասիրութիւնը առաջին անգամ սկսած է տպուիլ «*Հայրենիք*» ամսագրին մէջ, ուր առաջին իսը գլուխները լոյս տեսած են Մայիս–Յուլիս 1923–Յունուար 1924 թիւերուն մէջ, մնալով անաւարտ:

Հետագային, 1965ին, Քաջազնունիի անտիպ գրութիւնները (պատմուածքներ, յուշեր, յօդուածներ, նամակներ) «Համազգային»ի կողմէ հրատարակուեցան «*Ցեղս Մահու*» անունով հատորով, զոր հրատարակութեան պատրաստեց Ս. վրացեան:

«*Ցեղս Մահու*» հատորին մէջ տպագրուած է նաեւ «*Ազգ եւ Հայրենիք*» աշխատասիրութեան շարունակութիւնը, զոր կու տանք այս հատորին մէջ, Ս. վրացեանի կողմէ գրուած ծանօթագրութեամբ միասին (էջ 269):

Ուրեմն, ներկայ հրատարակութիւնը կ'ընդգրկէ Յ. Քաջազնունիի աշխատասիրութեան ամբողջութիւնը:

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Իբրեւ Ուսանողական Միութիւն, եւ առաւել իբրեւ դաշնակցական ուսանողներ, մենք լաւագէս կը գիտակցինք, թէ յատկապէս հայ երիտասարդութիւնը գաղափարական ինչպիսի դժուարութիւններ կը դիմակալէ ու փոխարէնը գաղափարական ինչպիսի մթնոլորտ մը կ'ապրի:

Քսաներորդ դարու ներկայ շրջանին, գաղափարներու հոլովոյթը եւ անոնց նկատմամբ կեցուածքներու բախումը գրաւած է միջազգային թատերաբեմը: Ծայրայեղ գաղափարներէն մինչեւ չափաւորական, նաեւ անտարբերութեան տանող տեսութիւններ կը շրջապատեն մեզ: Հայ երիտասարդութիւնը՝ առանց յստակ ուղղութեան եւ հունաւորումի, անտարակոյս ուծացումի եւ կորուստի կ'երթայ գաղափարական նման ճախճախուտի մէջ:

Անշուշտ, մեր համեստ աշխատանքով, նման կացութիւն մը հիմնովին յեղափոխելու յաւակնութիւնը չունինք: Սակայն կը հաւատանք, որ կա-

րեւորը ձգտումն է, եւ իբրեւ այդպիսին, առաջին քայլերը՝ նախապայման են:

Ճիշդ այս մտահոգութեամբ կը հրատարակենք Յովհաննէս Քաջազնունիի «Ապգ եւ Հայրենիք» աշխատասիրութիւնը, որուն մէկ բաժինը լոյս տեսած է «Հայրենիք» ամսագրին մէջ յաջորդական թիւերով 1923 Մայիսէն մինչեւ 1924 Յունուար, եւ մէկ մասը աւելի ուշ, Քաջազնունիի «Յետ Մահու» հատորին մէջ, զոր խմբագրած է Ս. Վրացեան:

«Ապգ եւ Հայրենիք» աշխատասիրութիւնը ի մի խմբելով, կ'ուզենք հայ երիտասարդութեան փոխանցել այնքան չարչարուած, սխալ ըմբռնուած եւ չարափոխուած ապգութեան եւ հայրենիքի գաղափարի դաշնակցական մտաւորականի մը մօտեցումը...

Գիտական նոր հետազօտութիւն մը չէ այս աշխատանքը, ոչ ալ գոյութիւն ունեցող ուսումնասիրութիւններու համադրումը: Այսուհանդերձ, հեղինակը կատարած է երկար փնտռտուք, հետեւած է ապգային բնոյթ ունեցող երեւոյթներուն իր շըրջապատին մէջ եւ դուրս, ապա երկար մտածումներէ ետք ծնունդ տուած է այս հատորին:

Բնականաբար պակասաւոր եւ երբեմն ալ տըկար հիմնաւորումներու գաղափարներ վարգաց-

ուած են Քաջազնունիի կողմէ: Մանաւանդ վերջին երկու բաժիններու մէջ, ան սահմանումներ յառաջ նետած է, որոնք կը կրեն անիշխանական բնոյթ: Այդ ժամանակ արդի Հայաստանի նախկին վարչապետը իր կապերը խզած էր Հ. Յ. Դաշնակցութեան հետ, եւ հասկնալիօրէն դարձած աւելի ծայրայեղ:

Հակառակ այս իրողութեան, աշխատասիրութիւնը կու տանք ամբողջութեամբ, առանց յապաւումի կամ սրբագրութեան, ձգելով որ մեր երիտասարդ մտաւորականութիւնը իր ըսելիքը ունենայ արտայայտուած գաղափարներու շուրջ:

Կը հաւատանք կատարուած ուսումնասիրութեան օգտակարութեան: Թող ան խթան հանդիսանայ երիտասարդներու մօտ գաղափարներու եւ կեցուածքներու բախումի, եւ այդ ճամբով բիւրեղացման:

Հ. Ց. Դ. ԶԱՒԱՐԵԱՆ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ



Ձախէն աջ՝ Լ. Շանթ, Յովհ. Տէվէճեան,
Յովհ. Քաջազնունի եւ Ս. Վրացեան,
1922ին, Եգիպտոս

Ա.

Ի՞նչ է ազգը:

Բառը շատ սովորական է արդի (ինչպէս եւ հին) հայերէնի մէջ, մինչ մեր չրթունքների վրայ: Գրքերում ու լրագրներում շարունակ կարդում ենք «ազգի» մասին, շարունակ լսում ենք ուրիշներից եւ ինքներս շարունակ գործածում «ազգ», «ազգութիւն» ու «ազգային» բառերը:

Եւ շատ կը զարմանանք, եթէ մէկը հարցնի՝ ի՞նչ ասել է «ազգ»:

Մեզ թւում է, թէ շատ լաւ հասկանում ենք այդ ամենասովորական բառը: Եւ թւում է այդպէս հե՛նց այն պատճառով, որ սովորական է այն: Մեր ականջը մանկութիւնից վարժուել է բառին, — այնքան է վարժուել, որ նա այլեւս չի զրաւում մեր ուշադրութիւնը, չի արթնացնում կասկածող, որոնող ու քննող միտքը:

Մեզ թւում է, որ երբ ասում ենք «ազգ», գիտենք, թէ ինչի՞ մասին ենք խօսում եւ թէ մեզ լսողն էլ ճիշդ մեզ պէս է հասկանում բառը:

Բայց, եթէ մի օր նեղն ընկնենք, հարկադրուած լինենք հաչիւ տալու մեզ, լրջօրէն վերլուծելու ու տառապելու մեր ունեցած հասկացողութիւ-

նը, կը տեսնենք, — թերեւս մեծ զարմանքով, — որ այդ հասկացողութիւնը չատ էլ յստակ չէ, որ նա բաւականին աղօտ է ու անորոշ, կասկածելի ու վիճելի:

Զարմանալու բան չկայ սակայն. «ազգ» կոչուած հաւաքականութիւնը այն բարդ միութիւնն է ու «ազգ» գաղափարը այն բարդ գաղափարներից, որոնք չատ դժուար է քնորոշել եւ մանաւանդ դժուար է ամփոփել մի ֆորմիւլի մէջ:

Եւ այս դժուարութեան առաջ կանգնած են ոչ միայն սովորական մարդիկ, այլ եւ գիտնականները, որոնք տարբներ ու տարբներ նուիրել են հարցի ուսումնասիրութեան:

Երեւոյթի ու գաղափարի բարդութեան պատճառով, տարբեր մարդիկ (նոյնիսկ գիտնական մարդիկ) տեսել են ու ըմբռնել նրանց տարբեր տարրերը միայն, անգիտակցելով կամ հարկաւոր արժէքը չտալով միւս տարրերին: Այսպիսով ծնունդ են առել միակողմանի, միմեանցից տարբերուող, նոյնիսկ միմեանց հակասող եւ յամենայն դէպս ոչ-լրիւ մեկնութիւններ: Առաջ է եկել մաքի չփոթ ու փոխադարձ անհասկացողութիւն այնտեղ, ուր թւում էր՝ ամէն բան պարզ է ու հասկանալի:

Շփոթը այնքան մեծ է, որ նոյնիսկ առիթ է տուել կասկածելու, թէ կա՞յ արդեօք այն հաւաքական իրը կամ այն երեւոյթը, որ «ազգ» ենք անուանում:

Եղել են հետազօտողներ (այսօր էլ կան), որոնք՝ ուղղակի կամ անուղղակի, աւելի կամ պակաս վճռականօրէն՝ հերքել են ազգերի գոյութիւնը. կամ — առնուազն — յայտարարել են այն չատ վիճելի: Israel Zangwillը, օրինակ, կարծում է, որ «ազգ» կամ «ազգութիւն» բառերը չեն արտայայտում որեւէ իրականութիւն: Պրոֆեսոր Santayannaն համարում է ազգը մի տեսակ պատահականութիւն, անցողակի ու աննշան երեւոյթ: Իսկ M. T. M. Robertsonը ուղղակի ասում է, որ «ազգ» անուանուած բանը ցնորք է...:

Ազգերը, ազգային բաժանումները, ազգային հատկանիշները չկան իրականութեան մէջ, ասում են այս կարգի մտածողները: Իսկ եթէ կան, արտայայտուած են այնքան անորոշակի, սահմանուած են այնպիսի երերուն, անկայուն ու փոփոխակի սահմաններով, որ պատահական ու մի անգամայն անարժէք երեւոյթներ են մարդկային համակեցութեան մէջ: Ազգը մասամբ փիկցիա է, ցնորք, մասամբ էլ (եւ խոշոր չափերով) խաբկանք, արհեստականօրէն հնուած ու նորընչուած զաղափար:

Մի կողմից — ասում են — տգէտ մարդիկ, չկարողանալով ըմբռնել երեւոյթների իսկական էութիւնը, «ազգ» են անուանել տարբեր բնոյթ ունեցող մարդկային համակցութիւնները: Իսկ միւս կողմից՝ ճարպիկ մարդիկ, — օրինակ, տիրող դասակարգերը (անցեալում՝ ազնուականու-

թիւնն ու հոգեւորականութիւնը, ներկայում՝ բուրժուազիան) — օգտուելով ժողովրդային զանգուածների տգիտութիւնից, դիտակցօրէն մեծ արժէք են տուել անարժէք գաղափարին, գոյութիւն չունեցող բաժանումներ են յօրինել ու արհեստականօրէն մտցրել մարդկային ընկերակցութիւնների մէջ, որպէսզի հակառակութիւններ առաջ բերեն եւ այդ հակառակութիւնների վրայ յենուած՝ ամրացնեն իրանց դասակարգային իշխանութիւնը:

Եթէ «ազգը» թիւրիմացութիւն կամ նախապաշարմունք չէ, եթէ ազգային միութիւնները իրօք գոյութիւն ունեն, ապա ուրեմն նրանք կապուած պիտի լինեն այնպիսի կապերով, որոնք յատուկ են միայն «ազգ» անուանուած հաւաքական մարմիններին եւ յատուկ չեն ուրիշ կարգի պատկանող, ուրիշ անուններ կրող միութիւններին:

Արդ, որո՞նք են այդ կապերը, որո՞նք են ազգային յատկանիշները: Ուրիշ խօսքով՝ ի՞նչ է ազգ կոչուած հաւաքականութիւնը:

Եւ դրութեան դժուարութիւնը հենց նրանումն է, որ եթէ քննութեան առնենք մի առ մի այն բոլոր յատկանիշները, որոնք վերագրուել են ու վերագրւում են «ազգ» երեւոյթին, կը տեսնենք, որ նրանք իրօք հեռու են գոհացուցիչ լինելուց: Ճաճախ խառնում են իրար տարբեր գաղափարներ, մի բան աւելի են տալիս կամ մի բան պակաս, չատ լայնացնում են կամ չատ նեղացնում ազգային սահմանները եւ վերջի հաշուին չեն տալիս

հարցին մի պարզ ու լրիւ, որոշակի ու անվիճելի պատասխան:

***

Փորձենք վերլուծել «ազգային» անուանուած տարրերն ու յատկանիշները, տեսնենք, թէ ո՞ր աստիճանի «ազգային» են նրանք եւ թէ ի՞նչ առարկութիւններ կարելի է ունենալ նրանց դէմ:

Բ.

I

Ամէնից աւելի տարածուած հասկացողութիւնը հետեւեալն է.

Ազգը այնպիսի հաւաքական միութիւն է, որի անդամները — ազգը կազմող մարդիկ — կապուած են միմեանց հետ արիւնակցական, ազգակցական կապերով, սերունդ են ընդհանուր նախահայրերի: Ուրիշ խօսքով՝ ազգը բազմացած ընտանիք է, աւելի կամ պակաս հեռաւոր ազգականների միութիւն:

Գիտնական մարդիկ վաղուց արդէն հրաժարուել են այս բացատրութիւնից, բայց լայն զանգ-

ուածների հասկացողութեան մէջ սա մինչեւ այսօր էլ մնում է գերիչխող:

Դժուար չէ նկատել, որ այստեղ «ազգ» գաղափարը սպարզապէս չէ զուգադիպում է «ցեղ» կամ «տոհմ» գաղափարի հետ:

Բայց ազգային միութիւնը ցեղային միութիւն չէ եւ ազգը ցեղ չէ, հակառակ նրան որ մեր հրապարակախօսները ու բանաստեղծները (առաւելապէս արեւմտահայերը) շատ յաճախ «ազգ» եւ «ազգային» բառերի փոխարէն գործադրում են «ցեղ» ու «ցեղային» բառերը:

Եթէ ազգը ցեղ լինէր, — իսկապէս որ ժամանակակից քաղաքակիրթ ազգերի գոյութիւնը շատ վիճելի կը դառնար:

Վերցնենք մի ինքնատիպ, լաւ արտայայտուած ու որոշակի կազապարուած ազգ, — անգլիական ազգը, օրինակի համար:

Ո՞րն է այդ ազգի ցեղային միութիւնը, — ո՞րն է անգլիական ազգային արիւնը:

Նախապատմական ժամանակներից բրիտանական կղզիների վրայ ապրել են զանազան կելտական ցեղեր, — անգլերը, բրիտները, սկոտները, պիկտերը: Պատմութեան արշալոյսին եկել են հեռաւոր հարաւ-արեւելքից, Միջերկրականի աւազանից, հռոմէական աշխարհակալները, կռուել են տեղացիների հետ, տիրել են երկրի մի մասին, նստել են այստեղ, խառնուել բնիկների հետ: Ապա եկել են հիւսիսից, Սկանտինաւեան թերակղզուց

ու Դանեմարքից, նոր ցեղեր, ապա եկել են Սաքսոնները գերմանական անտառների խորքերից, ապա՝ նորմաննները Ֆրանսիական ափերից... Կելտական, գերմանական ու լատինական մեծ ցեղերին պատկանող զանազան հատուածներ — անգլերը, բրիտները, սկոտները, հռոմէացիները, նորվեգիացիները, դանեմարքցիները, սաքսոնները, նորմաններ — չերտաւորուել են յաջորդաբար, դարերի ընթացքում, իրար վրայ խառնուել են միմեանց եւ տուել են ցեղայնօրէն բազմապիսի մի սերունդ, որից կազմուել է այսօրուայ անգլիական ազգը:

Եւ այսօր էլ դեռ չի դադարել, դեռ այսօր էլ չարունակւում է ցեղերի խմորումը: Ճիշդ է, բրիտանական կղզիները դարերից ի վեր չեն ենթարկուած նոր նուաճումների, զանգուածային նոր տեղափոխութիւններ այլեւս չեն կատարուած այս երկրում: Բայց, չնորհիւ միջ-ժողովրդական յարաբերութիւնների զարգացման ու հաղորդակցութիւնների հեշտացման, մի կողմից, եւ անգլիական ազգի աչխարհակալութեան միւս կողմից, — այսօր էլ բազմաթիւ անգլիացիներ կապւում են ամուսնական կապերով ոչ-անգլիացիների հետ եւ նոր բարդութիւններ են մտցնում իրանց «ազգային արեան» մէջ, որ առանց այն էլ չատ բարդ է արդէն:

Եթէ անգլիացու անգլիացի լինելը ուզենանք հիմնաւորել ու հաստատել նրա «անգլիական ա-

քիւնով» մէյն, անյաղթելի դժուարութիւնների կը հանդիպենք:

Անգլիայում կայ այսօր ազգային մի շատ ուրոյ մշակութիւն, բայց ցեղային մշակութիւն չկայ: Կարելի է եւ պէտք է ընդունել իբրեւ փաստ անգլիական մեծ «ազգը», բայց խօսք չի կարող լինել անգլիական «ցեղի» մասին: Անգլիական ազգ կայ, բայց անգլիական ցեղ գոյութիւն չունի:

Մի ուրիշ օրինակ, — հայ ազգը:

Ո՞րն է մեր ցեղային կազմը: Հաւանականօրէն՝ հետեւեալը.—

Շատ հին ժամանակներում (Ք.ից աւելի քան տասը դար առաջ) Ուրարտու կոչուած երկրի մէջ — վանայ լճի աւազանից մինչեւ մէջլին Արաքսի (դուցէ եւ Սեւանի) աւազանը — ապրել է մի խալդիական մեծ ժողովուրդ, թերեւս հաւուած մի ուրոյն ցեղի, որ պրոֆ. Ն. Մառը «յարէթականե» է անուանում: Ուրարտացի խալդերը մշտական պատերազմների մէջ են եղել իրենցից հարաւ-արեւելք ապրող ասորացիների ու բաբելացիների հետ, յաճախ մեծաքանակ գերիներ են բերել այդ տաք տափարակներից կամ իրանք նուաճուել տափաստանների բնակիչներից եւ երկու դէպքումն էլ՝ խառնուել են նրանց հետ:

Ապա (Ք. Ա.ից մօտ վեց դար առաջ) մի մեծ մարդկային հոսանք — այս անգամ արիական (հնդեւրոպական) ցեղի — եկել է Ուրարտու աշխարհը հեռու արեւմուտքից, Բալկանեան թերա-

կղզիից ու Փրիւդիայից, նուաճել է երկիրը, նըստել այստեղ ու խառնուել բնիկների հետ:

Ահա այս յաբէթական (քալդէական) ու արեւական ցեղերի պատկանող ժողովուրդների խառնուրդն է, որ մեր պատմութեան նախօրեակին հիմն է դրել ապագայ հայ ազգին:

Հետագայում — արդէն պատմական շրջանում — մեր երկիրը մշտական կայան է եղել ցեղերի ու ժողովուրդների չարժման մեծ ճամբու վրայ: Ո՞վ ասես, որ չի տրորել իր ոտների տակ հայկական բարձրաւանդակը: Հայաստան մտել են, Հայաստանի վրայով անցել, մասամբ նստել ու ճուլուել են տեղացիների հետ՝ յաջորդաբար, տարբեր ժամանակներում՝ չատ տարբեր ժողովուրդներ, — պարսիկներ, պարթեւներ, միդիացիներ, ալաններ, քուրդեր, հրեաներ, հռոմէացիներ, բիւզանդական յոյներ, արաբներ, վրացիներ, թուրք-թաթարական ցեղեր...

Սրանք բոլորը խառնուել են իրար, — խառնուել են ոչ թէ միակերպ ու հաւասար չափերով՝ միագոյն բարդ արիւն կազմելու համար, այլ տարբեր շրջաններում տարբեր բաղադրութիւններով ու տարբեր չափերով եւ կազմել են ցեղային չատ տարբեր, չատ բազմերանգ խառնուրդներ:

Եթէ որեւէ տեղ (եկեղեցիում, թատրոնական սրահում, չուկայում, ուխտատեղիում, հրապարակական միտինգում) հաւաքուած են մի քանի հարիւր հայ մարդ, — ուշադիր դիտողը կը դտնի

այդ բազմութեան մէջ մի քանի տարբեր ցեղային տիպեր, աւելի կամ պակաս չեչտուած (մանաւանդ եթէ հաւաքուածները զանազան վայրերից են). տարբեր դիմագծեր, դանկերի տարբեր ձեւեր, մորթու եւ մազերի տարբեր գոյներ, աչքերի ու շրթունքների տարբեր նկարներ: Մէկը յոյնի է նման, միւսը՝ վրացու, երրորդը՝ հրեայի, չորրորդը՝ ասորու, քուրդի... բայց եւ այնպէս՝ բոլորն էլ հայ են:

Ես ունէի մի շատ հետաքրքրական հաւաքածու՝ մի քանի տասնեակ լուսանկարներ իսկական հայ մարդկանց, որոնք ներկայացնում էին շատ տարբեր ցեղային տիպեր:

Եթէ հնարաւոր լինէր ենթարկել մարդկային արիւնը ցեղային վերլուծման, շատ հաւանական է, որ ամէնից աւելի չեչտուած, իսկական ու անվիճելի «հայ-քրիստոնեայի» երակների մէջ հետազօտողը գտնէր աւելի քրդական կամ պարսկական արիւն, քան հայկական:

Ի՞նչպէս որոշել ազգային պատկանելութիւնը այն մարդու, որի ծնողները տարբեր ազգերի զաւակներ են. ի՞նչպէս անուանել մէկին, որի հայրը անգլիացի է, մայրը՝ ֆրանսուհի, — արդեօք անգլօ-ֆրա՞նկ... բայց այդպիսի ազգութիւն չկայ: Իսկ, եթէ անգլօ-ֆրանկը անզգուշութիւն արաւ մի զաւակ ունենալու գերման-իտալուհի կնոջից, ի՞նչ անուն տալ այդ խեղճ փոքրիկին, — արդեօք անգլօ-ֆրանկօ-իտալօ-գերմա՞ն ան-

ուանել. կամ ասել թէ նա ոչ մի ազգութեան չի պատկանում, ազգային միութիւններից դուրս է, ազազգային է... Իսկ եթէ բախտի կատակով այդ խառնուրդ արարածի անունն է Դերուլեդ կամ Տրեօչկէ, Մուսսոլինի կամ Մուստաֆա Քեմալ, Մկրտ. Արիմեան կամ Ֆ. Դոստոեւսկի, — դարձեա՞լ ասել, որ նա ազազգային է:

Ռուսական հանգուցեալ ցար Նիկոլայը, գերմանական նախկին կայսր Վիլհելմը եւ Անգլիայի Գէորգ Ե. թագաւորը արիւնով չատ աւելի մօտ են իրար, քան իրանց ազգակից ռուսներին, գերմաններին ու անգլիացիներին: Արդ, եթէ կարելի է կասկածի ենթարկել Նիկոլայի ազգային տիպը, նրա ռուս լինելու աստիճանի բարձրութիւնը, յայտնի դէպս ոչ ոք չի կասկածի, թէ Գէորգ Ե. թագաւորը իսկական անգլիացի է եւ թէ մանաւանդ Վիլհելմ Բ. իսկական, անվիճելի ու չատ գունաւորուած գերմանացի է:

Արիւնը չէ (աւելի ճիշդը՝ միայն արիւնը չէ), այլ մի ուրիշ՝ արիւնից աւելի զօրեղ բան կայ, որ անում է Վիլհելմին իսկական գերմանացի եւ սեմիթական ըրթունքներ ունեցող մի հայ մարդուն՝ իսկական հայ:

Իրականութիւնն այն է, որ ժամանակակից քաղաքակիրթ մարդկութեան մէջ արիւնակցական միութիւնների, ցեղային հաւաքականութիւնների մասին կարելի է խօսել մեծ վերապահումներով միայն:

Շատ հին ժամանակներում, երբ բացակայում էին հաղորդակցութեան մատչելի միջոցներ եւ հաղորդակցուելու կարիքն էլ չնչին էր, երբ մարդկութիւնը ապրում էր միմեանցից կտրուած, անջատ հատուածներով (ինչպէս ապրում են այսօր վայրենի ժողովուրդները Ափրիկէի խորքերում կամ Մեծ Ովկիանոսի կղզիների վրայ), — այն հին ժամանակները թերեւս գոյութիւն ունէին ցեղային ինքնատիպ, անխառն ու որոշակի սահմանուած ցեղային միութիւններ:

Բայց այն հին ժամանակներում (ինչպէս ներկայում վայրենիների մէջ) ազգեր չկային, ազգային հաւաքականութիւններ դեռ չէին կազմուած: Ազգերը ծնունդ են առել միայն պատմական չրջանում, քաղաքակրթութեան որոշ բարձրութեան վրայ, — այսինքն՝ այն ժամանակ, երբ վաղուց արդէն խախտուած էին ցեղային միութիւնները:

Եւ այսօր, ցեղային կազմը ինքնըստինքեան չի կարող բացատրել «ազգի» էութիւնը եւ առաւել եւս չի կարող սահմանել «ազգ» գաղափարը:

Ցեղը ազգ չէ եւ ոչ էլ ազգը՝ ցեղ:

II

Եւրոպական լեզուների մէջ «ազգ» բառին տրւում է յաճախ պետական իմաստ. ազգը (Ֆը-

բանաբէնն nation, լատինական natio բառից) հասկացում է իբրեւ պետութիւն կազմող ժողովուրդ, պետութեան քաղաքացիների կամ հպատակների հաւաքականութիւն:

Գաղափարների մէջ տարբերութիւն մտցնելու համար 18րդ դարի վերջերում, ֆրանսիական մեծ յեղափոխութեան ժամանակ, գործածութեան մէջ դրուեց «ազգութիւն» բառը, — nationalité (national բառից, որ ինքը nationի ածականն է): Իսկ նորերումս գիտնականները (R. Yohannet) յօրինել են նոյնիսկ nationalitaire ածականը՝ national ածականից տարբերելու համար:

Բայց բառերի ձեւափոխումը չի վերացրել գաղափարների չփոթը: Այսօր էլ nationalité բառը չունի հայերէն «ազգի» իմաստը, այսինքն՝ չի նշանակում մարդկային մի ուրոյն միութիւն, այլ նշանակում է՝ կամ nationին պատկանող յատկութիւնների գումար կամ նոյնինքը nation: Իսկ nationի իմաստը մնում է նոյնը, ինչ եղել է 18րդ դարում, այսինքն՝ պետութիւն կազմող մարդկանց հաւաքականութիւն: Կան հեղինակներ (Ramsay Muir), որոնք այսօր էլ ոչ մի տարբերութիւն չեն դնում nation ու nationalité (ազգ ու ազգութիւն) բառերի միջեւ: Իսկ Encyclopaedia Britanicaն (աշխարհահռչակ Բրիտանական Բառարանը) ազգութիւն բառին (անգլիերէն՝ nationality) տալիս է — իբրեւ առաջի մեկնութիւն — ճիշդ նոյն իմաստը, ինչ որ ունի ֆրանսիական nationը:

Ֆրանսիացու համար la nation francaise առել է պարզապէս Ֆրանսիահպատակ ժողովուրդ եւ le francais — Ֆրանսիական հանրապետութեան քաղաքացի: Ազգութիւնը որոշւում է պետական պատկանելիութիւնով:

Բառի այս իմաստով, մինչեւ 1918 թուականը հայ ազգը գոյութիւն չունէր, ինչպէս գոյութիւն չունէր նաեւ հայ մարդը. Ֆրանսիացու համար տաճկահայը le turc էր, ռուսահայը՝ le russe եւ պարսկահայը՝ le persan:

Տարիներ առաջ ես փորձ եմ արել բացատրելու մի ոչ-ազէտ Ֆրանսիացու, որ հայ եմ, ռուս չեմ, — եւ յայտնութիւն չեմ ունեցել: Ազգութեան գաղափարը, նոյնիսկ ծագումը Ֆրանսիային կապում է անքակտելիօրէն պետական գաղափարի հետ:

Փարիզի ատելութիւնը մի յատուկ բաժանմունք ունի, ուր պարտաւոր են արձանագրուել բոլոր օտարականները: Այդ հիմնարկութեան մէջ ձեր nationalité-ն արձանագրւում է ըստ ձեր անցագրի, որ պետութեան անցագիր որ ունիք ձեռներումդ, այն ազգութեան էլ պատկանում էք:

Վերսայլի դաշնագրով հիմնադրուած la Ligue des Nations-ը իրօք nation-ների (ազգերի) դաշնակցութիւն չէ, այլ պետութիւնների դաշնակցութիւն: Եթէ այդպէս չլինէր, Լիգին չէին մասնակից Հարաւային Ափրիկէի կամ Զուիցերիական դաշնակցութիւնները, չէին հրաւիրուի մաս-

նակցելու Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, եւ, դրան հակառակ, կը հրաւիրուէին իրլանդացիները, Ֆլամանդները, հրեաները, բասկերը, որոնք «ազգեր» են, թէեւ պետութիւններ չեն կազմում:

Գաղափարների չփոթը բխում է այն սխալ ենթադրութիւնից, թէ ամէն մի ազգ կազմում է մի առանձին պետութիւն եւ ամէն մի պետութիւն կազմուած է մի առանձին ազգից, — այսինքն՝ պետութիւնը ուրիշ բան չէ, քան կազմակերպուած ազգ եւ ազգը ուրիշ բան չէ քան պետական միութիւն:

Իրականութիւնը այդ չէ, սակայն:

Անշուշտ, կան պետութիւններ ու ազգեր (եւ դա մեծ բախտաւորութիւն է), որ բաւականին մօտ են այդ իդէալական տիպին: Օրինակ՝ Ֆրանսիան, Իտալիան, Սպանիան, Շուէդիան, Նորվեգիան... Այս պետութիւնները կարելի է անուանել — աւելի կամ պակաս վերապահումներով — ազգային կամ միազգեան պետութիւններ: Կարելի է ասել, — զարձեալ որոշ վերապահումներով, — թէ Ֆրանսիան կամ Շուէդիան կազմող քաղաքացիները պատկանում են համարեա ամբողջովին Ֆրանսիական եւ Շուէդական ազգերին: Եւ միւս կողմից, Ֆրանսիական ու Շուէդական ազգերը կազմող համարեա բոլոր զանգուածները մտնում են Ֆրանսիական ու Շուէդական պետութիւնների մէջ:

Այս տիպի պետութիւնները կազմուած են մօտաւորապէս մէկ ազգից միայն եւ այս կարգի ազգերը համարեա ամբողջովին պարփակուած են մէկ պետութեան մէջ միայն: Ազգային եւ պետական սահմանները նոյնն են համարեա եւ համապատասխան գաղափարները մօտաւորապէս ծածկում են իրար:

Բայց միազգեան պետութիւնների կողքին գոյութիւն ունեն նաեւ բազմազգեան պետութիւններ եւ այստեղ արդէն անվիճելիօրէն հանդէս է գալիս «ազգ» եւ «պետութիւն» գաղափարների բացարձակ անկախութիւնը:

Թիւրքիան, Ռուսիան ու Աւստրօ-Հունգարիան մեծ պատերազմից առաջ, իսկ Բրիտանական կայսրութիւնը, Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները եւ Զուիցերիական Դաշնակցութիւնը նաեւ այսօր — բազմազգեան պետութիւններ էին ու են:

Օսմանեան կայսրութեան մէջ, օսման թուրքերի հետ միասին, մտնում էին նաեւ արաբներ, առնաուտներ, չերքէզներ, քուրդեր, յոյներ, հայեր, հրեաներ... Սրանք բոլորն էլ տարբեր ազգեր են, թէեւ պարփակուած էին մէկ պետական չրջանակի մէջ:

Ռուսական լայնածաւալ կայսրութեան մէջ, բացի ռուսներից ու իրենց ազգակից ուկրայինացիներից, մտնում էին նաեւ Ֆիններ, լեռոններ, լատիշներ, լիտուանացիներ, լեհեր, հրեաներ,

թուրքերը, կիրգիզները, սարթերը, չերքէզները, լեզգիները, վրացիները, հայերը, գերմանացիները... Սրանք բոլորն էլ հպատակ էին մեւնոյն ռուսական պետութեան, բայց ոչ մի ազգային կապակցութիւն չունէին ոչ իրար մէջ, ոչ էլ ռուսերի հետ:

Հարսբուրգների կայսրութեան մէջ, բացի գերմաններից ու հունգարներից, մանում էին նաեւ չեխեր, սլաւոններ, իտալացիներ, խրուատներ, ռուսիններ, լեհեր, հրեաներ... Դարձեալ՝ բազմազան ազգեր նոյն պետական կազմի մէջ:

Նոյնը եւ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգներում (անգլիացիներ, իրլանդացիներ, գերմանացիներ, իտալացիներ, մեքսիքացիներ, հնդիկներ, նեգրեր, հրեաներ...)

Նոյնը եւ փոքրիկ Զուիցերիայում (գերմանացիներ, ֆրանսիացիներ, իտալացիներ):

Որո՞նք են այս պետական միութիւնները կազմող ազգային միութիւնները:

Զուիցերիական ազգ չկայ, ինչպէս չկան Հիւսիս-Ամերիկեան կամ Հարաւ-Ամերիկեան ազգեր: Կարելի է ասել՝ Ռուսիայի, Թիւրքիայի կամ Աւստրիայի հպատակները, քաղաքացիները, բայց չի կարելի ասել՝ Ռուսիայի ազգ, Թիւրքիայի ազգ, Աւստրիայի ազգ:

Իրական պետութիւնները (նոյնիսկ միազգեան համարուածները) պարփակում են իրանց մէջ —

բացի հիմնական, թուով գերիշխող կամ քաղաքականօրէն տիրապետող ազգից — նաեւ ուրիշ ազգեր, աւելի կամ պակաս մեծ զանգուածներով: Պետութիւնը մէկ է, բայց այդ պետութիւնը կազմող ազգերը — մէկից աւելի: Կան պետական միութիւններ, բայց այդ միութիւնների չորքանակում ազգային միութիւններ չկան:

Իրականութեան մէջ պետութիւնները ազգայնօրէն միատարը չեն, — նոյնիսկ այնպիսի ազգային պետութիւններ, ինչպէս որ են Ֆրանսիան, Սպանիան, Շուէդիան, Պրուսիան եւայլն: Եթէ Ֆրանսիայում ֆլամանդներն ու պրովանսալները վաղուց արդէն կլանուել են, ձուլուել տիրող ազգի մէջ, բրետոնները հիւսիս արեւմուտքում եւ բասկերը հարաւ-արեւմուտքում մինչեւ այսօր էլ պահել են իրենց ազգային անհատականութիւնը: Սպանիան մասամբ կոտորել, մասամբ արտաքսել ու մասամբ էլ ազգայնօրէն չէզոքացրել է մաւրերին ու հրեաներին. բայց բասկերը դեռ մնում են իրանց լեռների մէջ: Շուէդիայում բացի շուէդներից կան ֆիններ, ինչպէս եւ Պրուսիայում՝ բացի գերմաններից կային խոշոր զանգուածներով նաեւ լեհեր ու լիտուանացիներ:

Մի կողմից, միեւնոյն ազգը միեւնոյն ազգին պատկանող մարդիկ չափազանց բաժանուած են լինում տարբեր պետութիւնների մէջ:

Ֆրանսիական ազգին պատկանող հատուածները գոյութիւն ունեն նաեւ Ֆրանսիայի սահ-

մաններից դուրս, •րինակ՝ Զուիցերիայում (Ժընեւի, Վոյի եւ Նիւշատելի կանտոնները)· գերմանացիները՝ Աւստրիայում, Զուիցերիայում, Հիւսիսային Ամերիկայում, Ռուսիայում· անգլիացիները՝ նոյն Միացեալ Նահանգներում (եթէ հաշուի չառնենք Կանադան, Աւստրալիան կամ Նոր Զելանդիան, որոնք պետականօրէն դեռ մնում են կապուած Անգլիայի հետ, բայց արդէն կանգնած են անջատման ճամբու վրան)· սպանացիները ու պորտուգալացիները՝ կենտրոնական ու Հարաւային Ամերիկայի հանրապետութիւններում· Թուրքերը՝ Ռուսաստանում (Ղրիմ, Վոլգա, Թուրքեստան, Անդրկովկաս) ու Պարսկաստանում (Ադրպատական)...

Այսինքն՝ միեւնոյն ազգերը բաժանուած են տարբեր պետութիւնների մէջ· ազգային միութիւններ կան, բայց համապատասխան պետական միութիւններ չկան:

Ցետոյ՝ կան ազգեր, որ ոչ մի պետութիւն չեն կազմում (կամ չէին կազմում ամենամօտ անցեալում): Մեծ պատերազմից առաջ Ֆիններըը, լատիշները, էստոնները, լիտուանացիները, լեհերը, չեխերը, սլաւոնները, իրլանդացիները, հայերը, վրացիները չունէին պետութիւններ, ինչպէս չունեն մինչեւ այսօր բելգիական Ֆլամանդները, բրետոնները, բասկերը, քուրդերը, լապերը, չերքէզները, օսերը, լեզգիները, վոտեակները, բուրեատները եւ ուրիշ մանր ազգերը:

Ազգերը կային (ու կան), մինչդեռ համանուն պետութիւնները չկային (ու չկան):

Մի ուրիշ հանդամանք եւս. պետական սահմանները անկայուն են, ենթակայ ամէն տեսակ պատահարների ու յանկարծական փոփոխումներին, մինչդեռ ազգը չատ աւելի հաստատուն եւ տեւողական երեւոյթ է: Մի պատերազմի ու դաշնագրութեան հետեւանքով (իսկ անցեալում նաեւ վեհապետների ամուսնութեան պատճառով կամ ժառանգական կարգով) պետութեան սահմանները կարող են փոխուել մի օրուայ մէջ, բայց այդ սահմանների մէջ ապրող մարդիկ մնում են ազգայնօրէն նոյնը, ինչ որ եղել են:

Անգլիացի պատմաբան Greenը ասում է, որ պետութիւնը պատահական երեւոյթ է, որ հնչտութեամբ կարող է կազմուել ու լուծուել. մինչդեռ ազգը իրականութիւն է, որ ոչ կարելի է չինել, ոչ էլ քանդել:

Արտայայտութիւնը՝ իր կտրուկութեամբ, ճիշդ չէ. պետութիւնը պատահական երեւոյթ չէ եւ այնքան էլ հեշտութեամբ չի կազմուում. միւս կողմից՝ ազգութիւններն էլ չինուում են ու քանդըւում: Բայց անհերքելի է, որ վերջին պրոցեսների համար հարկաւոր են գերազանցօրէն մեծ ոյժեր եւ չատ երկար ժամանակ — դարեր ու սերունդներ:

Մեծ պատերազմից յետոյ, մի–երկու տարուայ ընթացքում, մի քանի դաշնագրերով, Եւրոպայի

ու Մերճաւոր Արեւելքի քաղաքական քարտէզը հիմնովին փոխուեց, մինչդեռ ազգագրական քարտէզը (բացառութեամբ թուրքական նահանգներու փոքր Ասիայում) մնաց նոյնը կամ համարեա նոյնը:

Ալզասի բնակիչները, որ 1870 թուականին համարում էին ֆրանսիացի, հօ չէի՞ն կարող յաջորդ տարին գերմանացի դառնալ եւ ապա՝ կէս դար գերմանացի լինելուց յետոյ՝ 1919 թուականին նորից ֆրանսիացիի վերածուել: Կարելի՞ է ընդունել, որ Թրակիայի թուրքը — մի մարդ, որ ամբողջ կեանքը թուրք է եղել ոտից մինչեւ գլուխ, հոգիով ու մարմնով, իր բոլոր բնազդներով, բոլոր հասկացողութիւններով ու հակումներով, իր ամբողջ ինքնագիտակցութիւնով — որ այդ թուրք մարդը՝ այսինչ քաղաքում այսինչ թուղթը ստորագրելուց յետոյ՝ յանկարծ հելլէն դառաւ (հելլէն ազգութիւնով եւ ո՛չ հպատակութիւնով) ու երկու տարի չանցած՝ Մուսթաֆա Քեմալ փաշայի յաղթութիւնների չնորհիւ՝ դարձեալ թուրքացաւ: Կարելի՞ է ընդունել, որ մինչեւ այսինչ թիւը լեհական ազգը գոյութիւն չունէր եւ մի գեղեցիկ օր՝ համաձայն այսինչ դաշնագրի՝ ծնունդ առաւ ու ասպարէզ իջաւ, կազմ ու պատրաստ:

Ի հարկէ, ազգերը անակնկալը չեն, ոչ էլ յաւիտենական: Ազգերը (ինչպէս եւ պետութիւնները) ծնւում են, ապրում, զարգանում, ծաւալւում ու մեռնում: Բայց — ասացի արդէն — այդ պրոցե-

սը կատարում է չատ դանդաղ եւ երբեք չի կարող նոյնացուել պետական կեանքի հետ:

Հետագայում կը տեսնենք, թէ ի՛նչ մեծ նշանակութիւն ունեն պետական կազմակերպութիւնները ազգերի զոյութեան համար: Բայց որքան էլ մեծ լինի այդ նշանակութիւնը, այնուամենայնիւ չի կարելի չտեսնել, որ ազգն ու պետութիւնը — տարբեր երեւոյթներ են, ազգային գաղափարն ու պետական գաղափարը — տարբեր գաղափարներ:

Ազգը պետութիւն չէ, ոչ էլ պետութիւնը՝ ազգ:

III

Պետական գաղափարի փոխարէն երբեմն առաջադրում է աշխարհագրական գաղափար եւ ազգային միութիւններին տրւում է territorial (երկրային) միութիւնների բնոյթ, — territorial անկախ պետական սահմաններից, որոնք յաճախ արհեստական են ու միչտ երերուն, մինչդեռ աշխարհագրական սահմանները բնական չըջանակներ են՝ երկիրն ու նրա վրայ ապրող մարդկութիւնը անջատ հատուածների բաժանելու համար:

Իրաւութիւն է, որ ազգերը յաճախ ստանում են իրանց անունները երկիրներից կամ՝ հակառա-

կը՝ իրանց անուններով կնքում են երկիրները։ Մեր հին պատմագրերն ու աշխարհագէտները առում են. Հայք, Վիրք, Աղուանք, որ նշանակում է՝ հայերի երկիր, վիրերի (վրացիների) երկիր, աղուանների երկիր։ Միւս կողմից, Ֆրանսիական ազգը ստացել է իր անունը Ile-de-France գաւառից, իտալականը՝ Իտալիա աշխարհագրական անունից եւայլն։ Անունների այս նոյնութիւնը ցոյց է տալիս անշուշտ, թէ ո՛րքան սերտօրէն կապուած եւ մօտ են եղել իրար, անունները յօրինողների ըմբռնողութեան մէջ, ազգ ու երկիր գաղափարները։

Իրողութիւն է նոյնպէս, որ ազգերը (ոչ միայն իբրեւ ժողովուրդներ, այլ նաեւ իբրեւ ազգեր) խիստ սերտօրէն կապւում են իրանց երկիրների հետ։ Ամէն ազգ ունի մի աշխարհագրական վայր, որ իրանն է համարում. եւ այդ վայրը դառնում է մի տեսակ ազգային սիմբոլ (խորհրդանիշ), սրբազան անուն, սիրոյ ու պաշտամունքի առարկայ, — այն աստիճանի, որ եթէ նոյնիսկ ինքը իրը այլեւս գոյութիւն չունի, կորցուած է ազգի համար (ինչպէս Պաղեստինը կորցուած է հրեաների համար), նա չարունակում է յամառօրէն ապրել իրբեւ սոսկ գաղափար (սիոնիզմ)։

Թերեւս կարելի լինէր աւելացնել մի-երկու դիտողութիւններ եւս յօդուտ «երկրային» տեսակէտի, բայց եւ այնպէս թէզը կը մնար անպաշտպանելի։

Եթէ ազգը լինէր ազգակցական միութիւն (ցեղային հաւաքականութիւն) կամ քաղաքական միութիւն (պետական կազմակերպութիւն), պարզ է որ երկրի նշանակութիւնը կը դառնար վճռական. ցեղային ինքնուրոյնութիւնը կամ պետական կազմը պահելու համար, մարզկային խըմբակցութիւնները անհրաժեշտօրէն պիտի կապուին որոշ հողամասի հետ եւ ամփոփուին նրա սահմանների մէջ. երկրից պոկուած՝ ոչ ցեղ կարող է լինել, ոչ պետութիւն:

Բայց ազգը ցեղային միութիւն չէ, ոչ էլ պետական եւ նրա կապը որոշ աշխարհագրական վայրի հետ չի հանդիսանում իբրեւ conditio sine qua non. ապացոյց՝ ազգագրական քարտէզները:

Դանուբի կամ Վոլգայի աւազանները, Կովկասն ու Անգրկովկասը, Հայկական Բարձրաւանդակը ու Փոքր Ասիան, Բալկանեան թերակղզին ամբողջովին ու Մակեդոնիան մասնաւորապէս, Ալպեան լեռներն ու Մերձ-Բալտեան երկիրը, Հիւս-Ամերիկեան մեծ տափարակը ու կենտրոնական Ամերիկայի պարանոցը — սրանք բոլորն էլ որոշակի սահմանուած աշխարհագրական միութիւններ են, բայց սրանց բոլորի էլ ազգագրական քարտէզը չատ բազմագոյն է:

Territoireը (երկիրը) չի բնորոշում ազգը:

Ազգերը չեն պարփակւում միայն որոշ աշխարհագրական սահմանների մէջ, յաճախ դուրս են գալիս այդ սահմաններից, նուաճում են ուրիշ

աշխարհագրական մխութիւնները, տարածւում են երկրի զանազան կողմերը, պահելով հանդերձ իրենց ազգային դէմքն ու գիտակցութիւնը: Եւ ընդհակառակը. նոյն աշխարհագրական սահմաններ մէջ կենակցում են միմիից աւելի ազգերը, — կենակցում են կողք-կողքի, յաճախ անբաժանելիօրէն խառնուած իբրեւ ժողովուրդներ, բայց ո՛չ բոլորի անջատուած իբրեւ ազգեր: Օրինակ՝ Մեջին Եւրոպան, Բալկանեան թերակղզին, Փոքր Ասիան, Կովկասը:

Չպիտի չխոթել «ժողովուրդն» ու «ազգաբնակութիւնը» «ազգի» հետ. սրանք տարբեր բաներ են: Կայ Կովկասի ազգաբնակութիւն, Մակեդոնիայի ազգաբնակութեան, բայց չկայ կովկասեան ազգ, մակեդոնեան ազգ:

IV

Անդրկովկասի թուրքերը իրանց «մուսուլմանն» են անուանում: Ձեն սիրում — նոյնիսկ վիրաւորական են համարում — թուրք կամ թաթար անունները: Թուրքի, պարսիկի, քուրդի, դաղըստանցի լեզգու եւ Ղազանի թաթարի միջեւ ոչ մի տարբերութիւն չեն ուզում դնել. բոլորն էլ հաւասարապէս «մուսուլման» են:

Ազգային գիտակցութիւնը բացակայում է կամ ամբողջովին կլանուած է, ծածկուած կրո-

նական գիտակցութիւնով: Այն աստիճանի, որ փոխարէն ասելու՝ թուրքական գրականութիւն, գպրոց, թատրոն եւայլն, ասում են՝ մուսուլմանական գրականութիւն, գպրոց, թատրոն: Աւելին եւս. ասում են «մուսուլմանական լեզու»: Եւ վերջապէս՝ «մուսուլմանական ազգ»: Այս տարօրինակ արտայայտութիւնը ինձ պատահել է լսել շատ յաճախ թուրք մտաւորականների բերանից եւ կարդալ Բադուի թուրքական թերթերի մէջ:

Անցեալներում (ինչպէս եւ մինչեւ հիմա ժողովրդական լայն զանգուածների մէջ) սա պարզապէս գիտակցութեան պակասութիւն է եղել. իսկ վերջի չրջանում, քաղաքակրթուած թուրքերի կողմից, արդէն քաղաքական խաղ է, էութիւնների գիտակցական ու միտումնաւոր քողարկում:

Բայց եւ այնպէս՝ գիտակցական թէ անգիտակցական՝ չկոթը տեղի ունի. ազգը նոյնացւում է կրօնի հետ, ազգը հասկացւում է իբրեւ դաւանական միութիւն:

Օսմանեան կայսրութեան մէջ հայ ազգը ճանաչւում էր իբրեւ կրօնական համայնք եւ տաճկահայերի «ազգային» անուանուած սահմանադրութիւնը իրօք ազգային չէ, այլ դաւանական, ինչպէս եւ «ազգային» անուանուած իշխանութիւնները իրօք ազգային չեն, այլ կրօնական-եկեղեցական (ապացոյց՝ լուսաւորչական ու ոչ-լուսաւորչական հայերը ունեն տարբեր սահմանադրութիւններ ու տարբեր իշխանութիւններ):

Պարսկահպատակ հայերն ու ասորիները պարսկական պաշտօնական գրութիւնների մէջ անուանւում են հաւատարապէս «քրիստոնեայ»: Պարսկական անցագրից չէք կարող իմանալ, թէ ի՞նչ ազգութեան է պատկանում անցագրի տէրը (հա՞յ է թէ ասորի, պարսի՞կ է, թուրք թէ քուրդ): Իմանում էք միայն որ քրիստոնեայ է կամ իսլամ: Պարսկական օրէնքը չի տարբերում հայը ասորիից, պարսիկը քուրդից, չի ճանաչում ազգային բաժանումները, փոխարինում է այն դաւանական բաժանումներով կամ նոյնացնում է երկուսն էլ: Մէջլիսի (պարլամենտի) ընտրութեան ժամանակ Ատրպատականի հայերն ու ասորիները կազմում են ընդհանուր ներկայացուցիչներ. իրրեւ քաղաքական դործօն ազգային բաժանումները Պարսկաստանում հաշուի չեն առնւում, փոխարինւում են կրօնական բաժանումներով:

Տաճկական պետական վիճակագրութիւնը կազմւում է նոյն կարգով: Տաճկական համարակալութիւններով չէք կարող պարզել՝ օրինակի համար՝ Մակեդոնիայի ազգային կազմը. բոլոր մահմեդականները (ալբանացիներն ու բուլգար «պոմակները» օսմանեան թուրքերի հետ անխտիր անուանուած են հաւատարապէս «մուսուլման» եւ կազմած են մի ընդհանուր խումբ. բոլոր «պատրիարքականները» (պատրիարքի վերհսկողութիւնը ընդունողները), հակադրուելով «էքսարխականներին», անուանւում են հաւատարապէս յոյն,

թէեւ սրանց մէջ կան նաեւ սերբեր, վալախներ, բուլղարներ: «Յոյն» անունը, որ պիտի բնորոշէր անհատի ազգային պատկանելիութիւնը, գալիս է բնորոշելու պարզապէս նրա եկեղեցական պատկանելիութիւնը. ազգային մխութիւնը չփոթւում է եկեղեցական մխութեան հետ:

Զպէտք է կարծել, թէ գաղափարների այս չըփոթը յատուկ է միայն մահմեդական երկիրներին, մահմեդական ըմբռնողութեան:

Իմ աշակերտութեան ժամանակ ռուսական դպրոցներում լեհ տղաները արձանագրւում էին իբրեւ «կաթոլիկ», հայ – լուսաւորչականները՝ «գրիգորեան», իսկ վրացիները — ռուսների հետ անխտիր — «ուղղափառ»: Ռուսական դպրոցը չէր ուզում ճանաչել լեհի, հայի կամ վրացու գոյութիւնը, չէր ուզում արձանագրել ու վաւերացնել ազգային բաժանումները եւ խառնում էր վրացուն ու յոյնին ռուսի հետ, լեհին՝ հայ–կաթոլիկի հետ, հայ–բողոքականին՝ գերմանացու հետ:

Նոյնը չէ՞ր եւ մեր մէջ չատ մօտ անցեալում (իսկ խուլ անկիւններում նաեւ այսօր):

Ցիշում եմ, դասարանում, դասատուրի հարցին, թէ հա՞յ ես, վկայ — գիւղացին պատասխանեց. ոչ, ազա, ֆրանկ եմ:

Այս գիւղացու հասկացութիւնով կաթոլիկ հայը հայ չէ, ֆրանկ (ֆրանսիացի) է: Եւ այս սխալը չատ է տարածուած մեր գիւղերի մէջ:

Հայը սիրում է անուանել իրան «հայ–քրիս–

ատնեայ»: Եւ «քրիստոնեայ» ասելով լուսաւորչական հայը բաժանում է իրան ոչ միայն մահմեդականներից կամ հրեաներից, այլ նաեւ քրիստոնեայ կաթոլիկներից, քրիստոնեայ բողոքականներից:

Յաճախ կարող էք լսել, թէ այսինչ դիւղում այսքան տուն «հայ» կայ, այսքան տուն «կաթոլիկ» եւ այսքան տուն «բողոքական»: «Հայ» բառը, որ ազգութիւն պիտի ցոյց տար, հակադրւում է «կաթոլիկին» ու «բողոքականին», որ սոսկ դաւանական տերմիններ են:

Եթէ մի հայ ընդունում է մահմեդականութիւնը, ասում են՝ թուրքացաւ, այսինքն թուրք դարձաւ: Որոշ ծիսակատարութեան ենթարկուելուց յետոյ, մարդը դադարում է «հայ» լինել, դառնում է «թուրք»:

Ազգը նոյնացւում է կրօնական դաւանանքի հետ: Բայց իրականութիւնը չի արդարացնում այդպիսի նոյնացում, իրականութիւնը ցոյց է տալիս, որ ազգն ու եկեղեցին տարբեր միւթիւններ են:

Իրականութեան մէջ չկայ քրիստոնեայ ազգ (կան քրիստոնէութիւն դաւանող տարբեր ազգեր միայն), չկայ բուդդայական ազգ, մահմեդական ազգ, ինչպէս չկան նաեւ կաթոլիկ ազգ, բողոքական ազգ, օրթոդոքս ազգ...

Անգլիական ազգը կազմող մարդիկ պատկանում են մասամբ կաթոլիկ եկեղեցուն, մասամբ

բողոքական (իր ճիւղաւորութիւններով)։ Նոյնը եւ գերման ազգը, նոյնը եւ Ֆրանսիականը։ Հայ մարդիկ ոչ միայն լուսաւորչական են, այլ նաեւ բողոքական, կաթոլիկ։

Միւս կողմից՝ միեւնոյն կաթոլիկ եկեղեցուն պատկանում են տարբեր ազգութիւնների մարդիկ, — իտալացիներ, Ֆրանսիացիներ, իրլանդացիներ, լեհեր։ Օրթոդոքս եկեղեցուն՝ ռուսներ, յոյներ, բուլգարներ, վրացիներ։ Մահմեդական կրօնը դաւանում են արաբներ, թուրքեր, պարսիկներ, քուրդեր, հնդիկներ։

Այսինքն՝ մի ազգ — տարբեր դաւանանքների բաժանուած, մի դաւանանք — տարբեր ազգեր միացրած։

Բոլոր հասկացողութիւնների կատարեալ յեղաշրջում կը լինէր, եթէ Բաւարիայի գերմանացուն ազգայնօրէն անջատէինք Բրանդենբուրգի գերմանացիից ու միացնէինք Նորմանդիայի Ֆրանսիացու հետ այն պատճառաբանութիւնով, որ երկուսն էլ կաթոլիկ են, իսկ բրանդենբուրգցին լութերական է։ Կամ Մկրտիչ Մխիթարին ազգայնօրէն անջատէինք Ղեւոնդ Ալիշանից ու միացընէինք ամբողջովին ռուսացած հանգուցեալ իշխան Աբամելիք Լազարեւի հետ այն պատճառաբանութիւնով, որ երկուսն էլ լուսաւորչական են, իսկ Ալիշանը կաթոլիկ է։

Ազգը կրօնական համայնք չէ եւ կրօնական համայնքը ազգ չէ։

V

Իմ մանկութեան ժամանակ (70ական եւ 80ական թուականներում) ազգասիրական երգերի մէջ չարունակ ու միշտ կողք-կողքի երգւում էին «ազգը, կրօնն ու լեզուն»: Այն չրջանում սա մի տեսակ անբաժանելի երրորդութիւն էր, արթնացընող ազգային գիտակցութեան «հաւատամք»ը: Հետագայում, երբ մի քիչ հասունացանք, ըմբռնացանք «կրօնի» դէմ, յայտարարեցինք այն՝ յետադիմական տարր, վճռականօրէն դուրս ճգեցինք սրբազան երրորդութիւնից եւ աւելի եւս ծանրացանք «լեզուի» վրայ: Եւ լեզուն (ու նրա հետ կապուած դպրոցը, գրականութիւնը, թատրոնը, մամուլը) դարձաւ «ազգի» սիմբոլը, ազգային պաչտամունքի առարկան:

Մի նոր գիւտ չէր, որ արել էինք մենք: Գիտնական մարդիկ վաղուց արդէն գլխի էին ընկել ու մատնանիչ արել լեզուն, իբրեւ ամենէն էականը ազգային տարրերից: Ոչ միայն ամենէն էականը, այլ գուցէ եւ միակ էականը: Մինչ այն աստիճանի, որ եղել են մտածողներ, որոնք ամբողջովին նոյնացրել են «ազգը» «լեզուի» հետ.—

Ազգը լեզու է, ազգային միութիւնը՝ լեզուական միութիւն: Միեւնոյն լեզուով խօսող մարդիկ են, որ կազմում են «ազգ» կոչուած հաւաքականութիւնը:

Այս հասկացողութիւնը, որ մանաւորապէս

չեչաւում է նոր հետազօտողների կողմից, գոյութիւն ունէր դեռ շատ հին ժամանակներում:

Բաբիլոնեան աշտարակը՝ ըստ բիբլիական աւանդութեան՝ չկառուցուեց այն պատճառով միայն, որ մարդիկ բաժանուեցին զանազան «լեզուների» ու դադարեցին հասկանալ միմեանց: Այս աւանդութիւնը թերեւս ուրիշ բան չէ, քան ազգերի ծագումը բացատրելու մի փորձ: Աւանդութեան հեղինակները ենթադրել են, թէ եղել է մի ժամանակ, երբ ամբողջ մարդկութիւնը խօսել է մէկ լեզուով (կազմել է մի ազգ՝ Նոյ Նահապետի սերունդը): Այս միութիւնը այնպիսի մի մեծ ոյժ է ներկայացրել եւ ոյժի գիտակցութիւնը ա՛յնքան բարձր է եղել միալեզու — միատարր մարդկութեան մէջ, որ նա՝ ամբարտաւանացած՝ յանդգնել է հակադրել իր զօրութիւնը Երկնային Զօրութեան ու ձեռնարկել է Աշտարակի շինութեան: Եւ ահա՝ Աստուածային հրամանով (կամ անէծքով) ընդհանուր լեզուն բաժանւում է յանկարծ տարբեր լեզուների (մարդկութիւնը բաժանւում է միմեանց չհասկացող անջատ ազգերի), առաջ է գալիս չփոթ ու խառնութիւն եւ յանդուգն գործը (երկինք հասնելու փորձը) մնում է անկատար:

Լեզուն էր, որ միացնում էր մարդկանց: Լեզուներն էին, որ բաժանեցին մարդկութիւնը:

Ռուսական հին ժամանակագրողները յաճախ «ազգ» բառի փոխարէն գործ են ածել «լեզու» բառը: Այսպէս, օրինակ. «Եւ գինուեցան Սուրբ

Ռուսիայի պէմ, եկան հրով ու սրով տասներկու լեզուները»... Պարզ է որ լեզուները չէին, որ զինուեցան ու յարձակուեցան Ռուսիայի վրայ, այլ այդ տասներկու տարբեր լեզուներ խօսող տասներկու տարբեր ազգերը:

Լեզուն ընկերային կեանքի ամէնէն հիմնական տարրն է, լեզուն ամէնէն պարզ, բացայայտ ու հեշտ ըմբռնելի նշանն է մարդկանց իրարից տարբերելու եւ իրար հետ կապելու համար: Եւ զարմանալի չէ, որ վաղուց արդէն մարդկային խմբակցութիւնները բնորոշուել ու ճանաչուել են իրանց լեզուներով:

Սրանից մօտ երեսուն տարի առաջ Ռուսատանում կատարուեց ընդհանուր ու միօրեայ վիճակագրութիւն՝ ազգաբնակութեան թիւն ու կազմը ստուգելու համար: Անկետային թերթիկների մէջ չէր դրուած հարց, թէ ի՞նչ ազգութեան ես պատկանում, բայց կար մի ուրիշը. ո՞րն է քո մայրենի լեզուն: Եւ հետագայում՝ վիճակագրական գումարումների ժամանակ՝ կայսրութեան ազգային կազմը բնորոշուեց նրա լեզուային կազմով. «լեզուն» նկատուեց իրրեւ հոմանիշ «ազգի»:

Թերեւս ռուս պետական վիճակագրողները ընտրել էին այս տեսակէտը զուտ քաղաքական (եւ ոչ գիտական) միտումներով: Բայց նոյնը անում են նաեւ գերմանական, աւստրիական, հունգարական ու բելգիական վիճակագրողները: Ի հարկէ, այստեղ եւս կարելի է ունենալ նոյն կասկածը

(բացառութեամբ գուցէ միայն Բելգիայի, որը ճանաչուած է իբրեւ ամէնից բարեխիղճը՝ ազգային վիճակագրութիւնները կազմելու մէջ)։ Բայց անհաւանական չէ և՛ ուրիշ բացատրութիւն, — այն, թէ ազգային պատկանելիութիւնը ճշդօրէն որոշելու համար ամէնից վստահելի միջոցը՝ լեզուային պատկանելիութիւնն որոշելն է։ «Ազգութիւն» բառը ինքնըստինքեան այնքան անորոշ է, որ կարող է չփոթի մէջ ձգել հարցաքննուողին, մինչդեռ «լեզուն» չատ պարզ ու ամէնքի համար մատչելի գաղափար է։

Բայց արդեօ՞ք այդպէս է, արդեօ՞ք ամէն մարդ կարող է առանց տատանումների ասել, թէ ո՞րն է իր իսկական լեզուն (ենթադրելով, իհարկէ, թէ այդ մարդը գիտէ ու գործադրում է մէկից աւելի լեզուներ)։

Նախ պէտք է նկատել, որ ամէն տեղ միակերպ չի դրւում լեզուի խնդիրը. մի տեղ հարցընում են քո մայրենի լեզուի մասին, միւս տեղ՝ գործածական լեզուի մասին։ Բայց սրանք արդէն տարբեր են եւ վիճակագրական եզրակացութիւնները մեծապէս կախուած են նրանից, թէ ի՞նչպէս է դրուած հարցը։

Ի՞նչպէս որոշել պոլսեբնակ հայի կամ յոյնի գործածական լեզուն, եթէ չունկայում ամբողջ օրը նա խօսում է թուրքերէն, իսկ երեկոյեան, իր ընտանիքի մէջ, հայերէն կամ յունարէն։

Կարծես հենց այս դժուարութիւնը վերացնե-

լու նպատակով բելգիական վիճակագրողները, 1910 թուականին, երկու լեզու (ֆրանսերէն եւ ֆլամանդերէն) խօսողների համար աւելացրել են մի լրացուցիչ հարց. ո՞ր լեզուն գործածում ես ամէնից շատ: Ենթադրենք, թէ Բրիւսելում ապրող ֆլամանդացին (ինչպէս պոլսեբնակ հայը կամ յոյնը) կարողացաւ բարեխղճօրէն հաշուել ու ասուգել, որ նա չուկայում օրական աւելի ֆրանսերէն բառ է արտասանում, քան իր տան մէջ՝ ֆլամանդերէն: Կարո՞ղ է այս զուտ թուաբանական հաշիւը որոշել, թէ ուրեմն հարցաքննուողի լեզուն ֆրանսերէնն է եւ ոչ ֆլամանդերէնը: Չուկայում նա չարունակ գործածում է առեւտուրի վերաբերեալ մեծնոյն տեքնիքական բառերն ու դարձուածքները (ապրանքի տեսակը, գինը, քանակը, դրամի կուրսը, արտասահմանեան չուկաների դրութիւնը եւայլն), մինչդեռ իր տանը, իր ընտանիքի մէջ, սիրոյ խօսքեր է ասում կնոջն ու ծնողներին, կատակներ է անում երեխաների հետ, հեքիաթներ է պատմում նրանց, խօսում է իր ցաւերից ու հոգսերից, քաղաքական նորութիւններ է հաղորդում, վերյիշում է անցեալը, ծրագրեր է յօրինում ապագայի համար... Այսինքն՝ հոգեկան ամենախորը, ամենամտերիմ ու ամենաբարդ ապրումները նա արտայայտում է ֆլամանդերէն լեզուով: Կարելի՞ է ասել, թէ այս մարդու լեզուն — իսկական լեզուն, այն լեզուն, որով պիտի բնորոշուի իր ազգային պատկանելիութիւնը

— Ֆլամանդերէնը չէ, այլ Ֆրանսերէնը, որով-հետեւ նա աւելի շատ խօսում է Ֆրանսերէն:

Դժուարութիւնները չեն վերանում, եթէ գործածական լեզուի փոխարէն դրուի մայրենի լեզուն:

Ի՞նչ ասել է «մայրենի լեզու»:

Հունգարական վիճակագրողները, 1890 թուականին, տուին հարցին հետեւեալ բացատրութիւնը. մայրենի լեզուն այն լեզուն է, որ երեխաները սովորում են մայրերից կամ խօսում են ամէնից լաւ կամ խօսում են գերազասօրէն:

Բայց այդ «կամ»երը արդէն չփոթ են մտցնում դազափարի մէջ: Ես, օրինակ, ամէնից լաւ խօսում եմ ռուսերէն: Բայց իմ մայրենի լեզուն ռուսերէնը չէ, հայերէնն է: Մի բրետոնացի, որի մայրենի լեզուն բրետոներէնն է, կարող է գերազասել խօսել Ֆրանսերէն լեզուով: Ի՞նչ պատասխան տանք տրուած հարցին, ես ու այդ բրետոնացին:

Դանեմարքի վիճակագրողները, Շլեզուիդ Նահանգի ազգաբնակութեան ազգային կազմը մայրենի լեզուով սահմանելու համար, տուին «մայրենի» լեզուին այսպիսի մեկնութիւն. Ա) Լեզու, որ ամուսինները (ծնողները) խօսում են իրար մէջ, Բ) Լեզու, որ ծնողները խօսում են զաւակների հետ, եւ Գ) Լեզու, որ երեխաները խօսում են իրար մէջ:

Այս մեկնաբանութիւնով վերացա՞ն արդեօք

դժուարութիւնները։

Լա՛ւ է, եթէ այս երեք կարգի խօսակցութիւնները կատարւում են միեւնոյն լեզուով, — հարցի պատասխանը պարզ է ու հեշտ։ Բայց եթէ այդպէս չէ, երեք կամ երկու լեզուից ո՞րը հաշուել «մայրենի»։

Զպիտի մոռանալ, որ հարցաքննութիւնը նըպատակ ունի ստուգելու իրականութիւնը այն դէպքերում, երբ ազգաբնակութեան լեզուային (հետեւապէս եւ ազգային) կազմը դառնում է վէճի առարկայ։ Ի հարկէ, Տամբովեան նահանգի ռուսի համար կամ Տոսկանի իտալացու համար այս կարգի խնդիրները գոյութիւն չունեն. նա դիտի մէկ լեզու միայն եւ իր ազգային պատկանելիութիւնը ոչ մի կասկածի կամ վէճի չի ենթարկուած։ Խնդիրը վերաբերւում է ազգայնօրէն այն խառն վայրերին, ուր լեզուները խաչաձեււում են, մրցում են իրար հետ, ծածկում են մէկը միւսին։ Եւ այստեղ է ահա, որ առաջ են գալիս դժուարութիւնները։

1906 թուականին, էջմիածնում գումարուած ռուսահայերի ազգային «կենարոնական ժողովի» մէջ, ուր ի միջի այլոց քննութեան էր դրուած նաեւ ծխական դպրոցների հիմնական ծրագիրը, երկարատեւ ու շատ բուռն վիճաբանութիւնների առարկայ դարձաւ լեզուի խնդիրը։

Ո՞րը պիտի լինի դասաւանդութեան լեզուն հայ ծխական դպրոցներում։ Առաջի ու միակայն

պատասխանն էր՝ մայրենի լեզուն: Սա մի ընդհանուր ըմբռոստացում էր ռուսերէն լեզուի դէմ (մայրենին հակադրւում էր ռուսերէնին), որ ցարական կառավարութիւնը յամառօրէն պատուաստում էր մեր մանուկներին, եւ այս կէտում ոչ մի տարաձայնութիւն չկար ժողովականների մէջ:

Բայց ի՞նչ ասել է մայրենի լեզու: Ո՞րն է՝ օրինակ՝ Գորիաբնակ (Վրաստան) հայ երեխաների մայրենի լեզուն: Չէ՞ որ հայ ծխական դպրոցները գոյութիւն ունեն նաեւ Հայաստանից դուրս, — օրինակ՝ Վրաստանում, ուր հայերը վաղուց մոռացել են ազգային լեզուն եւ խօսում են համարեա բացառապէս վրացերէն: Ի՞նչ լեզուով պէտք է աւանդուեն դասերը այդպիսի դպրոցներում:

Եւ ահա այստեղ էր, որ կարծիքները արմատապէս բաժանուեցին: Ձուտ մանկավարժական տեսակէտի վրայ կանգնածները պնդում էին, որ Կախեթիայի կամ Քարթալինիայի հայ երեխաների մայրենի լեզուն վրացերէնն է, ուրեմն եւ դպրոցի լեզուն էլ պէտք է լինի վրացերէնը. սա մանկավարժութեան տարրական պահանջն է: Հակառակորդները մատնանիշ էին անում, որ դպրոցը ազգային ու քաղաքական ամենամեծ ազդակներից մէկն է եւ որ հայ դպրոցը նպատակ պիտի ունենայ ոչ միայն ընդհանուր կրթութիւն տալու հայ մանուկներին, այլ նաեւ ամրացնելու ու տարածելու հայերէն լեզուն եւ մանաւորապէս սորվեցնելու հայերէն այն գաղութներին, որոնք

կտրուած հայրենիքից կորցրել են դարերի ընթացքում իրանց իսկական մայրենի լեզուն եւ իրացրել են օտար լեզու:

Մայրենի եւ ազգային լեզուի վէճն է սա, որ հեշտութեամբ չի լուծւում, երբ առաջ են գալիս լեզուի հետ կապուած ազգային ու քաղաքական հակումները:

Ցիշում եմ մի դէպք, որ շատ հետաքրքրական է այս կարգի դէպքերը բնորոշելու համար:

Վերեւում յիշատակուած ռուսական ընդհանուր վիճակագրութեան ժամանակ, Թիֆլիսում երեք հարազատ եղբայրներ, երեքն էլ համալսարանաւարտ, լեզուի վերաբերուող հարցին տուել էին երեք տարբեր պատասխաններ: Աւագը (Գէորգը) պատասխանել էր թէ իր լեզուն ռուսերէնն է: Միջնեակը (Կոստանդինը)՝ հայերէնը: Կրտսերը (Վասիլին)՝ վրացերէնը: Եղբայրները ծագումով ու դաւանանքով հայ են, բայց ծնուել են Վրաստանում (Գորիի գաւառում) ու այնտեղ էլ անց են կացրել մանկութեան տարիները:

Հայերէնի մէջ շատ տկար են, հազիւ կարողանում են կապել մի–երկու պարզ նախադասութիւն: Իրանց առաջի լեզուն եղել է վրացերէնը, բայց հետագայում — ռուսական դպրոցի, դրականութեան, հասարակական կեանքի ու իրանց պարապմունքների ազդեցութեան տակ — իւրացրել են լիովին ռուսերէնը, որը եւ դարձել է իրանց առօրեայ լեզուն:

Այս իսկ պատճառով Գէորգը ասում է, որ իր լեզուն ռուսերէնն է: Ճիշդ է, որ իր ծագումով նա հայ է, ճիշդ է նոյնպէս, որ իր մօր խօսած լեզուն եղել է վրացերէնը: Բայց գիտակցութեան հասած չրջանից ի վեր նա խօսել է, մտածել, կարդացել ու գրել է համարեա բացառապէս ռուսերէն:

Կոստանդինը ուրիշ կերպ է դատում: Ճիշդ է, որ իր առաջի լեզուն եղել է վրացերէնը, ճիշդ է նաեւ, որ այսօր նա խօսում է առաւելապէս ռուսերէն ու հայերէնի մէջ չատ թոյլ է: Բայց եւ այնպէս նա հայ է եւ, իրրեւ հայ, չի կարող ուրիշ լեզու, քան հայերէնը:

Վասիլին համաձայն չէ ոչ մէկի եւ ոչ մէսի հետ: Նրա լեզուն վրացերէնն է, որովհետեւ այդ լեզուով նա թոթովել է առաջի բառերը եւ այդ լեզուով է անուել մանկութեան հասակում: Իր ազգային լեզուն (հայերէնը) նա կորցրել է արդէն եւ այն մի քանի վայրկվերոյ նախադասութիւնները, որ կարող է արտասանել հայերէն, լեզու չէ: Իսկ ռուսերէնը օտար լեզու է իր համար, թէեւ այսօր նա ամէնից լաւ գիտէ այդ օտար լեզուն, չարունակ խօսում է, գրում ու կարդում ռուսերէն:

Այս երեք պատասխաններից ո՞րն է ամէնից ճիշդը: Եթէ հարցը վերաբերուէր միմիայն լեզուին եւ տակը թաքնուած չլինէր մի յետին միտք, պարզ է որ Կոստանդինի պատճառաբանու-

թիւնը ամէնից թոյլն է եւ վէճի առարկայ կարող էր լինել միայն Գէորգի եւ Վասիլի տարաճայնութիւնը: Բայց եթէ հարցի յետին նպատակն է՝ որոշել հարցաքննուողի ազգային պատկանելիութիւնը, կոստանդինի տուած պատասխանն է միակ ճիշդը, — որովհետեւ եթէ նոյն Գէորգին ու Վասիլին ուղղակի հարցրած լինէին թէ ի՞նչ ազգութեան ես պատկանում դու, երկուսն էլ առանց տատանուելու կը պատասխանէին՝ հայ եմ:

Ազգային կապակցութիւնը չի սահմանափակուում միմիայն լեզուային կապակցութիւնով:

Հետագայում կ'աշխատեմ ցոյց տալ, թէ ի՛նչ մեծ արժէք ու նշանակութիւն ունի լեզուն «ազգը» կազմելու եւ ապրեցնելու համար: Ակներեւ է սակայն, որ որքան էլ սերտ կապուած լինեն ազգն ու լեզուն, սրանք այնուամենայնիւ տարբեր երեւոյթներ են եւ՝ որոշ չափով՝ անկախ մէկը միւսից:

Իրականութիւնն այն է, որ միեւնոյն ազգի պատկանող մարդիկ կարող են ունենալ տարբեր լեզուներ, ինչպէս էլ, դրան հակառակ, միեւնոյն լեզուն խօսող մարդիկ կարող են պատկանել տարբեր ազգութիւնների:

Ամերիկայի հիւսիսային նահանգներում ապրող նեգրերը խօսում են բացառապէս անգլիերէն, ուրիշ լեզու չունին: Բայց այդ նեգրերը անգլիացիներ չեն: Մեքսիքացիք խօսում են սպաներէն, բրազիլիացիք՝ պորտուգալերէն, իրլանդացիք՝

անգլիերէն, բայց ոչ մեքսիկացիք սպանացի են, ոչ բրազիլացիք՝ պորտուգալացի, ոչ իրլանդացիք՝ անգլիացի:

Վրաստանում (Կախեթիա, Քարթալինիա, Իմերեթիա) հայերը խօսում են վրացերէն, Խիզանի լեռներում՝ քրդերէն, Կեսարիայում եւ Աղանայում՝ թուրքերէն: Բայց եւ այնպէս հայ են, — ոչ վրացի, ոչ քուրդ եւ ոչ թուրք:

Հրեաները՝ զանգուածօրէն՝ դարերից ի վեր կորցրել են իրանց ազգային լեզուն (եբրայերէնը) եւ ամէն մի երկրում խօսում են այդ երկրի լեզուով (լեհերէն, ռուսերէն, գերմաներէն, պարսկերէն, թուրքերէն, անգլիերէն, ֆրանսերէն...), բայց մնում են հրեայ:

Եթէ ազգը լեզու լինէր եւ լեզուն՝ ազգ, ազգագրական քարտէզները ուրիշ կերպ պիտի դուրս գային եւ այնպիսի ազգեր, ինչպիսի են իրլանդացիք, հրեաները կամ վալոնները, պէտք է բոլորովին դուրս ձգուէին քարտէզներից: Բայց դա չէր համապատասխանի գոյութիւն ունեցող հասկացողութիւններին: Մենք չենք տառնում անգլիերէն խօսող նեգրին կամ իրլանդացուն՝ նեգր եւ իրլանդացի անուանել, գերմաներէն խօսող չեխին՝ չեխ, ռուսերէն խօսող հրեային՝ հրեայ, տաճկերէն խօսող վրացուն՝ վրացի, քրդերէն խօսող հային՝ հայ...

VI

Կայ մի տեսակէտ, որ առանձնապէս ծանրանում է պատմութեան վրայ: Պատմութիւնն է, որ մի կողմից բաժանում է մարդկութիւնը տարբեր ազգերի, իսկ միւս կողմից կազմում է ու ամրացնում ազգային միութիւնները: Ընդհանուր կեանքը անցեալում, անցեալից կենդանի մնացած յիշողութիւններն ու աւանդութիւնները, ընդհանուր ապրումները, յաջողութիւններն ու մանաւանդ տառապանքները, — ահա սրանք են, որ կապում են մարդկանց ի մի, առեղծում են մի ուրոյն մտերմութիւն, ծնունդ են տալիս «մենք»ի ու «մեր»ի գիտակցութեան:

Ազգը — պատմական անցեալն է, մի ուրոյն կազապար, որի մէջ ձուլուել է եւ ձեւաւորուել զարերի կեանքը:

Այդ տեսակէտը չատ պաշտպանելի կը լինէր, եթէ միայն կարողանայինք համաձայնութեան գալ թէ ինչպէս պէտք է հասկանալ «պատմութիւնը»:

Ո՞րն է այն «պատմութիւնը», որ ազգեր է կազմել անցեալում, ապրելու անունդ է տալիս նրբանց այսօր ու յոյսեր ներշնչում ապագայի համար:

Դա «ազգերի պատմութիւնն» է կամ «ազգային պատմութիւններին» գումարը:

Իսկ ո՞րն է «ազգային պատմութիւնը»:

Այդ հարցին պատասխան գտնելու համար

պէտք է դիտնանք կանխապէս թէ ինչ է ինքը «ազգ»ը... Այսպիսով ընկնում ենք անելանելի չրջանի մէջ եւ «ազգ»ը բացատրելու համար չենք կարող դիմել «ազգային պատմութեան», որովհետեւ այդ պատմութիւնը բնորոշելու եւ սահմանելու համար պէտք է նախ բնորոշենք ու սահմանենք «ազգ» գաղափարը:

Իսկ եթէ «պատմութիւնը» հասկանանք իր սովորական իմաստով — այնպէս, օրինակ, ինչպէս աւանդւում է այդ գիտութիւնը դպրոցներում եւ արձանագրուած է բազմահատոր գրքերի մէջ — մեզ հետաքրքրող հարցին պատասխան չենք գտնի այնտեղ:

Դպրոցական պատմութիւնը էապէս պետութիւնների պատմութիւն է (լաւագոյն դէպքում — եւ այն էլ մասամբ միայն — ժողովուրդների պատմութիւն): Այդ գիտութիւնը տեղեկացնում է մեզ թէ ի՞նչպէս են կազմուել, բարգաւաճել ու զօրեղացրել կամ կազմալուծուել ու քանդուել պետութիւնները, լաւագոյն դէպքում՝ ի՞նչպէս են ապրել այդ պետական չրջանակների մէջ ժողովուրդները (ժողովուրդները, բայց ոչ ազգերը):

Ընդհանուր կեանք, ընդհանուր յիշողութիւններ... Այո՛, բայց ի՞նչ կարգի կեանք եւ ի՞նչ կարգի յիշողութիւններ:

Հրեաները դարերով չատ ընդհանուր ու անմոռանալի յիշողութիւններ են ունեցել սպանացիների եւ լեհերի հետ: Բայց այդ յիշողու-

թիւններըը չեն կապել նրանց ոչ սպանացիների եւ ոչ լեհերի հետ:

Լիտուանացիք լեհերի հետ, լեհերը պրուսացիների եւ ուկրայնիական ռուսների հետ, իրլանդացիները անգլիացիների հետ, չեխերը, սլաւոնները ու իտալացիները աւստրիական գերմաններին, նորվեգիացիները դանեմարքցիների հետ, ֆինլանդացիները չուէդների հետ..., — սրանք բոլորը շատ երկար ժամանակներով ունեցել են ընդհանուր պատմական կեանք, բայց ազգային միութիւնները չեն կազմել եւ մնացել են իրար կողքի՝ ազգայնօրէն անջատուած:

Հայերը Վրաստանում, Թիւրքիայում եւ Պարսկաստանում ապրել են երկար դարերով ու շատ ընդհանուր յիշողութիւններ են ունեցել վրացիների, թուրքերի եւ պարսիկների հետ, բայց եւ այնպէս մնացել են հայ, մինչդեռ նոյն հայ ազգին պատկանող հատուածները Գալիցիայում կամ Ռումանիայում վաղուց արդէն դադարել են հայ լինելուց, կորցրել են իրանց ազգային դէմքն ու գիտակցութիւնը:

Կայ մի ուրոյն «պատմութիւն», մի ուրոյն ընդհանուր կեանք (եւ դա «ազգային» պատմութիւնն է, «ազգային» կեանքը), որ անջատում է Քարթալինայի, Իսֆահանի, Մուշի եւ Սվասի հայի իր անմիջական դրացի վրացիներից, պարսիկներից, քուրդերից ու թուրքերից եւ հեռաւոր վայրերում գտնուող հայ հատուածները կապում է իրար:

Անշուշտ, ազգը պատմութիւն է։ Բայց այնպիսի մի «պատմութիւն», որ ինքը կարօտ է երկար լուսաբանութիւնների եւ ապացոյցների՝ թէ իրօք գոյութիւն ունի։

VII

Աչխարհագրական վայրի (տերիտորիայի) եւ պատմութեան հետ սերտօրէն կապուած են մի չարք առանձնայատկութիւններ, որ ընդհանուր առմամբ կոչւում են էթնոգրաֆիական (ազգագրական). սովորութիւններ, վարք ու բարքեր, առօրեայ նիստուկաց, աչխատանքի եւ տնտեսութեան միջոցներ ու ձեւեր, իրաւահասկացողութիւն ու իրաւակարգ, ընտանեկան փոխյարաբերութիւններ, հանրային կենակցութեան ձեւեր եւայլն։

Ցաճախ «ազգ» գաղափարը կապում են այս կարգի առանձնայատկութիւնների հետ եւ ազգային միութիւնները նոյնացնում են էթնոգրաֆիական միութիւններին, այսինքն՝ ազգը հասկանում են իբրեւ մի հաւաքականութիւն, որի անդամները ունեն ընդհանուր կենցաղ, սովորութիւններ, տնտեսական ձեւեր, իրաւահասկացողութիւն եւ այլն։

Բայց բաւական է մի թեթեւ ակնարկ ձգել իրականութեան վրայ, որպէսզի հասկանալ այս

տեսակէտի սխալը, — հասկանալ որ կենցաղը ինքնըստինքեան անզօր է սահմանելու ազգը:

Փարիզաբնակ Ֆրանսիացին իր կենցաղով շատ աւելի մօտ է վիեննաբնակ գերմանացուն, քան նորմանդական գիւղացուն: Կուբանի կոզակը՝ իր սովորութիւններով եւ վարք ու բարքով՝ շատ աւելի մօտ է չերքէզին քան Պերմի նահանգի ռուսին: Կախեթցի հայը՝ իր նիստուկացով եւ տնտեսութեան ձեւերով՝ շատ աւելի նման է վրացուն եւ սասունցի հայը՝ քուրդին, քան չիրակեցի կամ պոլսեցի հային:

Բայց այս նմանութիւնները կամ այս տարբերութիւնները չեն, որ որոշում են ազգային պատկանելիութիւնը: Փարիզի գրիզետկան եւ նորմանդական գիւղացին՝ Ֆրանսիացի են երկուսն էլ. Կուբանի կոզակը ռուս է եւ ո՛չ չերքէզ, կախեթացի այգեպանը, Մոկսի կամ Սասունի լեռնականը, Ադանայի առեւտրականը ու պոլսեցի վարժապետը, — սրանք բոլորն էլ՝ Շիրակի հողագործի հետ մէասին՝ հայ են եւ ո՛չ վրացի, քուրդ կամ թուրք:

Աւրտաքոյ եւ անկախ էթնոգրաֆիական կապերից կան ինչ որ ուրիշ կապեր, որ կապում են Նիւ Եորքի կամ Ամստերդամի բանկիր–հրեային՝ Լեմբերգի մանր արհեստաւորի եւ Երուսաղէմի րաբիի հետ, Շուարցուալդենի գիւղացուն՝ պրուսիական գործարանային բանուորի ու Օսագէյեան պառոնի հետ, լոմբարդական վարթամ բուրժուա-

յին՝ կէս-վայրենի կորսիկացու հետ, Պօլսոյ Ֆէսաուր «Թազականին»՝ Սիւնիքի ժայռերի վրայ Թառած չինականի հետ:

VIII

Կայ մի տեսակէտ, որ էապէս տարբերւում է նախորդներից: Նախորդ բոլոր բացատրութիւնները ձգտում էին գտնելու ազգութիւնը սահմանող որեւէ առարկայական հիմնաւորում, — ցեղ, պետութիւն, տերիտորիա, կրօն, լեզու, պատմութիւն, կենցաղ, — վերջապէս, այնպիսի մի հիմնաւորում, որ անկախ լինէր ազգը կազմող մարդկանց գիտակցութիւնից, կամքից, ցանկութիւններից, հակումներից: Սրան հակառակ, կան մտածողներ, որոնք հարցի ծանրութեան կէնտրոնը փոխադրում են ամբողջովին ինքնագիտակցութեան կամ ինքնազգացման աշխարհը, «ազգը» յայտարարում են զերազանցօրէն ենթայական (subjectif) երեւոյթ եւ նրա հիմնաւորումները որոնում են մարդկային անհատական կամ հաւաքական հոգեբանութեան մէջ:

Այս տեսակէտը — սրանից կէս դար առաջ — ունեցել է E. Renanը, ըստ որի ազգութեան հիմքը՝ ազգայնօրէն զգալու եւ մտածելու եղանակն է:

Keleti (որ 80ական թուականներում եղել է Հունգարիայի վիճակագրական բիւրոյի պետը)

նմանեցնում է ազգը եկեղեցուն, ազգային գիտակցութիւնը՝ կրօնական գիտակցութեան, եւ այն կարծիքին է, թէ ազգային պատկանելիութիւնը՝ ճիշդ ինչպէս դաւանականը, կարող է լինել ազատ ընտրութեան առարկայ:

Աչխարհագէտ Hauser կարծում է որ ազգութիւնը վերջի հաշուին ուրիշ բան չէ, քան «հաւաքական գիտակցութեան փաստ»:

Zangwill որակում է ազգը իբրեւ «հոգեբանական երեւոյթ»:

Ապա՝ ազգութեան ենթակայական բնոյթի վրայ ծանրանում են մասնաւորապէս աւստրիական սոցիալ-դեմոկրատները (Otto Bauer, Schpringer):

Այս տեսակէտը պարունակում է իր մէջ խոշոր ճշմարտութիւն եւ արժանի է յատուկ ուշադրութեան: Բայց եւ այնպէս, դժուար չէ գտնել նրա թոյլ կողմերը, նրա պակասաւոր ու պայմանական բնոյթը:

Իսկապէս, սա պատասխան էլ չէ տուած հարցին: Ինքնազգացման կամ ինքնագիտակցութեան փաստ ասելով, մենք չենք կարող բացատրուած համարել ազգութեան էութիւնը: Ամէն մի ենթակայական երեւոյթ ունի իր առարկայական հիմքերը, պայմանաւորող պատճառները, եւ քանի որ հիմքերը չեն գտնուած ու հասկացուած, երեւոյթը մնում է հարցական:

Ահա մի մարդ, որ իրան հայ է ճանաչում եւ

հայ յայտարարում. ահա մի ուրիշը, որ ասում է, թէ ինքը թուրք է: Անհերքելի է, որ ենթակայական գիտակցութեան արտայայտութիւն է սա: Բայց ինչո՞ւ այս մի մարդը «հայկական» գիտակցութիւն ունի, իսկ այն միւսը՝ «թուրքական»: որո՞նք են մէկի «հայութեան» եւ միւսի «թուրքութեան» նախապայմանները:

Ձուտ քաղաքական կամ ձուտ իրաւական տեսակէտից այդպիսի հարց կարող է եւ չդրուել: Քաղաքագէտի եւ իրաւագէտի համար անհրաժեշտ չէ որոնել ու գտնել աղբիւրները, բաւական է միայն գիտենալ, որ այս մէկը իրան հայ է ճանաչում, միւսը՝ թուրք: Էականը՝ ինքը գիտակցութեան փաստն է, որովհետեւ ազգութիւնը՝ իբրեւ քաղաքական գործօն ու իրաւական դէմք՝ գոյութիւն ունի այնչափ միայն, որչափ նա գիտակցուած է եւ ընդունակ է արտայայտուելու այս կամ այն ձգտումի, այս կամ այն պահանջի ու սրանցից բխող գործողութիւնների մէջ:

Եթէ յիշողութիւնս չի դաւաճանում ինձ (վաղուց է որ կարդացել եմ եւ այժմ ստուգելու հնարաւորութիւն չունեմ), Renanին մտահոգողը եղել է գլխաւորապէս այն հարցը, թէ ո՞ր ազգութեան հատուած պէտք է համարել Ալզաս-Լորէնցիներին՝ Ֆրանսիակա՞ն թէ գերմանական, եւ հետեւապէս՝ Ֆրանսիայի՞ն պէտք է կցուած լինեն այդ երկու նահանգները թէ՞ Գերմանիային (ազգային սկզբունքով ու անկախ պէնքի յաջողութիւնից, որ

այն ժամանակ Գերմանիայի կողմն էր)։

Հասկանալի է, որ այս տեսակէտից վճռական տեղ պէտք է տալ Ալզաս-Լորէնցու ենթակայական դիտակցութեանը, նրա ազատ ինքնորոշմանը, պէտք է հարցնել, թէ նա ինքը իրան Ֆրանսիացի՞ է զգում թէ գերմանացի, որի՞ հետ նա ինքը կապում է իրան ազգայնօրէն։

Հասկանալի է նաեւ, որ այս յատուկ խնդիրը լուծելու համար, ազգասէր ու հայրենասէր Renanը (ծագումով հրեայ, բայց արդէն ամբողջովին Ֆրանսիացած), գիտակցօրէն կամ անգիտակցօրէն, մոռացութեան է տուել ազգութիւն կազմող մնացած բոլոր տարրերը եւ ծանրացել է միայն այս մէկի վրայ։ Քաղաքական պայքարի հանգամանքը հասկանալի է անում Renanի միակողմնութիւնը, իսկ խնդրի ուրոյն բնոյթը՝ նաեւ արդարացնում այն։

Պետական պաշտօնեայ Keleti (թերեւս կատարելով իր կառավարութեան հրահանգը) չահագրգռուած է ներչնչելու, որ ամէն մի հունգարահպատակ մարդ կարող է՝ ինքնորոշման ճանապարհով՝ յայտարարել իրան հունգարացի (ազգային պատկանելիութեան մտքով) եւ այդպէս էլ արձանագրուել պետական ցուցակների մէջ, — թէկուզ ծագումով լինի ռուս կամ ռումանացի, դաւանանքով՝ հրեայ, լեզուով՝ լեհ, կենցաղով՝ դնչու։ Պետութիւնը չահագրգռուած է զօրեցնելու գերիշխող ազգութիւնը ի հաշիւ օտար

տարրերի եւ հետեւապէս տրամադիր է տալու «ազգութիւն» գաղափարին այնպիսի մեկնութիւններ, որ հեշտացնեն ճուլումը (թէկուզ մեկ կամ վճռակրական ազիւսակների մէջ):

Աւստրիական սոցիալ-դեմոկրատները ժխտեցնում են խնդրին դասակարգային ու կուսակցական տեսակէտներից եւ փորձ են անում սահմանելու ազգութիւնների իրաւական դրութիւնը պետութեան մէջ: (Իսկ ռուս-հրէական բանուորական «սերպ» կուսակցութիւնը, զարգացնելով նոյն տեսակէտը, մշակեց ազգային-կուլտուրական արտա-տերիտորիալ աւտոնոմիաների ծրագիրը): Բազմազգեան վայրերի մէջ պայքարող սոցիալիստական կուսակցութիւնների համար ազգութիւնը այն գործօններից մէկն է, որ «մթացնում է» պրոլետարիատի դասակարգային գիտակցութիւնը, պառակտում է մացնում միջազգային պրոլետարական բանակի մէջ եւ բարդացնում է քաղաքական կացութիւնը, պետութիւնների, ժողովուրդների ու դասակարգերի փոխյարաբերութիւնները: Հասկանալի է, որ սրանց եւս հետաքրքրում է գլխաւորապէս երեւոյթի ենթակայական կողմը, — ոչ այնքան «ազգ»ը ինքնըստինքեան, որքան ազգային գիտակցութիւնը, նրա չափն ու ոյժը, արտայայտուելու ձեւերն ու միջոցները:

Քաղաքագէտը պէտք ունի գլխաւորապէս դիտենալ ու հաշուի առնել, թէ ի՞նչպէս եմ ես արտայայտուելու, ի՞նչպէս եմ «ինքնորոշուելու»

ազգամիջեան բնոյթ ունեցող պայքարների հանդէպ: Եթէ, օրինակ, կատարուում են պարլամենտական ընտրութիւններ ազգային կուրիաներով, որի՞ն պիտի միանամ ես: Եթէ կան իրար հետ մրցող ազգային թեկնածուներ, ո՞ւմ պիտի տամ իմ քուէն: Եթէ կատարուում է համաժողովրդական քուէարկութիւն ազգային որեւէ վէճ լուծելու համար, ո՞ր կողմը պիտի անցնեմ ես: Եթէ՝ պետութեան սահմաններում՝ պատահելու լինին ազգամիջեան արիւնահեղ ընդհարումներ (ինչպէս նա տեղի ունեցաւ, օրինակ, Անդրկովկասում, 1905–06 թուականներին, հայերի ու թուրքերի միջեւ), ո՞ր բանակին եւ ի՞նչ չափով ոյժ պիտի տամ ես: Եթէ պատերազմ է ծագելու պետութիւնների միջեւ, ո՞ւմ կողմը պիտի լինի իմ համակրանքը, ո՞ւմ հետ եւ ո՞ւմ դէմ պիտի դաշնակցեմ (դաշնակցե՞մ ազգայնօրէն, անկախ իմ պետական պատկանելիութիւնից, ինչպէս արին այդ՝ մեծ պատերազմի ընթացքում հայերը, չեխերը, լեհերը): Եթէ միջդասակարգային պայքարը բարդանալու է միջազգեան հակամարտութիւններով, ո՞րչափ իմ ազգային գիտակցութիւնը կաշկանդելու է դասակարգայինը եւ դրա հակառակը:

Պարզ է, որ այս կարգի հարցերին կարող է պատասխան տալ միմիայն իմ ազգային գիտակցութիւնը, նրա չափը, բնոյթը եւ խորութիւնը:

Քաղաքացիի համար ես հայ եմ այնչափ մի-

այն, որչափ զգում եմ ինձ հայ, գիտակցում եմ իմ հայ լինելը, ուզում եմ հայ մնալ եւ ընդունակ եմ՝ իբրեւ հայ՝ այս կամ այն գործօղութեան:

Բայց արդեօք բաւակա՞ն է այսքանը իմ ազգային պատկանելիութիւնը որոշելու եւ «ազգ» գաղափարը սահմանելու համար:

Ոչ, բաւական չէ: Որովհետեւ ազգութիւնը ոչ միայն քաղաքական գործօն է, այլ նաեւ (ու գերազանցօրէն) մշակութային գործօն: Եւ այստեղ ենթակայական տարրը — գիտակցութեան փաստը՝ կորցնում է արդէն իր վճռական նշանակութիւնը:

Ազգը կարող է գոյութիւն ունենալ, արտայայտուել ու ազդել շրջապատի վրայ՝ իբրեւ մշակութային գործօն՝ նոյնիսկ առանց ազգային գիտակցութեան: Վրացիները՝ նոյնիսկ չունենալով վրացական ազգային գիտակցութիւն՝ կարող էին պատուաստել իրանց լեզուն Կախեթիա գաղթած հայերին: Ֆուրդը չունի ազգային գիտակցութիւն (ունի միայն մանր-ցեղային, տոհմային, աչխէթական գիտակցութիւն), բայց եւ այնպէս նա սովորեցրել է չատախցի կամ մոկացի հային իր երգն ու պարը: Հայը կարող էր ե՛ւ առանց ազգային գիտակցութեան ներշնչել վրացուն իր ճարտարապետական ոճը, ինչպէս եւ պարսիկը, անկախ իր գիտակցութիւնից, կարող էր կրկնել տալ հային, Դաւթի ու Մհերի ընդհարման մէջ, Ռուստէմի ու Զօհրապի ընդհարումը: Լեզուն, երգը,

պարբը, ճարտարապետական ոճը, վէպը, — սբ–
բանք բոլորն էլ ազգային առեղծագործութեան
արտայայտութիւններ են, որ կարող են գոյու–
թիւն ունենալ ու անդրադառնալ ընդհատակի վը–
րայ՝ անկախ ազգային դիտակցութիւնից:

Եթէ ուզենանք մի քիչ աւելի խորը նայել, կը
տեսնենք, որ նոյնիսկ քաղաքականօրէն արտա–
յայտուելու համար անհրաժեշտ չէ դիտակցու–
թիւնը, որին կարող է փոխարինել (եւ փոխարի–
նում է յաճախ) ազգային քնազդը: Դիտակցու–
թի՞ւնն էր արդեօք (կամ միա՞կ դիտակցութիւն
էր), որ 1918 թուականի ջախջախիչ պարտու–
թիւնից յետոյ պինեց ու կազմակերպեց Անատո–
լիի թուրքին եւ Անգարայի անապատներից բերեց
հասցրեց նրան մինչեւ Մարիցայի ափերը:

Դիտակցութեան արժէքի հետ բնականօրէն
կապակցի տակ է առնւում նաեւ ինքնորոշման
սկզբունքի արժէքը: Հասկանալի է, որ եթէ «ազ–
գը» միայն դիտակցութեան երեւոյթ չէ, ուրեմն
եւ ազգային պատկանելիութիւնը չի կարող սահ–
մանուել միայն ինքնորոշման ճանապարհով:

Հակառակ Keletի կարծիքին, ազգային կա–
պակցութիւնների եւ կրօնական միութիւնների մէջ
կայ էական տարբերութիւն: Կրօնը, գաւանանքը՝
անհատական խղճի, անհատական ըմբռնումների
կամ անհատական հաւատի խնդիր է (այնչափ, ի
հարկէ, որչափ մարդը առհասարակ ընդունակ է
ունենալու անհատական հոգեկան ապրումներ,

անկախ ժառանգութեան ու միջավայրի ազդեցութիւններից)։ Մինչդեռ ազգային առանձնայատկութիւնները չատ զգալի չափերով ժառանգական ստացուածքներ են։ Կրօնը կարելի է փոխել (ինչպէս կարելի է փոխել հպատակութիւնը, քաղաքական դաւանանքը, կուսակցութիւնը)։ բայց փոխել ազգութիւնը, վերացնել վրայից ազգային ուրոյն տիպարը, ազատուել ժառանգօրէն ստացուած ազգային առանձնայատկութիւններից, հոդու ուրոյն կազապարումից — անկարելի բան է։ Սերունդները միայն կարող են կատարել այդ աշխատանքը. անհատը չի կարող, որքան էլ ցանկանայ։

Հայը կարող է անկեղծօրէն ընդունել մահմեդականութիւն, կարող է դառնալ չատ ջերմեռանդ, խորը հաւատացող, իսկական ու կատարեալ մուսուլման. բայց երբեք չի կարող դառնալ թուրք կամ արաբ։ Սա արդէն ազատ ընտրութեան, կամքի, ցանկութեան ու համոզմունքի խնդիրը չէ, այլ մի ուրիշ բան՝ չատ աւելի խորն ու արմատական։ Հայը՝ իբրեւ բաղաբական միաւոր՝ կարող է չէզոքանալ, մոռանալ կամ հրաժարուել իր հայութիւնից, իւրացնել քաղաքական իդէալները, որ պատկանում են մի ուրիշ ազգութեան (օրինակ՝ հրեայ Renanը ներչնչուած է ֆրանսիական ազգասիրութիւնով). կարող է նոյնիսկ դաւաճանել իր ազգին, անցնել հակառակորդի կողմը (ցարական Ռուսաստանի նորագոյն

պատմութիւնը բազմաթիւ օրինակներ է տալիս հրէական հրեաների)։ Բայց՝ չէզոք թէ դատաճան, անտարբեր թէ թշնամի, թրքական լրտես թէ աշխարհաքաղաքացիութեան առաքեալ՝ նա դարձեալ կը մնայ հայ։

Գ.

Այսպէս ուրեմն, ոչ առարկայական տուեալները (ցեղ, լեզու, դաւանանք, պետութիւն, պատմական անցեալ, աշխարհագրական միութիւն, ընդհանուր կենցաղ) եւ ոչ էլ ենթակայական տուեալը (ինքնագիտակցութեան փաստը) չեն կարող լրիւ ու գոհացուցիչ պատասխան տալ ազգութեան երեւոյթին, չեն կարող ճշդօրէն սահմանել «ազգ» գաղափարը։

Կանգ առնենք այստեղ եւ ենթադրե՛նք, թէ ուրիշ, աւելի գոհացուցիչ բացատրութիւն չունենք տալու։

Պէ՞տք է արդեօք եզրակացնենք, թէ ուրեմն ազգ անուանուած հաւաքականութիւն իրօք գոյութիւն չունի, թէ «ազգը» ցնորք է, նախապաշարմունք կամ մտածածին, արհեստականօրէն հնարուած ու արհեստականօրէն չըջառութեան մէջ դրուած մի գաղափար։

Ի հարկէ, ոչ։ Երեւոյթների իրականութիւնը

մի՛ բան է, իսկ նրանց էությունը բացատրելու մեր կարողությունը՝ ուրիշ բան: Սրանք կախում չունեն միմեանցից ու առաջինը չի պայմանաւորուած վերջինով:

Լեւ Տոլստոյը մի շատ հետաքրքրական դիրք ունի գրած գեղարուեստի մասին:

«Ի՞նչ է գեղարուեստը», հարցնում է մեծ գեղարուեստագէտը եւ բաւարար պատասխան չի գտնում ոչ մի գեղեցկագիտական տեսութեան մէջ: Քննադատութեան է առնում մի առ մի բոլոր առաջադրուած մեկնութիւնները եւ մի առ մի ցոյց է տալիս նրանց միակողմանիութիւնը, պակասաւորութիւնը, անճշտութիւնը կամ բացարձակ սխալը: Եւ ընթերցողը համոզւում է, որ իրօք այդպէս է, որովհետեւ հանճարեղ ծերունու վերլուծումը չափազանց է, անողորմ, անընդդիմադրելի: Ապա Լեւ Տոլստոյը ինքը ձեւակերպում է իր սեփական տեսակէտը: Եւ այստեղ ընթերցողը տեսնում է — մեծ զարմանքով եւ մեծ հիասթափութեամբ — որ այս նոր փորմիւլը նոյնքան անզօր է, նոյնքան վիճելի ու նոյնքան անընդունելի, որքան եւ բոլոր նախորդները: Մինչեւ Տոլստոյի միջամտութիւնը դուք չունէիք գեղարուեստը սահմանող անվիճելի մի փորմիւլ: չունեցաք նաեւ այդ միջամտութիւնից յետոյ: Հարցը մնաց հարց:

Այս այսպէս լինելով հանդերձ, կարո՞ղ էք ասել, թէ ուրեմն՝ գեղարուեստը — գեղարուեստական ստեղծագործութիւնը եւ գեղարուեստա-

կան երկը — գոյութիւն չունեն իրականութեան մէջ։

Չէք կարող, ի հարկէ։

Դուք կարող էք տարբեր գաղափար ունենալ գեղարուեստի էութեան ու ծաւալման (սահմանների) մասին, նրա ծագման ու աղբիւրների, զարգացման օրէնքների ու հանրային արժէքի մասին. բայց նրանց գոյութիւնը չէք կարող հերքել։ Կարող էք, օրինակ, վիճել թէ գեղարուե՞ստ է արդեօք պատառները դունաւորելու կամ ճաչի սեղանը ծաղիկներով զարդարելու արհեստը. բայց չէք կարող հերքել, թէ կան գործունէութիւններ — օրինակ՝ երգ յօրինելը կամ արձան քանդակելը — որոնց գեղարուեստական լինելը անվիճելի է։ Կարող էք վիճել՝ գեղարուեստակա՞ն գործ պէտք է համարել թէ՞ գիտական Միչլէի գրած «Ֆրանսիայի պատմութիւնը» կամ Նիցչէի փիլիսոփայական որոնումները. բայց չէք կարող ժխտել, որ Միքէլ Անջելոյի քանդակները, Շեքսպիրի դրամաները, Ռամպրանտի նկարները, Բեթհովէնի սիմֆոնիաներն ու Տոլստոյի վէպերը՝ գեղարուեստական երկեր են (թո՛ղ որ «վատ», վնասակար գեղարուեստի երկեր լինեն, ինչպէս որակում է ինքը Տոլստոյը)։

Ամէն կասկածից դուրս է, որ գեղարուեստական գործունէութիւնն ու նրա արդիւնքը՝ գեղարուեստական երկերը՝ գոյութիւն ունեն, թէկուզ մենք չկարողանանք հասկանալ ու ճշդօրէն սահ-

մանել դեղարուեստի էութիւնը:

Մենք յաճախ չենք կարողանում սպառող կամ դէթ զոհացուցիչ բացատրութիւն տալ նոյնիսկ մեզ լաւ ծանօթ ֆիզիքական երեւոյթներին, որ իրարից չատ աւելի տարբերական են, պարզ ու դիւրըմբռնելի, քան ընկերային կարգի երեւոյթները: Օրինակ, մենք չենք կարող բացատրել, թէ ի՞նչ է էլեկտրականութիւնը. բայց գիտենք ու չենք կասկածում, որ էլեկտրական ոյժը գոյութիւն ունի: Գիտենք ու չենք կասկածում, որովհետեւ ամէն օր տեսնում ենք նրա բազմազան արտայայտութիւնները, գործ ունենք հետը եւ նոյնիսկ կարողանում ենք ծառայեցնել մեր օգտին:

Անգլիական ազգը գոյութիւն ունի: Սա մի փաստ է, որ անկարելի է հերքել, միանգամայն անկախ նրանից, թէ որքան լրիւ է, բաւարար ու զոհացուցիչ մեր ունեցած հասկացողութիւնը ազգութեան մասին: Կարելի է կասկածի ու վէճի առարկայ անել, թէ գոյութիւն ունե՞ն քուրդական, բրետոնական, բոշայական կամ հրէական ազգեր, — այսինքն՝ կազմո՞ւմ են արդեօք քուրդերը, բրետոնները, բոշաները կամ հրեաները այն ուրոյն հատկանիշները, որ «ազգ» է անուանւում: Այստեղ կարող են հանդէս գալ հասկացողութիւնների խոշոր տարբերութիւններ, բայց անգլիական ազգի գոյութիւնը անվիճելի է: Կարելի է հարցնել, թէ պէ՞տք է արդեօք հաշուել անգլիական ազգի մէջ նաեւ սկոտիացիներին ու

հիւսիս–ամերիկեան հանկիններին, սպանական աղ–գի մէջ՝ բասկերին, ֆրանսիականի մէջ՝ բրետոն–ներին, ռուսականի մէջ՝ ուկրայինացիներին... Ուրիշ խօսքով, կարելի է հարցնել, թէ որո՞նք են անգլիական, սպանական, ֆրանսիական, ռուսա–կան ազգերի ազգային սահմանները. բայց այս հարցի վերաբերեալ կասկածները կամ տարաձայ–նութիւնները չեն կարող վիճելի դարձնել այդ ազգերի բուն գոյութիւնը:

Ազգերի գոյութիւնը արտայայտւում է ազգա–յին ընոյթ ունեցող բազմազան երեւոյթների մէջ: Ճիշդ է, որ այդ երեւոյթները յաճախ այնքան բարդացած, այնքան խառնուած են լինում կողմ–նակի տարրերի հետ, որ իրաւացիօրէն կասկածի տակ են դնում նրանց ազգային էութիւնը: Բայց անհերքելի է եւ այն, որ բազմաթիւ են նաեւ այն–պիսինները, որոնց վերաբերմամբ այլեւս ոչ մի կասկած չի կարող տեղի ունենալ: Կարելի է — օրինակ — վիճել, թէ ո՞րչափ ազգային է եղել գերմանական մանր պետութիւնների միացումը մի պօրեղ կայսրութեան մէջ, Նորվեգիայի բաժանու–մը Շուէդիայից, հրէական ջարդերը հարաւ–արեւ–մըտեան Ռուսիայում, հայ–թաթարական ընդհա–րումները Անդրկովկասում: Բայց անկարելի է չտեսնել, որ գերազանցօրէն ազգային բնոյթ ու–նեն այնպիսի երեւոյթներ, ինչպէս են — օրինակ — սին–ֆէյնեական շարժումները իրլանդիա–յում, հայկական շարժումները Թիւրքիայում,

պայքարը, որ ծաւալւում է այսօր Վենա քաղաքի համալսարանի չուրջը վալլոններէի ու ֆլամանդներէի միջեւ, ռուսահայերի ըմբոստացումը եկեղեցական կալուածներէի գրաւման դէմ...

Այս կարգի երեւոյթները դալիս են ապացուցանելու, որ ազգութիւնները, իբրեւ այդպիսիներ, ու անկախ՝ բարդացնող օտար տարրերից, գոյութիւն ունեն իրականութեան մէջ: Եւ եթէ մենք, այնու ամենայնիւ, չենք կարողանում գրանել «ազգ» գաղափարը սահմանող մի անվիճելի փորմիւլա, դրա պատճառը ազգի իրականութիւնը չէ, այլ պարզապէս մեր տգիտութիւնը, հասկանալու եւ բացատրելու ընդունակութեան պակասաւորութիւնը:

Դ.

Բայց արդեօ՞ք այդ աստիճան անզօր ենք փաստերի առջեւ:

Ոչ, այդքան էլ անզօր չենք: Եթէ չենք կարող սահմանել «ազգ» գաղափարը մի կարճ, կուռ ու սպառող փորմիւլով (ինչպէս սահմանում ենք, օրինակ, մաթեմատիկական հասկացողութիւնները), կարող ենք յամենայն դէպս նկարագրել երեւոյթը, հասկանալ ու բացատրել բաւարար չափերով:

Իսկապէս, միայն մաթեմատիկական, դուռ

վերացական հասկացողութիւնները կամ ֆիզիքօ–մեքանիքական տարրական երեւոյթներն են որ կա–րող են ամփոփուել փորմիւլների մէջ։ Ընկերային կեանքի բարդ երեւոյթները — պիտական մտքի այսօրուայ կարողութեան չրջանակներում — չեն հանդուրժում փորմիւլները։ Նրանք կարող են նը–կարագրուել ու բացատրուել, բայց չեն կարող սահմանուել։ Եւ այս վերապահումներով, «ազգ»ի մեկնութիւնը չի ներկայացնում որեւէ բացառիկ դժուարութիւն. «ազգ»ը անսահմանելի է ճիշդ այն մտքով ու այնչափ, ինչ մտքով ու որչափ անսահմանելի են նաեւ ուրիշ ընկերային երե–ւոյթները, — օրինակ՝ դասակարգը։ «Ազգ»ը պակաս ըմբռնելի կամ պակաս բացատրելի գա–ղափար չէ, քան դասակարգը։

Մարդկային միտքը առանց մեծ դժուարու–թիւնների կարող է ըմբռնել ու բացատրել «ազգ»ի էութիւնը, կազմող տարրերը, սրանց փոխադարձ կապն ու զումարումը։ Բացատրութիւնը կը լինի մի քիչ բարդ ու երկար, ոչ անլուծելի իր բոլոր մանրամասնութիւնների մէջ, բայց՝ վերջի հաշ–ուին՝ միանգամայն բաւարար։

Որո՞նք են «ազգ» կազմող տարրերը։

Ճիշդ այն, որ քննեցինք ու ժխտեցինք նա–խորդ էջերում։ Հարկաւոր է միայն գնահատման առնել ոչ թէ ամէն մի տարրը անջատօրէն, այլ բոլորը միասին, իբրեւ մի բարդ ամբողջութիւն։ Ամէն մի ազգային տարր, առանձնապէս վերցը–

բած, չի կարող բնորոշել ազգը: Բայց նրանց գումարումը՝ ազգ է արդէն: Ջրածինը ջուր չէ, ոչ էլ թթուածինը: Բայց երկու մասնիկ ջրածնի քիմիական զումարումը մի մասնիկ թթուածնի հետ՝ ջուր է արդէն:

Ինդիրը պարզելու համար պէտք է վերաքննութեան առնենք այն, որ մի անգամ քննել ու ժխտել ենք արդէն եւ փորձենք գտնել մասնակի «այո»ներ այնտեղ, ուր տեսել ենք ու արձանագրել միայն «ոչ»եր:

Գիտեմ, որ այս վերադարձը մի քիչ տաղտկալի պիտի լինի, բայց ուրիշ ճանապարհ չունեմ հետագայ եզրակացութիւններս հիմնաւորելու համար:

Ե.

I

Ցեղը ազգ չէ, դա պարզ է, բայց ցեղը՝ ազգ կազմող հիմնական տարրերից մէկն է: Ցեղային կապակցութիւնը՝ ինքնըստինքեան ու անջատօրէն վերցրած՝ չի կարող բնորոշել այն բարդ հաւաքականութիւնը, որ ազգ է անուանւում. բայց՝

զումարուելով ուրիշ ազգային տարրերի, ուրիշ կարգի կապակցութիւնների հետ միասին՝ նա կազմում է ազգ:

Տեսանք, թէ ցեղայնօրէն ո՛րքան բարդ է անգլիացու արիւնը. նոյնը եւ հայինը. նոյնը եւ ամէն ազգի առհասարակ: Բայց հարկ է նկատել, որ անգլիական ազգը կազմուել է այն ժամանակ, երբ ցեղերի խառնուրդը — խոշոր չափերով — արդէն կատարուած փաստ է եղել, այսինքն՝ եղել է արդէն մի ցեղային միութիւն, — թէեւ բարդ ու բազմարիւն, — որը ծնունդ է տուել ազգային միութեան: Ծագման բարդութիւնը չի բացասում միութեան գոյութիւնը: Երբ խառնուրդը կատարուած է ու հաստատուած, նա ինքը արդէն ներկայացնում է մի նոր միութիւն: Անգլիական ձին խառնուրդ է արաբականի եւ (եթէ չեմ մոռացել) նորմանդականի. բայց՝ խառնուրդ լինելով հանդերձ՝ նա ներկայացնում է լաւ ձուլուած, ուրոյն ցեղային տիպ, մի շարք առանձնայատկութիւններով, որ բնորոշ են իրան համար եւ որ տարբերում են իրան ուրիշ ցեղային տիպերից:

Ուրարտացիները հայ չէին, ինչպէս հայ չէին նաեւ այն արիական ժողովուրդները, որ եկան Ուրարտու՝ հիւսիս-արեւմուտքից: Բայց սրանց խառնուրդից ստացուեց մի նոր ցեղային միութիւն, որը եւ հիմք դրեց ապագայ հայ ազգին:

Ի հարկէ, ազգերը կազմուելուց յետոյ էլ շարունակուել է (ու շարունակւում է) խառնման

պրոցեսը: Բայց որովհետեւ ազգերը կազմուել են չատ աւելի ուշ, քան տեղի են ունեցել ժողովուրդների մեծ տեղափոխութիւնները եւ ցեղերի զանգուածային կուտակումները իրար վրայ. եւ որովհետեւ միւս կողմից ամուսնութիւնները հետագայում կատարուել են ընդհանրապէս ազգակիցների մէջ, ցեղային կապակցութիւնը չորունակել է (ու չարունակում է) պահպանուել ազգերի ներսը:

Չի կարելի ասել, թէ ազգին պատկանող ամէն մի անհատ ունի անպատճառ ցեղակցական կապեր իր ազգակիցների հետ: Լորդ Բիքօնսուիլդի երակների մէջ չկար թերեւս ոչ մի կաթիլ անգլիական արիւն, ինչպէս չկար թերեւս եւ ոչ մի կաթիլ ֆրանսիական արիւն Տիկ. Սառա Բերնարի երակների մէջ: Եւ սա պատճառ չէ, որ մենք ժխտենք Բիքօնսուիլդի անգլիացի լինելը ու Տիկ. Բերնարի ֆրանսուհի լինելը (հետագայում կը տեսնենք, թէ ի՞նչն է որ՝ հակառակ ցեղին՝ մէկին անում է անգլիացի, միւսին՝ ֆրանսուհի): Բայց՝ ընդհանուր առմամբ ու զանգուածօրէն՝ անգլիացին — միջին անգլիացին — կապուած է ցեղային կապերով անգլիացիների հետ, ֆրանսիացին՝ ֆրանսիացիների հետ, հայը՝ հայերի հետ:

Ասացողը՝ ազգային տիպերի գոյութիւնը, որ անհերքելի փաստ է:

Ի հարկէ, հայերի մէջ պատահում են (ու բա-

ւսկանչին յաճախ) միմեանցից տարբերուող տիպերը (դլխաւորապէս՝ ըստ ծննդավայրերի) եւ չի կարելի ասել, թէ ամէն մի հայի ազգային պատկանելիութիւնը դրոշմուած է արդէն իր ճակատի վրայ: Բայց ընդհանուր առմամբ հայ մարդը ներկայացնում է այնքան բնորոշ տիպ, որ դժուար չէ ճանաչել նրան՝ առանց ծննդականը քննելու: Մի քիչ դիտող ու մի քիչ վարժուած աչքի համար դժուար չէ տարբերել — առանց մեծ սըխալների — հային թուրքից, անգլիացուն ֆրանսիացիից, գերմանացուն սպանացիից, ռուսին չերքէզից:

Պատահում է, որ դուք զարմանում էք, երբ տեղեկանում էք, թէ այսինչ անհատը հայ է. ամենևին նման չէ, ասում էք: Մի ուրիշ անգամ, հանդիպելով մի սպանացու, մտածում էք. ո՛րքան այս մարդը նման է հայի:

Ինչի՞ն էք զարմանում, ինչի՞ն է նման այս մէկը ու նման չէ այն միւսը:

Պատասխանը պարզ է. դուք գիտէք, որ գոյութիւն ունի մի ուրոյն հայ ազգային տիպ, գիտէք, թէ ո՛րն է այն (թէկուզ չկարողանաք նկարագրել). սպասում էք, թէ ամէն մի հայ մարդ՝ աւելի կամ պակաս չափերով՝ պիտի համապատասխանի (նման լինի) ձեր գիտցածին, եւ քնաքանօրէն զարմանում էք երբ չէք գտնում սպասուած նմանութիւնը: Ինչպէս զարմանում էք նաեւ այն դէպքում, երբ գտնում էք նմանութիւն այն-

տեղ, ուր չէիք սպասում, չսիրեի զանկիք (սպասնացու եւ հայի միջեւ):

Իսկ տիպը սահմանում է ու փոխանցում ժառանգօրէն, նմանութիւնը պայմանաւորում է գլխաւորապէս արիւնակցական կապերով (կան եւ ուրիշ գործօններ, բայց գլխաւորը՝ արիւնակցութիւնն է):

Արիւնակցական կապերը, ցեղային միութիւնը՝ մէկն է այն տարրերից, որոնցից կազմւում է ազգը:

II

Պետական միութիւնը ազգային միութիւն չէ. պետութիւնն ու ազգութիւնը՝ տարբեր հասկացութիւններ են: Ազգը կարող է գոյութիւն ունենալ (գոնէ ժամանակաւորապէս) առանց պետութեան, կարող է բաժանուած լինել տարբեր պետութիւնների մէջ, ինչպէս եւ պետութիւնը կարող է կազմուած լինել տարբեր ազգերից: Ազգը աւելի հիմնական, աւելի տեւողական ու աւելի արժէքաւոր երեւոյթ է, քան պետութիւնը: Պետութիւնները յաճախ կազմւում են ու լուծւում յանկարծակի, քաղաքական պատահարների հետեւանքով ու արհեստական միջոցներով. մինչդեռ ազգը կազմելու կամ լուծելու համար՝ հարկաւոր է դարերի ու սերունդների աշխատանք:

Ճի՛շդ է այս ամէնը:

Բայց պետութիւնը այն անհրաժեշտ միջոցներից մէկն է, որոնք հնարաւորութիւն են տալիս ազգերին կազմակերպուելու, անուղղ առնելու, զարգանալու եւ զօրեղանալու: Մինչ այն աստիճան, որ թոյլատրելի է հարց դնել, թէ կարո՞ղ էին արդեօք ծնունդ առնել ազգերը պետական շրջանակներից դուրս ու անկախ:

Փաստը այն է, որ ամէն մի ազգ ունի այսօր կամ ունեցել է անցեալում (իր կազմակերպման շրջանում) ինքնուրոյն պետական կեանք եւ այդ-տեղ է գտել իր ինքնահաստատման ամենազօրեղ նեցուկներից մէկը:

Եթէ այս կամ այն ազգային հաստուած (դերմանական գաղութները Ռուսիայում եւ Ամերիկայում, իտալացիները Աւստրիայում, յոյները Թիւրքիայում) անջատուած է իր պետութիւնից, նա չարունակում է մնալ արմատից — բուն ազգից, մայր ազգից, որ մնում է ամբացած՝ պետական հողի վրայ:

Եթէ որեւէ ազգութիւն չունի այսօր իր սեփական պետութիւնը (ինչպէս չեն ունեցել՝ Մեծ Պատերազմից առաջ՝ լեհերը, լիթուինները, չեխերը, հայերը...), ունեցել է այն աւելի կամ պակաս հեռաւոր անցեալում, պահել է կենդանի յիշողութիւններ անցեալի մասին եւ չարունակում է ապրել, կենդանի մնալ պատմութիւնից ժառանգած պաչարով:

Կայ մի ազգ միայն — բոշան, որի պետութիւն կազմելը, երբեւիցէ ու որեւէ տեղ, մնում է տակաւին անյայտ: Բայց այս միակ ու բացառիկ օրինակը չի կարող նսեմացնել ընդհանուր երեւոյթի ոյժը, մանաւանդ որ բոշաների «ազգ» լինելը լուրջ կասկածներ է յարուցանում:

Իսկ ընդհանուր երեւոյթն այն է, որ ազգերը պետութեան մէջ են որոնել ու գտել իրանց ապաստանը, կազմել են պետութիւնները ու զէնքի ոյժով պաշտպանել այն. եւ, եթէ դժբախտութիւն են ունեցել կորցնելու, տառապել են կորուստից, յամառօրէն ձգտել են վերահաստատելու եւ ապրել են ապագայի յոյսերով: Ամբողջ 19րդ դարի պատմութիւնը եւ մանաւանդ մեր ապրած չորեքանը 20րդ (դարի առաջին քառորդը) բազմաթիւ ապացոյցներ են տալիս ազգերի այս բուռն, այս անխորտակելի ուենչին:

Ինքնապահպանման բնազդը մղում է ազգերը դէպի ինքնուրոյն պետական կեանք:

Ինչո՞ւ:

Որովհետեւ պետական կեանքը ազգային կեանքի գոյութեան (կամ՝ առնուազն՝ նրա ապահովութեան) անհրաժեշտ պայմաններից մէկն է: Պէտք է դիտնալ տարբերել ազգը պետութիւնից (ազգը nation չէ): Բայց չի կարելի չտեսնել, որ սրանք խիստ սերտ կապուած ու միմեանց լրացնող միութիւններ են:

III

Ցեղն ու պետութիւնը կապուած են աշխարհագրական վայրի, որոշ հողամասի հետ:

Պետութեան վերաբերմամբ սա հասկանալի է ինքնըստինքեան. տերիտորիան պետութիւն կազմող երեք հիմնական տարրերից մէկն է (տերիտորիալ, ժողովուրդ, կառավարութիւն): Ինչ վերաբերում է ցեղին՝ սրա սերտ կապակցութիւնը երկրի հետ հասկանալի կը լինի, եթէ նկատի առնենք, որ ցեղային տիպը կարող է պահպանուել միայն անխառն ամուսնութիւնների շնորհիւ ու այն էլ՝ որոշ ֆիզիքական միջավայրում (կլիմայ ու մի չարք ուրիշ դրծօններ): Խառն ամուսնութիւնները (որ անխուսափելի են օտար երկիրների մէջ) ու տարրեր միջավայրը քանդում են ցեղային ամրողջութիւնը, այլասերում են նրա դէմքը:

Երկիրը բացարձակապէս անհրաժեշտ է պետութիւն կազմելու համար եւ մեծապէս կարեւոր՝ ցեղային միութիւնը պահպանելու համար:

Եւ որովհետեւ ցեղն ու պետութիւնը՝ ազգային տարրեր են, հետեւապէս ազգային տարր է հանդիսանում նաեւ երկիրը:

Տեսանք, որ միեւնոյն վայրում ապրում են տարրեր ազգեր եւ որ միեւնոյն ազգի հատուածները ապրում են տարրեր վայրերում: Բայց այս միջանկեալ երեւոյթը չի կարող քողարկել այն

հիմնական փաստը, որ ամէն մի ազգ (բացի բոլշեւիկներից) ունի այնու ամենայնիւ մի հոգեմաս, որ իրն է յատկապէս, որի հետ կապուած է պատմականօրէն, ուր ապրել է զարերով եւ ուր չարունակում է ապրել զանգուածօրէն:

Սպանական, իտալական ու հոլանդական բազմամարդ ազգութիւներ դոյութիւն ունեն Հիւսիսային ու Հարաւային Ամերիկայում, Հարաւային Աֆրիկէում ու ասիական մեծ կղզիներում. բայց սպանական, իտալական ու հոլանդական ազգերի հիմնական զանգուածները մնում են մայր երկրում, կապուած այն հողի հետ, ուր ծագել են ու ձեւաւորուել իրանց ազգային միութիւնները:

Իրրեւ դասական օրինակ հայրենազուրկ, ապերկրային ազգութեան՝ մատնանշւում է յաճախ հրէական ազգը, որ ցրուած է աշխարհիս չորս կողմը: Մոռացութեան է տրւում կամ պատշաճ չափով հաշուի չի առնւում այն հանգամանքը, որ իրանց պատմական հայրենիքում՝ Պաղեստինի մէջ՝ հրեաները պահել են մի փոքրիկ, բայց շատ կենսունակ կորիզ եւ որ Միջին Եւրոպայում Լեհաստանի, Ուկրաինայի ու Գալիցիայի սահմաններում կայ մի երկիր, ուր հրեաները ապրում են հոծ բազմութիւններով, մշտական ու անմիջական շփման մէջ իրար հետ, անջատուած հարեւանների կրօնական եւ ուրիշ կարգի պատնէշներով: Եթէ չլինէին այս կենտրոնները եւ այն կենդանի կապը, որ կապում է ամենահեռաւոր գաղութները

սրանց հետ, — հարց է թէ պիտի կարողանայի՞ն արդեօք Նիւ Եորքի, Փարիզի եւ Վիեննայի հրեաները պահպանել իրանց ազգային դէմքն ու ազգային դիտակցութիւնը:

Ապա՝ երկրի ու միջավայրի մեծ արժէքը հաստկանալու համար, հարկ է հաշուի առնել նաեւ այն, որ ազգային տիպը մի անշարժ, ընդմիշտ հաստատուած ու անփոփոխ բան չէ: Ընդհակառակը, նա ենթակայ է բնաչրջման (évolution) ընդհանուր օրէնքին, չարունակ անկայուն հաւասարակշռութեան վիճակի մէջ է, չարունակ կերպարանափոխուում է, առանում է նոր ձեւեր ու արտայայտութիւնները: Բայց իր հարազատ չրջապատի մէջ ազգութիւնը զարգանում է բնականօրէն, համաճայն իր ներքին էութեան ու հաւատարիմ իր անցեալին. ամէն մի նոր փոփոխութիւն գալիս է լրացնելու, զօրեղացնելու եւ խորացնելու հիմնական տիպը: Մինչդեռ անհարազատ չրջապատի մէջ, օտար ու խորթ ազդեցութիւնների տակ, ոչ միայն ցեղը, այլեւ ազգը՝ իբրեւ այդպիսին՝ այլասերւում է անխուսափելիօրէն, կորցնում է ինքնայատուկ գծերը, իւրացնում է յատկութիւններ, որ իրանը չեն: Առաջ են գալիս զգուածային խառն տիպեր, որ միայն կէս տիպեր են ու զատապարտուած են կորուստի, եթէ կորցնում են կապերը մայր երկրի հետ:

Հնդկաստանի, Միջագետքի ու Ռումանիայի հայերը — հայ են, ի հարկէ (աւելի ճիշդը կը լի-

նէր ասել՝ դեռ եւս հայ են)։ Բայց նրանք պակաս չափով հայ են, քան Տարօնի կամ Արարատեան դաշտի հայերը։ Եւ վաղուց արդէն դադարած կը լինէին հայ լինելուց, եթէ Տարօնում ու Արարատեան դաշտում գոյութիւն չունենային ազգային մեծ դանդուածներ կամ եթէ կարուէր ամէն կապ այդ դանդուածների ու գաղութների միջեւ։

Ոչ միայն ցեղային, այլեւ ազգային միութիւնը պահպանելու համար անհրաժեշտ է, որ միութեան անդամները՝ ազգը կազմող մարդիկ մշտական ու ամենաեւրա չփման մէջ լինեն իրար հետ, ենթակայ լինեն փոխադարձ ազդեցութեան, մասնակից լինեն այն հաւաքական աշխատանքին, որ ստեղծագործում է ազգային արժէքներ, բնորոշում է ու հաստատում ազգը։ Իսկ սրա համար հարկաւոր է ամէնից առաջ ֆիզիքական մօտիկութիւն, այսինքն՝ երկրային միութիւն։

IV

Կրօնական միութիւնը ազգային միութիւն չէ, այդ մենք տեսանք։ Եթէ անդրկովկասեան թուրք հրապարակախօսները չրջառութեան մէջ են դրել «մուսուլմանական ազգ» արտայայտութիւնը եւ եթէ Անգարայի միլլիականները՝ խօսելով Լօզանում Թիւրքիայի ազգային փոքրամաս-

նութիւնների մասին՝ չէին համաձայնում հաշուի առնել նաեւ քուրդերին, առարկելով թէ քուրդը խալամ է, — սա կամ տգիտութիւն է կամ գաղափարների դիտակցական, միտումնաւոր չխոթում:

Այդ այդպէս է:

Բայց արդեօ՞ք կրօնը չունի իր տեղը ազգութիւն կազմող տարրերի մէջ:

Ունի անկասկած: Դաւանանքն ու դաւանական կազմակերպութիւնը՝ եկեղեցին խաղացել են ազգերի պատմութեան մէջ (ու դեռ այսօր էլ շարունակում են խաղալ) շատ կարեւոր դեր եւ կրօնը պէտք է համարել՝ որոշ վերապահումներով ազգային խոշոր յատկանիշներից մէկը:

Անհերքելի է, որ նոյն ազգի պատկանող տարբեր հատուածները կարող են ունենալ (եւ ունեն յաճախ) տարբեր դաւանանքներ: Բայց ընդհանուր երեւոյթն այն է, որ ամէն մի ազգ՝ իբրեւ ամբողջութիւն՝ ունի իր յատուկ դաւանանքը, պատկանում է մի որոշ եկեղեցու:

Ռուսը եւ յոյնը օրթոդոքս են դլխաւորապէս. սլաւոնացին, իտալացին եւ ֆրանսիացին՝ կաթոլիկ. գերմանացին, չուէդացին եւ անգլիացին՝ բողոքական. հայը՝ լուսաւորչական. արաբը եւ թուրքը՝ մահմեդական. հրեան՝ մովսէսական. չինացին՝ կոնֆուցիական...

Կրօնական ու ազգային սահմանները՝ իրանց բոլոր մանրամասնութիւններով՝ նոյնը չեն անշուշտ, բայց խոշոր գծերով — ծածկում են իրար:

Եւ հասկանալի է, որ այդպէս է, որովհետեւ ինքը դաւանանքը՝ ազգային մեծ ստեղծագործութիւններից մէկն է:

Չի կարելի ասել, թէ ամէն մի կրօն ազգային է ամբողջապէս ու թէ ամէն մի ազգ ունի իր սեփական, միմիայն իրան պատկանող ու մի ուրիշներից բոլորովին անջատ կրօն, — ճիշդ այնպէս, ինչպէս չի կարելի ասել, թէ ամէն մի ազգ ունի իր հիմնովին ուրոյն լեզուն, հիմնովին ուրոյն զարուեստը, գիտութիւնը, տեքնիքան, ընկերային կառուցուածքը, վարչական ձեւերը, օրէնսդրութիւնը... Ազգերը մեծամեծ փոխառութիւններ են արել միմեանցից, ժառանգել են կամ ներմուծել օտար հարստութիւններ, որոնց թուում նաեւ կրօնական արժէքներ:

Բայց սեփականացնելով դրսից բերուած կրօնական կառուցուածքներ ու դաւանական ձեւեր, ամէն մի ազգ դրել է այդ պատրաստի կառուցուածքների ու ձեւերի մէջ ինքնայատուկ բովանդակութիւն: Եւ այսո՛ղ է ահա, որ արտայայտել է իր ազգային հոգին:

Հռոմէացիների Իւպեւերը՝ հելլէնների Զէուսը չէ, ոչ էլ Զէուսը եգիպտացիների Օզերիսը, թէեւ երեքն էլ ներկայացնում են նոյն անձնաւորութիւնը: Քրիստոնեայ հինդուսի դաւանած Հայր Աստուածը Իսրայէլի Եհովան չէ, ոչ էլ Արաբի Ալլահը: Ծուռ Դաւթի պահպանի Մարութայ Բանձր Աստուածածինը Լուրդի Notre Dameը չէ,

ոչ էլ Մուրադաւոր Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետը՝ ռուսների Իվան Պրեզաեչան։

Ազգերը դունաւորում են հաւատքը իրանց սեփական գոյներով եւ երբ ազգայնացած հաւատքը հաստատուած է, նա ինքը արդէն դունաւորում է ազգերը իր գոյներով։ Ազգային մխիթարիները հաւաքական ստեղծագործութեան ճանապարհով մշակում են դաւանանքներ եւ դաւանական միութիւնը իր հերթին դառնում է ազգային միութիւնը ամրացնող կապերից մէկը։

Քրիստոնէական կրօնը իր գոյութեան առաջի չրջանում եղել է մի եւ «ընդհանրական» (կամ այդպէս է համարուել)։ Բայց հետզհետէ ծաւալուելով ու տարածուելով, նա բաժանուել է անջատ եկեղեցիների, որոնք՝ դաւանելով հանդերձ նոյն Աւետարանը՝ էապէս տարբերւում են իրարից։ Եւ շատ ուշագրաւ երեւոյթ է, որ նոյն քրիստոնէութեան չրջանակի մէջ լատին ընտանիքի պատկանող ազգերը դաւանում են գլխաւորապէս կաթոլիկութիւն, գերման ընտանիքի պատկանողները՝ լութերականութիւն, սլաւ ընտանիքի պատկանողները՝ օրթոդոքսութիւն։

Ինչո՞ւ են կատարուել այս բաժանումները, ինչո՞վ են պայմանաւորուել եւ ինչո՞ւ ցեղ-ազգային բնոյթ են ստացել։

Ինչո՞ւ գերմանացին ըմբոստացել է պապականութեան դէմ, իսկ սլանացին՝ պաշտպան է կանգնել նրան։ Ինչո՞ւ պարսիկը, տեղի տալով

յաղթական խլամին, էական ուղղումներ է մացըրել նրա մէջ ու ստեղծել է մի նոր դաւանանք՝ չիայութիւն: Ինչո՞ւ հայը՝ ենթարկելով իրան ամենամեծ զրկանքների, նեղութիւնների ու վտանգների՝ դարեր ու դարեր հաւատարիմ է մնացել իր ազգային եկեղեցուն: Եւ ինչո՞ւ նոյն հայը, ընդունելով կաթոլիկութիւնը, մերժել է քահանայապետի անսխալականութիւնը, պահել է ժամասութեան մէջ իր լեզուն, իր չարականը, ձէսերը...

Պատահակա՞ն երեւոյթ են արանք թէ՞ բնական հետեւանք այն խոշոր տարբերութիւնների, որ գոյութիւն ունեն սպանացու եւ գերմանացու, պարսիկի եւ արաբի, հայի եւ թուրքի, կաթոլիկ հայի եւ կաթոլիկ բրետոնացու հոգեկան չէնքի, հոգեկան պահանջների ու ըմբռնումների մէջ:

Դաւանանքը՝ ի՛նչ ծագում էլ ունենայ, ո՛րտեղից ու ի՛նչպէս էլ ներմուծուած լինի՝ անխուսափելիօրէն ազգայնանում է ժամանակի ընթացքում եւ ազգայնանալուց յետոյ ինքը դառնում է մի նոր ազգային տարր:

Կաթոլիկ սպանացին ամէն կիրակի ներկայ է լինում հանդիսաւոր messeին, մոմ է վառում սուրբերի առջեւ, հաղորդւում է աստուածային արիւն-մարմնով, օծում է ճակատը սուրբացած ջրով, տարին մի քանի անգամ մասնակից է լինում օպերային ներկայացումների պէս չքեղ բեմադրուած թափորներին, զարդարում է Տիրամօր

արձանը ծաղիկներով ու զոյնզոյն կերպաներ-
րով...

Բոլորովին այլ բնոյթ ունի լիւթերական գեր-
մանացու աստուածապաշտութիւնը: Նա գնում է
իր անչուք, պարզ ու պազ եկեղեցին այնպէս,
ինչպէս պարտաճանաչ ու ուշադիր աշակերտը գը-
նում է դպրոց, սեւ հագած, գիրքը կռան տակ,
լուռ ու լուրջ: Լսում է ուսեալ պատուելիի հեր-
թական դասախօսութիւնը, Սուրբ Գրքի վերլու-
ծումն ու մեկնութիւնը: Փոխարէն ներշնչուելու,
նա աշխատում է հասկանալ, մտածում է ու դա-
տում: Եկեղեցին նրա համար զեղեցկագիտական
յուզումների թատերասրահ չէ, այլ բարոյագի-
տութեան լսարան: Նա չունի սուրբեր, որոնց բա-
րեհաճ ուշադրութիւնը կարելի է գրաւել մոմ վա-
ռելով. չունի աստուածային չնորհով օժտուած
քահանայ, որից կարելի է ստանալ թողութիւն
մեծ ու փոքր, անցեալ ու ապագայ մեղքերի հա-
մար: Նրա պաշտամունքի առարկան չի մարմնա-
ցած պատկերի ու արձանի կամ՝ մոմից չինած,
կարմիր-կապոյտ ներկուած ու փայլուն հուլունք-
ներով զարդարուած խամաճուկների մէջ: Նա չու-
նի կաթոլիկի նիւթական, անմիջական կապերը
Աստծոյ եւ նրա բազմաթիւ գործակալների հետ:
Նրա հաւատքը աննիւթ է, վերացական, պաշտա-
մունքը՝ դուսպ, ծէսերը՝ անչուք ու տժգոյն:

Զարմանալի չէ՞ր լինի, եթէ այս տարբեր ճե-
ւերի աստուածապաշտութիւնը եւ սրանց հետ

կապուած տարբեր հոգեկան ապրումները, կլլուկնուելով չարունակ ու աւերունդից աւերունդ անցնելով, չաղդէին խորապէս մարդկանց հոգիների վրայ, չկաղապարէին կաթոլիկ ու լութերականի հոգիները տարբեր կաղապարներով:

Ապանացին ապանացի է. ապանացին կապուած է միւս ապանացիների հետ (ու անջատուած դերմաններից) նաեւ այն պատճառով, որ նա կաթոլիկ է:

Ի հարկէ, կաթոլիկ հայը — հայ է, ապանացի չէ: Բայց մի կողմ թողնելով փայլուն բացառութիւնները, Ալիշանի կամ Պէչիկթաշլեանի տիպի մարդկանց, չի կարելի ժխտել, որ ընդհանուր առմամբ կաթոլիկ հայը ներչնչափ հայ չէ, ինչ չափ է լուսաւորչականը: Լրիւ հայ լինելու համար նրան պակասում է մի բան, ազգային դաւանանքը, — այն ուրոյն հոգեկան կապերը, որ ծագում են ու հաստատւում չնորհիւ ընդհանուր հաւատքի եւ ընդհանուր կրօնական ապրումների:

Այդ պակասը արհամարհելի մանրամասնութիւն չէ, նա ունի խոշոր կենսական արժէք:

Իմ հայրենի գաւառում (Ախալքալաքում) զուտ հայ-լուսաւորչական գիւղերի կողքին կան նաեւ մի քանի զուտ հայ-կաթոլիկ գիւղեր: Ապրում են անջատ, թէեւ բոլորն էլ գաղթականներ են, որ հարիւր տարի առաջ եկել են այստեղ միասին ու նոյն չրջաններից (Կարին-Բասէն-Ալաշկերտ): Նոյն ազգի անդամներ են, նոյն երկրի ժո-

դովուրդ, բայց լուսաւորչականները բացառապէս հայախօս են, մինչդեռ կաթոլիկները թրքախօս (դիտեն հայերէն, բայց գործածական լեզուն թուրքերէնն է)։ Նոյն բանը տեսել եմ Բազդատում։ Հայ ազգութիւը այստեղ մասամբ լուսաւորչական է, մասամբ կաթոլիկ։ Լուսաւորչականները հայախօս են, կաթոլիկները՝ արաբախօս (հայերէն չգիտեն ամենեւին)։ Եթէ չեմ սխալւում, սա ընդհանուր երեւոյթ է. լուսաւորչական հայերը պահել են (ու պահում են) ազգային լեզուն այնտեղ, ուր կաթոլիկ հայերը կորցրել են չառնոց (ախալցխայի հայ-կաթոլիկները հայերէն չգիտեն, խօսում են վրացերէն)։

Այս տարբերութիւնը չի կարելի վերագրել ժամասութեան լեզուին, որովհետեւ հայ-կաթոլիկների ժամասութեան լեզուն եւս նոյն արաբարն է։ Մնում է ենթադրել, որ դաւանական անջատումը թուլացրել է ազգային կապերը, հեռացրել է անջատուածները ազգային մեծ զանգուածներից, մեկուսացրել է ու թողել անպաշտպան իշխող լեզուների հանդէպ (թուրքերէնի, արաբերէնի, վրացերէնի)։

Իսկ լեզուի կորուստը (որ այս դէպքում հետեւանք է կրօնական անջատման) ինքն էլ իր հերթին դառնում է ազգը կազմալուծող նոր ու չատ զօրեղ գործօն, — մանաւանդ եթէ միւս ազգային կապերը թուլացած են արդէն։ Ախալցխայի հայ-կաթոլիկները ոչ միայն կորցրել են ազգային լե-

զուն, այլ եւ չեն սիրում յիշել ու յաճախ ուրա-
նում են իրանց հայ լինելը: Մինչդեռ Կախեթիայի
կամ Քարթալինայի հայ-լուսաւորչականները (որ
նոյնպէս վրացախօս են) պահել են անխախտ ազ-
գային գիտակցութիւնը. սրանց համար լուսաւոր-
չական եկեղեցին հանդիսացել է անցեալում եւ
մեծ չափերով մնում է մինչեւ այսօր էլ իրրեւ ա-
մէնից կենդանի ու ամէնից կենսունակ կապ՝ ազ-
գային միութիւնը պահպանելու համար:

Մի ուրիշ օրինակ: Թիւրքիայի հայ-կաթոլիկ-
ներն ու հայ-բողոքականները մինչեւ վերջին
տասնամեակը (մինչեւ Մեծ Պատերազմը, որ ուժ-
գին զարկ տուեց ժողովուրդների ազգային գի-
տակցութեան) մնացել էին անմասնակից հայ ա-
զատագրական չարժումներին: Շարժումները բա-
ցարձակապէս ազգային-քաղաքական էին, չունէին
ոչ մի առընչութիւն դաւանական բաժանումների
հետ. բայց եւ այնպէս, ոչ-լուսաւորչական հատ-
ուածները բռնել էին չէզոք, նոյնիսկ անբարեա-
ցակամ հանդիսատեսների դիրք: Ոչ միայն չէին
միանում լուսաւորչականներին՝ համազգային դա-
տը պաշտպանելու համար, այլ եւ ամէն կերպ ա-
չառում էին ցուցադրել, որ կապ չունեն հայու-
թեան հետ, որ իրանք տարբեր մարդիկ են, տար-
բեր ըմբռնումներով ու տարբեր ցանկութիւննե-
րով: Օտար դաւանանքը մթնացրել էր հայ մար-
դու ազգային գիտակցութիւնը, անդամահատ էր

արել ազգային միութիւնը եւ նուաստացրել նրա քաղաքական կշիռը:

Եւ վերջապէս, կրօնի արժէքը հասկանալու համար բաւական է յիշել հրեաների օրինակը: Հրէութիւնը վաղուց արդէն կորցրել է ազգային կապերի մեծագոյն մասը եւ եթէ այնուամենայնիւ պահել է ինքնագիտակցութիւնը ու հանդիսանում է այսօր իբրեւ ազգ, — դա պէտք է բացատրել գլխաւորապէս մովսիսեան օրէնքով, որ դարերից ի վեր եղել է ու այսօր էլ մնում է հրեաների ազգային կրօնը:

V

Ազգային հաւաքականութիւնը կազմող տարրերի մէջ ամէնից կարեւորը, ամէնից բնորոշը ու ամէնից վճռականը՝ լեզուն է: Ոչ ցեղը, ոչ պետութիւնը, ոչ տերիտորիան, ոչ կրօնը, ոչ կենցաղը եւ ոչ մի այլ յատկանիշ չի կարող բացատրել ու սահմանել «ազգ» երեւոյթը այնքան լրիւ, որքան լեզուն: Մինչ այն աստիճանի, որ կարելի է ասել առանց մեծ տատանումների, որ ազգը իր երեք քառորդով լեզու է եւ որ լեզուն երեք քառորդի չափով սպառում է արդէն «ազգ» գաղափարի բովանդակութիւնը:

Տեսանք արդէն, որ չի կարելի նոյնացնել ամբողջովին ազգն ու լեզուն, որ այդպիսի նոյնացման դէմ կան շատ լուրջ առարկութիւններ: Բայց

այդ առարկութիւնները, դծելով հանդերձ որոշ սահմաններ ազգի ու լեզուի միջեւ, չեն կարող նսեմացնել լեզուի բացառիկ մեծ արժէքը ազգի համար:

Իրար հետ կապուելու եւ միութիւններ կազմելու համար, մարդիկ ամէնից առաջ պէտք է կարողանան հասկանալ միմեանց, պէտք է կարողանան հաղորդակցուել իրար մէջ: Եւ որքան աւելի սերտ ու կատարեալ է փոխադարձ հասկացողութիւնը, այնքան աւելի զօրեղ է միութիւնն ու միութեան գիտակցութիւնը:

Արդ, հաղորդակցուելու այն բոլոր միջոցներից, որ մատչելի են մարդուն, ամէնից զօրեղը, ամէնից կատարեալը ու ամէնից արտայայտիչը — լեզուն է: Ընդհանուր լեզուն միացնում է մարդկանց, սերտօրէն կապում, առաջ է բերում մտերմութիւն, հնարաւորութիւն է տալիս կենակցելու եւ աշխատակցելու, — մանաւորապէս ստեղծագործելու այն առանձնայատուկ արժէքները, որոնք բնորոշում են ու հաստատում ազգութիւնը:

Լեզուն — չա՛տ աւելի քան կրօնը — արտայայտում է իր մէջ իր հեղինակների հաւաքական հոգին: Միւս կողմից — եւ դարձեալ չատ աւելի քան կրօնը — ինքը լեզուն դնում է իր սեփական կնիքը մարդկանց հոգիների վրայ: Մարդիկ մտածում են լեզուով, լեզուով են արտայայտում ու լեզուի միջոցով փոխանակում իրենց մտքերը: Մարդիկ յարմարեցնում են լեզուն իրենց կարիք-

ներին, որոնում են ու յօրինում լեզուային այնպիսի ձեւեր, որոնք ամէնից աւելի ընդունակ են հարազատօրէն թարգմանելու իրանց մտքերը: Բայց մի ու կոմից լեզուն ինքը — իր պատրաստի ձեւերով, իր պատրաստի բառարանով ու քերականութիւնով — որոշ կաղապարի մէջ է դնում խօսողի միտքը. լեզուն ուղղութիւն է տալիս, դասաւորակում է ու կազմակերպում մարդկային մտածողութիւնը:

Փոխադարձ ազդեցութեան ու անքակտելի կապակցութեան մի անծայր շղթան է ստեղծւում. լեզուն ազգային հաւաքականութիւնների ստեղծագործութիւն է, բայց եւ իրանք ազգային հաւաքականութիւնները՝ լեզուի ծնունդ են ամենամեծ չափերով:

Զուի ու հաւկիթի ծանօթ պատմութիւնն է սա:

Անտարակուսելի է սակայն, որ անդրանկութիւնը պատկանում է լեզուին. լեզուն հաւկիթն է, իսկ ազգը՝ հաւը միայն:

Լեզուն շատ աւելի հին երեւոյթ է, քան ազգը: Անշուշտ, ժամանակակից քաղաքակիրթ մարդկութեան լեզուները դերազանցօրէն ազգային ստեղծագործութիւններ են: Բայց մարդիկ ունեցել են լեզուներ (կամ լեզուային սաղմեր) շատ աւելի առաջ, քան ծագել են ազգերը: Լեզուն նոյնքան հին է, որքան հին է ինքը մարդը: Մարդու գոյութիւնը արդէն ենթադրում է լեզուի գո-

յութիւն: Մարդը բանական, այսինքն՝ խօսք ունեցող, խօսող կենդանի է:

Նախապատմական ամենահին ժամանակներում, ինչպէս եւ այսօր՝ ամէնից աւելի յետամնաց վայրենի ցեղերի մէջ՝ չի եղել ու չկայ ոչ մի մարդկային հասարակութիւն առանց լեզուի, — թո՛ղ որ այդ լեզուն լինի շատ աղքատ իր բառապաշարով (հազիւ երկու-երեք հարիւր բառ) ու շատ անկազմակերպ, շատ անստոյգ իր քերականական ձեւերով: Կենտրոնական Ափրիկէի մութ անտառների խորքերում թաքնուած մարդկային թափթփուկները չեն կազմում ազգային միութիւններ, բայց լեզու ունեն: Մարդն ու մարդկային լեզուն — անբաժանելի հասկացութիւններ են, մինչդեռ «ազգը» քաղաքակրթութեան ծնունդ է, որ կարող է կազմուել միայն այն հասարակութիւնների մէջ, որոնք հասել են արդէն զարգացման որոշ — ու բաւականին բարձր — աստիճանների:

Ազգը կազմւում է այն ժամանակ ու այնտեղ միայն, երբ եւ ուր կան արդէն մշակութային հարստութիւնների բաւարար պաշարներ: Այդ հարստութիւններից ամենէն արժէքաւորը — ազգութեան տեսակէտից — լեզուն է:

Երբ մի կողմից լեզուն ծաւալւում է ու ընդհանրանում այնքան, որ ընդգրկում է իր չրջանակի մէջ մի մեծ հասարակութիւն (միլիոնաւոր կամ դոնէ հարիւր հազարաւոր անդամներով) եւ երբ միւս կողմից լեզուն հասնում է այն աստի-

ճան զարգացման ու կազմակերպման, մշակում է բառարանն ու քերականութիւնը այնչափ, որ ընդունակ է դառնում արտայայտելու հոգեկան բարդ ապրումներ ու մտքի վերացական թռիչքները, — ահա այդ ժամանակ ու այդ տեղ ծնունդ է առնում ազգը (ենթադրելով, ի հարկէ, որ գոյութիւն ունեն — աւելի կամ պակաս չափերով — նաեւ ազգային այլ տարրերը)։

Լեզուի կազմակերպումը ազգի ծաղման վըճռական վայրկեանն է. լեզուի ինքնահաստատումը ազգի ինքնահաստատումն է։

Կարելի է ասել — աննչան վերապահումներով, — որ անգլիական ազգը ծնուեց այն օրը, երբ Զօուսերը գրեց անգլիական լեզուով «Կենտերբերիի պատմութիւնները», — այսինքն՝ գրի առաւ, որոշ ձեւերի մէջ դրեց, հաստատեց ու յաւերժացրեց այն կենդանի լեզուն, որով խօսում էին ինքը եւ իր ժամանակակից հայրենակիցները։ Մինչեւ Զօուսերը ու նրա «պատմութիւնները»՝ կար Անգլիայի ազգաբնակութիւն, կար ժողովուրդ, կային ցեղեր, կար, վերջապէս, բրիտանական պետութիւն, բայց անգլիական ազգ չկար։

Կարելի է ասել, որ իտալական ազգը ծնունդ առաւ այն ժամանակ միայն, երբ Դանտէն՝ առաջին անգամ լինելով՝ գրեց ազգային լեզուով իր «Աստուածային կոմիդիան», Պետրարքը՝ իր «Սոնետները», Բոկկաչիոն՝ իր «Դեկամերոնը»։

Կարելի է ասել, որ հայ ազգը ծնունդ առաւ

այն ժամանակ միայն, երբ Սահակն ու Մեսրոպը կազմեցին (կամ վերակազմեցին) հայկական այբբենը եւ երբ առաջի թարգմանիչները հայերէն լեզուով թարգմանեցին Սուրբ գիրքը(*):

Ապա՝ լեզուն ոչ միայն ծնունդ է տալիս, այլ նաեւ ապրեցնում է ազգը:

Ֆրանսիացիները, աւստրիացիները, սպանացիները ու Հռոմի պապը դարերով յօշոտեցին Իտալիայի զեղեցիկ մարմինը, պատառ-պատառ արին իտալական ազգը: Բայց, որովհետեւ մնում

(*) Հարկ կ՛ոյ արդեօք նախազգուշացնելու ընթերցողին, որ «ծնունդ» բառը գործածւում է այստեղ իր պայմանական մտքով: Իրականութեան մէջ կենսական երեւոյթները ոչ ծնունդ ունեն եւ ոչ վախճան, կեանքը ոչ սկսւում է եւ ոչ վերջանում, այլ միայն փոփոխւում է, նոր ձեւեր ստանում, միշտ ու անընդհատ *չարունակւում*: Բայց և այնպէս, մենք ասում ենք՝ երեխան ծնուեց (եւ հասկանում ենք, թէ ինչ ենք ուզում ասել), թէեւ գիտենք, որ երեխան իր «ծնուելուց» առաջ էլ գոյութիւն ունէր իր մօր արգանդում: Ասում ենք՝ ծնուեց, ոչ այն մտքով թէ գոյութիւն առաւ անգոյութիւնից, այլ որ մտաւ գոյութեան մի նոր փուլի մէջ, որը էապէս տարբերւում է առաջուանից: Ազգը՝ իր սադմային վիճակի մէջ՝ նոյնիսկ հին է, որքան եւ մարդկային հասարակութիւնը: Բայց ինչպէս որ մօր արգանդից դեռ չբաժնուած պտուղը մարդ չենք անուանում, այնպէս էլ ազգ չենք անուանում այն ազգային սադմերը, որ անշուշտ գոյութիւն ունէին ամենահին, նախապատմական հասարակութիւնների մէջն անգամ:

Ց. Գ.

էր կենդանի իտալական լեզուն եւ որովհետեւ միմեանցից անջատուած Պիեմոնտում ու Սարդինիայում, Տոսկանայում ու Հռովմում, Վենետիկում ու Ջենովայում մարդիկ կարդում էին Դանտէի հոյակապ տեսիլները ու Բոկկաչիոյի զուարճալի պատմուճիւնները, անուում էին նոյն լեզուով ու փոխադարձ կապուում լեզուային պինդ կապերով, — իտալական ազգը մնաց կենդանի ու կենսունակ:

Պարսիկները, հռովմէացիները, բիւզանդական յոյները, արաբները, թուրքերն ու ռուսները՝ յաջորդաբար, մէկը միւսի ետեւից՝ սրով ու հրով մտան Հայաստան, քանդեցին ու աւերեցին երկիրը, սարկացրին ժողովուրդը, անդամահատ արին ազգային մարմինը, պետական սահմանները՝ բաժանեցին իրարից ազգային հատուածները: Բայց, որովհետեւ Սիւնիքում ու Շիրակում, Աբարատեան դաշտում ու Կիլիկեան լեռներում, Տարօնում ու Վասպուրականում հայ մարդիկ շարունակում էին խօսել հայ լեզուն, կարդում էին Խորենացու ու Նարեկացու գրքերը, անուում էին թարգմանիչներից ժառանգած լեզուային անապատ հարստութիւններից, — հայ ազգը մնաց կենդանի ու կենսունակ:

Ազգը կենդանի է իր լեզուով, ինչպէս եւ լեզուն կենդանի է այնչափ միայն, որչափ կենդանի է ազգը:

Լեզուի մահը՝ ազգի մահն է, ինչպէս եւ ազգի մահը՝ լեզուի մահն է:

Կան պատմական երկու մեծ օրինակները, որ կարծես հակառակն են ապացուցանում — հրէական ազգն ու լատինական լեզուն: Հրեաները — դարեր առաջ — կորցրել են իրենց լեզուն, բայց մինչեւ այսօր էլ պահել են իրենց ազգութիւնը: Միւս կողմից՝ լատին լեզուն պահեց իր գոյութիւնը ամբողջ Միջին դարերի ընթացքում (մասամբ իսկ Վերածնունդի շրջանում), թէեւ լատին ազգը չքացած էր արդէն:

Այս օրինակները որքան էլ դայթակղեցուցիչ լինեն ըստ երեւոյթին, չեն կարող կասկածի տակ դնել այն անքակտելի կապը, այն փոխադարձ անհրաժեշտութիւնը ու փոխադարձ պայմանաւորուածը, որ գոյութիւն ունեն ազգի ու լեզուի միջեւ:

Հրէական ազգի վերաբերմամբ չի կարելի ասել, թէ նա վերջնականապէս կորցրել է իր ազգային լեզուն: Եբրայերէնը չարունակում է մնալ կրօնական գրքերի մէջ, չարունակում է մնալ հրեաների առօրեայ աղօթքի լեզուն, աւանդւում է դպրոցներում, մասամբ նաեւ խօսւում: Վերջապէս, այդ լեզուով դեռ այսօր էլ գրւում են ու տպագրւում գրքեր, նոյնիսկ պարբերական հրատարակութիւններ: Սա չատ քիչ է, ի հարկէ (լատինական լեզուն նոյնպէս չարունակում է մնալ աղօթքի լեզու կաթոլիկների համար ու նոյնպէս աւանդւում է որոշ դպրոցներում), բայց եւ այնպէս եբրայերէնը մեռած չէ ամբողջովին: Ճեւոյ հրեաները միջին Եւրոպայում, ուր կենտրո-

նացած են ամենամեծ դանդուածներով, ունեն իրանց ժարգոնը, որ հակումներ է ցոյց տալիս մի նոր ազգային լեզու դառնալու (այնքան կանոնաւորուած է արդէն, որ հնարաւորութիւն է տալ ստեղծելու վերջին երկու–երեք տասնամեակում բաւականին ընդարձակ գրականութիւն)։ Անհերքելի է սակայն, որ ժարգոնը դեռ եւս լեզու չէ, ինչպէս եւ երրայերէնը այլեւս լեզու չէ։ Եւ այս է պատճառը, որ հրէական ազգը հանդիսանում է իրրեւ կազմալուծուող, արատաւոր ազգ. նրան պակասում է լեզու։

Հրեաները խորապէս զղում են այս պակասը (զղում են թերեւս աւելի քան Հայրենիքի պակասը), տառապում են ու վերագոյն ճիգեր թափում՝ լեզու գտնելու համար։ Աշխատանքը կատարւում է երկու ուղղութեամբ. պահպանողականները ձգտում են գպրոցի ու գրականութեան միջոցով վերակենդանացնել մոռացուած երրայերէնը, իսկ ազատամիտները մեծ եռանդով կանոնաւորում են ժարգոնը՝ լեզուի բարձրութեան հասցնելու համար։ Յաջողութիւն պիտի ունենա՞ն արդեօք այս փորձերը եւ արանցից ո՞րն է որ պիտի յաղթանակի, — այդ ես չգիտեմ։ Գիտեմ միայն, որ քանի լեզուն չի գտնուած, հրէութիւնը իբրեւ ազգ կը մնայ պակասաւոր ու կիսակենդան, անընդունակ առողջ կեանքի ու զարգացման։

Եւ եթէ լեզուն կորցնելով հանդերձ հրեաները կարողացել են պահել երկար դարերով իրենց

ազգային դէմքը, սա պէտք է բացատրել նրանով միայն, որ մեզ ազգային տարրերը — ցեղային կապը, անցեալի հարուստ յիշողութիւնները, ե-զակի պատմութիւնը, հալածական վիճակը եւ մանաւանդ մեկուսացած ու անխորտակելի ճեւերի մէջ ճուլուած ազգային եկեղեցին — եղել են չա-փազանց զօրեղ: Միմիայն հրէական ազգի արտա-կարգ, անօրինակ կենսունակութիւնն է, որ կա-րողացել է դիմադրել լեզուի կորստին, ոե՛ւէ ու-րիշ ազգ վաղուց արդէն անհետացած պիտի լինէր:

Հրեաների օրինակը ապացուցանում է ոչ այն, որ ազգերը կարող են ապրել առանց լեզուի, այլ այն, որ նոյնիսկ ամէնից աւելի չհետուած, ինք-նատիպ ու կայուն ազգերն անգամ՝ կորցնելով ի-րենց լեզուն՝ կորցնում են ամենամեծ չափերով ազգային կեանքով ապրելու ընդունակութիւնը:

Գալով լատին լեզուին, կարելի է ասել, որ նրա կեանքը՝ լատին ազգը կազմալուծուելուց յե-տոյ՝ երեւութային էր միայն եւ ո՛չ իրական: Այն լեզուն, որով գրում էին վանական խուցերում մեկուսացած միջնադարեան գրագէտներն ու վե-րածնունդի մեծ գիտնականները, կենդանի լեզու չէր արդէն, այլ լեզուային դիակ, անչունչ բառա-րան ու քարացած քերականութիւն, — ճիշդ այն-պէս, ինչպէս թանգարաններում ցուցադրուած մոմիաները կենդանի մարդիկ չեն այլեւս, այլ միայն դիակներ: Շնորհիւ բարեյաջող պայման-նների, այդ դիակները չեն փտել, չեն գազացել ու

վոչնչացել, պահել են կենդանի մարդու արտաքին ձևերը. բայց նրանց մեջ չկայ այլևս հոգի, չկայ կեանք՝ սնուելու եւ արտադրելու ընդունակութիւն:

Լեզուն անկենդան, անզգայ ու անփոփոխ գործիք չէ մարդու ձեռին՝ մեքանիքական աշխատանքներ կատարելու համար: Որպէսզի լեզուն կարողանայ արդարացնել իրան պատկանող բարձր դերը ընկերային կեանքի մէջ, պէտք է որ ինքն էլ կենդանի ու զգայուն մնայ, անընդհատ սնուի, զարդանայ, չարունակ կերպարանափոխուի ու նոր ձևեր ստանայ զուգընթացաբար ու անբաժան այն փոփոխութիւններից, որոնց ենթարկւում են մարդկային ընկերութիւնները: Սրդի հայերէնը Ոսկեդարեան հայերէնը չէ, ինչպէս (կամ որովհետեւ) այսօրուայ հայը ինքը՝ հինգերորդ դարի հայը չէ:

Սնուելու համար լեզուն ունի մի աղբիւր միայն՝ ազգի հասարակական ստեղծագործութիւնը: Երբ ցամաքում է այդ աղբիւրը, մեռնում է եւ լեզուն: Միջնադարեան սխոլաստիկներն ու ուսեալ վարդապետները չէին կարող նոր կեանք ներշնչել մահուան դատապարտուած ու արդէն մեռնող լատին լեզուին: Ճիշդ է, որ դրագէտներն ու գիտնականները իմ մի են հասարակում լեզուական հարբուտութիւնները, կանոնաւորում են, ձեւի մէջ են դնում, կայունութիւն եւ տեւողականութիւն են տալիս լեզուին: Բայց ստեղծագործել առանց մեծ

պանդուածների աշխատակցութեան՝ անկարող են։ Լեզուն չի կարող չնչել ու ապրել խուցերի մթութեան ու լռութեան մէջ, անհատ զրպէտներըը ջանքերով։ Լեզուն պահանջում է բաց երկինք, ընդարձակ տարածութիւններ, առատ լոյս, մեծ բազմութիւններ, կեանքի եռուզեռ, չարժում ու պայքար։

Եթէ լատին լեզուն, զրկուած իրան անունդ տուող ազգային ստեղծագործութիւնից, այնուամենայնիւ կարողացաւ պահել դարերով իր դիակային գոյութիւնը ու չանհետացաւ ի սպառ, դրա համար երկու զօրեղ պատճառներ կային։

Մէկ որ, լատին լեզուն կուտակել էր իր մէջ անհուն հարստութիւն, դասական աշխարհի ամբողջ քաղաքակրթութիւնը։ Հռովմին ժառանգող երիտասարդ ժողովուրդները՝ որքան էլ բարբարոս լինէին՝ չէին կարող անտես թողնել կամ հրաժարուել այդ բացառիկ մեծ գանձից։ Հռոմի լեզուն անսպառ չեմարան էր մշակութային ամէն տեսակ արժէքների, քաղաքակրթութեան առատ ու միակ աղբիւր. անցեալից մնացած թաւին էր, իներցիայի ոյժը, որ պահում էր նրան կանգուն։

Երկրորդ՝ պատմական ասպարէզ իջնող նոր ժողովուրդները չունէին այնպիսի լեզու, որը կարողանար փոխարինել լատիներէնը, կարողանար իւրացնել դասական աշխարհից մնացած բարձր ու բարդ քաղաքակրթութիւնը. լատիներէնը իր ճոխ

բառաբանով ու հոյակապ քերականութիւնով չարունակում էր մնալ գրքերի մէջ ու դպրոցներում, որովհետեւ դեռ չկար իրան փոխարինելու ընդունակ գրական լեզու։

Բայց թէ այդ լեզուն նոր ժողովուրդների համար դիակացած գործիք էր միայն եւ ո՛չ կենդանի օրգան, — գրան ապացոյց է այն ուշագրաւ փաստը, որ ամբողջ միջին դարերի ընթացքում ոչ մի արժէքաւոր բանաստեղծական երկ չի յօրինուած լատին լեզուով։ Էդդայի մելամաղձոտ երգերը, Արտուր թագաւորի ու նրա կլոր Սեղանի պատմուածքները, Նիբելունգների մեծ ողբերգութիւնը, Ռոլանի վէպը, ապանական ռոմանցերոնները, պրովանսալական տրուբադուրների սիրաբանութիւնները, — սրանցից ոչ մէկն էլ չի երգուած ու չի պատմուած լատին լեզուով, թէեւ այդ ժամանակ գրականութեան մէջ եւ դպրոցներում միահեծանօրէն տիրում էր լատիներէնը։ Մեռած լեզուն անկարող էր այլեւս արտայայտել կենդանի մարդկանց ապրումները ու յուզումները. նոր ազգերը նոր խօսքեր ունէին ասելու եւ այդ նոր խօսքերի համար հարկաւոր էին նոր լեզուներ։ Կրիմհիլդա թագուհին ու Տրոնեգեցի Հագենը չէին կարող տեղաւորել իրանց դոթական վայրագ հոգին Վիրգիլիոսի դասական տիրադների մէջ, որանց պէտք էր նոր կազմակերպուող գերմաներէնը, — մի բարբարոս լեզու, մի մանկական թոթովանք, որ չունէր ի հարկէ ծերացած լատինե-

րէնի բարդ ու նուրբ ձեւերը, բայց լեզուն էր առնական թափով, տարերային թարմութիւնով ու անսպառ, դեռ չչահագործուած կարողութիւններով։

Լատիներէնի օրինակը ոչ միայն չի հերքում լեզուի անքակտելի կապը ազգի հետ, այլ հաստատելով, որ նոյնիսկ ամէնից աւելի կատարեալ, ամէնից աւելի զինուած ու տիրօրէն հաստատուած լեզուն անգամ չի կարող պահել իր դոյութիւնը, եթէ զրկւում է սնունդից՝ ազգային ստեղծագործութիւնից։

Լեզուի արժէքը հասկանալու համար, բաւական է յիշել, որ ազգային պայքարը՝ ամենամեծ չափերով՝ լեզուային պայքար է։ Երբ մի զօրեղ ազգ ուզում է կլանել իրանից թոյլերին, ամէնից առաջ յարձակւում է լեզուի վրայ։ Եւ երբ վտանգի ենթարկուած ազգը ուզում է պաշտպանել իրան, ամէնից առաջ պատսպարում է լեզուն։ Լեզուն ու լեզուի հետ անմիջապէս կապուած դպրոցը, գրականութիւնը, մամուլը, թատրոնը, — ահա ազգային միջնաբերդը, ահա ազգային վէճերի, յարձակման ու դիմադրութեան, գլխաւոր նիւթը։

Մինչեւ 18րդ դարի վերջի տասնամեակը՝ աշխարհակալ ազգերը չէին գիտակցում հարկաւոր չափով լեզուի արժէքը ազգային կեանքի համար, ինչպէս եւ մինչեւ ամենավար կարգերի հաստատումը՝ պետութիւնները չէին գիտակցում ազգա-

յին հաւաքականութիւնների նշանակութիւնը պետական կեանքի համար: Բայց, երբ պետական գեկը անցաւ առհմային միապետների ձեռքից ժողովրդական զանգուածների ձեռը (կամ գոնէ լաւելի դարձաւ ու հաչուի առնուեց դեմոսի ձայնը), կառավարութիւնները հասկացան, թէ քաղաքական ի՛նչ մեծ նշանակութիւն ունեն (եւ մանաւանդ ունենալու են հետագայում) ազգութիւնները եւ թէ ի՛նչ մեծ նշանակութիւն ունեն լեզուները՝ ազգերի դոյութիւնը յարատեւելու համար: Եւ ահա այդ չլքանումն էր, որ կառավարութիւնները կարիք զգացին վերացնելու ազգային բաժանումները — այսինքն լուծելու մանր ազգութիւնները տիրապետող ազգութեան մէջ — եւ հասկացան, որ դրա համար ամէնից նպատակայարմար միջոցն է վերացնել լեզուները:

Ֆրանսիական Մեծ Յեղափոխութեան ընթացքումն էր, որ կոնվենտը պետական հսկողութեան տակ առաւ Ֆրանսիայում գործածուող ոչ-ֆրանսերէն լեզուները ու դիմեց խիստ միջոցների՝ Պրովանսում, Թիրոնդում եւ Վանդէյում տեղական jargonների ու patoisների խեղդելու համար:

Սա առաջին փորձն էր՝ արմատախիլ անելու լեզուները պետական միջոցներով, դիտակցօրէն ու սիստեմատիկաբար (ասում եմ՝ պետական միջոցներով ու դիտակցօրէն, որովհետեւ անկազմակերպ ու անգիտակցօրէն, բնազդային մղումներով ու տարերային արտայայտութիւններով

— լեզուների պայքարը՝ եւ ազգային պայքարը առհասարակ՝ եղել է միշտ)։ Չեմ մոռացել, որ ըստ հայկական աւանդութիւնների առաջնեկ-կան Արամ թագաւորը հրամայել է կտրել հայե-րէն չգիտցող իր հպատակների լեզուն։ Այս ա-ւանդութիւնը ցոյց է տալիս, որ դեռ շատ հին ժամանակներում լեզուն եղած պիտի լինի պետա-կան հաստատութեան առարկայ։ Բայց չեմ յիշում, թէ երբեւիցէ ու որեւէ տեղ (մինչեւ նախաւերջին դարը) իրօք կիրառուած ու սիստեմատիկօրէն դործադրուած լինի Արամի քաղաքականութիւնը։

Ցեղափոխական Կոնվենտի օրինակին հետեւե-ցին բազմազգեայ մեծ կայսրութիւնները՝ Աւստր-ո-Հունգարիան, Գերմանիան, Ռուսաստանը։ Ոչ-պետական լեզուների հալածանքը դարձաւ այս երկիրներում ներքին քաղաքականութեան հիմնա-կան հոդսերից մէկը։ Ամբողջ 19րդ դարը (մա-նաւանդ նրա երկրորդ կէսը) ու 20րդ դարի սկիզ-բը բռնկուած է այս լեզուակերական պայքարով։

Կառավարութիւնները խոշոր արդելում են ազգային լեզուների գործածութիւնը ոչ միայն պետական, այլ նաեւ քաղաքային (municipal) հիմնարկութիւնների մէջ, տեղական ինքնավա-րութեան պաշտօնատներում, հանրային, դիտա-կան ու բարեգործական հաստատութիւնների գործավարութեան մէջ, յաճախ նաեւ ամէն կար-գի հրապարակային ժողովներում։ Զանազան ար-տօնութիւններ են տալիս պետական լեզուն դիտ-

յողներին եւ հակառակը՝ սահմանափակում են չգիացողների իրաւունքները: Սահմանափակում են ազգային դպրոցների իրաւունքները, թիւն ու ծաւալը, զրկում են նիւթական միջոցներից, արգելում են կամ դժուարացնում նոր դպրոցների բացումը, նոյնիսկ փակում են եղածները: Նոյն հալածանքները ազգային գրականութեան դէմ: Նոյնը եւ թատրոնի դէմ:

Ցարճակման ենթարկուած ազգերը (օրինակ՝ լեհերը Գերմանիայում ու Ռուսաստանում, չեխերը Աւստրիայում, ռուսիններըը Հունգարիայում, ուկրայինացիները, հայերն ու վրացիները Ռուսաստանում), իրանց հերթին, կենտրոնացնում են ընդդիմադրական ամբողջ կարողութիւնները լեզուի չուրջը, աշխատում են բոլոր օրինաւոր ու ապօրինի միջոցներով պաշտպանել իրենց լեզուն, ապահովել նրա զոյութիւնը:

Եւ բնականօրէն քանի սաստկանում է յարճակումը, այնքան ուժեղանում է ընդդիմադրութիւնը: Ազգութիւնները, որ մինչ այդ թերեւս չէին էլ գիտակցում իրանց լեզուի իսկական արժէքը՝ այժմ յարճակման ենթարկուած ու կորցնելու վտանգի առաջը կանգնած, նոր գլխի են ընկնում, թէ ի՛նչ մեծ հարստութիւն են ունեցել եւ ծառանում են գիշատիչների դէմ: Այսպիսով, լեզուների հալածանքը, որ ազգային պայքարի արտայայտութիւններից մէկն է ու նպատակ ունի չէզոքացնելու ազգութիւնները, ինքը դառնում է

մի նոր ու զօրեղ դործօն՝ ազդային ինքնաճանաչումիւնը արթնացնելու համար։

Ի դէպ, թուրքերը սիրում են յիշեցնել պարծանքով, որ Օսմանեան կայսրութեան մէջ երբեք չի եղել պետական հալածանք ոչ-թուրք լեզուների դէմ։ Փաստը ճիշդ է (մօտաւորապէս), բայց պարծենալու բան չկայ, որովհետեւ պատճառն եղել է ոչ թէ թուրքերի վեհանձնութիւնը, համբերատարութիւնը ու լայն ազատամտութիւնը, այլ պարզապէս պետական տհասութիւնը։ Մյն իրաւազուրկ եւ ստրկական վիճակի մէջ, որին ենթակայ էին հպատակ ժողովուրդները Թիւրքիայում, ազգերի դոյութիւնը (հետեւապէս եւ ազգային լեզուները) չէին կարող անմիջական գըլխացաւանք կամ մտահոգութիւն պատճառել տիրապետողին։ Իսկ թէ այդ միեւնոյն ազգութիւնները հետագայում կարող էին կայսրութեան կործանման պատճառ դառնալ եւ թէ, հետեւապէս, պէտք էր վաղօրօք միջոցներ ձեռնարկել նրանց դոյութիւնը վերացնելու համար, — պարզում նաեւ քաղաքագէտները չէին կարող տեսնել այդքան հեռուն. մանաւանդ որ ազգերը անվտանգ դարձնելու համար, նրանք ունէին ու մէջ ընդմէջ դործադրում էին չատ աւելի արմատական մեթոտ — ֆիզիքական ջարդ։ Մարդու բերանից լեզուն հանելը՝ բարդ ու նուրբ դործողութիւն է, որ պահանջում է կուլտուրական հասունութիւն, սիստեմատիկ աշխատանք ու երկար

ժամանակ (թերեւս այս էր պատճառը, որ Աբամ թագաւորի հանճարեղ ծրագիրը դարերով մնաց անիրագործելի)։ Չատ աւելի պարզ ու մատչելի բան է՝ լեզուի փոխարէն զլուխը կորել։

Քաղաքակիրթ պետութիւնների համար անհրաժեշտ է այդ զուտ թուրքական մեթոդը։ Այնտեղ, ուր թուրքը սուր է քաշում ու արիւն հոսեցնում, գերմանացին (եւ նոյնիսկ ռուսը) հարկադրուած է քաղաքականութիւն բանեցնելու։ Այսպիսով, ծրագրւում է, կազմակերպւում ու յամառօրէն իրականացւում լեզուները պապանձեցնելու անարիւն գործողութիւնը։

Լեզուների պայքարը դառնում է մի նոր ու զօրեղ քաղաքական գործօն։ Թէ միջ–պետական կեանքում եւ թէ մանաւանդ պետութիւնների ներսում ամէն մի լեզու աշխատում է ապահովել իր գոյութիւնը ու անարգել զարգանալու հնարաւորութիւնները. ապա աշխատում է ընդարձակել սահմանները, նուաճումներ անել, կլանել ու սեփականացնել օտար տարրեր։ Պայքարը անարիւն է, բայց չատ կրքոտ ու անողոք։

Ոչ միայն պետական պաշտպանութիւնից զուրկ, հալածուած ու վտանգի ենթարկուած ազգութիւնները, այլ ամենազօրեղներն իսկ չափազանց նրբազգաց ու խանդոտ են լեզուի վերաբերմամբ։

Ահա մի թարմ օրինակ։ Անցեալ տարի, երբ ծրագրւում էր մի մեծ միջպետական համագու–

մար Վաշինգտոնում, Ֆրանսիական Ակադեմիան դիմեց իր կառավարութեան մի ուղերձ-բողոքով: Տեղեկութիւն էր ստացուել, թէ համագումարի պաշտօնական լեզուն լինելու է անգլիերէնը եւ ա՛յս էր ահա, որ վրդովեցրել էր քառասուն «անմահների» ողիմպիական հանգիստը: Ակադեմիան բողոքում էր Ֆրանսական լեզուի այս աննախընթաց իրաւազրկութեան դէմ եւ պաշտպանութիւն էր պահանջում կառավարութիւնից: Վարչապետ Բրիանը հանգստացրեց ակադեմիկոսներին, հաւատիացնելով, որ Ֆրանսիական կառավարութիւնը երբեք չի համաձայնի մասնակցելու այնպիսի մի համագումարի մէջ, ուր ըստ պատշաճի չպղտուած չլինեն Ֆրանսերէնի իրաւունքները:

Զպէտք է կարծել, թէ այս բողոքն ու այս հրապարակ յայտարարութիւնը տեղի ունեցան այն պատճառով միայն, որ Ֆրանսիական Ակադեմիայում բազմած ծերուկները — անուղղելի չովինիներ են եւ որ Բրիանի կառավարութիւնը — բուրժուական կառավարութիւն էր: Յիշում եմ, 1911 թուին (թէ՞ 12ին) հանգուցեալ Ժօրէսը՝ Ֆրանսիական սոցիալիստների մեծանուն պարագլուխներից մէկը՝ մի ժեստ արաւ, որ ճիշդ նոյն հոգեբանութեան արտայայտութիւնն էր: Պրուսիական քաղաքներից մէկում հաւաքուած էր մի բանուորական համագումար, ուր պիտի խօսէր նաեւ Ժօրէսը: Ոստիկանութիւնը պահանջ դրեց, որ խօսի գերմաներէն. Ժօրէսը պատասխանեց, որ գերա-

դասում է լուռ մնալ, քան համակերպուել մի պահանջի, որ պակաս է բռնանալու իր լեզուի վերայ, ու չիօսեց:

Մի ուրիշ օրինակ: 1913 թուականի գարնան՝ Բելգիական պարլամենտում՝ տեղի ունեցան երկար ու բուռն վիճաբանութիւններ մի օրինագծի չուրջ, որ պահանջում էր մտցնել Ֆլամանդական լեզուի գործածութիւնը՝ Ֆրանսերէնի հետ հաւասար իրաւունքներով՝ բելգիական բանակի մէջ: Ես այն ժամանակ Բրիւսել էի եւ ուշի-ուշով հետեւում էի վիճաբանութիւններին: Ուշագրաւ էր մանաւանդ այն հանդամանքը, որ պարլամենտի սովորական դէմքը, նրա բաժանումը ըստ կուսակցական հատուածների, այդ օրերում փոխուել էր հիմնովին: Ձկային այլեւս ոչ ձախ ու ոչ աջ, ոչ կառավարական կենտրոն ու ոչ ընդդիմադիրներ, ոչ պահպանողական ու ոչ ազատամիտ: Պարլամենտը բաժանուել էր երկու մեծ ազգային հատուածների, — Ֆլամանդների ու վալոնների: Հակառակ կուսակցական վարքերի ու կարգապահութեան, Ֆլաման սոցիալիստները՝ միացած Ֆլաման լիբերալների ու Ֆլաման կաթոլիկների հետ՝ քուէարկեցին հակառակ վալոն սոցիալիստներին, որոնք — իրանց հերթին — միացել էին վալոն կաթոլիկների ու լիբերալների հետ:

Նոյն կարգի վէճ տեղ ունի այսօր նոյն Բելգիայում, Գենտ քաղաքի համալսարանի չուրջ: Ֆլամանները (անկախ կուսակցական պատկանե-

լիութիւնից) պահանջում են, որ Արեւելեան Ֆըլանդրիայի համալսարանում ֆրանսերէնն լեզուն փոխարինուի ֆլամանդերէնով: Վալոնները (որ վաղուց արդէն կորցրել են իրենց ազգային լեզուն եւ իւրացրել են ֆրանսերէնը) ուզում են անխախտ պահել նախկին դրութիւնը:

Ֆլամանդները կապում են վալոնների հետ մի ընդհանուր պետական միութիւն, պատրաստ են իրանց կեանքի գնով պաշտպանել այդ միութիւնը (ինչպէս արին Մեծ Պատերազմի ընթացքում): Բայց պետութեան ներսում ուզում են մնալ ֆլաման, ուզում են պահպանել իրանց ազգային դէմքը ու կատաղօրէն կռւում են ֆրանսերէնի տիրապետութեան դէմ, որովհետեւ գիտեն, որ կորցնելով լեզուն կորցնելու են եւ իրենց ազգութիւնը (ինչպէս կորցրել են արդէն իրանք վալոնները):

VI

Պատմութիւնը անբաժանելի է ազգից, — անբաժանելի է այն պարզ պատճառով, որ ազգը էապէս պատմական երեւոյթ է. աւելին եւս, ազգը՝ ինքը պատմութիւնն է, նրա մարմնացումը:

Չկայ ու չի եղել ազգ առանց պատմութեան:

Այն բոլոր տարրերը, որոնցից կազմւում է ազգը, արդիւնք են ու հետեւանք պատմութեան,

ծագել են, զարգացել ու հաստատուել պատմական օրէնքով եւ ժառանգաբար փոխանցուել են սերունդից սերունդ:

Ազգային կապակցութիւնը — պատմական կապակցութիւն է, ազգային գիտակցութիւնը — ընդհանուր անցեալի գիտակցութիւն: Հոգիները, որ չեն յիշում ազգակցութիւնը, չեն կարող կազմել ազգ. ազգ կազմում են այն հոգիները միայն, որոնք ունեն ու պահել են կենդանի յիշողութիւններ անցեալից եւ գիտակցում են կապը՝ անցեալի ու ներկայի միջեւ:

Եւ ազգերը գիտեն պատմութեան կարեւորութիւնը:

Քրդական աշիրէթները, որ չունին ոչ գրականութիւն, ոչ իսկ գրագիտութիւն, որ դեռ ազգ էլ չեն, այլ միմիայն ազգային սաղմեր, — այս աշիրէթներն անգամ մտահոգուած են յաւերժացընելու իրանց պատմութիւնը: Ամէն մի աշիրէթ ունի իր յատուկ պատմաբան–բանաստեղծ–երգիչը, որ անգիր սովորում է նախորդներից ու ինքն էլ յօրինում ընդարձակ երգեր, որոնց մէջ երգում է աշիրէթի անցեալ փառքը, սահմանային ու տոհմային վէճերը հարեւանների հետ, կռիւներն ու յաղթութիւնները, ռազմիկների սխրագործութիւնները, պետերի խնամիութիւնն ու դաշնակցութիւնը ուրիշ աշիրէթների հետ, ընդհանուր պայքարը անպատիւ «ռոմի» (թուրքի) դէմ...

Պատմութիւն է սա, անցեալի յիշողութիւն–

նեը, առասպելներով զարդարուած, — այնպէս, ինչպէս կարող է ըմբռնել ու պատկերացնել իր անցեալը մի նահապետական, կէս-վայրենի հասարակութիւն: Թո՛ղ այս պատմութեան երեք քառորդը բանաստեղծութիւն լինի, — այնուամենայնիւ նա անհրաժեշտ է հաւաքական կեանքին տեւողութիւն տալու համար: Քուրդի աչերկթայինի գիտակցութիւնը վառ պահելու համար, նրա երգերն ունեն նոյն նշանակութիւնը, ինչ ունեցել է միջինդարեան հայութեան համար Խորենացու գրած ազգային մեծ վէպը:

Անցեալի գիտակցութիւնը՝ ազգային գոյութեան հիմնական պայմաններից մէկն է:

Ազգը տեւողական երեւոյթ է: Նա միացնում է անհատներին ոչ միայն տարածութեան մէջ, այլ եւ ժամանակի ընթացքում: Հայ ազգը հաւաքականութիւն է, որ իր մի է կապում ոչ միայն այսօր գոյութիւն ունեցող հայ մարդկանց, այլ նաեւ նախկայ սերունդը անցեալ ու գալիք սերունդների հետ: Ազգերի կեանքը չատ աւելի երկարատեւ է, քան անհատի կեանքը, եւ այդ երկարատեւութիւնը կարող է իրականանալ միայն պատմութեան միջոցով:

Պատմութի՛ւնն է, որ ինձ հայ է արել եւ պատմութի՛ւնն է, որ պահում է ինձ հայ, կապում է ազգայնօրէն ուրիշ հայ մարդկանց հետ՝ ժամանակի ու տարածութեան մէջ:

Եթէ՝ պատմութեան հետ անբաժան, ես դարձադրում եմ «յիշողութիւն» ու «գիտակցութիւն»

բառերը, չպէտք է եզրակացնել, թէ խնդիրն ունի բացառապէս ու զուտ սուբիեկտիւ (ենթակայական) բնոյթ: Ոչ, իմ սուբիեկտիւ ապրումների տակ թաքնուած են օբեկտիւ (առարկայական) շատ զօրեղ հիմքեր: Պատմութիւնը ոչ միայն տալիս է ինձ գիտակցութիւն իմ ազգային պատկանելիութեան, այլեւ իրօք, գիտակցութիւնից անկախ, ինձ հայ է դարձնում: Ազգ կազմող Օհաններն ոչ միայն գիտեն ու յիշում են փոխադարձ կապը, այլ եւ իրօք կապուած են իրար հետ խոր ու ամուր կապերով:

Եւ պատմութի՛ւնն է, որ դարբնել է այդ երկաթէ կապերը:

Բայց ո՞ր պատմութիւնը:

Բառը՝ ինքնըստինքեան՝ բաւականին անորոշ է ու զործադրւում է տարբեր իմաստներով: Անցեալի գիտութիւնն է պատմութիւնը, — սա պարզ է: Բայց անցեալը — եթէ նոյնիսկ սահմանափակուելու լինենք մարդու ընկերային կեանքի անցեալով — այնքան բարդ է ու բազմակողմանի, որ առաւ նիւթ է տալիս ու անհրաժեշտ է անում տարբեր բովանդակութեան պատմութիւններ:

Ծովագնացութեան զարգացումը 15րդ դարից սկսած ու սրա հետ միասին նաեւ նոր երկիրների գիւտը — մի ընդարձակ ու շատ կարեւոր պատմութիւն է: Պատմութի՛ւն է ռազմական զէնքի կատարելագործումը՝ Հայկ Նահապետի նետաղեղից սկսած մինչեւ «Բերթա» թնդանօթն ու

խեղդիչ գազերը: Պատմութի՛ւն է՝ տիեզերքի մասին ունեցած մեր հասկացողութեան լայնացումն ու խորացումը՝ ասորա-բաբելոնեան աստղաբաշխերից սկսած մինչեւ Նեւտոնը, Լապլասն ու Այնըշտայնը: Պատմութի՛ւն է չոզիի գործադրութիւնը արդիւնաբերութեան մէջ եւ նաֆթի մուտքը համաշխարհային առեւտուրի մէջ: Պատմութի՛ւն է ճորտավաճառութեան հաստատումը ու ապա վերացումը Ամերիկայում...

Պատմութի՛ւն է այս բոլորը: Բայց սրանցից ե՛ւ ոչ մէկը չի կարող բացատրել մարդկութեան բաժանումը՝ ըստ ազգութիւնների եւ ազգային մխութիւնների գոյութիւնը:

Այստեղ մեզ հետաքրքրողը ա՛յն պատմութիւնն է կամ ա՛յն պատմութիւնները — այսինքն՝ ա՛յն անցեալը եւ անցեալի ա՛յն յիշողութիւնները, — որոնք անջատում են մարդկային մի հաւաքականութիւնը միւս մարդկային հաւաքականութիւններից եւ ներսում՝ կապում են հատուածի անդամներին այն ուրոյն, առանձնայատուկ կապերով, որ ազգային ենք անուանում:

Պարզ է, որ այդ պատմութիւնը ուրիշ ոչինչ է, քան ազգութիւն կազմող տարրերի պատմութեան դումարումը: Ցեղային պատմութիւն (ցեղերի ծագումը, տեղափոխութիւնները, խաչաւորումը, խառնուրդը, դումարումն ու անջատումը). պետական եւ ընդհանրապէս քաղաքական պատմութիւն (այնչափ, որչափ պետական ու քա-

քաքական կեանքի մէջ արտայայտուել է ազգային կեանքը)· կրօնական դաւանանքների ու եկեղեցիների պատմութիւն· լեզուների պատմութիւն· բարբերի ու իրաւահասկացողութիւնների պատմութիւն· մշակութային պատմութիւն ընդհանրապէս ու գեղարուեստի պատմութիւն մասնաւորապէս, — ահաւասիկ այն պատմութիւնները, որոնք՝ զումարուելով՝ կազմում են ազգային պատմութիւններ կամ ազգութիւնների պատմութիւն:

Ա՛յս պատմութիւնն է ահա, որ ծնունդ է տալիս ազգերին, ձեւաւորում է, սնուցանում ու ապրեցնում ազգերը:

Ընդհանուր կեանքը անցկալում՝ իբրեւ օբեկտիւ գործօն՝ ծնունդ է տալիս ֆիզիքական, հոգեկան ու մշակութային նմանութեան, հետեւապէս եւ մերձաւորութեան ու մտերմութեան ազգ կազմող մարդկանց մէջ, կապում է նրանց ընդհանուր կարիքներով ու ընդհանուր չահերով: Միւս կողմից, նոյն անցեալի գիտակցութիւնն ու յիշողութիւնը՝ իբրեւ սուբիեկտիւ գործօն՝ աւելի եւս ամրացնում էր ազգային կապակցութիւնը: Պատմութիւնը որ աղբիւրն է ազգային միութեան, ինքն էլ իր հերթին՝ դառնում է մի նոր ազգային տարր:

Տեսանք արդէն, թէ ինչ առարկութիւններ կարելի է բերել պատմական տեսակէտի դէմ: Բայց այդ առարկութիւնները կը վերնան, եթէ

«պատմութիւն» բառին տանք իր յատուկ իմաստը, որ վորձեցի տալ այստեղ։

VII

Ցեղագրական միութիւնը՝ ինքըստինքեան՝ ազգային միութիւն չէ — այդ մենք տեսանք։ Միևնոյն ազգի զանազան հատուածները կարող են ունենալ տարբեր կենցաղները, ինչպէս եւ տարբեր ազգերի այս կամ այն հատուածները կարող են ունենալ նոյն կենցաղը։

Բայց եթէ անտես թողնենք մանակի չեղումները ու վերցնենք ազգերը իբրեւ ամբողջութիւններ, կը տեսնենք, որ կան ցեղագրական գծեր, որ յատուկ են ամբողջ ազգին եւ որ տարբերում են այս մի ազգը միւսներից։

Իր նեղում, ամէն մի ազգ բաժանուած է զանազան հատուածների՝ ըստ բնակութեան վայրի, տնտեսական ու սոցիալական դրութեան, քաղաքակրթութեան աստիճանի եւն.։ Այս տարբերութիւնները բնականօրէն ու անխուսափելիօրէն առաջ են բերում աւելի կամ պակաս խոշոր տարբերութիւններ նաեւ կենցաղի մէջ. լեռնաբնակն ու դաշտեցին, հողագործն ու վաճառականը, համալսարանաւարտն ու անգրագէտը, հոգեւորականն ու զինուորականը, — որոնք չեն կարող ու-

նենալ ճիշդ նոյն կենցաղը, թէեւ պատկանելիս լինեն նոյն ազգութեան:

Բայց՝ հատուածային բաժանումներից դուրս ու վեր՝ կան պայմաններ, որ ընդհանուր են եթէ ոչ բոլոր հատուածներին ու անհատներին առանց բացառութեան, գէթ ազգը կազմող մեծ զանգուածներին, — այն զանգուածներին, որ բնորոշում են ազգը, կազմում ու ներկայացնում ազգային սկզբը:

Եւ հասկանալի է, որ այսպէս սկիզբ լինի, որովհետեւ ազգը՝ իբրեւ ամբողջութիւն, կապուած է որոշ աշխարհագրական վայրի հետ, ունի իր եւ տեւելը որոշ պատմութիւն, որոշ մշակոյթ ու կանոնած է քաղաքակրթութեան որոշ աստիճանի վրայ:

Ռուսը ընդհանուր առմամբ դաշտի բնակիչ է. հայը՝ բարձր սարահարթերի, լեզգին՝ ապառաժոտ լեռների. նորվեգիացին ու ֆինը հիւսիսի բնակիչներ են. սպանացին ու իտալացին՝ հարաւի. լիթուինը անտառների զաւակ է. հոլանդացին՝ ճահճային մարգագետինների. արաբը՝ աւազոտ անապատների: Ռուսը հողագործ է, քուրդը՝ խաշնարած, բելգիացին՝ գործարանային արդիւնաբերող, հրեան՝ վաճառական ու տեղանաւոր: Ցրանսիայում գերիշխող, ազգը գունաւորող գաղափարը մանր բուրժուազիան է, Բուլղարիայում եւ Սերբիայում՝ գիւղացիութիւնը, Ջրդստանում ու Վրաստանում (Մեծ Պատերազմից առաջ)՝ տոհմային ազնուականութիւնը, Թիւրքիա-

յում՝ գինուորականութիւնն ու պետական պաշտօնէութիւնը (bureaucratie)։ Գերմանացին ու անգլիացին կանգնած են քաղաքակրթութեան մի ծայրին, քուրդը՝ միւս ծայրին։ Այս երկու ծայրերի մէջեւ դասաւորուած են, աստիճանաբար, միւս ազգերը, ամէնը իր յատուկ տեղում։ Անկախ հատուածային չեղումներից, գերման ազգը՝ իբրեւ ամբողջութիւն հասել է քաղաքակրթութեան աւելի բարձր աստիճաններին, քան սպանականը կամ իտալականը։ Իտալացին, իր հերթին, աւելի քաղաքակրթուած է քան հայը, իսկ հայը՝ աւելի քան քուրդը։

Այս խոշոր տարբերութիւնները բնականօրէն անդրադառնում են նիստուկացի վրայ եւ ծնունդ են տալիս մի տեսակ համազգային կեցցաղի, որ ընդգրկում է իր մէջ — աւելի կամ պակաս որոշակի — ազգի տարբեր հատուածները ու բաժանում մէկ ազգը միւսից։ Երեւոյթը աւելի եւս հասկանալի կը դառնայ, եթէ յիշենք, որ ազգային հատուածները՝ որքան էլ անջատուած լինեն իրարից վայրով, սոցիալ-տնտեսական կացութիւնով ու քաղաքակրթութեան աստիճանով՝ այնուամենայնիւ կապուած են իրար հետ ընդհանուր պատմութիւնով, ցեղային ու մշակութային ամուր կապերով, անցեալից ժառանգած բնազդներով ու հակումներով։

Իրականութեան հակառակ կը լինէր ասել, թէ ամէն հայ մարդ կամ հայ հատուած՝ ամէն տեղ

ու ամէն պայմաններում՝ ունի նոյն կենցաղը։ Բայց կարելի է ասել, որ հայ ազգի հիմնական մասը ունի մի կենցաղ, որ յատուկ է իրան ու տարբերում է տխլաբ–հային իր հարեւան ոչ–հայից։

Եւ այնքան կենսունակ երեւոյթ է ազգային կենցաղը, որ դանում է իր արտայայտութիւններ–ը նոյնիսկ չատ հեռաւոր, կենտրոնական զանգ–ուածներից անջատուած կամ մխիթարեցից խիստ տարբերուող հատուածների մէջ։

Վրաստանում դարերով ապրած հայ գաղութ–ները պահել են ու դեռ այսօր էլ ունեն սովորու–թիւնները, որ ընդհանուր հայկական են (նոյն սո–վորութիւնները կը դանէք Լօռի, Շիրակ կամ Ա–լաչկերտ)։ Հէյդելբերգի համալսարանում փիլի–սոփայութեան դոկտորի աստիճան ստացած հայ մատուռականը սիրում է նոյն երգերն ու նոյն պա–րերը, ինչ եւ Աբարանի անդրադէտ, կէս–վայրենի հովիւը։ Եկեղեցական մեղեդիներն ու պատարա–գի երգեցողութիւնը հաւասար հաճոյքով լսում են է՛ւ բարեպաշտ դասը, է՛ւ անաստուած թոռը։ Փարիզում ապրող հայ միլիոնատէրը՝ երբ ուզում է մի ընտիր ճաշ ուտել՝ պատուիրում է դոլմա կամ կոլոլակ ու այդ օր տիկինը ինքը իջնում է խոհանոց։ Ընտանեկան կապակցութեան չեչտուած ամրութիւնը, ընտանիքի սէրը, մեծին յարգելը, հօր ու զաւակի, հարսի ու սկեսուրի, փեսայի ու զոքանչի փոխյարաբերութիւնները՝ խոչոր չափե–

ղով բնորոշ են ամէն տեղի ու ամէն կարգի հա-յերի համար: Հաւասարապէս բնորոշ է հայի նեղ անհատականութիւնը, ընկերական բնազդի թու-լութիւնը, հաւաքական աշխատանքի անընդունա-կութիւնը եւ սրանցից բխող հանրային փոխյարա-բերութիւնների, աշխատանքի ու տնտեսութեան ձեւերը:

Իր կենցաղի, ճաշակի, սովորութիւնների ու բարքերի որոշ գծերով հայը մնում է հայ, նման միւս հայերին: Միւս կողմից ու նոյն գծերով նա յաճախ տարբերւում է ամենամօտ դրացինե-րից:

Շատախի ձորերում հայ չինականի տարազը նոյնն է, ինչ եւ տեղական քուրդինը. եւրոպացի ճամբորդը կարող է չզանազանել արտաքինով հայը քուրդից: Բայց տեղացու վարժ աչքը եր-բեք չի սխալւում եւ հեռուից արդէն ճանաչում է, թէ ո՞վ է իր դիմացը ելնողը: Կան ինչ որ տարբերութիւններ — քոլոզի բարձրութիւնն ու ձեւը, զօտիի գոյնը, զոլաւոր չալուարի նկարը, նոյնիսկ մարդու կեցուածքն ու շարժումները, որ իսկոյն մատնում են ազգութիւնը:

Նոյնը եւ գիւղերի վերաբերմամբ. տեղացին առանց տատանուելու կ'որոշէ, թէ հեռւում ե-րեւացող գիւղը հայկակա՞ն է, թէ՞ քրդական: Հայի պատրաստած պանիրը չուկայում ուրիշ գին ունի, քուրդինը՝ ուրիշ: Հայի գործած կապերտի կամ նախշուն զուլպայի նկարն ուրիշ է, քուրդի-

նը՝ ուրիշ։ Նոյն երգն ու նոյն պարը հայը երգում է ու պարում ուրիշ կերպ, քուրդը՝ ուրիշ։ Հայը իր ձեւն ունի արտը մշակելու, քուրդն՝ իրը։

Մի անգամ՝ Մոկսից կառկառ անցնելիս, ամայի լեռներում՝ իմ ուղեկից գիւղացին կորցրեց ճամբան։ Արեւը արդէն մայրը մտնելու վրայ էր, վախենում էինք, թէ գիշերով կ՚ընկնենք քուրդի գիւղերը։ Երբ իջնում էինք մի հովիտ, ուղեկիցս ուրախութեամբ յայտնեց, թէ մօտերը հայի գիւղ պիտի լինի, որովհետեւ «էս արտը հայի արտ է», ասաւ։ Հարցրի, թէ ինչի՞ց իմացաւ։ Մարդը չկարողացաւ բացատրել, բայց նորից պնդեց թէ «քուրդի արտը էսպէս չի լինի»։ Եւ ասածը ճշդուեց. արտը հայի էր։

Մի գիւղացուն, որ երկար պաշտօնավարել էր Կախեթիայի այգիներում, հաւատացնում էր ինձ, որ հեշտութեամբ տարբերում էր հային վրացիից, դիտելով միայն, թէ ինչպէս է աշխատում մարդը. նոյն աշխատանքը, նոյն խաղողի այգիում ու նոյն գործիքներով հայը կատարում է իր հանգէն, վրացին՝ իր հանգէն...

Դիտմամբ բերում եմ այսպիսի օրինակներ, որոնք առընչութիւն չունեն կրօնական դաւանանքների հետ։ Եթէ ուզենայի մատնանիշ անել այս կարգին պատկանող ցեղագրական եւ բարոյագուսական գծերը (անապաշտութիւններ, տօնախմբութիւններ, ամուսնութիւն ու հարսանիք, թաղման ծէսեր եւայլն), տարբերութիւնը հայի

եւ քուրդի կամ հայի եւ վրացու միջեւ կը լինէր շատ աւելի ակներեւ:

Անշուշտ, կենցաղը այնպիսի մեծ արժէքի ազգային տարր չէ, ինչպիսին է օրինակ լեզուն. բայց եւ այնպէս, նա ունի իր որոշ տեղն ու նշանակութիւնը ազգ կազմող միւս տարրերի մէջ:

VIII

Ինքնագիտակցութեան փաստը՝ բնական հեռաւանք է գոյութիւն ունեցող ազգային օբեկտիւ կապերի եւ — միաժամանակ — ազգը ամբողջացնող ու ամրացնող մի նոր տարր:

Ի՞նչ ասել է ունենալ ազգային գիտակցութիւն:

Դա ասել է՝ գիտակցել այն կապերը, որ կապում են անհատին ազգային հաւաքականութեան հետ. գիտակցել այդ հաւաքականութեան շահերը, կարիքներն ու իրաւունքները. գիտակցել, թէ ի՛նչ բարիքներ է ստանում եւ ունի ստանալու անհատը հաւաքականութիւնից եւ թէ ի՛նչ պարտականութիւններ ունի ինքը՝ հանդէպ հաւաքականութեան:

Ես գիտեմ, որ հայ եմ եւ որ բազմաթիւ կապերով կապուած եմ միւս հայ մարդկանց հետ: Գիտեմ, որ իմ անհատական բախտը — նոյնիսկ անկախ կամ հակառակ իմ կամքին ու ցանկու-

թիւններին — կապուած է շատ խոշոր չափերով «Հայ ազգ» կոչուած հաւաքականութեան բախտի հետ: Գիտեմ, որ ժառանգել եմ ազգիս հոգեկան որոշ արժէքները — իմ ներկայ կարողութեան խոշոր մասը — եւ որ այդ արժէքները պահպանելու, զարգացնելու, աճեցնելու ու նրանցից լիուլին օգտուելու համար, ես կարիք ունեմ ազգի գոյութեանն ու օգնութեանը: Գիտեմ ապա, որ ազգն էլ՝ իր հերթին իր գոյութիւնը պահպանելու ու լինճ օգտակար լինելու համար, կարիք ունի իմ կարողութեան, իմ աշխատանքին եւ իմ զոհաբերութիւններին: Գիտեմ հետեւապէս, որ պարտականութիւններ ունեմ կատարելու հանդէպ ազգին, — պարտականութիւնները, որ՝ վերջի հաշուին՝ ինձ համար, իմ շահերը պաշտպանելու համար պիտի կատարեմ:

Տարբեր ազգեր (իսկ ազգերի ներսում՝ տարբեր հատուածները) տարբեր չափ — աւելի կամ պակաս — օժտուած են ազգային գիտակցութիւնով: Բայց գիտակցութեան մի որոշ նուազագոյն չափ բացարձակապէս անհրաժեշտ է ազգ կազմելու ու պահելու համար: Առանց գիտակցութեան՝ ազգը լրիւ ու ամբողջացած չէ, թէեւ ունենայ առարկայական բոլոր տուեալները ազգային միութիւն կազմելու համար:

Եւ որքան աւելի բարձր է գիտակցութիւնը, այնքան աւելի ամուր, կայուն ու կենսունակ է ազգը:

Քաղաքակրթութեան ինդիքը է սա. ընդհանուր առմամբ, որքան բարձր է մի ազգի քաղաքակրթութիւնը, այնքան բարձր է եւ նրա ազգային դիտակցութիւնը:

Ապա նկատուած (ու տեսականօրէն միանգամայն հասկանալի) երեւոյթ է, որ փորձանքի կամ մեծ վտանգի ժամին առանձին ուժգնութեամբ արթնանում է ու լարւում ազգային դիտակցութիւնը (կամ բնազդը, որ ուրիշ բան չէ, ի հարկէ, քան ժառանգած անգիտակից դիտակցութիւն) եւ որ փոքր, թոյլ, մշտական ապառնալիքի տակ գտնուող ազգերի դիտակցութիւնը չարունակ արթուն է, չարունակ լարուած, նրբազգաց ու դիւրագրգիռ:

Մեծ ու ապահով ազգերը (անգլիացիները, գերմանացիները, ռուսները) յաճախ չեն հասկանում փոքրերին ու չօվինիզմ (ազգամոլութիւն) եւ անուանում այնպիսի երեւոյթներ, որոնք՝ փոքրերի վտանգուած վիճակի մէջ՝ ազգային առողջ բնազդի արտայայտութիւններ են միայն:

Լեհերը նախկին Ռուսաստանում քոյկոտի էին ենթարկել պետական լեզուն. առանց ծայրայեղ անհրաժեշտութեան, չէին խօսում ու չէին կարդում ռուսերէն: Հայերը խելք աչքով էին նայում, եթէ իրանցից մէկը ամուսնանում էր ռուսի հետ ու ապտակով էին պատասխանում «արմեաշկա» բառին: Հրեաները մի լռելյային, աներեւոյթ ու անմարմին միութիւն էին կազմած փոխադարձ օգ-

նութեան համար եւ ուր կարողանում էին՝ խեղդում էին անխնայօրէն ոչ-հրեաների մրցակցութիւնը: Ուկրայնացիները կիեւում կամ Խարկովում չէին գնում ռուսական թատրոն, մալօռօսական «ավիտկա» էին հագնում ու բեխերը երկարացած թափում à la Շեւչենկո...

Ուրիշ պայմանների մէջ այս արտայայտութիւնները պէտք էր որակել իբրեւ չօվինիզմ: Բայց եթէ հաշուի առնել այն պետականօրէն կազմակերպուած հալածանքները, որին ենթարկուած էին ցարական Ռուսաստանում ոչ-ռուս ազգութիւնները, գնահատութիւնը արդէն տարբեր պիտի լինի:

Թիւրիմացութիւնների տեղ չտալու համար, աւելորդ չի լինի մի քիչ կանգ առնել այս խնդրի վրայ:

Անհերքելի է, որ ազգութիւնները — եւ ոչ միայն թոյլերը, ճնշուածները, այլ նոյնիսկ ամէնից զօրեղները, տիրապետողները — ազատ չեն չօվինիզմից: Շօվինիզմը ազգային ինքնագիտակցութեան, ինքնագնահատման ու ինքնայարգանքի այլասերուած, չափազանցուած ու հիւանդոտ արտայայտութիւնն է, նրա ծաղրանկարը: Առօրեայ կեանքում արտայայտւում է զանազան մանր-մունը, համեստաբար անմեղ ու յաճախ գաւեշտական երեւոյթների մէջ: Բայց պատահում է, որ ընդունում է այնպիսի այլանդակ, վայրենի ու նոյնիսկ ոճրային չափեր ու ձեւեր, որ իրաւացիօրէն զըզ-

ուանք ու զայրոյթ է յարուցանում։

Ի դէպ նկատեմ, որ սա առիթ է տուել չափերտների մէջ առնել, ծաղրի ու անարգանքի առարկայ անել այնպիսի բարձրարժէք գաղափարները, ինչպիսի են ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը։

Պէտք է տարբերել չօվինիզմը ազգային գիտակցութիւնից ու նրա առողջ արտայայտութիւններից, պէտք է կարողանալ որոշել, թէ տուեալ պայմանների մէջ որտե՞ղ է վերջանում «ազգասիրութիւնը» եւ ո՞րտեղից սկսւում «ազգամոլութիւնը»։

Շատ էլ հեշտ բան չէ սա. իրան անկեղծօրէն «ազգասէր» միայն համարողը յաճախ ընկնում է վայրենի չօվինիզմի մէջ, ինչպէս եւ դրան հակառակ չօվինիզմից վախեցողը յաճախ խեղդում է իր մէջ ազգային ամենէն առողջ բնազդներն անգամ։

Ընդգծեցի՝ տուեալ պայմանների մէջ, որովհետեւ ընդհանուր նորմաներ չկան եւ ամէն մի կոնկրէտ դրութիւն առաջադրում է ազգին յատուկ պահանջներ ու հարկադրում է յատուկ ընթացք (օրինակ՝ մեծ տագնապների, պատերազմի, ապըստամբութեան կամ յեղափոխութեան ընթացքում՝ ազգային գիտակցութիւնը չի կարող սահմանափակուել նոյն արտայայտութիւններով, ինչ ունենալու է խաղաղ ժամանակ)։

Բայց որքան էլ դժուար լինի դիծ քաշել «ազ-

դասիրութեան» ու «աղգամոլութեան» միջեւ, սահմանները այնուամենայնիւ գոյութիւն ունեն եւ «սէրն» ու «մոլութիւնը» տարբեր բաներ են, — ճիշդ այնպէս, ինչպէս տարբեր են որեւէ օրգանիզմի առողջ ու հիւանդ վիճակը, թէեւ շատ էլ դիւրին չէ գծել այն սահմանը, որը բաժանում է առողջութիւնը հիւանդութիւնից:

Մարդու սիրտը անընդհատ բաբախում է եւ պէ՛տք է որ բաբախի, որպէսզի մարդը կարողանայ ապրել: Բայց եթէ սրտի բաբախումը, նրա ուժգնութիւնն ու արագութիւնը, անցնում է որոշ չափերից դէնը, նա ինքը դառնում է սպառնալիք կեանքի համար:

Ո՞րն է նորմալը, առողջը: Դա կախուած է օրգանիզմից եւ նրա դրութեան պայմաններից: Երեխայի կամ կնոջ օրգանիզմը պահանջում է տարբեր արագութեան բաբախում, այր մարդուն կամ ծերինը՝ տարբեր: Ցետոյ՝ մեւնոյն մարդը, երբ հանգիստ քնած է անկողնում, ուրիշ զարկերակ ունի, քան այն ժամանակ, երբ վազում է սարն ի վեր կամ ձմրան ցուրտին փայտ է կոտրում: Այս եւ շատ ուրիշ հանգամանքներ հաշուի է առնում ուշադիր բժիշկը, երբ փորձ է անում զարկերակով որոշելու մարդու առողջական վիճակը: Նոյն զարկերակը, տարբեր պայմաններում, տարբեր պիտի մեկնուի:

Սեռային յուզումը քան տարեկան երիտասարդի համար բնախօսական երեւոյթ է, առողջ

վիճակի նչան: Բայց եթէ նոյն յուզումը ունենում է ուժ տարեկան երեխան — դա արդէն հիւանդութիւն է:

Երբ չունը ժանիքներն է ցոյց տալիս, մռընչում է սպառնալի ու չի թողնում, որ կատուն մօտենայ այն անկիւնին, ուր պառկած են իր նորածին լակոտները կամ պահած է իր ուտեստը — սա կենսական առողջ բնազդ է, առանց որի չունը չի կարող պահպանել իր ու իր սերունդի գոյութիւնը: Բայց եթէ նոյն չունը, փրփուրը բերանին, վազում է փողոցներով ու կծում ամէն պատահողին անխտիր, — սա արդէն կատաղութեան հիւանդութիւն է:

Ազգային գիտակցութիւնն ու սրանից անհրաժեշտօրէն բխող ազգասիրութիւնը — ազգերի ֆիզիոլոգիան (բնախօսութիւնը) է, առողջ կեանքի հետեւանք ու պայման: Շովինիզմը — նրանց պատոլոգիան — հիւանդաբանութիւն է, հիւանդ վիճակի արտայայտութիւն:

Շովինիզմը բացասական երեւոյթ է ոչ միայն միջազգային փոխյարաբերութիւնների ու մարդկային համակեցութեան տեսակէտից, այլ նաեւ զուտ ազգային կեանքի համար:

Ապրելու ու բարգաւաճելու համար՝ ազգերը կարիք ունեն փոխադարձ օգնութեան ու բարեացակամ համագործակցութեան, — ճիշդ այնպէս, ինչպէս անհատները կարիք ունեն ազգային օգնութեան: Մարդկութիւնը ազգերի հաւաքակա-

նութիւն: Շօվինիզմը — ազգային ինքնայարգանքի ու ազգային եսապաշտութեան այդ հիւանդագին արտայայտութիւնը — անկարելի է անում կամ չատ դժարացնում ազգերի համակենակցութիւնը եւ դրանո՛վ իսկ մեծապէս վնասում ազգային չահերին:

Հայը կարող է այսօր ծանր վէճ ունենալ ու զէնքով ընդհարուիլ թուրքի, քուրդի, թաթարի կամ վրացու հետ: Բնական է, որ կռուի ընթացքում նա անուցանի ու բորբոքի իր սրտի մէջ թշնամական զգացումներ հակառակորդի հանդէպ: Բնական է, անխուսափելի, մասամբ իսկ անհրաժեչտ, որ կռուի ընթացքում աչառու եւ կողմնապահ լինի, գերագնահատի իր պահանջների արդարութիւնն ու հակառակորդի անիրաւութիւնը, վերագրի իրան չափազանցուած առաքինութիւններ, իսկ հակառակորդին՝ ամէն տեսակ արատներ ու ոճիրներ, ինքնանեղչելի զայրոյթի, բարկութեան, ատելութեան ու վրիժառութեան զգացմունքներ... Բայց եթէ այդ հոգեկան կացութիւնը դառնում է տեւողական եւ կռուի չըրջանից էլ դուրս չի փոխարինւում աւելի զգաստ, համբերատար, արդարացի ու գիտակից վերաբերմունքի, — ազգը լրջօրէն հիւանդ է: Այլեւս գիտակցութիւնն ու առողջ եսասիրութիւնը չեն, որ խօսում են նրա մէջ, այլ՝ թունաւորուած հոգին ու կոյր եսամոլութիւնը:

Բայց այն հանգամանքը, որ որոչ պայման-

ների մէջ ազգային գիտակցութիւնը կարող է այլասերուել, ստանալ այնպիսի չափեր ու ձեւեր, որ շատ վտանգաւոր են իւ՛ր իսկ շահերի տեսակէտից, — այս հանդամանքը չի կարող նսեմացնել ինքնագիտակցութեան բարձր արժէքը: Իր գոյութիւնը պահպանելու, զրութիւնը ամրացնելու, զօրանալու ու առաջադիմելու համար, ազգը պէտք է գիտակցի իրան, պէտք է գնահատի իր արժանիքները, սէր ու յարգանք ունենայ իր անհատականութեան հանդէպ, ճանաչի իր շահերն ու իրաւունքները եւ պատրաստ լինի ինքնապաշտպանութեան:

Ազգերը — ինչպէս եւ ամէն ուրիչ կարգի հաւաքականութիւններ ու ընկերային միութիւններ կամ անհատ օրգանիզմներ — չարունակ ու մըշտական մրցման մէջ են իրար հետ, մղում են յաւիտենական կռիւ գոյութեան համար (մի բան որ բնաւ չի հակասում համագործակցութեան սկզբունքին, այլ միայն լրացնում է այն եւ տարբեր ձեւի արտայայտութիւն է նոյն բնախօսական ու sոցիոլոգիական օրէնքի): Այդ մրցման մէջ չկորսուելու, իր անհատականութիւնը պաշտպանելու ու փրկելու համար, ազգը պէտք է զինուած լինի գիտակցութիւնով:

Գիտակցութիւնը չի կարող գոյանալ ոչնչից ու ոչնչից ազգ ստեղծել: Հետեւապէս՝ սխալ է թէ ազգը ինքնագիտակցութիւն է միայն, subjectif *(ենթակայական) երեւոյթ, ազգայնօրէն մը-*

տածելու ու զգալու եղանակ: Բայց ճիշդ է, որ դիտակցությունը ազգ կազմող, լրացնող ու ամբացնող պայմաններից մեկն է:

Անհերքելի է ու անվիճելի, որ կենսունակ ու զօրեղ լինելու համար՝ ազգին հարկաւոր են որոշ առարկայական տուեալներ, թուային մեծութիւն, յաջող աշխարհագրական դիրք, պատմական հարուստ անցեալ, սեեական կազմ, քաղաքակրթութիւն, բնական հարստութիւններ, ըստեղծագործելու միջոցներ ու կարողութիւն և այլն: Բայց անհերքելի է նաեւ, որ այս բոլորը օգտագործելու համար պէտք է դիտակցութիւն

Տարերային մղումներն ու հաւաքական բնազդը — որքան էլ մեծ լինի նրանց դերը հանրային կեանքի մէջ — չեն կարող, այնուամենայնիւ, փոխարինել դիտակցութիւնը: Գոյութեան կռուի մէջ յաջողելու համար, ամէն մի հաւաքականութիւն պէտք է լինի կազմակերպուած: Եւ հաւաքականութեան փաստը ինքնըստինքեան ապացոյց է արդէն, որ կայ ինչ որ կազմակերպութիւն — առանց սրան անհատները չեն կարող կենակցել միութեան մէջ:

Որքան զօրեղ է կազմակերպութիւնը, այնքան զօրեղ է՝ հաւասար պայմանների մէջ՝ ինքը հաւաքականութիւնը: Իսկ կազմակերպութիւնը զօրեղ է ա՛յնքան, որքան բարձր է հաւաքական դիտակցութիւնը:

Մրջիւնների հասարակութիւնը ունի չատ կուռ

կազմակերպութիւն: Բայց պիտակցութեան պակասի հետեւանքով, մրջիւնային կազմակերպութիւնը ճուլուած է անշարժ (կամ ծայր աստիճան դանդաղաշարժ) ձեւերի մէջ, չունի հարկաւոր ճկունութիւն, հեռատեսութիւն, ինքնապաշտպանութեան բազմազան ձեւեր եւ ենթակայ է ամէն մի պատահարի. մի քիչ խիստ կամ երկարատեւ ձմեռ, մի քիչ անձրեւային գարուն, մի համաճարակ, երեխայի չարութիւնը, հողագործի գութանը կամ անցորդի կօշիկը՝ կարող են յանկարծակի վերջակէտ դնել հասարակութեան կեանքին: Եւ եթէ մրջիւնները այնուամենայնիւ ապրում են, դա պէտք է բացատրել արագ ածելու ընդունակութիւնով, — ինքնապաշտպանութեան մի միջոց, որ յատուկ է թոյլ ու անզէն հասարակութիւններին:

Մարդկային ընկերութիւններն էլ՝ իրանց ծագման չրջանում տարերային բնոյթ են ունեցել, հետեւանք են եղել հաւաքական բնազդի: Բայց նրանք էապէս տարբերւում են մրջիւնայիններից, որովհետեւ մարդը ընդունակ է, աւելի կամ պակաս չափերով, բայց յամենայն դէպս շատ աւելի քան մրջիւնը, պիտակցութիւն մտցնելու իր անհատական ու ընկերային կեանքի մէջ, անդրադառնալու երեւոյթների վրայ, դատելու, ընտրելու, ծրագրելու, միջոցներ գտնելու եւ իրականացնելու այն, ինչ որ ինքը համարում է ցանկալի ու կարելի իր համար:

Գիտակցօրէն չէ՛, ի հարկէ, որ կազմուել են ազգերը, — դա կատարուել է անկախ համազգա-կից ներէ դիտաւորութիւններից ու կամքից: Գի-տակցութիւնը ինքը հետեւանք է արդէն կատար-ուած փաստի, — աւելի ճիշդ՝ կատարուելիք փաստի հասունացած դրութեան: Ազգային ա-ռարկայական տարրերը (ամբողջովին կամ մեծ չափերով) դոյութիւն են ունեցել արդէն, երբ արթնացել է դիտակցութիւնը: Բայց դիտակցու-թիւնը՝ ասպարէզ բերելով ցանկութեան ու կամ-քի տարրերը՝ մի նոր ու վճռական զարկ է տուել, ձեւի մէջ է դրել, չաղկապել ու ամբողջացրել է ազգային կառուցուածքը:

Զ.

I

Կարծում եմ, որ այժմ՝ այսքան երկար որո-նումներից յետոյ կարող ենք արդէն փորձել պա-տասխան տալու մեր հիմնական հարցին, թէ ինչ է ազգը:

Ազգը մարդկային մի ինքնատիպ համբակցու-թիւն է, հաւաքական (collectif) միութիւն, ոչի անդամները՝ ազգ կազմող մարդիկ կապ-

ուած են իրար հետ ու իրար մէջ.—

ա) Մասամբ ցեղային կապերով (ընդհանուր ծագում, արիւնակցութիւն, ազգակցութիւն),

բ) Մասամբ պետական կապերով (ներկայում կամ անցեալում, պետութեան ներսը կամ պետութիւնից դուրս, բայց միշտ նեցուկ ունենալով զայն),

գ) Մասամբ տերիտորիալ կապերով (երկրային, աշխարհագրական ընդհանրութիւն),

դ) Մասամբ կրօնական կապերով (դաւանանքի, եկեղեցական կազմակերպութեան ընդհանրութիւն),

ե) Մասամբ — ու գլխաւորապէս — լեզուային կապերով (լեզուային միութիւն),

զ) Մասամբ քաղաքական — ու ամբողջովին ազգային — պատմութիւնով (ընդհանուր անցեալ ու այդ անցեալի կենդանի յիշողութիւններ, ընդհանուր յաջողութիւններ ու տառապանքներ, պատմական հաստատութիւններ ու աւանդութիւններ),

է) Մասամբ կենցաղային կապերով (ընդհանուր նիստ ու կաց, սովորութիւններ, վարքեր ու բարքեր, բարոյահոգեկացողութիւն ու իրաւահասկացողութիւն, ընտանեկան ու հանրային փոխյարաբերութիւններ):

Այս կապերը ծնունդ են տալիս մի ուրոյն մարդկային տիպի՝ ֆիզիքական ու հոգեկան, ապա ծնունդ են տալիս նաեւ մի ուրոյն մշակոյ-

թի՝ ազգային մշակոյթի (յատկապէս՝ գեղարուեստի, որ գերազանցօրէն ազգային ստեղծագործութիւն է)։

Ֆիզիքական ու հոգեկան առանձնայատկութիւնների ընդհանրութիւնը, երկրային ու պետական կապերը, կենցաղային նմանութիւնն ու մշակոյթի նոյնութիւնը, ընդհանուր ապրումներն ու ընդհանուր վիճակը անցեալում ու ներկայում, — սրանք ծնունդ են տալիս փոխադարձ հասկացողութեան, մօտիկութեան ու մի առանձին մտերմութեան՝ ազգ կազմող մարդկանց միջեւ. ապա ծնունդ են տալիս ազգային ինքնագիտակցութեան, փոխադարձ կապերի, իրաւունքների ու պարտականութիւնների ճանաչման, ձգտումների, ցանկութիւնների, կարիքների ու պահանջների ընդհանրութեան։

Ահա՛ թէ ինչ է ազգը։

Բացատրութիւնը մի քիչ երկար է ու ո՛չ ցանկալի չափով որոշակի, բայց երեւոյթի բարդ էութիւնը թոյլ չի տալիս ամփոփելու այն՝ մի սեղմ ու կարուկ փորմիւլի մէջ։

Ազգը պատմա-մշակութային երեւոյթ է, ազգային միութիւնը պատմա-մշակութային կապակցութիւն։

Վերջի հաշուին՝ մշակոյթն է, որ ժողովուրդներից ազգեր է ստեղծում, բաժանում է մարդկութիւնը տարբեր ազգութիւնների եւ միացնում է մարդկանց ազգութիւնների մէջ։

II

Մի միջանկեալ նկատողութիւն։

Նոբելյան կարդացի Լ. Շանթի հետեւեալ տողերը(*)։

... «Միայն մարդու յատկութիւնը չէ ազգ ու քաղաքակրթութիւն առաջացնելու։ ... Անասուն ալ իր տեսակի ազգ մըն է, իր յատուկ քաղաքակրթութեամբ»...

Եթէ իմ ընթերցողը կարդացել է Լ. Շանթի «Ի՞նչ է ազգութիւնը» յօդուածը (իսկ եթէ դեռ չի կարդացել, արժէ որ կարդայ), նկատած պիտի լինի անշուշտ, որ ընդհանուր առմամբ ես կանդնած եմ նոյն տեսակէտի վրայ ու զարգացնում եմ նոյն թէզերը, ինչ եւ Շանթը։ Բայց արտադրած տողերի մէջ պարունակւում է, եթէ չասեմ հիմնական սխալ, յամենայն դէպս մի շատ խոշոր թիւրիմացութիւն, որ պէտք է մատնանշել արուի։

Հակառակ Շանթի կարծիքին, ազգ կազմելը, ինչպէս եւ քաղաքակրթութիւն (civilisation) *առաջացնելը, միայն ու միայն մարդու յատկութիւն է. ոչ բոյսերը ու ոչ էլ կենդանիները ընդունակ են այդ անելու։*

(*) Տեսնել Լ. Շանթի «Ազգութիւնը հիմ՝ մարդկային ընկերութեան» հատորը, էջ 70, Հ. Յ. Դ. Ջաւարեան Ուսանողական Միութեան մատենաշար, թիւ 3, 1979, Պէյրութ։

Իսկ եթէ, հետեւելով Շանթին, ընդլայնուի այդ ստուգման բառերի իմաստը, նրանք կը կորսընդգրկեն ամէն ազգ, ամէն բովանդակութիւն եւ կը դառնան սոսկ «բառեր», — դատարկ ու պարապ հնչիւն:

Հետագայ տողերում Շանթը խօսում է «ընտանիքների», «խմբական կեանքի», «ցեղային կազմակերպութիւնների» ու «ժողովուրդների» մասին, ցոյց տալու համար, թէ կենդանիներն էլ ընդունակ են այդ ամէնը ունենալու:

Կասկած չկայ, որ եւ՛ կենդանիները, եւ՛ բոյսերը ունեն խմբական կեանք ու կազմում են ընտանիքներ, ցեղեր (բոյսերը՝ բնազդական իմաստով, իսկ կենդանիները՝ նաեւ սոցիալական իմաստով):

Բայց թիւրիմացութիւնը նրա մէջ է, որ ընտանիքը, ցեղը, խումբը, ժողովուրդը՝ տարբեր հասկացողութիւններ են, ազգը՝ տարբեր: Բնազդութիւնը բաժանում է բուսական ու կենդանական աշխարհը դանազան դասերի, ցեղերի, տեսակների, ընտանիքների, բայց երբեք ազգերի:

Ազգն էլ խմբակցութիւն է անշուշտ ու ազգային կեանքն էլ՝ խմբական կեանք: Բայց ամէն խմբակցութիւն ազգ չէ ու ամէն խմբային կեանք ազգային չէ: Ազգը մարդկային ու այն էլ մարդկային առանձնայատուկ խմբակցութիւն է, որ չպէտք է չփոթել ուրիշ կարգի խմբակցութիւնների հետ, եթէ ուզում ենք հասկանալ իրար:

Նոյնը եւ քաղաքակրթութեան վերաբերմամբ։ Խօսել անտառի կամ անտառային «քաղաքակրթութեան» մասին, դա ասել է պարզապէս խաղալ բառերով։ Տարակոյս չկայ, որ անտառը (ոչ միայն ամէն մի ծառ անհատը, այլ եւ անտառը իբրեւ ամբողջութիւն) ունի իր կեանքը, իր զարգացումը, իր առաջադիմութիւնը։ Պարզ է նոյնպէս, որ քաղաքակրթութիւնն էլ իր էութեամբ զարգացում է։ Բայց ամէն մի զարգացում քաղաքակրթութիւն չէ։ Քաղաքակրթութիւն անուանւում է հանրային կեանքի առանձին ճեւի ու առանձին բովանդակութեան զարգացում, որ յատուկ է միայն մարդկային ընկերութիւններին։

Գիտեմ, որ մրջիւնների կեանքի մասին պատմողները եւ գրողները գործադրում են յաճախ պետութիւն, դասակարգ, զօրք, զօրավար, բանակցութիւն, դաշինք ու պատերազմ բառերը։ Բայց չպէտք է մոռանալ, որ դա կամ բանաստեղծական ոճ է, երեւոյթները մարդկայնացնելու ձգտում (մի բան, որից ազատ չեն նոյնիսկ գիտնականները) կամ պարզ համեմատութիւն։ Բայց որքան էլ դայթակղեցուցիչ ու իր տեղում ընդունելի լինի այդ ոճը, նա դառնում է չատ վտանգաւոր, երբ գործադրւում է այնտեղ, ուր պէտք կայ ճչդօրէն սահմանելու դաղափարները եւ դաղափարներ արտայայտող բառերի իմաստը։

Ի՞նչ տարբերութիւն մրջիւնային «պետութեան» եւ մարդկային պետութեան միջեւ։ Ձիշդ

նոյնը, ինչ մրջիւնի ու մարդու մէջեւ: Ի հարկէ, երկուսն էլ կենդանի օրգանիզմներ են, ունեն նոյն ծագումը ու ապրում են համաճայն նոյն կենսաբանական օրէնքների: Բայց եւ այնպէս, մենք տարբերում ենք մէկը միւսից, մէկին մարդ ենք անուանում, միւսին՝ մրջիւն: Եւ չատ բան չահած չէինք լինի (մեր հասկացողութիւններն ու բառերի իմաստը ճշդելու տեսակէտից), եթէ երկուսին էլ «մարդ» անուանէինք:

Աղը պատմա-մշակութային երեւոյթ է եւ ո՛չ բնապատմական:

Անհերքելի է, որ ամէն մի ընկերային-սոցիալական (ուրեմն եւ պատմա-մշակութային) երեւոյթի տակ դրուած են կենսաբանական հիմքեր, ինչպէս կենսաբանականի տակ՝ բնաքիտական, ֆիզիքական, քիմիական, իսկ սրանց տակ՝ մեքանիքական հիմքեր: Բայց մենք որոշակի տարբերում ենք միմեանցից այդ երեւոյթները եւ ամէն մէկին տալիս ենք իր յատուկ անունը (եւ պէ՛տք է տանք, որպէսզի հասկանանք, թէ ինչի մասին ենք խօսում): Կենսական պրոցեսները տարբերում ենք ֆիզիքականներից ու քիմիականներից, հոգեկան ու ընկերային պրոցեսները տարբերում ենք կենսաբանականից...

Թերեւս սա մեր մտքի տկարութիւնն է, բայց այլ կերպ մենք չենք կարող մտածել, ըմբռնել, արտայայտուել ու հասկանալ միմեանց:

Եթէ ընդունենք, թէ «անտառն էլ իր տեսակի

ազգ մըն է», ոչ միայն չենք պարզաբանի «ազգ» գաղափարը, այլ մի նոր չփոթութիւն կ'աւելացընենք եղածների վրայ ու կը կորսնցնենք մեր ճանապարհը, մեր ոտների տակի պինդ հողը: Ո՛րովհետեւ նոյն տեսակէտից — ու չա՛տ աւելի մեծ իրաւունքներով — կարող ենք ասել, թէ Անդրկովկասի ազգաբնակութիւնն էլ, իրրեւ ամբողջութիւն, «իր տեսակի ազգ մըն է»:

Բայց չէ՞ որ մեր (Շանթի ու իմ) ըմբռնումով Անդրկովկասում ապրող հայերը, վրացիները, թուրք-թաթարները, պարսիկները, քուրդերը, լեզգիները, ռուսները, գերմանները, հրեաները, — չէ՞ որ սրանք չեն կազմում մի ազգ, այլ կազմում են տարբեր ազգեր:

Ցեռոյ՝ զարգացնելով նոյն տեսակէտը, անսահման լայնացնելով գաղափարները ու խաղալով բառերի հետ, ինչո՞ւ չասել, թէ արեգակային սիստեմն էլ «իր տեսակի ազգ մըն է» կամ թէ Հերկուլէսի համաստեղութիւնն էլ ունի «իրեն յատուկ քաղաքակրթութիւն»... Չէ՞ որ արեգակն էլ, իր մոլորակներով, կազմում է մի առանձին միութիւն տիեզերքի մէջ, «ընտանիք» է, «ցեղ» է ու հերկուլեան համաստեղութիւնն էլ ունի իր խմբական կեանքը, իր կազմը, իր զարգացումը եւ չէ՞ որ բանաստեղծները սիրում են յատկացնել աստղերին մարդկային յատկութիւններ, հաւատացնում են, թէ աստղերը ժպտում են միմեանց, կարօտում են իրար, «երգում են անուշ, միասին

համբուրած» (Պրեբրաժենսկի), «կոյս-ծաղիկներին հեքիաթ են պատմում» (Ֆոֆանով)...

Է.

I

Արդեօ՞ք բոլոր ազգերը հաւասարապէս ու հաւասարաչափ օժտուած են բոլոր ազգային տարրերով ու յատկութիւններով:

Իրականութիւնը բացասական պատասխան է տալիս այս հարցին:

Այն բնորոշումը, որ փորձ արի ձեւակերպել վերեւը, ներկայացնում է ոչ թէ իրապէս գոյութիւն ունեցող ազգերը իրանց ամբողջ բարդութիւններով, այլ ազգ-դաղափարը, ազգի վերացական էութիւնը, — ազգը իր լրիւ կազմով ու ազատ՝ օտար տարրերից:

Իրականութեան մէջ այդպիսի վերացական հաւաքականութիւններ, այդպիսի տիպար ազգեր — լրիւ ու անխառն — գոյութիւն չունեն եւ չեն էլ կարող ունենալ. ընկերային կեանքը այնքան բարդ է եւ ընկերային երեւոյթները այնքան խճճուած, որ տարբեր բնոյթի համբակցութիւններ անխուսափելիօրէն հերտաւորւում են իրար վրայ, թափանցում են մէկը միւսի մէջ, խախտում են տիպերի մաքրութիւնը:

Եթէ ուշադրութեամբ դիտենք ու վերլուծենք իրական ազգերը, կը տեսնենք, որ նրանք միչտ մի բան աւել ունեն, ու մի բան պակաս, քան պիտի ունենար տիպար ազգը: Ապա կը տեսնենք, որ ազգային տարրերը — նրանց չափը, զարգացման աստիճանը, համեմատական ուժգնութիւնն ու նըշանակութիւնը — նոյնը չեն ամէն ազգի համար:

Այս մի ազգի մէջ աւելի չեչտուած ու առանձնապէս զարգացած է, օրինակ, պետական տարրը ու համեմատաբար թոյլ են ուրիչ ազգային տարրերը, միւսի մէջ՝ կրօնականը, երրորդի՝ պատմականը կամ կենցաղայինը... Այս կամ այն տարրը կարող է չատ թոյլ արտայայտուած լինել — նոյնիսկ բոլորովին բացակայել — տուեալ ազգային մշակոյթի մէջ: Միւս կողմից, ամէն մի ազգային մշակոյթ կարող է պարունակել եւ իրօք պարունակում է իր մէջ — աւելի կամ պակաս չափերով — օտար, խորթ, ոչ-ազգային տարրեր:

Այս բազմապիսութիւնը բարդացնում ու դըժուարացնում է անչուշտ խնդիրը, բայց անխորտակելի արգելք չէ երեւոյթի դոյութիւնը հաստատելու եւ նրա էութիւնը հասկանալու համար:

Ահա մի բաժակ ջուր իմ սեղանի վրայ: Սա ջո՛ւր է: Ե՛ս էլ, դուք էլ — ջուր ենք անուանում այս հեղուկը: Եւ չենք սխալւում, թէեւ դիտենք, որ սա քիմիապէս մաքուր ջուր չէ: Եթէ վերլուծենք այս հեղուկը, անչուշտ կը դանենք նրա մէջ — բացի քիմիապէս կապուած ջրածնից ու թրթ-

ուածներից — նաեւ ազատ օդ, զանազան աղեր, գուցէ եւ միկրօօրգանիզմները: Եթէ իմ բաժակի մէջ եղած աղբիւրի ջրի փոխարէն վերցնենք մի բաժակ ջուր մօտակայ առուից կամ գետակից, բաղադրութիւնը կը լինի աւելի բարդ, կողմնակի խառնուրդները՝ աւելի շատ ու աւելի բազմազան: Եթէ վերցնենք ջուրը մի ուրիշ առուից կամ մի ուրիշ գետից, հաւանականօրէն կը գտնենք տարբեր բաղադրութիւններ, նոր նիւթեր կամ նոյն նիւթերը տարբեր չափերով:

Ոչ գետի ջուրը, ոչ առուինը, ոչ աղբիւրինը եւ առհասարակ իրականութեան մէջ գոյութիւն ունեցող ոչ մի ջուր (բացի լաբորատորիաների մէջ արհեստականօրէն պատրաստուածներից) քիմիական մաքուր ջուր չէ: Սա մէկ: Երկրորդ. եթէ համեմատելու լինենք իրար հետ՝ աղբիւրի ջուրը նոյնը չէ, ինչ է գետի կամ առուի ջուրը: Երրորդ. մեր աղբիւրի ջուրը նոյնը չէ, ինչ ձեր աղբիւրինը եւ Արաքսի ջուրը նոյնը չէ, ինչ Հրազդանինը կամ Դանուբինը:

Բայց եւ այնպէս, այս բոլոր ջրերը հաւասարապէս «ջուր» ենք անուանում մենք ու կրկնում եմ՝ չենք սխալւում:

Ինչո՞ւ:

Որովհետեւ սրանց բոլորի էլ հիմնական մասը քիմիական ջուրն է: Ապա նաեւ այն պատճառով, որ սրանք բոլորն էլ օժտուած են մօտաւորապէս նոյն քիմիական ու ֆիզիքական յատկու-

թիւններով, կատարում են մօտաւորապէս նոյն դերը բնութեան մէջ, ունեն մօտաւորապէս նոյն նշանակութիւնը երկրի օրգանական ու ոչ–օրգանական կեանքի համար:

Ինչպէս իրական ջրերը տարբերւում են մի–մեանցից օտար բաղադրութիւններով ու նման են քիմիական մաքուր ջրին տարբեր չափերով, այ–սինքն՝ տարբեր աստիճանի «ջուր» են, — այնպէս էլ իրական ազգերը տարբերւում են միմեանցից ազգային ու ոչ–ազգային տարրերի խառնուրդնե–րով ու տարբեր չափերով մօտենում են ազգ–տի–պարին, հետեւաբար տարբեր աստիճանի «ազգ» են:

Որքան աւելի լրիւ ու զարգացած են մի ազգի մէջ ազգային տարրերը եւ՝ համեմատաբար՝ ան–նշան են օտար խառնուրդները — այնքան աւելի բնորոշուած է ազգային դէմքը, այնքան աւելի զո–րեղ է ազգային կազմը, այնքան աւելի «ազգային» է ազգը: Եւ որովհետեւ ազգութիւնը, վերջի հաշ–ուին, պատմա–կուլտուրական երեւոյթ է, ուստի որքան աւելի բարձր է ազգային մշակոյթի աստի–ճանը, այնքան աւելի բարձր է — ընդհանուր առ–մամբ — նրա ազգային անհատականութիւնն ու ազգային դիմակցութիւնը: Անգլիական, գերմա–նական կամ ֆրանսական ազգերը աւելի «ազգ» են, քան հայկականը եւ հայկականը աւելի, քան քըր–դականը:

Այս տարբերութիւններն ու աստիճանաւո–

*բումները, որ ակներեւ են ու անհերքելի, չեն կա-
րող սակայն կասկածի տակ դնել ազգերի իրակա-
նութիւնը, նրանց գոյութիւնը:*

*Եթէ պահանջելու լինէինք գտուած, միանգա-
մայն անխառն ու որոշակի սահմանուած տիպեր,
պիտի հերքէինք նաեւ ցեղերի ու տեսակների գո-
յութիւնը բուսաբանական կամ կենդանաբանական
աշխարհում եւ դասակարգերի գոյութիւնը մարդ-
կային ընկերական կազմի մէջ, որովհետեւ սրանք
եւս չեն ներկայացնում անխառն տիպեր, կտըր-
ուած՝ հարեւան տիպերից անանցանելի սահման-
ներով:*

II

*Ազգը, ինչպէս եւ ամէն մի կենսական երե-
ւոյթ, քարացած չէ անշարժ, մէկ անգամ ընդ
միշտ սահմանուած ձեւերի մէջ. զարգացման պրո-
ցեսի մէջ է նա շարունակ, միշտ փոփոխւում է,
նոր ձեւեր ու արտայայտութիւններ է ստանում:
Եթէ խօսելու լինենք մեքանիքայի լեզուով՝ ազ-
գային մարմնի կայունութիւնը շարունակ «վայր-
կենական հաւասարակշռութեան» վիճակի մէջ է,
տատանւում ու կերպարանափոխւում է շարունակ,
«որոնում» է իրան, շարունակ «կազմւում» է ու
«գոյանում»:*

Եւ այս շարժողութեան մէջն է նրա կեանքը,

սա է նրա կենսունակութեան ապացոյցն ու ապագային դրաւականը։

Եթէ զարգացման պրոցեսը դադարի՝ ազգը մեռած է կամ մեռնելու վրայ է, դատապարտուած է մահուան։

Ցաւիտենական չեն ազգերը, նրանք ծնւում են, զարգանում, հասունանում ու մեռնում։

Ասորական, բաբելոնական, եգիպտական ու հռոմէական մեծ ազգերը մեռած են դարեր առաջ, — այսինքն՝ մեռած են այն ուրոյն, ինքնատիպ պատմա-կուլտուրական միութիւնները, որոնք ճանչցուած են պատմութեան մէջ այդ անունների տակ ու ստեղծել են այդ անունների հետ կապուած քաղաքակրթութիւնները։

Պրովանսալցին, որ տարբերւում է այսօր Բուրգոնի կամ Անժուի ֆրանսիացուց ոչ աւելի, քան սիւնիքցի հայը տարբերւում է լօռեցի հայից, Միջին Դարերում կազմում էր մի առանձին ազգ։ Այդ ազգը չկայ այսօր։ Սկովտիական ազգից մնում է անունը միայն, ազգային դէմքը տեղ-տեղ ու մի քանի սովորութիւններ, որ դեռ տարբերում են սկովտիացուն անգլիացուց։ Բայց ազգը չկայ։ Ֆլամանդացիների կէսը (բելգիական վալոնները) ֆրանսիացել է վաղուց ու այսօր պայքար է մղում միւս կէսի դէմ՝ ֆրանսական լեզուն Ֆլրանդրիայում հաստատելու համար։ Բրետոնական լեզուն (ուրեմն եւ ազգը) հազար տարուայ ընթացքում (10րդ դարից մինչեւ 20րդը) կորցրել

է յօդուտ Ֆրանսական լեգուի իր տերիտորիայի կէսից աւելին...

Ազգերը չարունակ փոխում են իրանց կազմն ու ծաւալը, զօրանում են ու տկարանում, ապա՝ քանդւում ներսից (երբ սպառած են լինում բոլոր ստեղծագործական կարողութիւնները) կամ խորտակւում արտաքին հարուածների տակ, մեռնում:

Անհրաժեշտ չէ որ մեռնեն — ֆիզիքապէս ու անժառանգ — ազգը կազմող մարդիկ: Պրովանսալցիները, վալլոն-ֆլամանդացիները, ակովտիացիները չեն ենթարկուած զանգուածային կոտորածների ու բնաջնջման, նրանց սերունդները չեն ոչնչացուած, չարունակում են ապրել մինչեւ այսօր. բայց ազգ չեն կազմում այլեւս, ազգայնօրէն մեռած են:

Այն խեղճ ու անճար ժողովուրդները, որոնք թափառում են այսօր Տիգրիսի ու Եփրատի միջեւ տարածուած անապատ տափարակներում կամ այն ողորմելի փելլահները, որոնք Գահիրէի փողոցներում մաքրում են Ֆրանկների կօշիկները — թերեւս սրանք կրում են իրանց երակների մէջ Բաբելոնն ու Թեփեսը չինող մեծ հայրերի արիւնը: Արիւնը ունեն դուցէ, բայց չեն ժառանգել, չեն պահել ու խնամել, կորցրել են հայրերի ստեղծագործած մեծ հարստութիւնները — այն մշակոյթը, որ ժողովուրդներից ազգեր է կազմում: Եգիպտոսի մշակութային ժառանգը — նրա հոգեւոր որդին — դասական Հելլադան է եւ ո՛չ այսօր-

ուայ Ֆելլահը, որը թէեւ չարունակում է պահել իր ֆիզիքական գոյութիւնը հայրերից մնացած փառահեղ աւերակների մէջ, բայց կորցրել է այն կազմակերպութիւնն ու մշակոյթը, այն դիտութիւնը, գաւանանքը, արհեստն ու արուեստը, որոնց արդիւնքն է եղել Թեփեսը. կորցրել է նոյնիսկ գիտակցութիւնը, թէ կայ կամ եղել է որեւէ կապ իր ու այդ հոյակապ դերեզմանների, տաճարների ու պալատների միջեւ:

Ազգերը անմահ չեն: Բայց սխալ կը լինէր եզրակացնել, թէ ուրեմն ազգը, իրրեւ այդպիսին, իրրեւ ուրոյն երեւոյթ՝ ժամանակաւոր է ու անցողակի: Ազգերը մեռնում են, բայց ազգութիւնը իրրեւ երեւոյթ մնում է (ինչպէս մարդիկ մեռնում են, բայց «մարդը» մնում է. ինչպէս պետութիւնները կործանւում են, բայց «պետութիւնը» մնում է), եւ մեռած ու մեռնող ազգերի փոխարէն ծնունդ են առնում նորերը:

Հռովմէական (լատին) ազգի բեկորներից կառուցուեց իտալական ազգը: Գոթական վայրենի ցեղերը ծնունդ տուին գերմանական ազգին ու անապատներում թափառող սեմիթական տրիբուններն՝ արաբ ազգին: Մեծն Կարոլոսի (Շարլեմանի) ժամանակ ֆրանսական ազգը գոյութիւն չունէր դեռ: Ռումանական ազգը կազմուել է ոչ առաջ, քան 12րդ դարում:

Եւ եթէ մի կողմից ազգերը ձուլւում են իրար հետ, լուծւում են իրար մէջ, կլանում են մէ-

կը մխսին, — միւս կողմից ու զուգընթացաբար կատարւում է բաժանման պրոցեսը: Մայր–ազգերից անջատւում են հատուածներ, կերպարանափոխւում են ու նոր ազգութիւններ կազմում: Կիեւը եղել է ռուս ազգի օրօրանը, իսկ այսօր ուկրայնիացիները ազգայնօրէն անջատում են իրանց՝ ռուսներից: Հարաւային Ափրիկէի բօէրները հոլլանդացի չեն այլեւս: Անգլիական գաղութները Հիւսիսային Ամերիկայում, Աւստրալիայում ու Նոր Զելանդիայում նոր ազգեր կազմելու վրայ են: Նոյն եւ սպանական ու պորտուգալական գաղութները կենտրոնական ու Հարաւային Ամերիկայում:

Երբ ժողովուրդները հասնում են քաղաքակրթութեան որոշ բարձրութեան, ստեղծագործում են ու դանձում որոշ չափի ու ուրոյն ձեւերի մշակութային հարստութիւններ — բնականօրէն ու անխուսափելիօրէն կազմում են ազգային միութիւններ:

Պատմական օրէնք է սա:

Հները մեռնում են, նրանց փոխարէն ծնունդ են առնում նորերը. այսինչ ազգութիւնը լուծւում է այնինչ ազգութեան մէջ, ոչնչանում. բայց այս մի երրորդը՝ ինքը բաժանւում է եւ նոր ազգային մարմին կազմում:

Ազգերը եղել են անցեալում, գոյութիւն ունեն այսօր եւ չկայ ոչ մի տուեալ ենթադրելու, թէ չպիտի լինեն վաղը:

III

Թերեւս հակառակը. քաղաքակրթութեան զարգացման հետ զուգընթացաբար՝ կարծես աւելի ու աւելի արտայայտւում են ու չեչտւում ազգային անհատականութիւնները, աւելի ու աւելի բիւրեղանում անձեւ զանգուածներից ազգային հաւաքական մարմինները։

Եւ եթէ, լուծւում են իրար մէջ, կլանում են այնքան ուսումնասիրում էին իրական երեւոյթները, որքան դատում էին ու դատողութիւնների վրայ հիմնուած վերացական չէնքեր կառուցանում — կարծում էին, թէ մարդկային առաջադիմութիւնը տանում է ազգերը աստիճանաբար դէպի ապազգայնացում եւ հեռանկարում տեսնում էին՝ մի մարդկութիւն — մի ազգ։

Կարծես յատկապէս այդ սխալը, այդ փիլիսոփայական նախապաշարմունքը փարատելու համար էր, որ յաջորդ 19րդ դարը ու մանաւանդ մեր ապրած ժամանակը՝ 20րդի առաջին քառորդը՝ ամէնից աւելի ու ղերազանցօրէն «ազգային» եղան։

19րդ դարում վերակազմուեցին այնպիսի ազգային պետութիւնները, վերածնուեցին կամ նոր ծնունդ առան այնպիսի ազգային գրականութիւններ, որոնց հնարաւորութիւնը ոչ ոք չէր կասկածում 18րդ դարում։

Ազգային գիտակցութիւնը մի նոր ու աննա-

խընթաց թափ առաւ 19րդ դարում եւ արտայայտութիւն դտաւ ամենախուլ անկիւններում իսկ։

Կեսարիայի կամ Աղանայի հայերը սրանից դէս դար առաջ ուրիշ լեզու չդիտէին, բացի թուրքերէնը։ Նոյնը եւ Վրաստանի հայերը, որոնք խօսում էին միայն ու բացառապէս վրացերէն։ Իսկ այսօր այդ թրքախօս ու վիրախօս հայերի զաւակներն ու թոռները՝ բաւականին խոշոր թուով՝ խօսում են արդէն, կարդում ու գրում հայերէն։ Ազազդայնացման պրոցեսը, որ վաղուց արդէն սկսուել էր ու մեծ նուաճումներ արել որոշ շրջանների հայութեան մէջ, ոչ միայն դանդաղեց ու կանգ առաւ սրանից մի կէս դար առաջ, այլ եւ տեղի տուեց հակառակ մի պրոցեսի — կորցրած ազգութիւնը վերադառնելու պրոցեսին։

Զարդարացաւ այն կարծիքը, թէ ազգային բաժանումներն ու համբակցութիւնները — հնացած ձեւ է մարդկային կենակցութեան, անցած դարերի մնացորդ, մի տխուր ժառանգութիւն, որ թողել են մեր բարբարոս պապերը եւ թէ քաղաքակրթութեան ընդհանրացումն ու ծաւալումը անխուսափելիօրէն ազատելու են մարդկութիւնը այդ ժառանգութիւնից ու տանելու են դէպի ապազդայնացում։

Զարդարացաւ այն կարծիքը, թէ ազգային բաժանումները հետեւանք են ժողովուրդների մեկուսի կացութեան եւ թէ քանի աւելի զարդանան ու հեչտանան հաղորդակցութեան միջոցները, յա-

բաւեւ ու սերտ դառնայ ժողովուրդների չփումը, քաղմանան ու ամրանան միջազգային կապերը եւ դիտակցուին ընդհանուր շահերը (մասնաւորապէս՝ տնտեսական կապերն ու շահերը) — այնքան աւելի պիտի ժխդունանան ազգային անհատականութիւնները ու տեղի տան մի հանուրմարդկային տիպի։

Զարգացման այս նախատեսութիւնները։

Վերջին 100–150 տարուայ ընթացքում մարդկային քաղաքակրթութիւնը մի ապշեցուցիչ թռիչք է արել (մասնաւորապէս գրական դիտութիւնների ու տեխնիկայի առաջարկում), ահագին նուաճումներ է կատարել, ծաւալուել է ու ընդհանրացել անօրինակ չափերով։ Հաղորդակցութեան միջոցները զարգացել են, արագացել ու հեշտացել, անվտանգ ու մատչելի դարձել ամէնքի համար — այնպէս, որ կարծես տարածութիւնը գոյութիւն չունի այլեւս աշխարհի մէջ։

Մեր պապերի համար Երեւանից Սամարղանդ գնալ-գալը մի դործ էր, որին մարդիկ — թերեւս մէկը յիսուն հազարից — պատրաստւում էին տարիներով ու ապա տարիներ չարունակ պատմութիւններ անում այդ հեքիաթային ճամբորդութեան մասին։ Իսկ այսօր՝ ովկիանն անցնելը եւ Ամերիկա գնալը կամ ասիական մեծ ցամաքը ծայրից ծայր կտրելն ու մինչեւ Ճապոն հասնելը՝ այնպիսի սովորական բան է դարձել, որ այլեւս ոչ զարմացնում է, ոչ իսկ հետաքրքրում մէկին։

Միջազգային չափումը, յարաբերութիւնները ու կապերը — մասնաւորապէս տնտեսական կապերը — հարիւրապատկուել են։ Ամենահեռաւոր երկիրներն ու ժողովուրդներն անգամ կապուած են այսօր առեւտրական կապերով, փոխանակում են ապրանք ու հում նիւթ, օգտագործում ու չհագործում են միմեանց. աշխարհը դառել է այսօր մի հոյակապ չուկայ, ուր՝ մշտական չփման մէջ են ամէն կարդի ու ամէն գոյնի մարդիկ։

Այն դրութիւնը, որը ենթադրաբար պիտի տանէր դէպի ապազգայնացում, իրականացած է արդէն չատ մեծ չափերով — աւելի մեծ չափերով, քան կարող էր երազել սրանից մի–երկու դար առաջ ամենաւարառ, ամենաանզուսպ երեւակայութիւնն անգամ։ Բայց ազգերի ապազգայնացումը չի նկատուում։

Ի հարկէ (ու բարեբախտաբար), ազգերը այսօր չատ աւելի մօտ ճանաչում են իրար, չատ աւելի լաւ հասկանում միմեանց, ուրեմն եւ չատ աւելի հեշտօրէն գտնում են մի ընդհանուր լեզու՝ ընդհանուր գործերը կարգադրելու համար։ Կը սիրէի աւելացնել նաեւ — մի քիչ տատանուելով ու որոշ վերապահումներով — չատ աւելի համբերատար ու փափկանկատ են իրար հանդէպ, քան 5–10 տերունդ մեզանից առաջ։

Բայց այս բարերեր փոփոխութիւնը չի չեզոքացրել ազգային անհատականութիւնները, չի վերացրել կամ թուլացրել ազգային կապերը։

Ահա երեք մեծ ազգ՝ անգլիականը, ֆրանսականը, գերմանականը: Անժխտելիօրէն, սրանք ամէնից աւելի քաղաքակրթուած ազգերն են այսօր, քաղաքակրթութեան առհվիրաններն ու առաջապահները:

Եթէ քաղաքակրթուելու հետ միասին թուլանալու լինէին ազգային առանձնայատկութիւնները, ապա ուրեմն սրանք պակաս «ազգային» պիտի լինէին, քան աւելի յետամնաց (կամ պակաս առաջադիմած) ազգերը — օրինակ՝ պարսիկները, ռումանացիները, ռուսները: Արդեօք այդպէ՞ս է իրականութեան մէջ. արդեօք անգլիացին պակա՞ս չափով «անգլիացի» է, քան պարսիկը՝ պարսիկ, ռումանացին՝ ռումանացի եւ ռուսը՝ ռուս: Ձիշդ հակառակը չէ՞ արդեօք իրականի մէջ:

Եթէ քաղաքակրթութիւնը տանէր դէպի ապազգայնացում, այսօրուայ գերմանացին պակաս չեչտուած գերմանացի պիտի լինէր, քան էին իր պապերը, — չէ՞ որ նա աւելի քաղաքակրթուած է: Բայց այդպէ՞ս է արդեօք. մի՞թէ գերմանական ազգը պակաս «ազգային» է այսօր, քան էր Միջին դարերում կամ Վերածնունդի շրջանում, — այսինքն՝ մի՞թէ պակաս է արտայայտուած իր ազգային ղէմքը, պակաս բարձր է ազգային գիտակցութիւնը... Ձիշդ հակառակը չէ՞ արդեօք:

Եթէ յարատեւ ու սերտ շփումը — քաղաքակրթութեան զարգացման հետ միասին — տանում է անհրաժեշտօրէն դէպի ձուլում, ապա ու-

ըեմն ֆրանսիացիները, գերմանացիներն ու անգլիացիները վաղուց արդէն ճուլուած պիտի լինէին կամ առնուազն վաղուց արդէն կանգնած պիտի լինէին ճուլման ճամբու վրայ, որովհետեւ սրանք՝ ամէնէն աւելի քաղաքակրթուած ազգերը լինելով հանդերձ՝ դարեր ի վեր ամենասերտ ու ամէնօրեայ յարաբերութիւնների մէջ են միմեանց հետ: Փարիզից Բերլին, Փարիզից Լոնդոն ու Լոնդոնից Բերլին — մի քանի ժամուայ ճանապարհ է միայն: Օրական հազար մարդիկ՝ ամէն տեսակ գործերով՝ անցնում են սահմանը ու չփւում հարեւանների հետ: Հազարաւոր ու հազարաւոր գերմանացիներ՝ առեւտրական ու այլ գործերով՝ տարիներով ապրում են Ֆրանսայում ու Անգլիայում, ֆրանսիացիները՝ Անգլիայում ու Գերմանիայում, անգլիացիները՝ Գերմանիայում ու Ֆրանսայում: Բայց արդեօ՞ք գերմանացիները (իբրեւ ազգ, իբրեւ ամբողջութիւն) ապագերմանանում են աստիճանաբար ու ֆրանսական կաղապարով կաղապարւում եւ կամ ֆրանսացիները՝ անգլիական կերպարանք առնում:

Բազմաթիւ գերմանացիներ հարկադրուած են գիտնալու եւ գիտեն ֆրանսերէն, ինչպէս բազմաթիւ ֆրանսացիներ խօսում են անգլիերէն ու գերմաներէն, բազմաթիւ անգլիացիները՝ գերմաներէն ու ֆրանսերէն: Բայց այս հանգամանքը վտանգո՞ւմ է արդեօք ազգային լեզուի զոյութիւնն ու զարգացումը, տանո՞ւմ է արդեօք լե-

զուները դէպի ճուլում։ Ֆրանսերէն գիտցող գերմանացին պակա՞ս լաւ գիտէ իր մայրենի գերմաներէնը, պակա՞ս է սիրում իր սեփական լեզուն, պակա՞ս է դնահատում ու խնամում զայն։

Գերմանացիները համարեա իւրացրել են Շէքսպիրը։ Բայց մի՞թէ այս պատճառով նրանք մոռացել են Գեօտէն կամ պակաս են սիրում Հաուպտմանը։

Անշուշտ, Շէքսպիրը ունեցել է իր մեծ ու բարերար ազդեցութիւնը գերման գրականութեան վրայ։ Գերմանական երաժշտութիւնը արձագանգ է գտել ռուս երաժշտութեան մէջ, ռուսական թատրոնի վրայ... Այս կարգի օրինակները բազմաթիւ են եւ բարերախտաբար աւելի եւս բազմանալու են քաղաքակրթութեան առաջխաղացման հետ միասին։ Ազգերը օգտւում են միմեանցից, փոխանակում են մշակութային արժէքներ — ճիշդ այնպէս, ինչպէս փոխանակում են նիւթական արժէքներ։

Բայց՝ փոխանակելով, իւրացնում ու ազգայնացնում են օտարը. օտար տարրեր ներմուծելով ոչ միայն չեն քանդում ազգային ուրոյն մշակոյթը, այլ աւելի եւս հարստացնում, զօրացնում են այն։ Պուշկինն ու Իբսէնը — երկուսն էլ ազդուած են Շէքսպիրից, ներշնչուել են ու մասամբ ընդօրինակել Շէքսպիրը։ Բայց այսուհանդերձ երկուսն էլ ազգային մեծ բանաստեղծներ են. «Բորիս Գոդունովը» նոյնքան ռուսական է ու «Հել-

հոլանդի մարտիկները» նոյնքան նորվեգիական, որքան անգլիական են Շէքսպիրի «քրոնիկոններ–ը»։

Ի հարկէ, փոխադարձ ազդեցութեան տակ տեղի են ունենում նաեւ ճուլման դէպքեր։ Արդէն մի քանի անգամ առիթ եմ ունեցել մատնանիշ ա–նելու այս երեւոյթը եւ հարկ չեմ տեսնում նո–րից վերադառնալու խնդրին։

Պատմութիւնը հաստատում է, որ ծերացած, թոյլ, ուժասպառ կամ որոշակի դեռ չկազմա–կերպուած եւ՝ հետեւապէս՝ անկայուն ազգերը յաճախ կորցնում են իրանց դէմքը, ենթարկուե–լով օտար ազդեցութիւնների, կլանուելով ու ճուլուելով հարեւան ազգութիւնների մէջ։ Բայց նոյն պատմութիւնը վկայում է, որ ուժեղներն ու կենսունակները, ժամանակի ընթացքում, աւելի եւս զօրանում են ու ինքնահաստատուում։

Այս երկու հակառակ պրոցեսները կատարուում են զուգընթացաբար, լրացնում են մէկը միւսին։ Պատմական ճշմարտութիւն է, որ պրուվանսալցի–ները լուծուեցին ֆրանսական ազգի մէջ ու սկով–տիացիները՝ անգլիականի մէջ։ Բայց ճշմարտու–թիւն է եւ այն, որ իրլանդացիները չխառնուեցին նոյն անգլիացիների հետ, բոհեմիայի չեխերը մնացին անջատ՝ գերմանացիներից ու հայերը չձուլուեցան։

Իրականութեան հակառակ կը լինէր ասել, թէ պատմութիւնը տանում է մարդկութիւնը բազ–

մազգայնութիւնից դէպի մի ազգայնութիւնը եւ թէ քաղաքակրթութիւնը վերացնում է ազգային առանձնայատկութիւնները, ուրեմն եւ ազգային բաժանումները:

18րդ դարի փիլիսոփաներին թերեւս ներելի էր այս սխալը: Բայց կրկնել նոյնը 20րդ դարում՝ կը նշանակէր կոյր լինել երկու աչքերով:

Պէտք չէ միայն չփոթել ազգային առանձնայատկութիւնները այնպիսի նմանութիւնների ու տարբերութիւնների հետ, որոնք չեն բխում ազգութեան էութիւնից, ոչ էլ պայմանաւորում են այն:

Կասկած չկայ, որ այսօրուայ Ֆրանսացին չատ աւելի «նման» է այսօրուայ գերմանացուն, քան գրենլանդական էսքիմոսը հարաւ-աֆրիկեան հոտտենտոտին եւ այս երկուսը՝ ռուսին: Բայց սա ապացոյց չէ, թէ ուրեմն էսքիմոն ու հոտտենտոտը ազգայնօրէն աւելի լրիւ են արտայայտուած, կազմում են աւելի կատարեալ ազգային տիպեր, քան գերմանացին, Ֆրանսացին կամ ռուսը, — ապացոյց չէ, որովհետեւ այն դծերը, որ նըմանեցնում են Ֆրանսացիին գերմանացուն, ազգային չեն, այլ հանուր-քաղաքակրթական, ինչպէս եւ այն դծերը, որ տարբերում են էսքիմոյին հոտտենտոտից, ազգային չեն, այլ պարզ ցեղային կամ պարզ կենցաղային:

IV

Ազգային հակումները աննախընթաց թափով հրապարակ եկան 19դր դարի սկիզբներից: Մասնաւորապէս չեչոուեց ազգութիւնների բուռն տենչը՝ քաղաքականապէս ազատագրուելու եւ ազգային անջատ պետութիւններ կազմելու: Ազգային գիտակցութիւնն ու ազգային պահանջները դարձան քաղաքական մի նոր, չատ կարեւոր գործօն եւ իրանց դրոշմը դրին նորագոյն պատմութեան վրայ:

Բալկանեան թերակղզու ազգութիւնները՝ յոյները, ռումանացիները, սերբերը, բուլղարները, որոնք դարերով տառապած էին օտար պետութեան լուծի տակ, ազատագրուեցին, անջատուեցին օսմանեան կայսրութիւնից: Բելգիան ապստամբեց Հոլլանդիայի դէմ ու առանձին պետութիւն կազմեց: Իտալական ազգը ազատագրուեց Հաբսբուրգների տիրապետութիւնից, Նորվեգիան բաժանուեց Շուէդից: Լեհաստանը արիւնահեղ փորձեր արաւ թօթափելու իր վրայից ռուսական լուծը, Հունգարիան՝ աւստրիականը, Իրլանդան՝ անգլիականը:

Միւս կողմից՝ Իտալիան ու Գերմանիան, որ պնգեալներում բաժանուած էին բազմաթիւ, իրար հետ չարունակ պայքարող մանր-մունր տէրութիւնների, համախմբուեցին, միացան եւ համազգային հզօր պետութիւններ կազմեցին:

Ազգային շարժումներ էին սրանք, ազգերի դոյութեան ու ինքնագիտակցութեան պերճախօս վկայութիւններ: Պետականօրէն դարերով կապուած տարբեր ազգերը ձգտում էին բաժանուել իրարից, իսկ նոյն ազգի պատկանող անջատ հատուածները՝ խմբուել ի մի, ամբողջացած ազգային պետութիւններ կազմել:

Նոյն երեւոյթը աւելի եւս ուժգնապէս արտայայտուեց մեծ պատերազմի ընթացքում եւ նրանից անմիջապէս յետոյ՝ խաղաղութիւնը վերահաստատելու շրջանում, երբ հիմնովին վերաքննութեան առնուեց Միջին Եւրոպայի ու Մերձաւոր Արեւելքի քաղաքական քարտէզը: Բազմազգեայ մեծ կայսրութիւնները՝ Ռուսաստան, Աւստրօ-Հունգարիա ու Թիւրքիա կազմալուծուեցին, ծնունդ տուին նոր պետութիւնների, հիմնուած գլխաւորապէս ազգային քաժանումների վրայ: Կազմուեցին Ֆինլանդա, Էստոնիա, Լեթոնիա (լատիշների պետութիւն), Լիթվանիա, Լեհաստան, Ուկրայնա, Վրաստան, Հայաստան, Ադրբեջան, Վոլգայի ու Միջին Ասիայի մահմեդական պետութիւնները. ապա՝ Չեխօ-Սլովակիա, Հունգարիա, Եուգո-Սլաւիա, Ալբանիա, Իրաք (Միջագետք), Իրլանդան քաժանուեց Անգլիայից, Իսլանդան՝ Դանեմարքից...

Դարձեալ՝ ազգութիւնների ու ազգային համայնքների աննախընթաց, ապշեցուցիչ յաղթանակը էր սա:

Նոյն պատմական չրջանում (18րդ դարի վեր-
ջերից) զօրացաւ ու քաղաքակիրթ ժողովուրդնե-
րի կեանքի մէջ գերիշխող տեղ բռնեց հին աշ-
խարհի «երրորդ դասակարգ» — բուրժուազիան:

Այս հանգամանքը, ժամանակագրական այս
զուգադիպութիւնը առիթ է տուել մտածելու, թէ
ազգայնութիւնը — ազգային ինքնագիտակցու-
թիւնն ու ազգային պայքարը — բուրժուազիայի
դասակարգային արտայայտութիւններից մէկն է,
նրա ստեղծագործութիւնն ու գէնքը՝ ընդդէմ մի-
ջազգային պրոլետարիատի:

Պարզ թիւրիմացութիւն է կամ գիտակցական
կեղծիք՝ երեւոյթների այսպիսի մեկնութիւնը:

Ազգութիւնն ու դասակարգը էապէս տարբեր
երեւոյթներ են, միանգամայն անկախ մէկը միւ-
սից: Ազգութիւնը ազգաստակարգային է (ինչ-
պէս եւ դասակարգը՝ ազգային) — վեր է կամ
դուրս դասակարգից: Կապիտալն ու նրա տէրը
— բուրժուազիան — առնուազն նոյնքան միջազ-
գային եւ, որքան եւ հակառակ բանակը՝ պրոլե-
տարիատն ու աշխատաւորութիւնը առհասարակ:

Շատ մեծ պատիւ արած կը լինէինք բուր-
ժուազիայի, եթէ նրա դասակարգային հնարագի-
տութեանը վերագրէինք ազգային գիտակցութիւ-
նը եւ սրա առարկայական հիմքը՝ ազգային ար-
ժէքների գոյութիւնը: Ազգը հաւաքական ստեղ-
ծագործութիւն է, որի մէջ ունեն իրանց բաժինը
ազգ կազմող ժողովուրդի բոլոր խաւերը: Եւ եթէ

կայ մի տարր, որը առանձնապէս աչքատած է ազգային անհատականութիւնը հաստատելու, ամէնից աւելի ստեղծագործում է ու սնուցանում ազգային արժէքները, ամէնից աւելի վառ պահում է ազգային իդէալները — դա ոչ թէ ազգի բուրժուազիան է, այլ նրա ապադասակարգային մըտաւորականութիւնը:

Անհերքելի է, որ բուրժուազիան չհադործել է (ու ապագայում էլ կարող է չհադործել) իր դասակարգային նպատակների համար ազգային բաժանումները, ազգային հակառակութիւններն ու հակամարտութիւնները:

Բայց չէ՞ որ նոյն բուրժուազիան, նոյն դասակարգային նպատակների համար, չհադործել է նաեւ դիտութիւնը, տեխնիկան, արուեստը, մտաւորը ու գրագիտութիւնը: Այս այսպէս լինելով, կարելի՞ է ասել, թէ ուրեմն դիտութիւնն ու արուեստը, մտաւորն ու գրականութիւնը՝ բուրժուական հնարագիտութիւններ են, բուրժուազկայի դասակարգային արտայայտութիւնները ու յատկապէս նրա դասակարգային զէնքը: Չէ՞ որ նոյն զէնքը նոյնքան բանուկ ու նոյնքան զօրեղ է նաեւ պրոլետարիատի ձեռին: Մեր օրերում ռուս բոլշեւիկների օրինակը ցոյց է տալիս, թէ ի՛նչ մեծ չափերով կարող է չհադործել մարտնչող պրոլետարական կուսակցութիւնը մտաւորի, գրականութեան ու արուեստի ուժը:

Գիտութիւնը ինքնըստինքեան ոչ մի առն-

չութիւն չունի դասակարգային բաժանումների հետ: Տարբեր բան է, թէ այս կամ այն դիտնականը կարող է բուրժուական հակումներ ունենալ եւ այս կամ այն վարդապետութիւնը (մասնաւորապէս հասարակագիտութեան մէջ) կարող է դունաւորուած լինել դասակարգային միտումներով ու յատուկ նպատակ ունենալ՝ արդարացնելու, ամրապնդելու, յաւերժացնելու այս կամ այն հասարակական կարգերը: Բայց սա գիտութեան յատկութիւնը չէ, այլ միայն գործադրութեան:

Գիտութիւնը մի չէզոք գէնք է, որ հաւասարապէս կարող է զարնել ե՛ւ աջ, ե՛ւ ձախ — նայելով թէ ում ձեռքն է դնում:

Նոյնը եւ ազգը:

Ազգային բաժանումները կարող է չհադորդել (ու չհադորդում է) ոչ միայն բուրժուազիան, այլ եւ աշխատաւորութիւնը:

Եթէ Բագուում հայ բուրժուազիան չհադորդում էր հայ-թաթարական հակառակութիւնը, կաչկանդելով հայ բանուորութեան գործօն մասնակցութիւնը կապիտալի տիրապետութեան դէմ ուղղուած պայքարի մէջ — չէ՞ որ վրաց սոցիալ-դեմոկրատիան իր հերթին չհադորդում էր մեծապէս այն հանգամանքը, որ Վրաստանի մանր ու խոշոր բուրժուազիան կազմուած էր ոլխաւորապէս հայերից, իսկ Հ. Ց. Դաշնակցութիւնը չհադորդում էր այն հանգամանքը, որ Հայաստանում հողատիրութիւնը գտնւում էր

գլխաւորապէս թուրք աղնուականութեան ձեռին։

Եթէ հաշուում հայ-թաթարական հակառակութիւնը՝ բաժանելով բանուորական բանակը ազգային հատուածների՝ հեշտացնում էր նաև թարգիւնաբերողների պայքարը պրոլետարիատի յարձակումների դէմ — միւս կողմից ու դրան հակառակ, հայ-վրացական հակամարտութիւնը Վրաստանում ու հայ-թուրքական հակամարտութիւնը Հայաստանում՝ աւելացնելով դասակարգային հակամարտութեան վրայ նաեւ ազգայինը՝ հեշտացնում էր բանուորութեան եւ գիւղացիութեան յարձակումը գործարանատէրների, վաճառականների ու հողատէրների դէմ։

Քողարկել դասակարգային պայքարը ազգային ինքնապաշտպանութեան անունով կամ դէթ դունաւորել այն ազգային գոյներով — սա մի գործելակերպ է, կռուի մի ձեւ, որ յատուկ է ոչ միայն բուրժուազիային, այլեւ պրոլետարիատին։ Ռուս բոլշեւիկները վարպետօրէն չհաղորդեցին Մինչին ու Առաջաւոր Ասիայի ժողովուրդների ազգային ու կրօնական գիտակցութիւնը, ազգային ու կրօնական կապերը կապիտալիստական Անգլիայի դէմ գործարութիւններ յարուցանելու համար։

Ազգութիւնը՝ ինքնըստինքեան՝ ապաղաղակարգային է, համամոդովրդական։

Եթէ ազգային գիտակցութիւնը ուժգնօրէն հրապարակ եկաւ ու ազգային ձգտումները ամե-

նամեծ նուաճումները արին յատկապէս նորագոյն ժամանակներում՝ Ֆրանսիական Մեծ Յեղափոխութիւնից յետոյ, 19րդ ու 20րդ դարերում, բուրժուազիայի գերիշխանութեան շրջանում, — դրա պատճառը այն չէ, որ բուրժուազիան իբրեւ դասակարգ աւելի «աղգայնական» է, քան որեւէ ուրիշ դասակարգ (անցեալում ազնուականութիւնն ու հոգեւորականութիւնը, ներկայում պրոլետարիատը) կամ առանձնապէս չահագրգռուած է ազգային բաժանումներով ու ինքն է ներչնչել զանգուածներին այդ բաժանումների գիտակցութիւնը. ոչ, պատճառն ուրիշ է:

Ֆրանսիական Յեղափոխութիւնը, որ ազատեց քաղաքակիրթ մարդկութիւնը աւատական կարգերի մնացնորդներից, տոհմային ազնուականութեան տիրապետութիւնից ու կազմակերպեց այսօրուայ բուրժուազիան,— նոյն այդ յեղափոխութիւնը հիմք դրեց նաեւ ուրիշ կարգի ազատագրումների: Մեծ Յեղափոխութեան անմիջական հետեւանքներից մէկն էր միայն, մէկը հերթականներից, առաջին կայանը երկար ճամբու վրայ, բայց ոչ նրա վերջին նպատակը ու իդէոլոգիայի բովանդակութիւնը:

Իդէոլոգիան չատ աւելի հեռուն էր գնում. ազատել՝ յանուն արդարութեան, մարդ-էակը ու մարդկային հասարակութիւնները ամէն տեսակ կապանքներից, իրաւազրկութիւններից, ճնշումներից ու բռնութիւններից, հաստատել եղբայ-

րութիւն ու հաւասարութիւն — ահա՛ թէ ինչ էր ուսուցանում Ֆրանսիական Յեղափոխութիւնը։ Իրաւունքների դիտակցութիւն եւ անողոք պայքար իրաւունքների համար — ահա այն մակարդը, որով մակարդուեց մարդկային հոգին նորադոյն պատմութեան չէմքին վրայ։

Մէկ անգամ սկսուած պայքարը չէր կարող ահմանափակուել կանխորոշուած չրջանակի մէջ, անհրաժեշտօրէն պիտի ունենար իր տրամաբանական զարգացումը, — նոյնիսկ եթէ նրա հեղինակները նախատեսած չլինէին թէ մինչեւ ո՛ւր է տանելու այն։

Ինչո՞ւ արքայական տներն ու տոհմային ազնուականութիւնը — մի բուռ մարդիկ, մի չնչին փոքրամասնութիւն — պիտի տիրեն աչխարհին ու բռնանան ժողովուրդների վրայ, թելադրեն իրանց կամքը, ծծեն մարդկութեան արիւն-քրտինքը, պատերազմեն երբ կամենան, դաչնակցեն ում հետ կամենան, ասեն՝ «պետութիւնը — ես եմ» եւ իրօք ծախեն ու գնեն, իրար նուիրեն ու իրարից ժառանգեն գիւղեր ու քաղաքներ։ Ո՞վ են թագաւորները ու ազնուականները, որ այդպիսի իչխանութիւն ունենան եւ ինչո՞ւ համար մենք — ես ու դու — պիտի ենթարկուենք նրանց քմահաճութիւններին։

Դժուար էր այդ հարցը դնել, դժուար էր գլխի ընկնել, թէ այդպիսի հարց էլ կարող է գրուել, — դժուար էր, որովհետեւ կային fé-

tiche*ներ*, *որոնք զարերով կաչկանդել էին մարդու միտքը ու կապել լեզուն։*

Բայց երբ հարցը դրուեց, պատասխանն էլ եկաւ ինքն իրան։ Այդ այդպէս է, որովհետեւ մենք — ես ու դու — թոյլ ենք տալիս այդ։ որովհետեւ մենք — ես ու դու — դիտակցութիւն չունենք մեր իրաւունքների, կամք չունենք պաշտպանելու, կազմակերպուած չենք պայքարի համար։ Ուրեմն...

Մնացածը պարզ էր։

Ու այսօր, մէկ ու կէս դեռ չանցած, քաղաքակիրթ մարդկութեան մէջ չկան այլեւս ոչ ինքնակալ թագաւորները, ոչ իշխող աղնուականութիւն։

Բայց առաջին «ինչու»ին անխուսափելիօրէն պիտի հետեւէին եւ ուրիշ «ինչու»ներ։

Ինչո՞ւ հողի կամ գործարանի սեփականատէրը առանց աշխատանք թափելու պիտի իւրացնի աշխատաւոր մարդու վաստակի մի մասը. կամ եթէ մասնակից է աշխատանքին, ինչո՞ւ պիտի վարձատրուի անհամապատասխան մեծ չափերով։ Ինչի՞ վրայ է հիմնուած սեփականատիրութեան իրաւունքը եւ ինչո՞ւ աշխատաւոր մարդը պիտի ընդունի այդ իրաւունքի անձեռնմխելիութիւնը։ Ինչո՞ւ փոքրաթիւ սեփականատէրների ներկայացուցիչները (կամ նրանց վարձկանները) պիտի նստեն պարլամենտներում եւ յօրինեն օրէնքներ, որոնց ակներեւ նպատակն է՝ ապահովել փոքրա-

մասնութեան արտօնեալ դրութիւնը ու ամրացնել աչխատաւոր մեծամասնութեան կապանքները։ Ինչո՞ւ օրէնսդրողը չպիտի լինենք մենք ինքներս — ես ու դու։

Պատասխանը նոյնն է. որովհետեւ մենք — ես ու դու — թոյլ ենք տալիս այդ... եւլն.։

Գուցէ դարձեալ հարկաւոր լինի մէկ ու կէս դար՝ նոր կարդեր հաստատելու համար, — այդ ես չգիտեմ։ Բայց հարցը դրուած է արդէն ու լուծումը՝ կանխորոշուած։

Հետեւում են ուրիչ «ինչու»ներ (դայթակղեցուցիչ հարցերի կծիկը, որ մէկ անգամ սկսել է քանդուել, այնքա՛ն ծայրեր ունի...)։

Սրանից հարիւր տարի առաջ յոյները հարց տուին իրանց. թուրքերը ինչո՞ւ պիտի իշխեն մեր երկրի վրայ, ինչո՞ւ պիտի հպատակեցնեն մեզ իրանց օրէնքներին (կամ իրանց տնօրէնութեան), ինչո՞ւ մենք չպիտի ունենանք մեր սեփական պետութիւնը, մեր օրէնքը, դատարանը, զօրքն ու ոստիկանութիւնը։

Այս «ինչու»ն նոյնքան օրինական էր, որքան եւ նախորդները, սա եւս ընդհանուր ազատագրական չարժման արտայայտութիւններից մէկն էր։ Եթէ հարց էր դրւում, թէ ինչո՞ւ մի դասակարգ պիտի իշխի մի ուրիչ դասակարգի վրայ, բնական էր ու անխուսափելի, որ հարց դրուէր նաեւ, թէ ինչո՞ւ մի ազգ պիտի իշխէ մի ուրիչ ազգի վրայ։

Չէ՞ որ բոլոր փետիշները կատածի տակ էին առնուած, սկսուել էր հին արժէքների ընդհանուր եւ արմատական վերագնահատման չրջան, արթնացել էր ու աննախընթաց թափով հրապարակ եկել իրաւունքի դիտակցութիւնը: Այս արթնացող դիտակցութեան արտայայտութիւններից մէկն էլ ազգային գիտակցութիւնն էր. ազգերը գլխի էին ընկնում, որ իրանք եւս ունեն ինչ որ իրաւունքներ, կարիքներ ու պահանջներ, որ բռնադատուած են...

Գիտակցութիւնից մինչեւ պայքարը՝ մի քայլ էր միայն:

Թերեւս առարկութիւն լինի, թէ յունական չարժումները 19րդ դարի առաջին քառորդում՝ ազգային բնոյթ չունէին, թէ յոյները ապստամբեցին ոչ թէ օտար տիրապետութեան, այլ պարզապէս մի բռնակալ ռեժիմի դէմ, անկախ նրա ազգային հանգամանքից: Բայց ինչո՞ւ նոյն բռնակալ ռեժիմի դէմ, չապստամբեցին Ռումելիայի ու Անատոլիայի թուրքերը, այլ ապստամբեցին յատկապէս այլազգիները՝ յոյները, ռումանացիները, սերբերն ու բուլղարները: Ինչո՞ւ ռուսական բռնակալ ռեժիմի դէմ ապստամբեցին լեհերը ու չապստամբեցին իրանք ռուսները (խօսքս 19րդ դարի մասին է):

Սխալ կը լինէր ասել, թէ ազգային դրօշակ կրող այս չարժումները բացարձակապէս ու միայն ազգային էին, առանց կողմնակի հանգա-

մանքների ու չարժումներին նպաստող ուրիշ, ոչ–ազգային պարագաների: Բայց աւելի եւս մեծ սխալ կը լինէր չտեսնել, որ հիմնական չարժառիթն ու վճռող մոմենտը՝ ազգայնօրէն ազատագրուելու պահանջն է եղել:

Սուլթանների ու ցարերի ռեժիմը բռնակալական է եղել ընդհանրապէս, սրանց հպատակները իրաւազուրկ են եղել առհասարակ: Բայց այդ ընդհանուր բռնակալութեան ու իրաւազրկութեան չրջանակի մէջ՝ եղել են նաեւ բռնութիւններ ու իրաւազրկութիւններ, որ ուղղուած են եղել յատկապէս ազգութիւնների դէմ: Եւ ահա այս կարդի իրաւազրկութիւններից ազատագրուելու համար է, որ պայքարել են (ու պայքարում են) հպատակ ազգերը: Անհերքելի է, որ սեփական պետութիւն կազմելուց յետոյ էլ յոյն ժողովուրդը մնաց ենթակայ բազմազան բռնութիւնների, — մի բան, որ անբաժանելի է պետական ռեժիմից՝ առհասարակ ու մասնաւորապէս: Բայց ազգայնօրէն նա ազատագրուած էր, որովհետեւ պետութիւնը այլեւս հարկադրուած կամ չհագրդռուած չէր կապանքներ դնելու նրա ազգային ձգտումների ու արտայայտութիւնների վրայ. երբեւ ազգ՝ նա հպատակ չէր այլեւս, այլ ինքնիշխան:

Հարկաւոր է ուշադրութիւն դարձնել այս հանգամանքի վրայ: Կան ազգային պահանջներ, որոնք իրական ու լրիւ բաւարարութիւն կարող

են դանել միայն աղգային պետութեանց մէջ, իսկ սրանից դուրս՝ անխուսափելիօրէն կաշկանդուած պիտի լինեն կամ սահմանափակուած: Անխուսափելիօրէն ու անկախ պետական ռեժիմից, ամէնից ազատամիտ ու բարեացակամ ռեժիմն անգամ չի կարող լրիւ բաւարարութիւն տալ բոլոր ազգային պահանջներին, եթէ ինքը աղգը իշխող չէ պետութեան մէջ:

Թողնենք յոյներին, վերցնենք մի ուրիշ օրինակ — Իրլանդան: Անգլիական ռեժիմը նման չէր Թուրքականին: Այն բռնութիւնները, որոնք դոյութիւն ունէին Ցունաստանում սուլթանական տիրապետութեան տակ, անծանօթ էին իրլանդացիներին: Անգլիական կառավարութիւնը չէր կոտորում սրանց, պարբերաբար չէր աւերում երկիրը, յաւելեալ տուրքեր չէր դնում, դատարանի առջեւ չէր տարբերում իրլանդացուն անգլիացիից... Բայց եւ այնպէս, իրլանդացիները ըմբոստացան անգլիական տիրապետութեան դէմ: Ինչո՞ւ անգլիական լորդերն ու անգլիական հասմայնքների ընտրեալները օրէնքներ պիտի յօրինեն Իրլանդայի համար, ինչո՞ւ իրլանդացիք իրանք չպիտի օրէնսդրեն ու կառավարեն իրանց երկիրը:

Մի օրինակ եւս, դարձեալ տարբեր բնոյթ ունեցող, — բելգիական Ֆլամանդների օրինակը: Սրանք ասում են. ինչո՞ւ Գենտի համալսարանում (որ իրանց մայրաքաղաքի համալսարանն է) պի-

ու տիրապետի ֆրանսերէն լեզուն: Ինչո՞ւ Փըլանդրիայի համալսարանական երիտասարդութիւնը պիտի սնուի օտար լեզուով, ինչո՞ւ իրանք՝ իրանց ծախքերով ու ի վնաս իրանց լեզուի՝ մի աւելորդ գէնք պիտի տան ֆրանսերէնի նուաճողական ձգտումներին... Տասը տարի առաջ նոյն հարցը դրուած էր նաեւ բանակի վերաբերմամբ. ինչո՞ւ Ֆլաման զինուորը հարկադրուած պիտի լինի դիմել իր սպային ու նրանից հրաման առանալ ֆրանսերէն եւ ո՛չ իր սեփական լեզուով:

Դիտմամբ ընտրում եմ այնպիսի օրինակներ, որոնք չատ տարբերւում են իրարից՝ ազգային դատը խստացնող կամ մեղմացնող կողմնակի հանգամանքներով:

Ցոյների դրութիւնը օսմանեան լուծի տակ քնաւ նոյնը չէր, ինչ որ իրլանդացիների դրութիւնը Մեծն Բրիտանիայի Միացեալ Թագաւորութեան մէջ ու մանաւանդ՝ Ֆլամանդների դրութիւնը Բելգիայում: Ցոյները ենթարկուած էին մի բարբարոս ռեժիմի, ուր ազգային իրաւազրկութիւնների վրայ աւելանում էին ամէն տեսակ քաղաքական ու քաղաքացիական իրաւազրկութիւններ: Անգլիական ռեժիմը Իրլանդայում — քաղաքակիրթ պետութեան ռեժիմ էր, որի տակ այլազգի իրլանդացիները վայելում էին ազգային ազատութիւններ այնչափ, որչափ դա առհասարակ հնարաւոր է մի օտար պետութեան մէջ: Ինչ

վերաբերում է ֆլամանդներին, որոնց մասին չի էլ կարելի ասել, թէ հպատակ են օտար պետութեան, որովհետեւ ֆլամանդները՝ վալլոնների հետ միասին ու հաւասար՝ տէր են Բելգիայի. միայն լեզուի խնդիրն է, որ տալիս է որոշ առաւելութիւններ վալլոններին եւ միայն այս խնդրի շուրջն է, որ կատաբուում է ազգային պայքարը:

Տարբեր են պայմանները: Բայց կայ մի հիմնական կէտ, որ նոյնն էր թէ՛ յոյների, թէ՛ իլլանդացիների եւ թէ՛ ֆլամանդների համար — այն, որ երեքն էլ չէին բաւարարուած, զրկուած էին ազգայնօրէն եւ երեքն էլ ձգտում էին հաստատել իրանց ազգային անհատականութիւնը:

Անծանօթ չեն ինձ այն ոչ-ազգային (գլխաւորապէս՝ տնտեսական բնոյթ ունեցող) չարժառիթները, որոնք մեծապէս նպաստել են ազգային պայքարների ծաւալման: Բայց սրանք անզօր են բացատրելու երեւոյթի էութիւնը, նրա միանգամայն ուրոյն բնոյթը:

Յամենայն դէպս ու ո՛րքան էլ դերադնահատելու լինենք տնտեսական չարժառիթների նշանակութիւնը, դարձեալ չպիտի կարողանանք վերագրել ազգային պայքարը յատկապէս բուրժուազիայի դասակարգային դաւերին (եթէ ազգային չարժումների հիմքը իրօք տնտեսական կարիքն է կամ չահը, ապա ուրեմն այդ կարիքն ու չահը ընդհանուր են ամբողջ ազգին եւ ո՛չ միայն բուրժուազիային):

Ասել՝ թէ բալկանեան ազգերը ըմբոստացան թուրքերի դէմ, թէ հրեայ սիոնիստները ձգտում են մի ազգային տուն հիմնել Պաղեստինի մէջ, թէ հայերը անկախ յայտարարեցին իրանց 1918 թ. կամ ֆլամանդները պահանջում են աքսորել ֆրանսական լեզուն Գենտի համալսարանից, որովհետեւ ա՛յս էր պահանջում ամենակարող բուրժուազիայի դասակարգային շահերը ու ա՛յս էր կամեցել նա, — այսպէս ասել կը նշանակէր բացատրել, խեղաթիւրել կամ անգիտակցել փաստերը, չտեսնել կամ չկամենալ տեսնել իրականութիւնը:

Բուրժուազիան ինքնըստինքեան ու իբրեւ դասակարդ՝ պէտք չունի չարժման մէջ դնելու ազգերը, ազգային ինքնահաստատման իրաւունքներ պահանջելու: Նոյնիսկ կարելի է ասել, որ ազգային բնազդը չատ թուլացած է բուրժուազիայի մէջ, մանաւանդ նրա վերին խաւերում: Ձուռած, բիւրեղացած բուրժուազիան, դասակարդի élite-ն ու ղեկավարը (խոշորագոյն կապիտալների տէրերը կազմում են այսօր մի միջազգային կամ ապազգային ընտանիք, — ճիշդ այնպէս, ինչպէս անցեալներում կազմում էին այդպիսի մի ընտանիք վեհապետական տները: Բարձր, տիրող բուրժուազիան այսօր այլասերուած է ազգայնօրէն, ինչպէս անցեալներում այլասերուած էր բարձր ազնուականութիւնը: Եւ եթէ՝ որոշ պայմանների մէջ՝ բուրժուազիան այնու ամենայնիւ հարկադրուած է լինում յենուելու ազգային գիտակցութեան

վրայ, կոչ անելու ազգասիրութեան ու հայրենասիրութեան, — նա քաղաքականութիւն է վարում, կեղծում է խոչոր չափերով (ինչպէս կեղծում էին անցեալում թագաւորները):

Եթէ իրրեւ օրինակ վերցնելու լինենք մեր սեփական իրականութիւնը ու վերյիշենք մեր ամենամօտ անցեալը, դառնութիւնով պիտի արձանագրենք, թէ ո՛րքան չնչին է եղել մեր այսպէս կոչուած «բուրժուազիա»յի մասնակցութիւնը հայ ազատագրական չարժման մէջ:

Յարական ու սուլթանական ռեժիմի տակ մեր «բուրժուաները» մի հոգս են ունեցել միայն. յարմարուել ըստ ամենայնի եղած կարգերին ու մըթութեան մէջ, խոնարհաբար, սուսիկ-բուսիկ աւելացնել իրանց կարողութիւնները:

Պատերազմի առաջին չրջանում, կամաւորական խմբեր կազմելու ժամանակ, նրանք ոչ միայն խնայեցին իրանց զաւակների թանկագին արիւնը եւ նոյնիսկ զինուորական ծառայութեան պարտաղիրներին — ամէն տեսակ ապօրինի ճանապարհներով, կաշառքով ու կեղծիքներով — պաշտօնների դրին խորը թիկունքում կամ արտասահման փախցրին, այլեւ սոսկ դրամական զոհաբերութիւնների հանդէպ ցոյց տուին ծայրայեղ ամօթալի դժուածութիւն: Իսկ յեղափոխութեան ու անկախ պետութիւններ կազմելու չրջանում՝ զգուշաբար մնացին չարժումներից դուրս, աչխատանքից հեռու, չէզոք ու սպասողական,

մահոզուած մի մտքով միայն — սեփական կեանքն ու գոյքը փրկելու մտքով (գիտեմ վայրկեան բացառութիւններ, բայց սրանք չեն հերքում, այլ աւելի եւս ընդգծում են ընդհանուր երեւոյթը):

Ճիշդ է, եւրոպական բուրժուազիան ա՛յլ կերպ վարուեց Մեծ պատերազմի ընթացքում, չդաժանեց իրան ժողովրդական զանգուածներից, սրանց հետ միասին կռուեց ու նահատակուեց:

Բայց մէկ որ՝ եւրոպայում բուրժուան մասնակցեց պատերազմին ոչ իբրեւ դասակարգ, այլ իբրեւ սոսկ բաղաքացի, միւս քաղաքացիների հետ անխտիր ու հաւասար եւ նրա հայրենասիրական ոգեւորութիւնը աւելի բարձր չէր, քան օրինակ պրոլետարինը:

Երկրորդ՝ Մեծ պատերազմը ազգային պայքար չէր իր էութեամբ: Եթէ մի չարք ազգեր ստատզրուեցին ու սեփական պետութիւններ կազմեցին, դա պարզապէս պատերազմի հետեւանքներից մէկն էր եւ ո՛չ նրա չարժառիթն ու նպատակը: Պատերազմի իսկական պատճառը՝ տնտեսական մրցումն էր մեծ պետութիւնների միջեւ եւ այստեղ անգլիական, գերմանական կամ ֆրանսական բուրժուազիաները իրական ու մեծ չահեր ունէին պաշտպանելու (կամ հակառակորդից խլելու): Ա՛յլ էր մեր ունեւորների դրութիւնը, քանի որ հայերի մասնակցութիւնը պատերազմի մէջ ունէր մի նպատակ միայն՝ ազատել

թիւրքահայ վիլայէթները օսմանեան տիրապետութենից:

Պէտք չէ չափազանցել մի[illegible]ական ընդհարումները ազգային պայքարի հետ, — սրանք էապէս տարբեր բաներ են, թէեւ փաստօրէն կարող են ծածկել մէկը միւսին: Եւ եթէ ժամանակակից պատերազմների մէջ խոչոր դեր է կատարում [illegible]ական բուրժուազիայի անյապաղութիւնը, նոյնը չի կարելի ասել ազգային շարժումների վերաբերմամբ:

Բուրժուազիան չէ, որ պայքարում է ազգային իրաւունքների համար, այլ ժողովուրդը: Կապիտալիզմը չէր, որ հերթի դրեց ազգային մեծ պրոբլեմը, այլ դեմոկրատիզմը, ժողովրդավարութիւնը, եւ որքան աւելի լսելի դառնայ ժողովուրդի, դեմոսի ձայնը, որքան աւելի հաստատուեն ու ամրանան իսկական դեմոկրատական կարգերը, այնքան աւելի բարձր պիտի հնչեն ազգային պահանջները:

Սրանով (եւ ոչ բուրժուազիայի դաւերով) պէտք է բացատրել այն երեւոյթը, որ ազգերն արթնացան, ինքնագիտակցութիւն ձեռք բերին ու իրանց իրաւունքները պահանջեցին յատկապէս նորագոյն պատմութեան շրջանում, Ֆրանսական Մեծ Յեղափոխութիւնից յետոյ:

V

Ատեղ է դէպ կը լինէր դնահատութեան առնել ազգային դաւանանքը մասնաւորապէս սոցիալիստական վարդապետութեան տեսակէտից։ Ընդդիրը շատ կարեւոր է, որովհետեւ տեղի է տուել (ու մասամբ չարունակում է դեռ տալ) խոչոր թիւրիմացութիւնների, մանաւանդ մեր իրականութեան մէջ, ուր ա՛յնքան պակաս է դիտակցութիւնը ու ա՛յնքան զօրեղ՝ չմարսուած փորմիկների հմայքը։ Կ՚ուզենայի մի քիչ երկար կանգ առնել այս խնդրի վրայ։ Բայց յօդուածիս չրջանակը թոյլ չի տալիս այդ ու ապա՝ իմ կարողութիւնից վեր կը լինէր այդպիսի մի աշխատանք։ Պիտի բաւականանամ մի քանի խօսքով միայն։

Սոցիալիզմը հակառակ է ազգութեան, — ահա մի խօսք, որ յաճախ կը լսէք նոյնիսկ լաւ դրագէտ, ուսում առած ու ընդհանուր առմամբ՝ խելահաս մարդկանցից։

Իրան «ազգայնական» համարողը խեթ աչքով է նայում սոցիալիստի վրայ. սոցիալիստ ես — ուրեմն թշնամի ես ազգութեան, ապազգայնացման առաքեալ ես ու դինուոր։

Փոխադարձաբար՝ իրան «սոցիալիստ» համարողը խեթ աչքով է նայում ազգայնականի վրայ. ազգայնական ես — ուրեմն բուրժուա ես,

թշնամի աշխատաւորութեան ու աշխատաւորական դասին։

Ի՞նչ ազգութիւն սոցիալիստի համար ու ի՞նչ սոցիալիզմ ազգայնականի համար։

Չէ՞ որ սոցիալիզմը ճդտում է «հաւասարութեան», պահանջում է, որ բոլոր մարդիկ «հաւասար» լինեն, — այսինքն՝ ապրեն հանրակացարաններում, ուտեն ընդհանուր կաթսայից միեւնոյն ապուրը, հագնեն միագոյն ու միաձեւ զգեստներ, ունենան ընդհանուր կիներ ու ընդհանուր զաւակներ, մտածեն ու զգան միատեսակ, մի խելքի ու մի հաւատի լինեն, սիրեն ու չսիրեն նոյն առարկաները, զուարճանան՝ երբ հնչէ զուարճանալու զանգը ու աչքերը փակեն՝ երբ լսեն քնելու նշանը... Այս հանրակացարանային հաւասարութեան մէջ այլեւս ի՞նչպէս ապրեն ու զարգանան ազգութիւնները՝ իրանց բազմազան դունաւորումներով, ուրոյն ճաշակներով ու տարբեր հակումներով։ Էլ ի՞նչ հաւասարութիւն, եթէ մէկը անդլիերէն պիտի խօսի, միւսը՝ պարսկերէն. մէկը՝ սինակոկ պիտի դնայ աղօթելու, միւսը՝ մզկիթ, իսկ երրորդը՝ ոչ մի տեղ չաղօթի. մէկը «հորովել» երգի, միւսը «վայնկա–տանկա». մէկը վլաֆ ու բողբաչ սիրի, միւսը մակարոնի կամ ռոզբիֆ. մէկը «ուզունղարա» պարի, միւսը՝ «չարդաչ» կամ «հարանեբա»...

Մի քիչ քաշւում եմ հաւաստիացնելու իմ ընթերցողին, թէ այս տափակ ծաղրանկարը — սո-

ցիալիզմ չէ, թէ սոցիալիզմը չի ծրագրում ու չի պահանջում այդպիսի «հաւասարութիւն», թէ հաւասարութիւնը «միակերպութիւն» չէ, թէ սոցիալիզմի իդէալը՝ մեղուային կամ մրջնային հանրութիւն չէ, այլ մարդ-էակների լաւագոյն կենակցութիւն՝ մարդկայնօրէն կազմուած ընկերութիւնների մէջ։

Ուզում եմ յուսալ, թէ իմ ընթերցողը կարիք չունի այդպիսի հաւաստիացումների։ Բայց թերեւս աւելորդ չլինի ասել մի ուրիշ բան, — այն, որ դասակարգային պայքարը — սոցիալիզմի այսօրուայ հերթական ու գլխաւոր անելիքը — չի սպառում սոցիալիստական վարդապետութեան ամբողջ իդէոլոգիան։

Սահմանափակ ու զուտիկ հասկացողութիւն ունեն սոցիալիզմի մասին նրանք, որոնք կարծում են, թէ նրա միակ նպատակն է՝ ազատել ընչաքաղց աշխատաւորութիւնը կապիտալի չհատուցածումից։ Սոցիալիստական շարժումը շատ աւելի խոր ու բարդ երեւոյթ է, սոցիալիզմը մի ուրոյն ու ամբողջացած կուլտուրա է, դաւանանք է, կրօնք է, որ ընդգրկում է մարդկային կեանքի բոլոր կողմերը, գալիս է վերաչինելու ընկերային կազմը ամբողջովին, պատասխան ու բաւարարութիւն տալու մարդկային ընկերութիւնների բոլոր պահանջներին... Պրոլետարիատի դասակարգային ազատագրումը՝ սոցիալիզմի պահանջներից մէկն է միայն, — ճիշդ ամէնից աւելի հասունա-

ցածը կապիտալիստական երկիրներում, Արեւմըտեան Եւրոպայում ու Հիւսիսային Ամերիկայում — բայց եւ այնպէս՝ մէկը միայն ու ոչ ամբողջը:

Եթէ սոցիալիստական պայքարը հասկանալու լինենք երեւոյթի նեղ իմաստով — իբրեւ պրոլետարիատի դասակարգային կռիւ բուրժուազիայի դէմ — աղքատութիւնը կը մնայ այդ պայքարի չբը-ջանակից դուրս, որովհետեւ՝ ինչպէս աշխատեցի բացատրել նախորդ էջերում՝ ազգն ու դասակարգը տարբեր մակերեւոյթների վրայ գտնուող էութիւններ են: Այդ դէպքում ազգային պրոբլեմը, իբրեւ այդպիսին, գոյութիւն չի ունենայ սոցիալիստի համար — ոչ գրական, ոչ բացատական իմաստով: Սոցիալիստը կը մնայ անտարբեր աղքատութեան հանդէպ ու հաշուի կ'առնի աղքերի գոյութիւնը այն ժամանակ ու այնչափ միայն, երբ ու որչափ այդ փաստը — անուղղակի կերպով — կը խանգարի կամ կ'օժանդակի իր դասակարգային պայքարին. մի տեղ կ'աշխատի չէզոքացնել, անվնաս դարձնել այն, միւս տեղ՝ օգտագործել իր գաղափարի համար:

Իսկ եթէ սոցիալիստական վարդապետութիւնը ըմբռնելու լինենք իր լայն ու բովանդակ իմաստով — կը տեսնենք, որ սոցիալիստը ոչ միայն չի հանդիսանում աղքատութեան թշնամի կամ հակառակորդ, այլ ամէնից անկեղծ, ամէնից աւելի համոզուած ու հաւատարիմ պաշտպան. աղ-

դերի ազատագրումը, ինքնորոշուելու իրաւունքը եւ ինքնահաստատուելու միջոցների ապահովումը — սոցիալիստական պահանջներից մէկն է:

Եւ հասկանալի է, թէ ինչո՛ւ:

Սոցիալիզմը գալիս է քանդելու տիրող հասարակական կարգերը, որ այլեւս չեն համապատասխանում պիտակցութեան եկած դասակարգերի իրաւահասկացողութեան, դինում են չհաղորդներին ու դինաթափ անում չհաղորդներին, զրկանքի ու տգիտութեան մէջ պահում աշխատաւոր դասը (այսինքն՝ հասարակութեան արդիւնաբերող, չինարար ուժերը), արդելք ու խոչընդոտ են դառնում մարդկային առաջադիմութեան համար: Բայց սոցիալիզմը չի գալիս քանդելու դարերից ժառանգուած հարստութիւնները, ոչնչացնելու մշակութային արժէքները, — այն իսկ արժէքները, որոնց վրայ պիտի կառուցուի նոր ու լաւագոյն կեանքը: Ազգը պատմական արժէք է, մշակութային երեւոյթ, որ ապագայ սոցիալիստական իրաւակարգի համար անհրաժեշտ կը լինի առնուազը նոյնչափ, որչափ անհրաժեշտ է եղել աւատական ու կապիտալիստական իրաւակարգերի համար: Ազգութիւնը — հոգեկան մշակոյթի մի ուրոյն ձեւ է, որ չի կարող փոխարինուել որեւէ ուրիշ ձեւով, թ՛նչ իրաւակարգ էլ տիրելու լինի ընկերային կեանքի մէջ:

Եւ եթէ՝ որոշ պայմաններում՝ ազգային բա-

ժանումները չահագործուել են ի վնաս պրոլետարիատի դասակարգային պայքարի, — դա դեռ ապացոյց չէ, թէ ուրեմն ազգութիւնը ինքնըստինքեան արդելք է սոցիալիզմի ճամբուն վրայ... Բայց այս մասին գրել եմ արդէն: Ցիչեցնեմ միայն, որ եթէ սոցիալիստը կանդնելու լինի այդ տեսակէտի վրայ, նա թշնամի պիտի յայտարարի նաեւ դիտութիւնը, արուեստը, տեխնիկան, պետական հաստատութիւնները, հասարակական կազմակերպութիւնները, դպրոցը, մամուլը — առհասարակ՝ ամէն կարդի կուլտուրական արժէքներ, երեւոյթներ ու գործօններ. չէ՞ որ սրբանք բոլորն էլ կարող են ծառայել (ու ծառայել են) իբրեւ գէնք՝ պրոլետարիատի դէմ:

Թիւրիմացութեան գլխաւոր պատճառն այն է, — թւում է ինձ, — որ միջազգային սոցիալիստական բանակը, մինչեւ այսօր, համեմատաբար չատ քիչ տեղ է տուել՝ իր ծրագրերի ու մանաւանդ գործունէութեան մէջ՝ ազգային իրաւունքների պաշտպանման:

Պէտք չէ զարմանալ, սակայն, որ դա այդպէս է եղել:

Սոցիալիստական չարժումը ծնունդ է առել, կազմակերպուել է ու աճդնօրէն արտայայտուել այնպիսի երկիրներում, ուր ազգային պայքարը երկրորդական ու երրորդական նշանակութիւն է ունեցել՝ հանդէպ հասունացած ու չատ լարուած դասակարգային պայքարի: Հասկանալի է միան-

պամայն, որ գերմանական, բելգիական, ֆրանսիական կամ անգլիական պրոլետարիատը չատ էլ մտահոգուած չի եղել ազգային խնդիրներով. այդ խնդիրները ունեցել են նրա համար աւելի տեսական, քան կենսական նշանակութիւն, որովհետեւ ինքը ազգայնօրէն զրկուած կամ վտանգուած չի եղել երբեք:

Դրութիւնը փոխուեց, երբ սոցիալիստական բանակի մէջ տեղ գրաւեցին ու իրանց ձայնը լսելի արին աւստրօ-հունգարական եւ ռուսական սոցիալիստները: Այս բազմազգեայ կայսրութիւնների մէջ պրոլետարիատի մի խոշոր մասը (գերիշխող ազգութեան չպատկանող մասը) ինքը ապրել էր, ինքը կրել իր վրայ ազգային իրաւազրկութեան ծանրութիւնը, դիտէր, թէ ո՛րքան թունաւորուած է իր կեանքը ու ո՛րքան կաշկանդուած առաջադիմութիւնը՝ ազգային բնոյթ ունեցող զրկանքների պատճառով: Խնդիրը դարձաւ լուրջ մտահոգութեան առարկայ — մի կենսական պահանջ, որ պէտք է բաւարարուէր, սպառնալով հակառակ դէպքում սոցիալիստական բանակի ամբողջութեան:

Սրանից մօտ երեսուն տարի առաջ աւստրիական սոցիալիստները մշակեցին մի մանրակրկիտ ծրագիր՝ ազգային փոքրամասնութիւնների իրաւունքները պաշտպանելու համար բազմազգեայ պետութիւնների մէջ: Իսկ մեր օրերում ռուս բոլշեւիկները փորձ արին գործնականօրէն լուծե-

լու ազգային կնճռոտ խնդիրը, նոյնիսկ Ռուսաստանը անդամահատելու եւ ազգային անջատ պետութիւններ կազմելու դնով:

Ուշագրաւ ու խրատելի պիտի լինի այս երեւոյթը, — մասնաւորապէս նրանց համար, ով սովորութիւն է արել սոցիալիզմը ազգութիւնների թշնամի ներկայացնելու:

Այն հանգամանքը, որ Խորհրդային Դաշնակցութեան մէջ ազգային պետութիւնների անկախութիւնը հեռու է լրիւ ու կատարեալ լինելուց, սահմանափակուած է Մոսկուայի չատ ակտիւ դերիչանութեամբ, — այս հանգամանքը չպիտի չփոթեցնի դիտողի միտքը: Սա կարող է լինել ոչ թէ դաւանաւիճի, այլ պարզապէս նպատակայարմարութեան խնդիր, մի կոմպրոմիսական դրութիւն, անխուսափելի հետեւանք իրերի ու ուժերի որոշ դասաւորութեան:

Կարելի է, ի հարկէ, կասկածել ռուս բոլշեւիկների անկեղծութեանը, կարելի է ենթադրել, թէ նրանց բռնած դիրքը, ազգութիւնների հանդէպ ցոյց տուած փափկանկատութիւնը՝ դասանանք չէ, այլ միայն քաղաքականութիւն: Կարելի է ենթադրել, թէ այսօրուայ բոլշեւիկները՝ երէկուայ աշխարհակալներն են, որ ձգտում են հաւաքելու, վերհաստատելու նախկին կայսրութիւնը եւ թէ այն կէս–անկախութիւնը, որ տրուած է այսօր ազգութիւններին՝ ժամանակաւոր մի միջոց է միայն վերջնական նպատակներուն

հասնելու համար... Գուցէ եւ այդպէս է:

Անկեղծ են թէ ոչ ռուս բոլշեւիկները, — էական չէ մեզ հետաքրքրող խնդիրը լուսաբանելու համար: Էականն այն է, որ սոցիալիստական քանակի մաքսիմալիստական թեւը — այն իսկ թեւը, որ ամէնից հեռու է դնում իր պահանջների մէջ, ամէնից աւելի անհաշտ է հակառակորդի հանդէպ ու ամէնից քիչ ընդունակ կոմպրոմիսների, — այսօր այդ թեւը ազգութիւնների հետ է եւ ոչ նրանց դէմ: Սա՛ է էականը:

Եթէ Մոսկուայի վարիչները անում են այդ հակառակ իրանց ցանկութեան — սա մի նոր ու շատ զօրաւոր ապացոյց է իմ թէզի ճշմարտութիւնը հաստատելու համար: Եթէ մի սոցիալիստական կառավարութիւն — ճիշդ այնպէս, ինչպէս բուրժուական կառավարութիւնները ու դեռ մի քիչ էլ աւելի — հարկադրուած է պաշտպան կանգնելու (կամ պաշտպանութիւն ցուցադրելու) ազգութիւնների ազգայնօրէն ապրելու իրաւունքներին, ապա ուրեմն կայ մի ուժ, որ վեր է կառավարութիւններից, նրանց անմիջական կամ հեռաւոր դիտաւորութիւններից:

Եւ այդ ուժը սոցիալիստական միտքն է ու սոցիալիստական խիղճը:

Սոցիալիստը՝ դասակարգային եռուզեռի մէջ կարող է մոռացութեան տալ, անտես թողնել ազգային դատը: Բայց ամէն անգամ, երբ հարկադրուած է լինում ուշադրութեան առնելու այն եւ

իր խօսքն ասելու, — խօսքը անփոփոխ ազգութիւնների կողմն է։

Ով հետեւել է սոցիալիստական կոնգրեսների աշխատանքներին ու որոշումներին, պիտէ որ այդպէս է։ Եւ ուրիշ կերպ չի կարող լինել։ Սոցիալիստի ամբողջ աշխարհահայեցողութիւնն ու իրաւահասկացողութիւնը, բարիի ու չարի ըմբռնումը, խորտակելու ներկան ու երազած ապագան, — թոյլ չեն տալիս այլ վերաբերում։

Ասել, թէ սոցիալիզմը թշնամի է ազգութեան, — նշանակում է չհասկանալ վարդապետութեան էութիւնը կամ զրպարտել այն։

Ը.

I

Ամփոփեմ մինչեւ հիմա ասածս։

Մարդկութեան բաժանումը ազգային հատուածների — անհերքելի փաստ է։ Ազգը ոչ ցնորք է, ոչ մտածածին դաղափար, այլ իրական երեւոյթ։

Մեր հասկացողութիւնը այդ բարդ երեւոյթի մասին, մեր բացատրութիւններն ու մանաւանդ ահմանումները՝ կարող են լինել անբաւարար, միակողմանի, պակասաւոր ու վիճելի, բայց ե-

ըեւոյթի դոյութիւնը մնում է անհերքելի։

Ազգը՝ պատմա–մշակութային դաս է, մի քարդ մխութիւն, մի հաւաքական անհատակա–նութիւն, որի մէջ մանում են տարրեր տարրեր, տարբեր չափերով։

Ազգային միութիւնների սահմանները անկա–յուն են, երերուն, փոփոխական — լայնանում են ու նեղանում ժամանակի ընթացքում։

Ազգերը անսկիզբ չեն, ոչ էլ անվախճան։ Ազ–գերը ծնունդ են առնում, զարգանում, զօրեղա–նում, ապա թուլանում, ճուլւում ուրիշ ազգերի մէջ ու մեռնում, թողնելով իրանց եաեւ մշակու–թային աւելի կամ պակաս արժէքաւոր ժառան–գութիւն։

Ամէն մի ազգ առանձնապէս՝ անցողական է։ Բայց ազգ երեւոյթը, իբրեւ այդպիսին՝ տեւո–ղական է ու թերեւս անջնջելի։

Ազգը — ataviste‌ական (առհասական) երե–ւոյթ չէ, մնացորդ բարբարոս անցեալի։ Համե–մատաբար նոր երեւոյթ է ազգը, ծնունդ է առել այն ժամանակ ու այնտեղ, երբ եւ ուր մարդկա–յին հասարակութիւնները հասել են քաղաքակըր–թութեան որոշ (ու բաւականին բարձր) աստի–ճանի։

Քաղաքակրթութիւնը չի տանում դէպի ա–պազգայնացում։ Մինչեւ հիմա եղել է հակառա–կը (այսինքն՝ քաղաքակրթութեան հետ զուգըն–թաց զօրեղացել են նաեւ ազգային անհատակա–

նութիւնները) եւ պատճառ չկայ ենթադրելու, թէ ապագայում այլ կերպ է լինելու։

Ազգային միութիւնները — ինչպէս եւ ամէն մի ուրիշ կարգի միութիւն, ամէն մի հաւաքական կամ անհատական օրգանիզմ — օժտուած են ապրելու, անուելու ու զարգանալու զօրեղ բնազդով։ Իր գոյութիւնը պահպանելու, ինքնահաստատուելու ու ապագան ապահովելու համար՝ ամէն մի ազգային միութիւն մշտական պայքարի մէջ է ուրիշ ազգային միութիւնների հետ — պաշտպանողական՝ եթէ թոյլ է, յարձակողական ու նուաճողական՝ եթէ ուժեղ է։

Այս պայքարը մի ուրոյն դիծ է մտցնում մարդկային պատմութեան մէջ (մանաւանդ նորագոյն ժամանակներում), ազգը հանդիսանում է քաղաքական ու մշակութային գործօն չատ խոշոր չափի։

Ազգային պայքարը առընչութիւն չունի դասակարգային պայքարի հետ, ինչպէս եւ ինքը ազգը առընչութիւն չունի դասակարգային բաժանումների հետ։ Ազգը ապադասակարգային է, ինչպէս եւ դասակարգը՝ ապազգային։

Պատահում է, որ դասակարգերը չհազորդուում են իրանց օգտին ազգային բաժանումների ու ազգային դիտակցութեան գոյութիւնը։ Բայց դա չի բխում երեւոյթների էութիւնից, այլ պայմանաւորուում է պատահական ու անցողական կացութիւնով։ Ազգային ու դասակարգային պայ-

քարները կարող են խաչաձեւել, օժանդակել կամ խանգարել իրար, բայց երբեք՝ նոյնանալ, ձուլուել իրար մէջ կամ նոյնիսկ տեւականօրէն դաշնակցել:

II

Զգիտեմ, կարողացա՞յ արդեօք հիմնաւորել այս եզրակացութիւնները: Յամենայն դէպս, իմ հիմնաւորումների պաշարը սպառել եմ արդէն ու էապէս նոր բան՝ այս ուղղութեամբ՝ աւելացնելու չունեմ այլեւս:

Անցնում եմ հետեւեալ հարցին, այն է.

Դրակա՞ն երեւոյթ է ազգը, թէ՞ բացասական, ցանկալի՞ թէ ոչ-ցանկալի:

Սա նոր ու տարբեր խնդիր է, որովհետեւ՝ հաստատել որեւէ երեւոյթի դոյութիւնը ու բացատրել նրա էութիւնը՝ դեռ չի նշանակում գնահատել այն, այլ միայն հասկանալ: Իսկ հասկանալով հանդերձ կարելի է ե՛ւ ողջունել ե՛ւ դատապարտել:

Այստեղ հանդիպում ենք մի նոր դժուարութեան. ի՞նչ տեսակէտից ողջունել եւ ի՞նչ պատճառով դատապարտել, ո՞րը համարել դրական եւ որը՝ բացասական:

Պէտք է կանխապէս պարզել այս հարցը, պէտք է ընտրել ու ընդունել գնահատման մի ե-

լակէտ, մի ընդհանուր չափանիշ, որպէսզի կա-
րողանանք հասկանալ իրար:

Սկսեմ մի քիչ հեռուից:

Մարդը սոցիալական կենդանիներից է: Իր նիւթական ու ոչ-նիւթական բազմազան կարիք-ները բաւարարելու համար, մարդը հարկադըր-ւած է բարդ ու բազմանդամ միութիւններ կազ-մել, ընկերային կեանքով ապրել: Եւ պատմու-թիւնը ուրիշ բան չէ, քան այդ ընկերութիւննե-րի աստիճանաբար զարգացումը, ձեւաւորումը ու ձեւափոխումը:

Ընկերային կեանքը հարկադրում է մարդ-անհատին յարմարուելու իր ընկեր-կենակիցնե-րին, ուրեմն եւ որոշ չափով կաշկանդում է ան-հատի բացարձակ ազատութիւնը, զրկանքների է ենթարկում ու զոհաբերութիւններ պահանջում՝ ընկերութեան զոյութիւնն ու բարգաւաճումը ա-պահովելու համար:

Բայց որովհետեւ լինքը ընկերութիւնը — վերջի հաշուին — ունի մի նպատակ միայն՝ հո-գալ մարդ-անհատի կարիքները եւ գնահատելի է այնչափ, որչափ հասնում է այդ նպատակին, — ուստի եւ ամէնից լաւ կազմակերպուած ընկերու-թիւնը ա՛յն է, որը ամէնից աւելի — ըստ քանա-կի ու ըստ որակի — բաւարարում է իր անդամ-ներին, մարդ-անհատներին:

Ամէն մի երեւոյթ, որ ուժեղացնում է հաւա-քական օրգանիզմը, հարստացնում է հանրային

կեանքը ու լաւագոյն միջոցները է տալիս բաւարարելու անհատին — ամէն մի այդպիսի երեւոյթ պատմութեան մէջ դրական է ու առաջադիմական: Եւ՝ հակառակը:

Մարդու համար գերագոյն արժէքը՝ ինքը մարդն է ու միակ չափանիշը դրականի ու բացասականի՝ մարդ–անհատի ապրումները, գոհութիւնն ու դժգոհութիւնը, երջանկութիւնն ու տառապանքը:

Փոխադարձ օգնութեան կարիքը տուել է ոչ միայն ծնունդ, այլ նաեւ ընթացք ու ուղղութիւն մարդկային ընկերութիւնների եւ հանրային կեանքի զարգացման:

Եւ սա՛ է, որ առաջադիմութիւն ենք անուանում:

Այդ առաջադիմական ճամբու վրայ մարդկութիւնը՝ իբրեւ ամբողջութիւն եւ մարդկային տարբեր հատուածները՝ իբրեւ կազմակերպուած հաւաքականութիւններ, չատ էլ հեռու չեն գնացել ու ինքը ճամբան էլ անվերջ է: Բայց եւ այնպէս՝ ճամբան ա՛յդ է ու որոշ կայաններ մարդկութիւնը անցել է արդէն:

Կա՛րճ է մարդու պատմական յիշողութիւնը, հազիւ ընդգրկում է չորս–հինգ հազար տարուայ անցեալ: Բայց եւ այդ չատ կարճ յիշողութիւնը բաւական է, որպէսզի համոզի որ «ոսկէ դարը» անցեալում չէր, այլ ապագայումն է (եթէ առ–

հասարակ ենթադրելի է որեւէ «ոսկէ դարի» հնարաւորութիւն)։

Ճիշդ է, որ մեր գիտցած չորս-հինգ հազարամեակի ընթացքում պատմութիւնը չա՛տ դանդաղ է չարժուել, աւելորդ զիկզակները ու պըտոյտները է արել, ապարդիւն ժամանակ է կորցրել ու ապարդիւն ուժեր վատնել, յաճախ կանգ է առել ու նոյնիսկ ետ է գնացել, կորցրել է ճամբան, որոնել է, տատանուել, նոր ուղիներ բացել... բայց, ընդհանուր առմամբ, անժխտելիօրէն առաջ է գնացել։

Որքան էլ քննադատենք ու դատապարտենք ընկերային կազմակերպութիւնը այսօրուայ քաղաքակիրթ աշխարհում, այնու ամենայնիւ չենք կարող հերքել, որ մարդ-անհատը բաւարարելու տեսակէտից՝ կացութիւնը այսօրուայ Անգլիայում չա՛տ աւելի լաւ է, քան էր Փարաւոնների ժամանակ Եգիպտոսում, Սարգանապալի ու Նաբուզոդոնոսորի ժամանակ Ասորա-Բաբելոնեան կայսրութեան մէջ, Դարեհի սատրապիաներում, դասական Հելլադայում ու Հռովմում, միջին-դարեան աւատական Եւրոպայում կամ Իտալական վերածնունդի այնքան փայլուն շրջանում։

Տարբերութիւնը մեծ է, փոփոխութիւնը դէպի լաւը՝ անժխտելի։

Որոնել, ձգտել, գտնել ու հաստատել մարդկային ընկերութիւնների լաւագոյն կազմակերպում՝ հանրային կեանք կանոնաւորելու եւ կա-

նոնաւորած հանրային կեանքի մէջ մարդ–անհատի կարիքները ամենամեծ չափերով հոգալու համար — սա՛ է առաջադիմութիւնը, առաջադիմութեան նպատակը, բովանդակութիւնն ու չափանիշը:

Ամէն մի պատմական երեւոյթ — ուրեմն եւ ազգ երեւոյթը — պէտք է դնահատել, ողջունել կամ դատապարտել ա՛յս տեսակէտից:

III

Արդ՝ առաջադիմակա՞ն թէ յետադիմական դործօն է ազգը:

Դարձեալ մի չեղում պիտի անեմ ու նկատեմ, որ սոցիալական հարց չէ սա, պարապ մտքի մարզանք, — ոչ, կեանքի խնդի՛ր է, որ պիտի լուծուի:

Ազգերը դոյութիւն ունեն ու մշտական պայքարի մէջ են դոյութեան համար: Ամէն մարդ ինքը պատկանում է ո՛եւէ ազգի, ինքը անհատապէս պայքարի մէջ է, պայքարի առարկայ է ու հնթակայ, դործող ու դործի հետեւանքները կրող — ուզի թէ չուզի:

Ամէն մի ազգային միութիւն, ամէն օր ու չարունակ, հնթակայ է — աւելի կամ պակաս չափերով — երկու կարգի ազդեցութիւնների, երկու հակազիր, միմեանց հետ մրցող ոյժերի:

Ազգեցութիւնների ու ոյժերի մի խումբ ձգտում է վերացնել կամ թուլացնել ազգային տարրերը, ապազգայնացնել ազգը. մի ուրիշ խումբ՝ պաշտպանել, հաստատել, զօրեղացնել ազգային անհատականութիւնը...

Որի՞ կողմն անցնել, ո՞ր բանակը ուժեղացնել եւ որի՞ դէմ զինուել:

Կրկնում եմ՝ պարապ հարց չէ սա:

Գիտեմ, որ պատմութիւնն ու կեանքի առարկայական պայմանները ունեն իրանց սեփական օրէնքները, որ շատ աւելի զօրեղ են, քան մարդկային ոչ միայն անհատական, այլ եւ հաւաքական կամքը, ցանկութիւնները, ձգտումները: Գիտեմ, որ պատմութիւնը ունի իր ընթացքը, զարգանալու իր ուրոյն տրամաբանութիւնը, որը ոչ միայն անխորտակելի է, այլ եւ յաճախ անհասկանալի է, անհասանելի մարդկային մտքի համար:

Բայց գիտեմ եւ մի ուրիշ բան, — այն, որ մարդը երբեք չի կարող հրաժարուել իր սեփական ցանկութիւնները ունենալու իրաւունքից, իր սեփական կամքը արտայայտելու եւ հաստատելու հրամայողական պահանջից:

Մարդը գիտակից էակ է — համեմատաբար գիտակից ու աւելի գիտակից, քան որեւէ ուրիշ կենդանի էակ երկրագնդի վրայ: Մարդը ծառ չէ, ոչ էլ մրջիւն կամ ոչխար: Նա չի կարող թոյլ տալ, որ կենսաբանական օրէնքները կամ ժառան-

դած բնազդը տանեն նրան, ուր կամենան:

Ի հարկէ, կենսաբանական օրէնքը կամ ժառանգած բնազդը՝ այնպիսի հիմնական ու տարերային ոյժեր են, որոնց գոյութիւնը մարդը չի կարող վերացնել կամ ջնջել. բայց կարող է որոշ չրջանակի մէջ դնել նրանց ընթացքը, որոշ ուղղումներ մտցնել արտայայտութիւնների մէջ, հարկադրել մէկ ոյժին մի ուրիշ ոյժ (որովհետեւ դիտակցութիւնն ու կամքը — նոյնպէս ոյժեր են): Կարող է կամ կարծում է, թէ կարող է անել այդ ու ամենայն դէպս՝ ձգտում է կարողանալու:

Եւ այս ըմբռնման, ինքնորոշուելու այս յանդգնութեան եւ իր «ես»ը հաստատելու այս յամառ կամքի մէջն է մարդու ամենամեծ արժէքը:

Մարդը ըմբռնում է ոչ միայն պատմական ու սոցիալական, այլ եւ բնական օրէնքների դէմ, աշխատում է սանձահարել իրանից դուրս դնուած ոյժերը, ենթարկել իր կամքին, ծառայեցնել իր կարիքներին:

Ե՛ս եմ իմ կեանքի տէրը — ասում է մարդը — եւ եթէ չեմ՝ ուզո՛ւմ եմ որ լինեմ, պէ՛տք է որ լինեմ ու կը լինեմ: Իսկ եթէ Աստուած կամ Օրէնքը կարեն ճամբաս, կը պայքարիմ Աստուծոյ եւ Օրէնքի դէմ: Կը պայքարեմ ու կը յաղթեմ:

Գուցէ ինքնախաբէութիւն է սա (ու անչուշտ

ինքնախաբէութիւն է խոչոր չափերով — խոչոր չափերով, բայց ոչ ամբողջովին): Եւ սակայն այս ինքնախաբէութեան մէջն է մարդու ոյժը, ապրելու ու առաջադիմելու կարողութիւնը:

Հոգով առողջ ու կեանքով լեցուն մարդը չի կարող լինել ճակատագրապաշտ, չի կարող ասել՝ այ է սահմանուած ինձ համար եւ թող օրհնեա՛լ (կամ՝ ըստ ճաշակի՝ անիծեալ) լինի Տիրոջ կամքը, որ անփոփոխելի է, անվիճելի, անխուսափելի... Մարդիկ ու մարդկային ընկերութիւնները, որոնք թունաւորուած են այս թոյնով, — մահուան են դատապարտուած, կենդանի դիակներ են արդէն:

Բայց ճակատագրապաշտութիւնը — իսկական եւ ո՛չ փրազիոլոգիան — բացառիկ երեւոյթ է, հազուագիւտ հիւանդութիւն: Իսկ ընդհանուր երեւոյթն այն է, որ մարդը յամառ համառատ ու խոր վստահութիւն ունի իր չատ սահմանափակ կարողութեան վրայ, որոշակի տարբերում է բարին չարից, ցանկանում է ու ձգտում, ըմբոստանում է մի բանի դէմ ու ընդառաջ գնում մի ուրիշ բանի, չարունակ ծրագրում է ու կազմակերպում, պահանջում է, պայքարում եւ որոշ չափով կարողանում է կարգաւորել իր կեանքը ըստ իր ցանկութեան:

Եւ ահա՛ ինչու միեւնոյն չէ, թէ մարդը ի՞նչ հասկացողութիւն ունի կենսական այս կամ այն երեւոյթի մասին:

Որքան էլ զերազանց ու անյաղթելի լինեն մարդու գիտակցութիւնից ու կամքից դուրս գտնուող ոյժերը եւ որքան էլ սահմանափակ լինի մարդու սեփական կարողութիւնը, — այդ կարողութիւնը այնու ամենայնիւ գոյութիւն ունի: Պատմութիւնը ընթանում է ոչ միայն մարդուց անկախ օրէնքներով, այլ նաեւ մարդկային գիտակցութիւնով. աւելի ճիշդը՝ մարդկային գիտակցութիւնը այն մանակի ոյժերից մէկն է, որոնց գումարը որոշում է պատմութեան ընթացքը:

IV

Ես հայ եմ եւ՝ հայ լինելով՝ չեմ կարող դառնալ — որքան էլ ցանկանամ — ոչ ռուս, ոչ թուրք: Սա իմ կարողութիւնից վեր բան է:

Բայց ես կարող եմ աստիճանաբար չէզոքացընել կամ թուլացնել — իմ մէջ ու իմ չուրջը — այն բոլոր առանձնայատկութիւնները, որ բնորոշում են իմ ազգութիւնը, իւրացնել որոշ չափերով ռուսի կամ թուրքի առանձնայատկութիւնները, ձուլուել մասամբ օտար ազգութեան մէջ:

Կարող եմ անել եւ հակառակը — այն է, կարող եմ արթուն պահապան կանգնել իմ ազգային անհատականութեան, խանգօրէն պաշտպանել իմ ազգային դէմքը, ոյժ տալ — իմ մէջ ու իմ չուր-

ջը — այն բոլոր տարրերին, որոնցից կազմուում է հայ ազգութիւնը, զարգացնել ու ամրացնել իմ ազգային գիտակցութիւնը, ըմբռնտանալ ամէն մի ոտնձգութեան դէմ, կռուի բռնուել ամէն մի հակառակ ոյժի հետ:

Տեսականօրէն կարելի է ենթադրել եւ մի երրորդ ընթացք, — այսինքն՝ կորցնելով աստիճանաբար իմ հայկական առանձնայատկութիւնները, կարող եմ չիւրացնել ռուսական կամ թուրքական առանձնայատկութիւններ, այլ ապազգայնանալ բառի լայն իմաստով, միջազգայնանալ, դառնալ սոսկ մարդ, ազա՛տ ո՛րեւէ ազգային պատկանելութիւնից:

Տեսականօրէն ենթադրելի է, բայց իրականութեան մէջ անկարելի բան է սա: Իրականութեան մէջ ամէն մի անհատի ու ամէն մի խմբակցութեան ապազգայնացումը ուրիչ բան չէ, քան աստիճանական ձուլում ո՛եւէ ուրիչ ազգութեան մէջ:

Եւ ուրիչ կերպ չի կարող լինել:

Ձէ՞ որ — օրինակի համար — ես պիտի խօսեմ որեւէ լեզու: Եթէ չեմ խօսում հայերէն, պիտի խօսեմ ռուսերէն, թուրքերէն կամ մի այլ լեզու, որովհետեւ միջազգային, հանուր մարդկային լեզու գոյութիւն չունի (Էսպերանտոն լեզու չէ, ինչպէս կ՝աշխատեմ բացատրել մի քիչ յետոյ): Կարելի է առարկել, որ ես կարող եմ խօսել և՛ւ հայերէն, և՛ւ ռուսերէն... Բայց, նախ որ, իմ

մասամբ հայերէն, մասամբ ռուսերէնը կը լինի միայն կէս–հայերէն կէս–ռուսերէն եւ ո՛չ ապազդային, հանուր–մարդկային լեզու: Երկրորդ, այդ դրութիւնը չի կարող տեւողական լինել. կամ հայերէնը պիտի յաղթի ռուսերէնին կամ ռուսերէնը՝ հայերէնին եւ կամ — վերջապէս — կազմուի մի նոր ռուս–հայ ազգութիւն: Բայց դա կը լինի դարձեալ ազգութիւն եւ ոչ ապագդայնութիւն:

Տուեալ ազգութիւնը կարող է վերանալ, բայց պայմանով, որ լուծուի մի ուրիշ ազգութեան մէջ կամ նոր ազգութիւն կազմի: Միջին, ապազդային դրութիւն՝ իբրեւ տեւողական ու զանգուածային երեւոյթ՝ անկարելի բան է: Ինչպէս եւ բուսաբանական ու կենդանաբանական աշխարհում՝ խորթացած, կիսատ, անորոշ տիպերը չեն կարող կայուն ու կենսունակ լինել. կամ պիտի վերադառնան մայր–տիպերին, կամ կազմեն մի նոր, որոշակի ու ամբողջական տիպ:

Երկու ճամբայ կայ առջեւս. հաստատել իմ ազգութիւնը, ամրացնել ու խորացնել իմ ազգային տիպը կամ՝ աստիճանաբար կորցնելով ժառանգօրէն ստացած իմ ազգային առանձնայատկութիւնները, իւրացնել զուգընթացաբար օտար ազգութեան տարրեր, օտար դէմք: Երկրորդ ճամբան կարող է հասցնել ինձ մինչեւ կատարեալ ձուլում կամ մինչեւ մի նոր ազգութեան հաստատում: Բայց վերջի ելքը ես ոչ կարող եմ նախա–

տեսել, ոչ էլ նախապատրաստել — իմ ընտրությունից ու այսօրուայ բռնած ընթացքից դուրս է այդ ելքը:

Երեք պրոցեսներն էլ կատարւում են իրականութեան մէջ: Բայց ընտրութիւն ես կարող եմ անել միայն առաջին երկուսի միջեւ, ա՛յստեղ արտայայտել իմ դիտակցութիւնն ու կամքը, յարել մէկին կամ միւսին, ինքնորոշուել այս կամ այն ուղղութեամբ:

Սա ես կարող եմ անել ու որոչ չափով յաջողել:

Իմ դիտակցութիւնն ու կամքը եւ սրանց մանր ու խոշոր արտայայտութիւնները — կենսական գործօններ են, որ անդրադառնում են երեւոյթների ընթացքի վրայ, ոյժ են տալիս այս կամ այն պրոցեսին:

Հային հայ մնալը կամ աստիճանաբար ռուսանալու ու թուրքանալու ճամբով գնալը — կախուած է մասամբ ե՛ւ ինձանից, իմ յանկութիւնից ու ընտրութիւնից:

Փորձեմ պարզել միտքս՝ դիտմամբ խտացրած ու գռեհկացրած օրինակներով:

Ես կարող եմ իմ անուան «ունի» վերջաւորութիւնը փոխել «ով»ի կամ «օղլի»ի: Կարող եմ ամուսնանալ ռուս կամ թուրք աղջկայ հետ, խարուն, կէս-հայ սերունդ տալ, իմ զաւակների անունը Բորիս կամ Ջումչուդ, Օլգա կամ Նազլու դնել: Կարող եմ թուրքերի հետ գնալ աղօթելու

մզկիթ կամ ռուսների հետ Մննդեան տօնը տօնել Դեկտեմբերի 25ին: Կարող եմ դլխիս ֆէս դնել կամ ուսերիս արմեակ ձդել, բարեւելով ծանօթ-ներիս՝ «Թեմէննահ» ու «սելամ» անել կամ՝ բար-կութեանս ժամին՝ ռուսական «երեք-յարկանին» յիշել: Կարող եմ իմ տան մէջ ու իմ բարեկամ-ներուն հետ խօսել մխիթայն (կամ դերադասաբար) ռուսերէն կամ թուրքերէն, կարդալ ռուսական դրքեր կամ հետեւիլ թուրք մամուլին: Նախնա-կան կրթութիւն տալու համար՝ կարող եմ ու-ղարկել իմ զաւակներին մեդրէսէ կամ շկօլ, այլ-քենը սովորեցնել ռուս կամ թուրք ձեռնարկնե-րով: Իմ տանը, ընտանեկան չրջանում, ամեռա-յին երկար երեկոները հաճոյքով անցկացնելու համար, կարող եմ պատմել «Աչուղ Ղարիբի» կամ «Ծուռ Իմանի» հեքիաթը, Մուրոմցի Իլիայի քաջագործութիւնները կամ Քեօռ Օղլիի արկած-ները, Կոխլովի առակները կամ Նասրեդդին Հո-ջայի զուարճախօսութիւնները: Կարող եմ երգել ու նրդել տալ «Մայր Վոլգայով դէպի վար» կամ «Հէյ Գազիլէ՛ր», նուագել ու նուագել տալ «Տէր, պահի՛ր Ցարին» կամ «Զեղհէր»: Իմ փոքրիկնե-րի թրթռուն սրտերը յուզելու, մոքերին ու ե-րեւակայութեանը ուղղութիւն տալու համար կա-րող եմ պատմել օսմանեան կեռ թուրի կատարած նուաճումները, այա-Սոֆիայի պապաթին յաղ-թական մահիկ ցցելը, Մարգարէի սուրը վե-րարկուի ու կանաչ դրօշակի պահապանութիւնը,

փառահեղ սուլթան Սուլէյմանի արշաւանքը մինչեւ Վիեննա, Մուսթաֆա Քեմալի հայրենասիրութիւնը, թուրք ցեղի բարձր առաքինութիւնները, նրա տոկունութիւնը, հաւատարմութիւնը իսլամին, աղնուութիւնը գործերի մէջ, ասպետական վեհանձնութիւնը, բարքերի պարզութիւնը:

Կամ՝ եթէ հայեացքս ուղղում եմ Ռուսաստանին՝ պատմել վրիժագների գալը, Վլադիմիր Արեւ-իչխանի ու իր բոգատիրների խնճոյքները, Մոսկովեան ցարերի աշխարհակալութիւնը, Թաթարական լուծի թօթափումը, Իվան Սուսանինի մարտիրոսութիւնը, Մեծն Պետրոսի փրկարար մահակը, 12 թուականի պատերազմը, Սիբիրեան երկաթուղու կառուցումը, որ կապում է — մէկ կայսրութեան սահմանների մէջ — Հին աշխարհի երկու ծայրերը, արեւելքն ու արեւմուտքը, Պետրոգրադն ու Վլադիւոստոկը (օգտուելով դէպքից, կարող եմ բացատրել, որ Վլադիւոստոկ ասել է «տիրի՛ր Կովկասին» ու Վլադիմիր ասել է «տիրի՛ր աշխարհին»): Կարող եմ բացատրել, թէ մաքի ու սեղծագործութեան ի՛նչ տիտաններ են Բուշկինն ու Տոլստոյը, գեղարուեստական ի՛նչ յայտնութիւններ են ռուսական երաժշտութիւնը, Մուսորգսկին ու Շալեապինը, Մոսկուայի թատրոնն ու Պետրոգրատի բալետը, եւ պատմական ի՛նչ մեծ երեւոյթներ են ռուսական Նիհիլիզմը ու խորհրդային էքսպերիմենտը: Օգտագոր-

ծելով աշխարհագրական քարտէզը, սինեման, մեծ նկարիչների գունաւոր կտաւները ու բանաստեղծների պատկերաւոր խօսքը, կարող եմ ճաշակ ու սէր ներշնչել դէպի ռուս երկրի անհուն տարածութիւնները, անծայր դաշտերը, հազարամեայ կուլտուրական անտառները ու հսկայ գետերը, որ հոսում են զօրեղ ու յաղթական, ինչպէս զօրեղ ու յաղթական է ինքը մեծ ազգը...

Ես կարող եմ անել այս ամէնը — եւ դեռ չա՛տ ուրիշ բան — իմ ու իմ չրջապատի մէջ հայրենասիրութիւնը չէզոքացնելու եւ փոխարէնը ռուսական կամ թուրքական ոգի ներշնչելու, ռուս կամ թուրք ազգայնութիւն պատուաստելու ու ապագայ ճուլման ճանապարհները հարթելու համար:

Բայց կարող եմ անել եւ հակառակը — կարող եմ խոցոտել իմ չուրջս հայկական մթնոլորտը, չնչել ու ապրել այդ մթնոլորտի մէջ:

Կարող եմ իմ «Զիլինգարով» ազգանունը վերածել «Դարբինեանի» (ինչպէս իմ պապը իր «Իզիթխանեան» ազգանունը փոխել է «Քալաղնունեի») իմ մանչուկներին՝ փոխանակ Պետրոս ու Օհաննէսի՝ Արամ ու Աշոտ անուանել: Կարող եմ անհաչտ հակառակորդ լինել խառն ամուսնութիւնների ու սպառնանալ զաւակներիս, թէ կը զրկեմ ժառանգութիւնից (կամ հայրական օրհնութիւնից՝ նայելով հանգամանքներին), եթէ օտարների հետ ամուսնանան: Կարող եմ ներշնչել, թէ հայի միակ եկեղեցին (եթէ պէտք է ո՛եւէ եկե-

ղեցի) — Լուսաւորչականն է ու աղօթքի երգը — չարականը: Կարող եմ պայման դնել կնոջս, որ մեր տան լեզուն հայերէնը պիտի լինի ու միա՛յն հայերէնը: Իբրեւ առաջի ձեռնարկ՝ իմ փոքրիկ-ներին կարող եմ տալ «Լուսաքերը» ու անգիր սովորեցնել Ղ. Աղայեանի ու Յ. Թումանեանի գողտրիկ ոտանաւորները. իսկ հետագայում կարդալ տալ Մ. Զամչեանի «Պատմութիւնը»: Կարող եմ հաւաքել դրադարանիս մէջ հայերէն հին ու նոր գրքեր, զարդարել սենեակս Հայաստանի քարտէսներով ու լուսանկար տեսարաններով, հայ գործիչների պատկերներով, հայ արուեստի նմոյշներով ու հայկական դրօշակներով: Պատանութեան հասած իմ զաւակների հետ կարող եմ ամիսներով չրջել Հայաստանի լեռներում ու ձորերում, որպէսզի ճանաչեն ու սիրեն իրանց հայրենիքը, գիտնան հայրենի ներկան ու անցեալը, աշխարհագրութիւնն ու պատմութիւնը: Դրական գիտութիւնը կարող եմ համեմել հայ պատմութեան առասպելներով, ազգային վէպերով ու բանաստեղծական հիւսուածքներով:

Կարող եմ պատմել ու սովորեցնել. — ահա՛ վեհափառ Մասիսը — սարերի սարը — ուր որսի էին ելնում հայ իշխանները եւ ուր մնում է մինչեւ այսօր, չղթաների մէջ, անիծեալ արքայ Արտաւազդը. ահա՛ Արարատեան դաշտը, Հայաստանի սիրտը, հայ մշակոյթի օրօրանը. ահա՛ Էջմիածնի «չորակաթ լուսոյ խորան» սուրբ տա-

ճարը, Զուարթնոցը ու Հռիփսիմէն, հայ ճարտարապետութեան աքանչելի արտայայտութիւններից մէկը. ահա՛ Մայր Աթաքսը, որ մայրական անսպառ սիրով դարե՛ր ու դարե՛ր կերակրել է հայ ժողովուրդը. ահա՛ Հրաշղանն ու Քասաղ գետը, որի ափերին մանուկ Վարդվէսը կռեց-կոփեց Երուանդի դուռը. ահա լայնանիստ Արագածը իր զուլալ աղբիւրներով ու զմրուխտ կանաչով, որ այնքա՛ն սիրել ու այնքա՛ն երգել է հայ գեղջուկը. ահա՛ հայոց Շիրակը ու Բագրատունիների Անին, իր հոյակապ պարիսպները, տաճարներն ու պալատները — միջին դարեան հայ ճարտարարուեստի ու ճարտարագիտութեան լաւագոյն կոթողը. ահա՛ Գուգարքի անտառապատ լեռները ու ջրառատ ձորերը, Իվանէ ու Զաքարիա սպասալարների տունը, Հախբատի ճեմարանն ու Մաշկոցոսի դամբարանը. ահա՛ սառնաչունչ Սեւանը ու իր խորհրդաւոր մենաստանը. ահա՛ Արցախն ու Սիւնիքը, լեռնային արծիւների ամպամերձ բոյնը, հայ անկախութեան վերջին ապաստանարանը. ահա՛ հեշտասէր Գողթանը, ուր հեթանոս երգիչները՝ բամբիռների նուագի տակ՝ երգել են սէրն ու գինին. ահա՛ Վանայ կապոյտ-կանաչ, ժպտուն ու պսպղուն ծովակը, հայ երկրի անգին գոհարը. ահա՛ սէդ Սիփանը, Մեծ Մասիսի միակ ախոյեանը. ահա՛ Վարագը ու իր անմատչելի գագաթին, ըստ պառնասիօրէն ծառացած հսկայ ժայռերի ծայ-

ըին՝ Աստղկայ բերդը, ուր արշալոյսին իջնում է հանգստանալու Արուսեակը, ինչպէս վերջալոյսին վառւում է Արագածի գլխին Լուսաւորչայ կանթեղը. ահա՛ դիներփուխների անուշ բոյրի մէջ դարերով նիրհած Վարագայ վանքը, ուր Խրիմեան Հայրիկը իր փոքրիկ մամուլն հաստատեց, երազեց ու աշխատեց Նոր Հայաստանի համար. ահա՛ Հայոց Զորը, մեր նախահայրերի առաջի իջեւանը ու իր խոժոռ, տիտանական բերդը, որ չինեց ազատասէր Հայկ նահապետը՝ բաբելոնեան բռնակալի դէմ. ահա՛ Նարեկը ու Առաէր կղզին, ուր ճգնեց, աղօթեց ու գրեց իր աստուաչունչ խօսքը Նարեկացի Գրիգորը. ահա՛ Գրգուռն ու կոնաձեւ Նեմրութը, ուր Աղբիւր-Սերոբը դէնք բարձրացրեց քրդական բռնութիւնների եւ օսմանեան տիրապետութեան դէմ. ահա՛ Տարօնի փարթամ հովիտը, Հարաւ-արեւմտեան Հայաստանի Այրարատը, Մամիկոնեան տոհմի ու Խորենացու հայրենիքը. ահա՛ Մուրազատու Մշոյ Սուլթան Սուրբ Կարապետը, աշխարհի չորս կողմը ցրուած հայ մարդկանց ուխտատեղին. ահա՛ Կարնոյ լե՛ռնադաշտը, Հայաստանի Միջնաբերդը, Փոքր Ասիայի կտուրը, ուր ծնունդ են առնում ու տանում իրանց ջրերը — հարաւ եւ հիւսիս, արեւելք ու արեւմուտք — պատմական մեծ դետերը, հին ու հնագոյն քաղաքակրթութեան ճամբաները...

Այս էլ կարող եմ անել ես:

Երկու ճանապարհներից ո՞րը ընտրեմ ու յետոյ՝ ի՞նչ ուղղութեամբ ինքնորոշուեմ ֆաղաֆականապէս:

Կարող եմ՝ միանալով ինձ պէս մտածող ու իմ ցանկութիւնները ունեցող ուրիչ հայ մարդկանց հետ, կազմել քաղաքական ու յեղափոխական կուսակցութիւններ, դաւադրել օտար տիրապետութեան դէմ, բացայայտ ու գաղտնի պրօպագանդ անել, դրամ ու զէնք հաւաքել, մարտական խմբեր պատրաստել, ապստամբել ու՝ յանուն արդարութեան ու իրաւունքի՝ քաղաքակիրթ մարդկութիւնը ինձ օգնութեան կանչել:

Կարող եմ անել եւ հակառակը. քարոզել իմ հայրենակիցներին ու ազգակիցներին, որ քաղաքականապէս ազատագրուելու ծրագիրը՝ խենթ ու խելառների զառանցանք է, կորստաբեր արկածախնդրութիւն է եւ որ իմաստութիւնը սուս անելու եւ հնազանդ լինելու մէջն է: Կարող եմ ընկերութիւններ կազմել, լրագրեր հիմնել ու դասախօսութիւններ անել՝ իմ այս տեսակէտը ժողովրդականացնելու համար: Կարող եմ չարաղրել ամենահպատակ ուղերձներ, ինձ պէս իմաստունների ու ազգի երեւելիների ստորագրութիւնները հաւաքել, ներկայացնել բարեխնամ Ցարին կամ բարեխնամ Սուլթանին, հաւաստիացընելով որ իմ ամենամեծ երջանկութիւնը ու միակ բաղձանքն է՝ ընդմիշտ հպատակ մնալ հըզօր ռուսին կամ մարդասէր, աստուածավախ

թուրքին եւ խնդրել միաժամանակ, որ Ցարը կամ Սուլթանը ողորմածաբար հրամայեն իրանց դահիճներին՝ կտրել խռովարարների յիմար գլուխները...

Վերջապէս ո՞րն անեմ ես — հա՞յ մնամ, թէ՞ թուրքանամ կամ ռուսանամ (աղբայնօրէն ու պետականօրէն)...

V

Կեանքի անբարեյաջող պայմանները, արտաքին ոյժերն ու ճնշումները կարող են կաչկանդել կամ դժուարացնել մարդու ազատ ընտրութիւնը, մղել նրան՝ հակառակ իր կամքին, այս կամ այն կողմը:

Ես ուզում եմ հայախօս մնալ — սա է իմ ցանկութիւնը, ընտրութիւնը, պահանջը: Բայց ինձ ասում են. եթէ ուզում ես պետական պաշտօն ստանալ, պէտք է լաւ ռուսերէն դիտենաս. կամ, եթէ ուզում ես ապրանք ծախել ինձ, պէտք է ընտիր թուրքերէն խօսես հետս:

Ռուսերէնն ու թուրքերէնը դալիս են խեղդելու իմ հայերէնը:

Ի՞նչ անեմ ես, ի՞նչ դիրք բռնեմ — պայքարե՞մ թէ տեղի տամ:

Պայքարը պահանջում է ոյժերի լարում ու

սպառում, հալկաղրում է ղրկանքների ու զոհաբերութիւնների... Ցանուն ինչի՞ դժուարացնեմ իմ կեանքը կամ վտանգեմ բարեկեցութիւնս:

Ցիչեցնեմ, որ ազգութեան դէմ արտայայտուողների սովորական առարկութիւններից մէկն էլ այն է, որ ազգերի անջատ դոյութիւնը պատճառ է դառնում մշտական ու անվերջ պայքարների:

Անշուշտ այդպէս է, քանի կան տարբեր ազգեր, անհրաժեշտօրէն պիտի լինի նաեւ ազգային պայքար: Բայց մի՞թէ լուրջ առարկութիւն է սա:

Որպէսզի հետագայում հալկաղրուած չլինեմ վերադառնալու նոյն խնդրին, այստեղ եւեթ ասեմ մի քանի խօսք պայքարի մասին:

Եթէ ուզենանք վերացնել ասպարէզից պայքարը, պէտք է վերացնենք կեանքը առհասարակ, որովհետեւ իմիքը կեանքը ուրիշ բան չէ, քան անընդհատ պայքար: Կենսական բոլոր երեւոյթները ըստ էութեան պայքարի երեւոյթներ են; Պայքարը կեանքի հիմնական ու անհրաժեշտ պայմանն է — առանց պայքարի չկայ կեանք ու մնաւանդ առաջդիմութիւն: Անպայքար դոյութիւնը՝ դերեզմանումն է (ու այն էլ մարդու համար միայն, որովհետեւ դերեզմանի խորքերումն էլ չարունակւում է պայքարը, թէեւ պայքարողը մարդը չէ այլեւս):

Ընկերային, կենսաբանական ու նոյնիսկ օրգանական կեանքի ամէն մի երեւոյթ՝ պայքա-

րի արդիւնք է ու նոր պայքարի աղբիւր, պայքարի առարկայ ու պայքարի ենթակայ:

Ծովը մշտական պայքարի մէջ է ցամաքի հետ, քամին՝ անձրեւի հետ, այսինչ բջիջը, այսինչ բոյսը, այսինչ կենդանին ու այսինչ հաւաքականութիւնը՝ այնինչ բջիջի, այնինչ բոյսի, այնինչ կենդանու եւ այնինչ հաւաքականութեան հետ:

Բայց ոչ ոք մտքով չի անցկացնում թէ լա՛ւ կը լինէր, որ ծովն ու ցամաքը անվատ գոյութիւն չունենային ու այդպիսով վերացուէր նրանց պայքարը — չէ՞ որ ծովը աշխատում է քանդել իր ափերի ժայռերը, լայնանալ ու մեծանալ ցամաքի հաշուին. իսկ ցամաքը՝ գետերի օգնութեամբ՝ աշխատում է լեցնել աւազով ծովի խորութիւնը, նուաճել ջրային տարածութիւնները: Ոչ ոք մտքով չի անցկացնում, թէ լա՛ւ կը լինէր, որ անտառի մէջ գոյութիւն չունենային՝ կողք-կողքի՝ մայրին ու կաղնին, — չէ՞ որ սրանք պայքարում են իրար հետ, աշխատում են գրաւել աւելի ու աւելի ընդարձակ տեղ, լոյս ու ջերմութիւն՝ իրանց սերունդը աճեցնելու համար: Ոչ ոք չի ասում, թէ լա՛ւ կը լինէր, որ գոյութիւն չունենային մարմնամարզական ընկերութիւնները, — չէ՞ որ սրանք պայքարում են ֆիլհարմոնիական ընկերութիւնների հետ, աշխատում են չատացնել իրանց անդամների թիւը՝ ի հաշիւ երաժշտասէրների...

Ոչ ոք չի ասում, որովհետեւ դա կը նշանակէր ժխտել ու բացասել կեանքը առհասարակ։

Ազգը, պայքարի տեսակէտից, բացառութիւն չի կազմում կենսական միւս երեւոյթների շարքում։

Կարելի է ու պէ՛տք է ըմբռնտանալ պայքարի այս կամ այն ձեւի, այս կամ այն արտայայտութեան դէմ (խօսքս ընդհանրային երեւոյթների մասին է, ի հարկէ — միւս կարգի երեւոյթները են-թակայ չեն մարդու կամքին ու ընտրութեան), բայց ոչ պայքարի դէմ առհասարակ։ Մտքի կատարեալ չփոթութիւն կը լինէր՝ դատապարտելի յայտարարել այս կամ այն երեւոյթը այն պատճառով միայն, որ նա ծնունդ է տալիս պայքարի։

Ճիշդ է, ազգերի պայքարը կարող է ստանալ այնպիսի ձեւեր, որ կորստաբեր են թէ՛ պայքարող ազգութիւնների եւ թէ՛ ամբողջ մարդկութեան համար. բայց սա պատճառ չէ, որ դատապարտուի ազգ-երեւոյթը ինքնըստինքեան կամ ազգային պայքարը ընդհանրապէս։

Օջախի կրակը կարող է հրդեհի վերածուել ու այրել, ոչնչացնել մի ամբողջ քաղաք։ Մարդիկ օրէնքներ են սահմանում ու միջոցներ ձեռնարկում՝ հրդեհի առաջն առնելու կամ նրա դէմ կռուելու համար։ Սա հասկանալի է, նպատակայարմար ու անհրաժեշտ։ Բայց ոչ ոք մտքով չի անցկացնում՝ հրդեհի երկիւղից՝ հանգցնել օջախների կրակը կամ դժգոհել, որ կրակը այրե-

լու ընդունակութիւն ունի. չէ՞ որ այրելու ընդունակութիւնը՝ նոյն տաքացնելու ընդունակութիւնն է, որ այնքա՛ն արժէքաւոր, այնքա՛ն անհրաժեշտ է մարդու համար:

Իթթիհատական Թիւրքիան բնաջինջ արաւ կամ երկրից դուրս քշեց արեւելեան վիլայէթների ամբողջ հայ ազգաբնակութիւնը: Ահա՛ ազգային պայքարի մի արտայայտութիւն, պայթեցնելու մի ձեւ, որի որակումը վէճ չի վերցնում:

Բայց ահա եւ մի ուրիշ արտայայտութիւն. վանի մէջ գերմանական միսիոնարները հիմնեցին, ամերիկեան չատ լաւ դպրոցի կողքին, իրանց սեփական, աւելի եւս լաւ դպրոցը, հաւաքեցին հայ մանուկներին եւ — հայերէն լեզուի ու ուրիշ գիտութիւնների չարքում — սովորեցրին նաեւ գերմաներէն կարդալ-գրել ու մի քիչ խօսել: Սա եւս ազգային պայքար է. գերմանական լեզուն եկել է վան պայքարելու անգլիական լեզուի դէմ, նոր նուաճումներ անելու, լայնացնելու իր տարածման սահմանները:

Մի այլ օրինակ. ռուսական թատրոնը պայքարում է այսօր ֆրանսիական թատրոնի դէմ, բեմադրում է նոյնիսկ փարիզի բեմերի վրայ իր երկերն ու իր արտիստները, խաղալու ձեւը, ուրոյն ձեւը, ուրոյն ոճը եւ գեղարուեստական արտայայտութեան այնպիսի միջոցներ, որ խորթ ու անծանօթ են եղել ֆրանսիական թատրոնին:

Արդ՝ իթթիհատականների գործը ցնցեց ամ-

բողջ մարդկութիւնը, ընդհանուր զգուանք ու զայրոյթ առաջ բերեց։ բայց ոչ ոք չբողոքեց գերմանական միսիոնարների կամ Ստանիսլաւսկու թատրոնի դէմ, թէեւ երեքի արածն էլ՝ նոյն ազգային պայքարի արտայայտութիւններն են։

Ինչո՞վ բացատրել այս տարբերութիւնը։

Պատասխանը պարզ է։ որովհետեւ էթթիհատականները ոչնչացրին արժէքներ (մարդկային կեանք ու տնտեսութիւն), մինչդեռ գերմանական միսիոնարներն ու ռուս արտիստները նոր արժէքներ ստեղծեցին։

Ջարդերը Թիւրքահայաստանում զրկեցին կեանքից մի քանի հարիւր հազար մարդ եւ ուրիշ հարիւր հազարներին տնաւեր ու տնազուրկ արին, զժբախտացրին։ ապա՝ զրկեցին Մերձաւոր Արեւելքը — ուրեմն եւ ամբողջ մարդկութիւնը — աշխատասէր ձեռներից ու քաղաքակրթական տարրերից։

Կործանարար գործ էր սա։

Բայց ամերիկեան ու գերմանական միսիոնարները պայքարելով վանում իրար դէմ, սովորեցրին հայ մանուկներին գերմաներէն ու անգլերէն լեզու, մի քիչ աւելի քաղաքակրթութիւն մտցրին երկրի մէջ, մի քիչ աւելի կապեցին Վանայ հայութիւնը Եւրոպայի ու Ամերիկայի հետ, հեշտացրին հաղորդակցելու ու աշխատակցելու միջոցները։

Շինարար էր այս գործը։

Շինարար է նոյնպէս ռուսական թատրոնի պայքարը ֆրանսիականի դէմ։

Ֆրանսիացուն պէտք է, որ ռուսը իր ռուսական խօսքն ասի ու հակադրի ֆրանսիականին։ Ֆրանսիական թատրոնը՝ ռուսականի ազդեցութեան տակ՝ չի ռուսանայ, ի հարկէ, չի մոռանայ Մոլիերից, Տալմայից ու Ռաչելից ժառանգած աւանդութիւնները, կը մնայ ֆրանսիական։ Բայց մոկուսայինների ասպարէզ գալը նոր հեռանկարներ կը ցուցադրի, նոր ճանապարհներ կը բանայ, կեանք ու աչալոյժ կը ներչնչի, կը հարկադրի ստեղծագործելու, որոնելու ու գտնելու դերարուեստական նոր ձեւեր, չի թողնի, որ քանայ մէկ անգամ մշակուած ձեւերի մէջ — ինչպէս քարացած էր դարեր չարունակ չինական դերարուեստն ու արհեստը։

Այս պայքարից չահում է ե՛ւ ֆրանսիացին, ե՛ւ ռուսը, ե՛ւ ես — որ ոչ ֆրանսիացի եմ, ոչ էլ ռուս, բայց որոշ չափով մասնակից եմ համամարդկային կեանքին, վայելում եմ քաղաքակրթութեան բարիքները։

Աւելորդ եմ համարում երկարացնել այս ուղղութեամբ։ Պայքարի փաստը ինքնըստինքեան՝ առարկութիւն չէ ազգերի դէմ — պայքարը կարող է լինել ե՛ւ դրական, ե՛ւ բացասական (աւելի դրական, քան բացասական)։ Պէտք է ուրեմն ոչնչով հիմնաւորումներ՝ ազգ-երեւոյթը դնահատելու համար։

Վերեւում փորձ արի ուրուագծելու, թէ ի՛նչ ճանապարհներով ամրապնդւում է, ինքնհաստատւում կամ ընդհակառակը կազմալուծւում, ապազգայնանում ոեւէ ազգ։

Պէ՞տք է արդեօք աւելացնել, որ իմ գծածը՝ սխեմաներ են միայն եւ ո՛չ կենսական ծրագրեր։ Իրականութեան մէջ կարելի չէ — եւ ոչ էլ պէտք կայ — հետեւել բառացիօրէն այդ գտուած ու խիստ մխակողմանի սխեմաներին։

Հասկանալի է, որ իմ տղին աստիճանաբար թուրքացնելու կամ թուրքանալու ճամբին վրայ դնելու համար անհրաժեշտ չէ, որ անունը անպատճառ Մահմէդ դնեմ (Աբրամը նոյնպէս կարող է թուրքանալ) եւ ռուսացնելու համար բնաւ կարիք չկայ, որ ծննդեան տօնը անպատճառ Դեկտ. 25ին տօնել տամ (սուրբ Սարգիսի պատը պահողն էլ կարող է ռուսանալ)։ Միւս կողմից, հայ մնալու համար անհրաժեշտ չէ — ոչ էլ նպատակայարմար — որ չուրջս հինական պարիսպ քաշեմ, զրկեմ ինձ ու իմ ազգակիցներին Նասրեդդին Հոջայի ա՛նքան համով զրոյցներից ու Ֆ. Շալիապինի ա՛նքան գեղեցիկ երգերից։

Ասի արդէն, որ Հասանի ու Իվանի հետ կենակցելն ու գործակցելը ոչ միայն անխուսափելի, այլեւ չա՛տ կարեւոր բան է հենց իրան Աբրամի համար, — այդ չէ խնդիրը։ Ամբողջ խնդիրը նրանում է, թէ այդ միջազգային, հանուր մարդկային կենակցութեան մէջ ո՞րը պէտք է համարել

հիմնական, կեանքին ուղղութիւն ու բովանդակութիւն տուող եւ ո՞րը՝ օժանդակող, լրացուցիչ։

Այսօ՛ր է ահա, որ կարող են բաժանուել ճանապարհները եւ այսօ՛ր է, որ պէտք է ընտրութիւն անել (իսկ ընտրութեան հետ միասին՝ նաեւ պայքարել)։

Ազգը՝ պատմական երեւոյթ է ու ազգերի զոյութիւնը՝ անհերքելի փաստ...

Այո՛, բայց ամէն մի պատմական երեւոյթ ու ամէն մի իրական փաստ արդարութիւն հօ չէ՞ ինձ համար։

Եթէ այդպէս լինէր, ես պիտի հրաժարուէի որեւէ դնահատումից առհասարակ ու խոնարհուէի ամէն մի իրականութեան առջեւ ընդհանրապէս, որովհետեւ չկայ մի երեւոյթ, որ չունենայ իր պատճառները անցեալում ու չանդրադառնայ ներկայի վրայ։

Պատճա՞ռ է սա, որ ես ցանկալի համարեմ այդ երեւոյթները, պաշտպան կանգնեմ դասակարգին ու պետութեան, պայքարեմ նրանց զոյութիւնը յաւերժացնելու համար։

Իմ պատասխանը այդ հարցին՝ բացասական է։

Երբ ես իմ մտքի մէջ պատկերացնում եմ լաւագոյն կազմակերպութիւն հանուր-մարդկային համակեցութեան համար, ոչ դասակարգային եւ ոչ էլ պետական բաժանումները տեղ

չեն գանում այդ կազմակերպութեան մէջ։ Ի՛նչ էլ եղած լինի սրանց դերը անցեալում եւ ո՛րքան էլ անխուսափելի ու նոյնիսկ անհրաժեշտ լինի գոյութիւնը ներկայում, ես ցանկանում եմ ու նախատեսում այն շատ լաւ օրը, երբ մարդկութիւնը ի վիճակի կը լինի ազատագրուելու դասակարգերից (որ կազմակերպուած չհապորձութիւն է) ու պետութիւններից (որ կազմակերպուած բռնութիւն է)։

Ես հարկադրուած եմ հաշուի առնել դասակարգերի ու պետութիւնների գոյութեան փաստը։ Տուեալ պայմանների մէջ ու որոշ նկատումներով կարող եմ հաճդուրժել նրանց գոյութիւնը, իբրեւ ժամանակաւոր ու անցողակի, բայց անխուսափելի չարիք։ կարող եմ այսօր չկռուել կամ սահմանափակել կռիւս մասնակի յարձակումներով, վերապահելով ընդհանուր գրոհը ապագային, երբ աւելի լաւ զինուած լինեմ։ վերջապէս, այս կամ այն դէպքում կարող եմ նոյն իսկ պաշտպանել գոյութիւն ունեցող չարիքը, աւելի վատթար չարիքները կանխելու համար... Բայց եւ այնպէս՝ իմ գնահատումն ու վերաբերումը կը մնան բացասական։

Ի՞նչ կը կորցնեն մարդ–անհատն ու ամբողջ մարդկութիւնը, իբրեւ մարդ–անհատների մի մեծ հաւաքականութիւն, եթէ սոցիալ–տնտեսական փոխ–յարաբերութիւնները ձեւաւորուեն այնպէս, որ ասպարէզից վերանան ի սպառ դասակարգային

բաժանումները, ժողովուրդները ապազասակարգային կամ՝ ուրիշ խօսքերով՝ կազմեն մի հատիկ աշխատաւոր դասակարգ: Իմ խորին համոզումով՝ ոչինչ չեն կորցնի ու շատ բան կը շահեն:

Ի՞նչ կը կորցնեն մարդ–անհատն ու մարդկութիւնը, իրրեւ հաւաքականութիւն, եթէ հնարաւորութիւն ունենք կազմակերպել քաղաքական կեանքը այնպէս, որ վերանան ասպարէզից բոլոր պետական բաժանումները, բոլոր պետութիւնները՝ իրանց կենտրոնացրած բարդ մեքանիզմներով, օրէնսդիր ու գործադիր իշխանութիւններով (պարլամենտներով ու կառավարութիւններով), իրանց բանակներով, դատարաններով, ոստիկանութիւններով ու բանտերով եւ տեղի տան ինքնաւար համայնքների մի ընդարձակ Դաշնակցութեան: Իմ խորին համոզումով՝ ոչինչ չեն կորցնի ու չա՛տ բան կը շահեն:

Կարո՞ղ եմ ասել նոյնը եւ ազգերի վերաբերմամբ:

Կարո՞ղ եմ ասել, թէ ազգային բաժանումները նոյնպէս չարիք են — թերեւս անխուսափելի ու նոյնիսկ անհրաժեշտ պատմական որոշ պայմանների մէջ — բայց եւ այնպէս՝ չարիք:

Կարո՞ղ եմ ասել, թէ մարդ–անհատն ու մարդկութիւնը ոչինչ չեն կորցնի ու դեռ մի բան չահած կը լինեն, եթէ վերանան բոլոր ազգային բաժանումները ու ամբողջ մարդկութիւնը ճուլ–

ուի մի հատիկ ազգութեան մէջ, այսինքն՝ կլանուի մի տիպի մշակոյթի մէջ...

Այդ ես չեմ կարող ասել: Պէտք է ասեմ ճիշդ հակառակը — այն, որ՝ իմ խոր համոզումով՝ մարդ–անհատն ու մարդկութիւնը այդ դէպքում չա՛տ բան կորցրած կը լինեն ու ոչինչ չահած:

Թ.

I

Թողնեմ վերացական դատողութիւնները եւ խնդիրը լուսաբանելու համար՝ փորձեմ խօսել կենդանի օրինակներով:

Ահա երկու ինքնատիպ, լրիւ արտայայտուած ու որոշակի կաղապարուած մեծ ազգեր — անգլիականն ու ֆրանսիականը:

Ի՞նչ չահած կամ կորցրած կը լինէին իրանք ֆրանսիացիներն ու անգլիացիները — եւ ես, որ ոչ անգլիացի եմ, ոչ ֆրանսիացի — եթէ անցեալում գոյութիւն ունեցած չլինէր կամ ապագայում դադարէր գոյութիւն ունենալուց այս երկու ազգերից մէկը կամ միւսը:

Մօտ քառասուն միլիոն ֆրանսիացի կազմում են այսօր ֆրանսիական ազգը, մօտ քառասուն միլիոն անգլիացի (բարդութիւնները վերացնելու

համար հաշուի եմ առնում միայն բուն Անգլիան ու կլորացնում եմ թուերը) կազմում են անգլիական ազգը։ Ի՞նչ կը լինէր, եթէ՝ փոխանակ այդ երկու անջատ ազգերի՝ դոյութիւն ունենար մէկը միայն առանց միւսի, — ութսուն միլիոնանոց մի անգլիական ազգ (առանց Ֆրանսիականի) կամ ութսուն միլիոնանոց Ֆրանսիական ազգ (առանց անգլիականի)։

Կարելի է ասել առանց վերապահումների ու տատանումների, որ ամբողջ քաղաքակրթութիւնը կ'ունենար ուրիշ կերպարանք, քան ունի այսօր. այդ երկու ազգերից մէկի պակասը խորապէս անդրադարձած կը լինի հոգեկան ու նոյնիսկ նիւթական մշակոյթի բոլոր երեւոյթների վրայ։ Ընդգծում եմ՝ բոլոր երեւոյթների։ Բայց իմ թէզը հիմնաւորելու համար բաւական եմ համարում մատնանիշ անել այստեղ մի հատիկ պակասը միայն — լեզուներից մէկի պակասը։

Պարզ է, որ եթէ պակասէր ազգերից մէկը, պակասած պիտի լինէր նաեւ լեզուներից մէկը. չէր լինի է՛ւ անգլիերէնը, է՛ւ Ֆրանսերէնը, այլ կը լինէր կամ միայն անգլիերէնը (կրկնակի ծաւալով, բայց առանց Ֆրանսերէնի), կամ միայն Ֆրանսերէնը (զարձեալ կրկնակի ծաւալով, բայց զարձեալ առանց անգլիերէնի)։

Եթէ պակասէր լեզուներից մէկը, պակասած կը լինէր նաեւ գրականութիւններից մէկը. մարդկութիւնը չէր ունենայ է՛ւ անգլիական, է՛ւ Ֆը-

բանասիական գրականութիւն, ոչ միայն անգլիական առանց ֆրանսիականի կամ միայն ֆրանսիական առանց անգլիականի:

Հեղինակների թիւը ու հրատարակուած գործերի քանակը կը մնային նոյնը. բայց երկու տարբեր գրականութիւնների, — այսինքն երկու տարբեր մշակութային արժէքների փոխարէն կ'ունենայինք մէկը միայն: Տարակոյս չկայ, որ այդպէս կը լինէր, որովհետեւ ծաւալով կրկնապատկուած անգլիական գրականութիւնը կը մնար այնուամենայնիւ անգլիական ու ծաւալով կրկնապատկուած ֆրանսիականը՝ այնուամենայնիւ ֆրանսիական:

Չէինք ունենայ Զօսեր ու Ռաբլէ, Շէքսպիր ու Մոլիեր, Սվիֆթ ու Վոլտեր, Բայրըն ու Լամարտին, Շելլի ու Բերանժէ, Վալտեր Սկոտ ու Վ. Հիւգօ, Դիկկենս ու Բալզակ, Ուալդ ու Մոպասան... այլ կ'ունենայինք երկու Զօսեր (առանց Ռաբլէի), երկու Շէքսպիր (առանց Մոլիերի) եւայլն, կամ՝ հակառակը՝ երկու Ռաբլէ (առանց Զօսերի), երկու Մոլիեր (առանց Շէքսպիրի) եւայլն:

Իմ գրադարանի մէջ ես ունեմ այսօր մի պատմական վէպ՝ «Քվենտին Դորվարդ», որ գրել է անգլիացի Վ. Սկոտը եւ մի ուրիշ պատմական վէպ՝ «Փարիզի Աստուածամայրը», որ գրել է ֆրանսիացի Վ. Հիւգոն: Եթէ ֆրանսիական ազդը գոյութիւն չունենար (օրինակ՝ լուծուած լինէր

անգլիականի մէջ), ես չեմ ունենայ Հիւգոյի «Աստուածամայրը», այլ կ'ունենայի մի երկրորդ «Դորվարդ», որ դրած կը լինէր մի երկրորդ Սկոտ: Իսկ եթէ գոյութիւն չունենար անգլիական աղդը (օրինակ՝ լուծուած լինէր Ֆրանսիականի մէջ), ես չեմ ունենայ «Քվենտէն Դորվարդը, այլ կ'ունենայի մի ուրիշ «Փարիզի Աստուածամայրը», որ դրած կը լինէր մի ուրիշ Հիւգօ (ասենք՝ մի Պ. Մերիմէ դրած կը լինէր մի «Քրոնիկոն Շարլ Ցրդի ժամանակներից»):

Բայց երկրորդ «Դորվարդը» (ինչ անուն էլ կրի նա) երբեք չի կարող լրացնել «Աստուածամօր» պակասը, ինչպէս եւ երկրորդ «Աստուածամայրը» (ասենք՝ Մերիմէի «Քրոնիկոնը») երբեք չի կարող փոխարինել բացակայող «Դորվարդը»: Չի կարող, որովհետեւ տարբեր տիպի դրական երկեր են սրանք:

Ուշադրութիւն դարձրէք այս խիստ կարեւոր հանդամանքի վրայ:

Ֆրանսիական վէպը՝ անկախ հեղինակից, նոյնը չէ, ինչ որ է անգլիականը. Ֆրանսիական վէպը՝ ե՛րբ եւ ո՛ւմ ձեռով էլ դրուած լինի, մընում է միշտ ֆրանսիական ու միայն ֆրանսիական:

Հնարաւորութիւն չունեմ ապացուցանելու այս ճշմարտութիւնը եւ ոչ էլ կարիք, քանի որ նա վաղուց արդէն ճանաչուած ու հաստատուած է: Կասկածողներին խորհուրդ եմ տալիս թերթել

գրականութեան պատմութիւնն ուսուցանող առաջի պատահած ձեռնարկը կամ — որ աւելի լաւ է — յիշել, քննութեան առնել ու վերլուծել սեփական տպաւորութիւնները: Յիշեցէք ձեզ ծանօթ ֆրանսիական ու անգլիական հեղինակները, յիշեցէք նրանց երկերը (խօսքս մեծ հեղինակների ու գրական բարձր արժէք ունեցող երկերի մասին է, հարկաւ), համեմատութեան դրէք ձեր գիտցածը եւ կը տեսնէք — վստահ եմ, թէ կը տեսնէք, — որ կայ մի ուրոյն գիծ, մի առանձին համ ու հոտ, որ կապում է ի մի ամբողջ անգլիական գրականութիւնը եւ որոշակի բաժանում է ֆրանսիականից:

Կորնելն ու Մոլիերը, Ռուսոն ու Վոլտերը, Լը Սաժն ու Բօմարշէն, Շատօբրիանն ու Հիւգոն, Ստենդալն ու Բալզակը, Ֆլորերն ու Զոլան, Ռոստանն ու Ա. Ֆրանսը — տարբեր ժամանակների, տարբեր «դպրոցների», տարբեր տաղանդների ու տարբեր անհատականութիւնների վարպետներ են. բոլորն էլ սակայն ֆրանսիացի են, բոլորն էլ գրել են ֆրանսերէն լեզուով եւ այս իսկ պատճառով բոլորի երկերն էլ որոշակի դրոշմուած են նոյն ֆրանսիական ազգային դրոշմով: Տեսէ՛ք. նոյն յստակ կանոնաւորութիւնը կառուցուածքի մէջ, այսինքն՝ նոյն արհեստականութիւնն ու «վարպետութիւնը» նիւթի դասաւորման, գործողութեան զարգացման, հոգեբանական հիմնաւորումների ու նկարագրերի մէջ. ձեւի ու համաչափութեան նոյն

խիստ պահանջը, անխորտակելի բնազդը. նոյն վերացական, զուտ ուղեղային սրամաբանութիւնը, միշտ արթուն bon sensը եւ սուր, փայլուն espritն, ապա՝ կանոն, հաչիւ ու արհեստ՝ փոխարէն ազատ ու անզուսպ ստեղծագործութեան, վարպետական ձեւաւորում՝ փոխարէն կեանքի տարերային անկանոնութեան, ակադեմիական դեղեցկութիւն փոխարէն դեղանկարի, սրամտութիւն ու սրախօսութիւն փոխարէն կոմիզմի, կոմիզմ փոխարէն հումորի, հռետորական պաթոս փոխարէն հոգու աղաղակի...

Ի՛նչ խօսք, որ այս հիմնական գծերը արտայայտւում են շատ տարբեր ձեւերով տարբեր հեղինակների գործերի մէջ (ժամանակը, դպրոցը ու հեղինակի անհատականութիւնը դունաւորում են իրանց յատուկ գոյներով ազգային տիպը). բայց էականն այն է, որ տիպը կայ եւ ընդհանուր է բոլորի համար: Ուշադրութիւն դարձրէք, որ մեծ ռոմանտիկ Հիւգոն՝ ռոմանտիկական պաթոսիզմի զազաթնակէտին իսկ՝ մնում է հոգու խորքում նոյնքան զգաստ ու սառն որքան զգաստ ու սառն են դասական Կորնելն ու naturaliste (բնութապաչտ) Զոլան:

Ի՛նչ մեծ ու բնորոշ տարբերութիւն, եթէ համեմատութեան գնէք անգլիական գրուածքների հետ... Նոյնքան բնորոշ ու մեծ, որքան է տարբերութիւնը Վերսայլի պալատի ու Վինձորի ամրոցի միջեւ կամ Տիւլըրիի պարտէզի ու Լոնդոնի Հայդ-պարքի միջեւ:

Անգլիացին ու Ֆրանսիացին տարբեր աչքերով են տեսնում քնութիւնն ու կեանքը, տարբեր տեղեր են որոնում ու տարբեր ձեւերի մէջ գըտնում գեղեցկութիւնը: Վոլտերի համար Շէքսպիրը «վայրենի» է· իսկ Շէքսպիրը (եթէ ապրէր մինչեւ «Զաիիր»ի օրերը), անշուշտ կը յայտարէր Վոլտերի ողբերգութիւնները մտածածին ու չինծու, անկենդան ու տաղտկալի:

Անգլիացին ունի զգալու, ըմբռնելու, ու արտայայտուելու մի ուրոյն եղանակ, որ յատուկ է իրան միայն ու խորթ է, համարեա անմատչելի Ֆրանսիացուն: Եւ հակառակը:

Ապա՝ անգլիացու ազգային մտայնութիւնը անդրադարձել է իր լեզուի վրայ եւ անգլիերէնը միակ լեզուն է, որ ընդունակ է լրիւ ու հարազատօրէն արտայայտել անգլիացու ուրոյն մտայնութիւնը:

«Պիկվիկի արկածները» կարելի էր գրել միայն անգլիացին ու միայն անգլիերէն լեզուով, ինչպէս եւ «Սիրանօ դը Բերժերակ»ը կարելի էր գրել միայն Ֆրանսիացին ու միայն Ֆրանսերէն լեզուով:

Ազգային հանճարների ինքնատիպ արտայայտութիւններ են սրանք, որ օրգանապէս կապուած են ազգային լեզուների հետ:

Ոչ միայն գրական երկի մէջ, այլ եւ ընդհանրապէս լեզուն անբաժանելի է մտքից: Գիտէ՞ք, որ մարդը ոչ միայն արտայայտուում, այլ եւ

մտածում է լեզուով եւ որ լեզուն՝ խոչոր չափե-
րով՝ կաղապարում է միտքը: Պարադոքս չէր լի-
նի ասել, թէ Օգիւստ Կոնտը, Հանրի Պուանկարէն
ու Բերգսոնը մտածել են Ֆրանսերէն, իսկ Միլլը,
Սպենսերը կամ Լորդ Կելվինը՝ անգլիերէն...
Ի՛նչ հրաշալի գործիք էր Օ. Կոնտի ձեռին բիւ-
րեղի պէս յստակ ու ածելիի չափ սրած-յղկած
Ֆրանսերէնը՝ իր վերացական պոզիտիւիզմը ձե-
ւակերպելու համար. եւ ո՞վ կարող է ասել, թէ
այդ գործիքը ինքը ուղղութիւն չի տուել ուսուց-
չի մտքին: Մի քիչ վերապահօրէն եմ ասում,
բայց կարծում եմ, որ միտքը իսկապէս դիտակ-
ցում է ու ամբողջանում այն ժամանակ միայն,
երբ դտնում է համապատասխան խօսքը. խօսքի
մէջ չձեւաւորուած միտքը — կէս միտք է միայն,
մտքի սաղմ, պոտենցիա, բայց ոչ ինքը միտքը:

Լեզուն՝ ազգային անհատականութեան այդ
դերագոյն արտայայտութիւնը՝ դնում է իր ան-
ջնջելի դրոշմը մարդու մտքի վրայ ընդհանրա-
պէս, իսկ դեղարուեստական խօսքի վրայ՝ յատ-
կապէս ու առանձնապէս:

Մարդկային խօսքը — ալջեբրայական կամ
քիմիական ֆորմիւլ չէ, հնչիւններէ մի պայմա-
նական դասաւորում չէ այս կամ այն վերացա-
կան գաղափարը նշանակելու համար: Խօսքը հո-
գեկան կեանքի մի չատ նուրբ արտայայտութիւն
է, թրթռուն ու զգայուն: Խօսքը ծնւում է մտքի
հետ միասին, նրա հետ զուգընթացաբար զար-

դանում է, հասունանում, զօրեղանում:

Գիտեմ, հարկաւ, որ ամէնից աւելի գարգացած լեզուն անգամ՝ չատ թերի, չատ անկատար միջոց է հաղորդակցուելու, մտքեր ու ապրումներ փոխանակելու, հասկանալու եւ հասկացնելու համար: Բայց լեզուն անկատար է ճիշդ այնչափ, որչափ անկատար է ինքը միտքը. խօսքը տարտամ է ու անստոյգ այն պատճառով միայն, որ տարտամ ու անորոշ է իրան ծնունդ տուող միտքը: Երբ միտքը գիտակցուած է պարզօրէն ու ամբողջովին, նա գտնում է կամ յօրինում հարկաւոր խօսքը, — աւելի ճիշդ՝ այդ խօսքի մէջ է, որ գտնում է իր պարզումն ու ամբողջացումը:

II

Լեզուն հաւաքական ստեղծագործութիւն է եւ ստեղծագործող հաւաքականութիւնը ազգն է:

Հաւաքականօրէն ստեղծագործելու համար բաւական չէ սոսկ մեքանիքական կապակցութիւն (օրինակ՝ կենակցութիւնն նոյն պետական կազմի մէջ). պէտք են օրգանական կապեր, հոգեկան միութիւն: Հաւաքական կեանքը (կեանքը, եւ ոչ սոսկ կենակցութիւնը) երկար դարերի ընթացքում, սերունդից սերունդ ժառանգօրէն փոխանցուած հոգեկան տիպը, զգալու եւ մտածելու

ուրոյն եղանակը — սա՛ է, որ կազմում է ազգը եւ սա է, որ ծնունդ է տալիս լեզուներին: Լեզուները չեն շինւում գործարաններում անկենդան նիւթերից, ինչպէս շինւում է գրամոֆոնը եւ չեն յօրինւում գիտնականների խուցերում, ինչպէս յօրինւում է համբ–խուլերի այբբենը: Ոչ, լեզուները ծնւում են կենդանի օրգանիզմներից — ազգ մարմիններից — ինչպէս ծնւում է ամէն մի կենդանի էակ:

Էսպերանտոն (միջազգային, արհեստականօրէն չինուած, պայմանական լեզուն) լեզու չէ եւ երբեք չի կարող լինել, երբեք չի կարող փոխարինել կենդանի լեզուները:

Չեմ ուզում ասել թէ՝ ուրեմն՝ աւելորդ բան է Էսպերանտոն: Ոչ, նրա մեծ օգտակարութիւնը ու նոյնիսկ բացարձակ անհրաժեշտութիւնը ակներեւ է այնտեղ — բայց այնտեղ միայն, — ուր տարբեր լեզուների մարդիկ հաղորդակցութեան մէջ են մտնում՝ բովանդակութեամբ պարզ ու դունաւորումներից զուրկ մտքեր փոխանակելու համար:

Եթէ ես ափ եմ իջել Նազասակի նաւահանգըստում ու պէտք է հարցնեմ ճափոն ոստիկանից «Նիպոն» պանդոկի ճամբան, պարզ է, որ էսպերանտոն մեծ ծառայութիւն կարող է մատուցանել ե՛ւ ինձ, եւ ճափոն քաղաքապահին: Եթէ ես տեղեկութիւն պիտի առնեմ Բուէնոս–Այրէսից, թէ ի՞նչ գնի է ցորենը այնտեղի չուկայում. եթէ

Բլեբեկի մետեորոլոգիական կայանը (ենթադրում եմ թէ այդպիսի մի հիմնարկութիւն պիտի լինի Կանադայի մայրաքաղաքում) նախազգուշացնելու է Ատլանտեան ովկիանում դանուող բոլոր ազգի նաւերը, թէ Գրենլանդիայի ափերից, հիւսիս-արեւելեան ուղղութեամբ, առաջանում է մի ահարկու փոթորիկ. եթէ էյֆելեան աշտարակի գագաթից լուր պէտք է տալ աշխարհի չորս կողմը, թէ Վերսայլում կնքուեց խաղաղութեան դաշն Գերմանիայի հետ. եթէ դերման վիճակագիրները ուզում են հովացնել իրանց հայրենակիցների այրուած սրտերը, յայտարարելով ի գիտութիւն ամէնքի, որ ծննդաբերութիւնը Ֆրանսիայում 1922 թուականին կէս տոկոսով պակաս է եղել, քան նախորդ տարին. եթէ... Այս «եթէ»ների չարքը ընթերցողը ինքը կարող է երկարացնել՝ յօդուտ Էսպերանտոյի՝ որքան կամենայ: Ակներեւ է ու անհերքելի, որ այս կարգի պէտքերի համար Էսպերանտոն միանդամայն բաւարար ու չատ նպատակայարմար միջոց է հաղորդակցութեան:

Բայց ակներեւ է եւ այն, որ որքան էլ երկարացուի չարքը, այնուամենայնիւ դուրսը կը մնայ ապրումների մի ամբողջ աշխարհ, հաղորդակցելու մի ծով-կարիք, որի հանդէպ անզօր է Էսպերանտոն:

Կարո՞ղ էր Գրիգոր Նարեկացին ուղղել Աստծուն իր սրտի ողբը Էսպերանտօ լեզուով: Մեր

չատ սիրելի սըր Ջօն Ֆալստաֆը կարո՞ղ էր պատմել այդ լեզուով իր քաջագործութիւնները եւ ի՞նչ կը մնար խեղճ Ֆալստաֆից, եթէ նա նեղկայնար ընթերցողին Էսպերանտիստների բառարանից քաշած, անզիր արած բառերով: Կարո՞ղ էր Հայնէն զրել իր ա՛յնքան սրատուչ, այնքան դաղտրիկ երգերը Էսպերանտօ լեզուով: Այդ միջազգայնականի չինծու բառերը ու արհեստականօրէն կազմուած քերականութիւնը կարո՞ղ էին արտայայտել բանաստեղծի յուզումը, մտքի նրբութիւնները, պատկերների դունաւորումը ու արթնացնել մտքերի եւ պատկերների այն բարդ շաղկապումները, որոնց մէջն է խօսքի ոյժն ու ազդելու կարողութիւնը...

Մի՛ ասէք, թէ սրանք բանաստեղծներ են ու իրանց խօսքը՝ բանաստեղծական է:

Կենդանի խօսքը բանաստեղծական է առհասարակ ու ամէն մի մարդ՝ խօսելիս՝ բանաստեղծում է անգիտակցաբար, աւելի կամ պակաս չափով (նայած խառնուածքին): Բանաստեղծօրէն արտայայտուելու կարիքն ու ընդունակութիւնը՝ հիմնական յատկութիւններից մէկն է մարդու, նոյնիսկ չոր գիտնականների ու տրամաբանող փիլիսոփաների, — մի թուլութիւն՝ եթէ ուզում էք՝ որից ազատ չեն նոյնիսկ ատամնաբոյժները: Խօսքը պարունակում է իր մէջ ոչ միայն վերացական դաղափար, այլ նաեւ կենդանի պատկեր ու հոգեկան ապրում. յուզմունքի ծնունդ է խօսքը ու յուզմունքի աղբիւր:

Ահա մի երիտասարդ մայր, որ սեղմել է կուրծքին հիւանդ զաւակի գլուխը ու՝ աչքերը լի արտասուքով՝ աչխատում է մեղմացնել փոքրիկի ցաւը իր մայրական գուրգուրանքներով. կարող է այս կինը փոխ առնել Էսպերանտօ բառարանից այն մաերիմ, այն անվերջ նուրբ, հոգուց պոկած խօսքը, որ արտայայտէր իր անհուն սէրը, վիշտն ու կարեկցութիւնը:

Մի ուրիշ երիտասարդ — այս անգամ մի այր մարդ — համբուրելու տենչից բռնկուած, երկինք ու երկիր վկայ է կանչում, որ սիրում է մի քիչ տատանուող օրիորդին աւելի, քան կարող են սիրել «քառասուն հազար եղբայրներ» միասին վերցրած եւ այդպէս սիրելու է մինչեւ վերջին չունչը... Կը հաւատա՞յ օրիորդը — Թո՛ղ որ Գրեթխենի չափ պարզամիտ ու Ջուլիետայի պէս բռնկուող լինէ նա — կ'ապաւինի՞ այս երդմանը, եթէ երկինքն ու երկիրը, սէրն ու վերջին չունչը Էսպերանտօ լեզուով են ասուած:

Զօրավարը — պատերազմի դաշտում, վճռական ժամին — կոչ է ուղղում զինուորներին՝ կանգուն մնալ, յաղթել կամ մեռնել հայրենիքի համար: Էսպերանտոն կարո՞ղ է ասել այդ խօսքը, որ պիտի զարնէ մարդկանց սրտերին ու մոռացնել տայ ապրելու անխորտակելի բնազդը:

Շիրակի գիւղացին կռւում է հարեւանի հետ, որ աւերել է իր արտը կամ զարկել, կոտրել է եղիտոը, — կռւում է ու թեթեւացնում սիրտը հո-

յակասել յիշողներով՝ մէկը մխսէց պատկերաւոր, մէկը մխսէց չչմեղուցիչ: Կարո՞ղ է այս կատաղած մարդը յիշել իրան տունը քանդողի հօրն ու մօրը, ու եօթը պորտը — Էսպերանտօ լեզուով...

Մայրայեղ յուզումների արտայայտութիւններ են սրանք, այո՛: Բայց, կրկնում եմ, ո՞րն է այն խօսքը, որ չունի իր մէջ — աւելի կամ պակաս չափով — յուզման տարր: Կեանքը լի է մանր ու խոշոր յուզումներով, հետեւապէս յուզումնալի է — ու պիտի՛ լինի — նաեւ խօսքը: Պատկերներն են — ու սրանց չաղկապումը, որ տալիս են խօսքին յուզելու կարողութիւն եւ արտայայտելու թափ:

Կրկնում եմ դարձեալ, սա այսպէս է ոչ միայն բանաստեղծական երկի կամ մեծ յուզումնէրի, այլ եւ սովորական, հանդիստ խօսակցութեան մէջ: Ահաւասիկ՝ մի քանի տեղ վերեւ՝ ես դրեցի «իր տունը քանդողը» ու «եօթը պորտ» խօսքերը: Զգիտեմ, թէ իմ տեղը ի՞նչպէս կ'արտայայտուէր Էսպերանտիստը: Բայց դիտեմ հաստատ, որ ի՛նչպէս էլ դրելու լինէր, նրա խօսքը՝ ինձ ու իմ ընթերցողի համար՝ բնաւ չէր լինի այն, ինչ որ է հայերէն «տուն քանդողը» ու «եօթը պորտը»:

Էսպերանտոն — որքան էլ կատարելագործուի ու որքան էլ տարածուի — չի կարող փոխարինել կենդանի լեզուները:

Եւ մի կենդանի լեզու — որքան էլ հարուստ

աւ ճկուն լինի այն — չի կարող փոխարինել մի ուրիշ կենդանի լեզու։

III

Լեզուները անփոխարինելի են։

Եւ անթարգմանելի։

Հայ խօսքը — հայերէն միայն կ'ասուի։ Եթէ ուզենանք թուրքերէն ասել՝ ուրիշ բան *պիտի ա-սենք (նման, բայց ուրիշ)։*

Traduttore — traditore (*թարգմանիչը դաւա-ճան է*), *ասում է իտալական առածը։*

Եթէ լաւ թարգմանես — ասում է իր հերթին Վ. Հիւգոն — ճիշդ չի լինի։ Եթէ ճիշդ թարգմա-նես՝ լաւ չի լինի։

Նրբութիւններ են սրանք, որ թերեւս անկա-րելի է վերլուծել ու բացատրել։ Բայց այս նըր-բութիւնների մէջ է խօսքի ամբողջ համը, յաճախ նաեւ ամբողջ իմաստը։

Եթէ ձեզ ծանօթ է Վ. Բրիւսովի կազմած (ռուսերէն լեզուով) «Հայաստանի պոէզիա» ա-նունը կրող չատ պատկառելի հաւաքածուն, նը-կատած կը լինէք անշուշտ, թէ ի՜նչ ողբալի այ-լակերպման ենթարկուած է այնտեղ խեղճ հայ բանաստեղծութիւնը։ Էլ չեմ խօսում Նահապետ Քուչակի կամ Սայեաթ Նովայի մասին, — նոյն իսկ Յ. Թումանեանի պէս մատչելի բանաստեղծը

անըմբռնելի կամ անթարգմանելի է եղել ռուս թարգմանիչների համար:

Թեբեւս Վ. Բրյուսովը ու իր աշխատակիցները չեն պիտցել կամ լաւ չեն դիտցել հայերէն եւ թարգմանել են երրորդ անձերի օգնութեամբ... բայց ահա մի ուրիշ օրինակ:

Տարիներ առաջ, Ախթամարի վանքում, մի չատ տաղանդաւոր ծերունի՝ կարճկանցի Յուդան թարգմանած էր ինձ համար քրդական երգեր: Անգրագէտ մարդ էր Յուդան, բայց մանկութիւնից վարժուած էր քրդերէնին — երկար տարիներ երգիչ էր եղել մի քուրդ ցեղապետի մօտ — իսկ հայերէնին (իր գաւառաբարբառին, հարկաւ) տիրում էր վարպետօրէն: Եւ ահա այս մարդը, որ ինքն էլ բնածին բանաստեղծ էր — բանաստեղծ «ողորմութեամբ Աստուծոյ» — մի մարդ, որի ամէն մի խօսքը բանաստեղծական էր, պատկերաւոր, հնչեղ, լիահնչիւն ու անարատ, այս երգիչ-աչուղը չէր դանում բառեր՝ քրդի երգը հայերէնի վերածելու համար: Թարգմանում էր, ասում, ուղղում իրան, որոնում ու փոխում խօսքը, կրկին փոխում ու — յուսահատւում. չէ՛, չեղաւ... այդպէս չէ... չի լինում... հայերէն չի ասուի... Մի տե՛ս, թէ ի՞նչ է ասում քուրդը: Ու մոռանալով, որ ես չեմ հասկանում քրդերէն, սկսում էր երգել ու ասել բնագիրը: Ասում էր ու ոգեւորւում, հիանում՝ ինձ համար անմատչելի դեղեցկութիւններով: Ու ապա հարցնում էր,

չուարած. ի՞նչպէս ասեմ սա հայերէն...

Կարճկանցի Խուդոն անզրաղէտ մարդ էր, քրդահայ գեղջուկի չատ սահմանափակ բառարանով եւ թարգմանածն էլ երգ էր, այսինքն՝ գեղարուեստական խօսքի ամէնից նուրբը: Բայց վերցրէք մի լաւ գրագէտ եւրոպացի, մի հմուտ ու չնորհալի թարգմանիչ, որի տրամադրութեան տակ է իր լեզուի ամբողջ հարստութիւնը ու թարգմանածն էլ՝ բանաստեղծութիւն չէ: երեւոյթը՝ իր էութեամբ կը մնայ նոյնը:

Ահա Լ. Տոլստոյի բարոյա-փիլիսոփայական մի գրուածք: Դէպքի բերումով, ինձ պատահել է կարդալ այդ գրուածքներից մի-երկուսը ֆրանսերէն լեզուով: Կարդացել եմ ու չեմ հաւատացել աչքերիս. մի՞թէ այս է ասել ու այսպէս է ասել Տոլստոյը... Ո՛րքան եմ զարմացել ու ո՛րքան հետաքրքրուել որ — Փարիզում — որոնել եմ ու գտել բնագիրը ու մի քանի գլուխ ուշիուշով համեմատել եմ թարգմանութեան հետ: Այո՛, կարծես թէ ճիշդ է. մարդը բարեխղճօրէն հետեւել է հեղինակին ու բարեխղճօրէն փոխարինել է ռուսերէն բառերը ֆրանսերէններով: Փոխարինել է ու — մեռցրել, սպանել է մեծ ծերունու կենդանի խօսքը:

Տոլստոյի անհանգիստ, միշտ որոնող, յանդուգն, խոր ու զօրեղ միտքը — այն իսկ միտքը, որ՝ ռուսերէն արտայայտուած լարում է, յուզում ու պաչարում ընթերցողի ամբողջ հոգին

(Թո՛ղ որ ըմբռստացնի, պաշարելով) — ֆրանսերէնում վերածուել է մի չարք չոր ու ցամաք դատողութիւնների, չատ խեղճ ու չատ անզօր: Հանճարեղ ու խիզախ պարադոքսների փոխարէն — պարադոքսների, որ այնքա՛ն մօտ են գերագոյն ճշմարտութեան — ֆրանսերէն թարգմանութեան մէջ ընթերցողը գտնում է միայն ողորմելի սոփիզմներ, պարապ մտքի պարապ մարզանք: Բառերը նոյնն են, բայց խօսքը չատ տարբեր է... Եթէ թարգմանիչը (մոռացել եմ անունը) ունենար կարճականցի Մուդոյի նրբազգացութիւնը, անպատճառ պիտի ճգէր գործը կիսկատար, պիտի մտածէր՝ յուսահատ. չէ՛, այսպէս չէ... ֆրանսերէն չի ասուի:

Ռուս է Տոլստոյը, ռուսերէն է մտածում եւ իր միտքը արտայայտելու համար պէտք է ռուսերէն լեզուն, — ֆրանսերէնն անզօր է:

Խտացնում եմ, անչուշտ: Իրականութիւնը ճշդօրէն ներկայացնելու համար՝ մի չարք ուղղումներ ու վերապահումներ պէտք է մտցնէի խօսքիս մէջ: Բայց մասնակի ուղղումները չէին խախտի հիմնական փաստի ոյժը — այն, որ լեզուները անթարգմանելի են:

Եւ սա չատ հասկանալի է, — ուզում եմ ասել՝ չատ հասկանալի է ինձ համար: Եթէ ես ճիշդ եմ ըմբռնել ազգի եւ լեզուի էութիւնը, եթէ ազգային հաւաքական անհատականութիւնը ունի իր ինքնատիպ հոգեբանութիւնը եւ եթէ լեզուն

ազգային ստեղծագործութիւն է, որ կաղապարուած է իր հեղինակի առանձնայատուկ կաղապարով, — ապա ուրեմն պարզ է, որ թարգմանութիւնը անխուսափելիօրէն պիտի աղաւաղի միտքը, գրկի նրբութիւններից, այսինքն՝ մի բանից, որ թերեւս ամէնից արժէքաւորն է կենդանի խօսքի մէջ:

Ահա իմ սեղանի վրայ են Շէքսպիրի «Օտելլո»ն, «Համլէտ»ն ու «Վենետիկի վաճառականը», որ թարգմանել է հայերէն Յովհաննէս Խան Մաւէհեանը: Գիտեմ, թէ ի՛նչ մեծ խնամքով կատարել է իմ մեծարգոյ բարեկամը այս խիստ կարեւոր գործը, թէ ո՛րքան մանրակրկիտօրէն ուսումնասիրել է բնագիրը եւ թէ ո՛րքան վարպետ է հայերէնի մէջ: Բայց ես ճանաչել եմ ու սիրել Շէքսպիրը ռուսերէն եւ Մաւէհեան Խանի հայերէն թարգմանութիւնը ձգում է ինձ ծանր տարակուսանքների մէջ. իմ գիտցած Շէքսպիրը չէ սա...

Ճիշդ նոյն զգացումն ունեցել եմ եւ այն ժամանակ, երբ կարդացել եմ Ֆրանսերէն թարգմանութիւնները: Բնագիրը — իսկական Շէքսպիրը — անմատչելի է ինձ: Բայց չեմ կասկածում, որ եթէ մի անդլիացի կարդար իմ կարդացած ու սիրած ռուսերէն թարգմանութիւնները, պիտի ասէր անպատճառ, որ ռուսերէնն էլ նոյնքան իր Շէքսպիրը չէ, որքան եւ Ֆրանսերէնն ու հայերէնը:

Traduttore — traditore...

Նկատեմ անցողակի, որ այս ճշմարտութիւնը վերաբերւում է ոչ միայն դրական երկերին: Ահա երկու օրինակ բեմական արուեստից:

Տեսել եմ, ինչպէս Սարա Բերնարը ներկայացնում է Շէքսպիրի «Կլէոպատրան» ու չեմ ճանաչել ինձ ա՛յնքան ծանօթ եգիպտական թագուհուն. տաղանդաւոր դերասանուհին փրանճիա-կանացրել էր անգլիական ստեղծագործութիւնը ու դրանով իսկ դաւաճանել էր հեղինակին: Սանձարձակ, անզուսպ վայրի, էստետիկական օրէնքներից ու կանոններից դուրս Շէքսպիրը անընդունելի է ֆրանսիացու համար: «Մեծ Սարան» չէր կարող ներկայացնել իսկական Շէքսպիրը, — պէտք է անպատճառ կոկէր, սանտրէր, ներկէր... Իսկ եթէ կարողանար էլ, չպիտի համարձակէր: Չպիտի համարձակէր՝ օրինակ՝ ծեծել բեմի վրայ սարուկին. ունկնդիր սրահը իսկոյն կ'ըմբոստանար այդպիսի դառնհութեան, այդպիսի «տգեղութեան» դէմ, որ թոյլատրելի է — ծիծաղեցնելու համար — ֆարսի մէջ, բայց երբեք՝ ողբերգութեան:

Տեսել եմ Օտէոն թատրոնում Գէօթէի «Ֆաուստը», մեծ ծախքերով ու մեծ խնամքով բեմադրուած: Եւ ի՞նչ: Գերման հանճարի տիեզերական ողբերգութիւնը բեմի վրայ իբրեւ մի չքեղ դիւթանք, շատ հաճելի աչքի համար, բայց — այդքան միայն: Գէօթէի շունչը չկար, մնացել

էր նրա ստեղծագործության անկենդան կմախքը, մի չատ հարուստ լիբրետո, որ առատ նիւթ էր տուել բեմական ամէն տեսակ effetների ու trucների համար:

IV

Ֆրանսիացի դերասանն ու ֆրանսիական բեմը չէն կարող ներկայացնել անգլիական կամ գերմանական ողբերգութիւն — ճիշդ այնպէս, ինչպէս Ֆրանսիացին չի կարող խօսել անգլիերէն կամ գերմաներէն:

Ի՞նչպէս թէ չի կարող... Չէ՞ որ հազարաւոր ու հազարաւոր Ֆրանսիացիներ խօսում են իրանց հարեւանների լեզուները:

Այո՛, խօսում են: Բայց խօսում են այնպէս, ինչպէս պարսիկ սազանդարները նուագում են Շոթառուսի վալսերը ու ինչպէս հանդուգնեալ Ազդուլ Բազին երգում էր Թիֆլիսում մոփալաֆնեբի համար ռուս-ցիգանական ռոմանսներ:

Պարադոքս է թւում սա: Բայց եթէ մի քիչ մտածէք, թերեւս համաձայնէք ինձ հետ, որ օտար լեզուն իսկապէս անմատչելի է մարդու համար, որ սովորելով չի կարելի իւրացնել ուրիշի լեզուն:

Ես մեծացել եմ ու ապրել այնպիսի հայ չըրջանի մէջ, ուր տիրապետողը եղել է ռուս լեզուն:

Ճանաչում եմ հայեր — ինքս էլ մէկն եմ նրանցից — որոնք «չատ լաւ» խօսում են ու գրում ռուսերէն: Բայց մեր «չատ լաւը» այնուամենայնիւ չի եղել ռուսերէն. մեզ պակասել է այն ուրոյն ոգին, որ ա՛յնքան բնորոշ է, այնքան հրապուրիչ ու այնքան արտայայտիչ իսկական ռուս մարդու խօսքի մէջ:

Մի ժամանակ ռուս պահպանողականները վայնասուն էին բարձրացրել հրեայ հրապարակագիրների դէմ, որ մեծ քանակով հեղեղել էին պարբերական մամուլը ու խորթ, օտար տարրեր էին մտցնում ռուսերէնի մէջ: Եւ իրաւունք ունէին պահպանողականները. հրեաները իրօք վնասացնում էին, այլասերում Պուշկինի ու Տուրգենեւի լեզուն:

Ճանաչում եմ հայեր, որ մանկութիւնից խօսել են ռուսերէն ու միայն ռուսերէն, ուրիշ լեզու չեն դիտեցել: Բայց նոյնիսկ սրանց ռուսերէնը՝ ռուսերէն չի եղել:

Լսել եմ ու հաւատում եմ, որ Կեսարիայի կամ Ադանայի հայերը խօսում են անարատ թուրքերէն — թուրքի պէս ու թուրքի չափ: Բայց այս յաջողութեան հասնելու համար պէտք էր, որ մի քանի սերունդ անընդհատ ու անխառն թուրքերէն խօսէին, ինչպէս խօսել են Անատոլիայի այդ հայերը:

Գիտութիւն չէ լեզուն, որ երեխան սովորում է ընտանիքի մէջ կամ դպրոցում, այլ — խոշոր

չափերով — ժառանգութիւն է, որ իր հետ բերում է աչխարհ ծնած իսկ օրից: Թո՛ղ որ դեռ չկարողանայ թոթովել բառեր ու կապել նախադասութիւններ. ապագայ լեզուի էական տարրերը, հոգեբանական հիմքը պինդ նստած են նրա փոքրիկ ուղեղի մէջ: Խօսելու կարողութիւնը ու լեզուային առանձնայատկութիւնները նա ժառանգում է ծնողներից ճիշդ այնպէս, ինչպէս ժառանգում է ուրիչ հոգեկան ու մարմնական առանձնայատկութիւններ:

Գիտական հոգեբանութիւնը մի օր կը բացատրի անչուշտ (դուցէ եւ բացատրել է արդէն) այս չատ հետաքրքրական երեւոյթը: Եւ ես ամենեւին չեմ զարմանայ, եթէ գիտութիւնը գայ ապացուցանելու, որ ուղեղային որոչ կենտրոնների կամ սրանք կազմող բջիջների անատոմիական անվերջ — մանր տարբերութիւնները ու փոխիսիոնների անչափ նուրբ առանձնայատկութիւնները — տարբերութիւններ ու առանձնայատկութիւններ, որ անցնում են ժառանգաբար ներունդից սերունդ — բնորոչում են մարդու լեզուն:

Ինչո՞ւ պիտի զարմանամ: Ժառանգականութեան երեւոյթները չատ հարուստ են նման օրինակներով: Ահա մէկը: Իմ հօր նայուածքը մի առանձին արտայայտութիւն էր ստանում, երբ նա հետեւում էր ուչադրութեամբ որեւէ խօսակցութեան կամ ընկնում էր մտածումների մէջ: Ունքերի մի աննչան չարժում կերպարանափոխում

էր ղէմքը, մտցնում էր մի փոփոխութիւն, որ անկարելի է նկարագրել բառերով, բայց որը շատ բնորոշ էր իր համար: Նոյն արտայայտութիւնը ունեմ ես, ունեն եւ իմ տղաները: Մտածեցէ՛ք. մկանունքային մի չնչին չարժում, որ հետեւանք է այսինչ նեարդների ուրոյն գրգռման եւ ուղեղային ուրոյն թելադրանքի — այս չատ բարդ, անչօշափելի մանր ու աննկարագրելի նուրբ գործողութիւնը անցնում է ժառանգաբար պապից թոռներին:

Սա պակաս առեղծուած չէ, քան իմ ենթադրած լեզուային առանձնայատկութիւնների ժառանգումը:

Ահա մի ուրիշ օրինակ, որ աւելի մօտ է մեզ հետաքրքրող խնդրին: Ծօսելիս կամ գրելիս՝ ես կազմում եմ ընդհատ կարճ-չունչ, կէտադրութիւնով ծանրաբեռնուած նախադասութիւններ, սա իմ ոճն է: Նոյն առանձնայատկութիւնը — չատ խոշոր չափերով — ունեն նաեւ իմ զաւակները: Սխալ կը լինէր վերագրել այս երեւոյթը դաստիարակութեան կամ երեխաներին յատուկ ընդօրինակելու յատկութեան: Սխալ կը լինէր, որովհետեւ ընդօրինակելու համար կային չատ աւելի գայթակղեցուցիչ օրինակներ. մօր, աւագ ընկերների, ուսուցիչների, դասագրքերի ու ընթերցանութեան դրքերի օրինակները: Մնում է ենթադրել, որ իմ զաւակները ոչ թէ ընդօրինակել, այլ ժառանգել են ինձանից՝ նախադասու-

թիւններ կազմելու, խօսելու ու գրելու ոճը:

Երեւակայեցէք, թէ այդպիսի ժառանգութիւն ունեցող երեխան վակուում է մի դիչերօթիկ դպրոցի մէջ, ուր իշխում է հակառակ ոճը, ուր սովորեցնում են ու պահանջում՝ երկար ու սահուն պարբերութիւնները: Ի՞նչ կը լինի հետեւանքը: Այն, որ երեխան, լեզուի վերաբերմամբ անընդունակ ու յետամնաց աշակերտ կը նկատուի: Նրա դպրոցական չարադրութիւնները «վատ» կը լինեն գրուած, չեն դոհացնի ուսուցիչներին: Եւ իրօք վատ կը լինեն. ժառանգութիւնն ու դպրոցը՝ փոխանակ օդնելու իրար, կռուի կը բռնուեն, կը խանգարեն ու կը կաչկանդեն մէկը միւսին: Երեխան բնազդային պահանջ ունի՝ կարել խօսքը, չուտով կէտ դնել: Բայց չի դնում, աշխատում է երկարացնել ու կլորացնել պարբերութիւնը, որովհետեւ իրան ներշնչել են թէ ա՛յդ է «լաւը»: Ու բնականօրէն չի յաջողում՝ ոչ «լաւի», ոչ «վատի» մէջ:

Նման մի երեւոյթ տեղի է ունենում, երբ մարդ հարկադրւում է իւրացնելու օտար լեզու. հինն ու նորը, սեփականն ու օտարը, բնածինն ու արհեստականը խառնւում են իրար, չէզոքացնում ու անդօրացնում միմեանց:

Ասել եմ արդէն ու կրկնում եմ դարձեալ, որ չի կարելի մտածել հայերէն ու խօսել ռուսերէն. ռուսերէն լաւ խօսելու համար պէտք է որ մարդ նաեւ մտածի ռուսի պէս — այսինքն՝ ռուս լինի:

Ահա թէ ինչու հայը — որչափ նա հայ է — չի կարող խօսել ռուսերէն:

Ռուսերէնը իւրացնել չի կարող, բայց կորցնել կամ փչացնել իր սեփական լեզուն՝ կարող է հեշտօրէն:

Ես չեմ կարող խօսել ու գրել ռուսի պէս. իմ հայ լինելը անդրադառնում է լեզուիս վրայ ու խանգարում ռուսերէնին: Միւս կողմից՝ երկար տարիների վարժութիւնը եւ ռուսերէն խօսելու սովորութիւնը փչացրել են անդարմանելիօրէն իմ հայերէնը: Ռուսերէն խօսում եմ հայավարի, հայերէն գրում եմ ռուսավարի: Իմ տիպի ու իմ դպրոցի մարդիկ՝ կէս–լեզուի մարդիկ են: Մի մեծ դժբախտութիւն է սա, — կ՛ասեն մեծ այն իսկ պատճառով, որ մնում է սովորաբար աննկատելի: Մենք այնքան ենք վարժուել այդ չինծու անզօր ու անարտայայտիչ կէս–լեզուին, որ կորցրել ենք (կամ կորցնելու վրայ ենք) ա–ռողջ լեզուի բնազդը: Դժբախտութիւն է, որով–հետեւ զրկուած ենք արտայայտուելու ամէնից զօրեղ միջոցից՝ կենդանի, հարազատ ու լիահըն–չուն խօսքից:

Այս կէս–լեզուն՝ անմիջական հետեւանքն ու ամէնից բնորոշ արտայայտութիւնն է սկսուած ապազգայնացման, ազգային այլասերման: Այն–տեղ, ուր նկատւում է այդ երեւոյթը՝ ազգը վը–տանգուած է լրջօրէն: Զարդանալով, նա տանե–լու է անխուսափելիօրէն դէպի ոչնչացում...

V

Եւ ահա մենք վերադարձանք նոյն սկզբնական կէտին ու նոյն հարցին. ինչո՞ւ չոչնչանան ազգերը... Թո՛ղ ոչնչանան: Ո՞ւմ եւ ինչի՞ համար հարկաւոր է նրանց գոյութիւնը:

Ցիշեցնեմ.

Ազգը — մշակոյթ է: Ազգի կորուստը — մի ուրոյն մշակոյթի ու ամէնից առաջ մի ուրոյն լեզուի կորուստ է: Իսկ լեզուի կորուստը — գերականութեան կորուստ է, այսինքն՝ մտածելու, զգալու եւ արտայայտուելու մի յատուկ ձեւի կորուստ:

Կորցնելով այս կամ այն ազգութիւնը, մարդկութիւնը կորցնում է մշակութային տիպերից մէկը, մարդկութիւնը աղքատանում է:

Մշակութային առաջադիմութիւնը պայմանաւորւում է գլխաւորապէս բազմազանութեան աճումով ու բազմազանութեան մէջ ներդաշնակութիւն գտնելու կարողութիւնով: Որքան աւելի բազմազան է ոեւէ հաւաքականութիւն ու ներդաշնակ իր բազմազանութեան մէջ, այնքան աւելի հարուստ է ներկայում ու այնքան աւելի բեղմնաւոր կարելիութիւններով՝ ապագայի համար:

Ազգային հաւաքականութիւնները — համա-

մարզկային ընկերութեան մէջ գոյութիւն ունեցող բազմազանութեան արտայայտութիւններից մէկն են, չատ կարեւորը, անփոխարինելին: Ազգերի վերացումը (որքան դա տեղի է ունենում պատմութեան մէջ) յետադիմական երեւոյթ է եւ ո՛չ առաջադիմական:

Պարզից դէպի բարդը, միակերպութիւնից դէպի բազմապիսութիւն — սա է տիրող օրէնքը ե՛ւ բնախօսական ե՛ւ ընկերային կեանքում:

Պարսիկը երգում է միաձայն: Նոյնը եւ հընդկիկը, նոյնը եւ հայ գեղջուկը: Եթէ քառասուն պարսիկ երգեն խմբովին, բոլոր քառասունն էլ կ'երգեն ունիսոն (նոյնիսկ պարզ օկտաւի դրոծադրութիւնը անծանօթ է այս երգիչներին): Զայների բաժանումը ու բաժանուած ձայների ներդաշնակը նրանց ակորդը խորթ է ու անմատչելի պարսիկի ականջի համար: Նա գիտէ միայն մի ներդաշնակութիւն, ամէնից պարզը՝ ունիսոն:

Բայց իտալացին, գերմանացին կամ ռուսը ունեն ու սիրում են բազմաձայն երգեցողութիւն, մելոդիան բարդացնում են հարմոնիայով. հիմնական մելոդիայի վրայ աւելացնում են զուգընթաց մելոդիաներ:

Արդ, ամէն կասկածից վեր է, որ գերմանական երաժշտութիւնը՝ իրրեւ տիպ կամ իրրեւ զարգացման աստիճան՝ աւելի բարձր է, քան պարսկականը, — աւելի հարուստ է արտա-

յայտուելու միջոցներով, աւելի լրիւ է ու բազմակողմանի:

«Զարդահն» ու «Մաուրը» կարելի է երգել մի ձայնով կամ նուագել մի գործիքի վրայ (թէեւ այստեղ էլ մարդկային ձայնը կարիք ունի նուագի օգնութեան եւ թառը՝ քամանչի ընկերակցութեան): Ջանի դեռ մարդու երաժշտական զարգացումն ու պահանջը կանգնած են «Զարդահի» բարձրութեան վրայ, միաձայն երգն ու նուագը կարող են գոհացնել նրան: Բայց երբ անցնում է այդ սահմանը՝ անհրաժեշտ են դառնում արտայայտուելու աւելի բարդ ձեւեր ու միջոցներ: Եւ ահա soloի կողքին զարգանում է ու հաստատուում duo, trio quartetto ու աւելի բազմաձայն համբաւորումները, իսկ թառին փոխարինում է լիահնչուն ակորդների ընդունակ դաշնամուրն ու օրգը:

Բայց սրանք էլ անզօր են բաւարարելու միշտ աճող պահանջը: Շոպէնի սոնատները ու Լիստի ռապսոդիները նուագելու համար դաշնամուրը միանգամայն ձեռնհաս գործիք է: Բայց Բեթհովէնի սիմֆոնիները ու Վագների օպերաները պահանջում են արդէն մեծ օրքեստրներ, բազմազան ու բազմահնչուն գործիքներով — «Պարսիֆալի» հսկայական չինուածքը չի կարելի տեղաւորել ոչ դաշնամուրի, ոչ իսկ օրգի մէջ:

Մարդկութիւնը — օրքեստր է, որ նուագում է միշտ աճող ու միշտ բարդացող կեանքի մեծ

սիմֆոնիան: *Ազգութիւնները — այդ օրքեստրը կազմող գործիքներն են: Ազգութիւնները՝ ամէն մէկը իրան յատուկ ձայնով ու իր առանձին մեղադիայով՝ պէտք է լրացնեն իրար, որպէսզի հասանելի անեն երաժշտութեան ամենավեհ բարձունքները:*

Գործիքները պիտի լինեն ոչ միայն բազմաթիւ, այլ եւ անպատճառ բազմատեսակ:

Երեւակայեցէք մի չատ մեծ օրքեստր, որ բաղկացած է մի տեսակի գործիքներից միայն — թո՛ղ այդ գործիքը լինի ամէնից կատարեալը, ասենք՝ չութակը: Երկու հարիւր չութակ ու երկու հարիւր չութակահար... Պարզ է, որ սա օրքեստր չէ կամ չատ անկատար օրքեստր է, որովհետեւ երաժշտական մտքի բազմակողմանի ու լրիւ արտայայտութիւնը մնալու է անմատչելի սրան. չութակը — հարիւր չութակը, հազար չութակը միասին — անզօր է այնտեղ, ուր պէտք են տրոմբոնների պղնձեայ կոչը, յաղթական ֆանֆարը, կոնարբասների խուլ մռնչիւնը կամ թմբուկների որոտը:

Լսել եմ մի անեկդոտ, որ յիշելու է այստեղ:

Մի հացկերոյթի ժամանակ, լինչ որ բարձրաստիճան ռուս հոգեւորական իրը թէ ակնարկներ է արել Մրիմեան Հայրիկին՝ եկեղեցիները միացնելու մասին: Ի՞նչ լաւ կը լինէր, ասել է, եթէ մի օր վերանար դաւանանքների տարբերութիւնը եւ բոլոր քրիստոնէական եկեղեցիները

հաւաքուէին ընդհանուր Մայր Եկեղեցու ծոցը (հասկանալի է, որ այդ «մայրը» — ռուս օրթոդոքս եկեղեցին է. «միութեան» իդէոլոգները միշտ իրանց միացնելու քարոզիչներ են)։ Ու Յրիմեանն էլ իբր թէ պատասխանել է, ցոյց տալով սեղանի վրայ մի չքեղ ծաղկեփունջ. նայեցէ՛ք այս փունջին։ Տեսէ՛ք, որքան բազմազան են Աստուծոյ ծաղիկները — տարբեր գոյների, տարբեր ձեւերի, տարբեր բուրմունքի... Մի՞թէ փունջը աւելի գեղեցիկ կը լինէր, եթէ ունենայինք միայն կարմիր վարդեր կամ միայն ճերմակ շուշաններ...

Ըստ իտալական առածի՝ եթէ ճիշդ էլ չէ, շատ լաւ է յօրինուած այս աւետարանը։

VI

Այո՛, բայց ի՞նչ արժէք ունեն ինձ համար այս աւելի կամ պակաս սրամիտ համեմատութիւնները ու աւետարանները, ծաղկեփունջն ու օրբեատը, վարդն ու շուշանը, ջութակն ու թմբուկը, — նոյնիսկ մարդկութիւնն ու մարդկային հանրութիւնը... Ես ոչ ծաղիկ եմ, ոչ երաժշտական գործիք ու բնա՛ւ ցանկութիւն չունեմ տրամադրելու իմ անձը՝ գերագոյն ներդաշնակութիւնների հասնելու նպատակին։

Թո՛ղ համամարդկային հաւաքականութիւնը կարիք ունենայ տարբեր ազգութիւնների, ինչպէս օրբեատրը կարիք ունի տարբեր գործիքների։ Թո՛ղ մարդկութեան չահերը պահանջեն, որ ես լինեմ ու մնամ հայ...

Ես ինչո՞ւ պիտի յարդեմ այդ կարիքը կամ ենթարկուեմ պահանջին։ Ես ապրում եմ ինձ համար, ծանրաբեռնուած ու մտահոգուած իմ անձնական հոգսերով եւ — ներեցէ՛ք — բաւական անտարբեր եմ մարդկութեան ապագայի հանդէպ։

Ես մի հայ մարդ եմ ու ուրիշ երկու–երեք միլիոն հայ մարդկանց հետ կազմում եմ հայ ազգը։ Թերեւս ճիշդ է, որ այս ազգի գոյութիւնը հարկաւոր է համամարդկային ամբողջութիւնը լրացնելու համար, ինչպէս օրբեատրի մէջ հարկաւոր է կոնտրբասը՝ առաջի ջութակներին ձայնակցելու համար։ Բայց ես՝ իբր կոնտրբաս ինչո՞ւ պիտի ձգտեմ յաւերժացնելու իմ կոնտրբասային դերութիւնը։ Ինչո՞ւ պիտի մնամ կանգնած օրբեատրի յետին չարքերում ու չարունակ «վը՛ֆ–վըֆ, վը՛ֆ–վըֆ» անեմ... Աւելի լաւ չէ՞ — ինձ համար աւելի լաւ չէ՞, որ խառնուեմ ջութակներին ու նրանց հետ միասին նուագեմ առաջնորդող մելոդիան։

Անշուշտ, պարապ բան կը լինէր պահանջել ինձանից, որ գիտակցօրէն ու կամովին հրաժարուեմ իմ սեփական, իմ անմիջական կարիքներից՝ համամարդկային հեռաւոր նպատակների սիրոյն։

Զանգուածային եւ տեւողական երեւոյթները չեն կարող ու չպիտի հիմնուած լինեն անհատների կամ հաւաքականութիւնների զոհաբերութեան վրայ — այնչափ, որչափ դա կախուած է անհատի կամ հաւաքականութեան ազատ ընտրութիւնից (իսկ մեզ հետաքրքրողը հենց այդ ազատ ընտրութիւնն է)։

Ոչ մի ներքին ոյժ — բացի բնախօսական կամ ընկերային բնազդից — չի կարող հարկադրել մարդուն այդ կարդի ինքնամոռացութեան։ Իսկ արտաքին ոյժի, այսինքն բռնութեան գործադրութիւնը ե՛ւ չատ դժուար է, ե՛ւ ոչ միշտ արդիւնաւոր։ Ճիշդ է, հանրային կեանքը պահանջում է իր անդամներից մանր ու խոշոր զոհաբերութիւններ։ Բայց այդ պահանջը իրականանում է — տեւականօրէն ու կամովին — այնչափ մեայն, որչափ զոհաբերողը ինքը օգտւում է հանրութիւնից ու գիտէ այդ։

Տուողը պիտի ստանայ։ Հակառակ դէպքում՝ չի տայ կամ — յամենայն դէպս — չի տայ յօժարակամ, կը դիմադրէ, կ՚որոնի ու կը գտնի միջոցները՝ չտալու համար։

Ո՞վ կարող է ստիպել, որ ես մնամ հայ, եթէ դերադասում եմ լինել անգլիացի կամ գերմանացի։ Եւ ինչո՞ւ պիտի մնամ հայ, եթէ տեսնում եմ, որ գերմանացի կամ անգլիացի լինելը աւելի լաւ է, քան հայ լինելը։

Այս հարցը — որ ա՛յնքան օրինական է թը-

ւում — իրօք հիմնուած է պարզ թիւրիմացութիւնների վրայ։

Առաջի ու ամենամեծ թիւրիմացութիւնն այն է, թէ ես իբր թէ կարող եմ, ըստ ցանկութեան, փոխել իմ ազգութիւնը — ոչ թէ ապազգայնանալ, ազգայնօրէն այլասերուել այս կամ այն չափով (նպաստաւոր պայմաններում կարող եմ անել այդ), այլ սեփականացնել մի օտար ազգութիւն, իմ «վատը» փոխարինել ուրիշի «լաւով»։

Այո, չատ կ'ուզենայի, որ գերմանացի լինեմ, — Գէօթէի, Էմմանուէլ Կանտի, Վագների ու Բիսմարկի ազգակիցը եւ լիակոկորդ գոռամ ահաբեկուած մարդկութեան երեսն ի վեր. Deutschland, Deutschland uber alles !

Գայթակղեցուցիչ է երգը, ի'նչ խօսք...

Բայց իր ժամանակին ոչ ոք դլխի չի ընկել հարցնելու իմ ցանկութիւնը եւ, երբ բաց արի աչքերս, տեսայ որ — հայ եմ, անբուժելի հայ։

Ի՞նչ անեմ այս անջնջելի փաստի հանդէպ։

Շատ կ'ուզենայի, որ մաղերս դեղին լինեն — Լոհենգրինի ոսկեթել մաղերի պէս։ Բայց իմ մաղերը սեւ են (աւա՛ղ էին...)։ Ի՞նչ անեմ, ո՞ր ջուրն ընկնեմ։ Կարող եմ, հարկաւ, մի քիչ դեղին ներկ առնել հարեւան խանութպանից ու ամէն առաւօտ–երեկոյ խնամքով ներկուել։ Բայց տեսէ'ք, որ դրսից fuած ոչ մի ներկ — ամէնից թանկագինն անգամ — չի կարող տալ իմ մազերին այն հաճելի գոյնն ու բնական փայլը, որ յա-

տուկ են Լոհենգրինի մազերի ներքին pigmentationին եւ որ ա՛յդքան դայթակղեցրել են ինձ:

Շատ կ՚ուզենայի, որ օրհեստրի մէջ նուագեմ առաջի ջուրթակը: Բայց՝ մանկուրթիւնից՝ իմ հօր տան մէջ դրել եմ մի փոքրիկ սրինգ միայն, ջուրթակ չի եղել այնտեղ: Ի՞նչպէս անեմ: Կարող եմ, ի հարկէ, դէնը ձգել իմ պապենական դործիքը ու արտասահմանից մի հատ լաւ ջուրթակ բերել տալ: Այդ կարող եմ անել:

Բայց խնդիրը դրանով չի լուծւում. բաւական չէ ջուրթակ ունենալը, պէտք է նաեւ կարողանամ խօսեցնել այդ փայտի կտորը, չունչ ու կենդանուրթիւն տամ նրան, հնչեցնեմ իր մէջ թաքնուած մեղեդիները: Եւ ահա ա՛յդ է, որ չի յաջողւում ինձ:

Մեր թաղում, սերունդից սերունդ, չարունակ սրինգ են նուագել մարդիկ, սրինգով է սընուել իմ ականջը ու մատներս էլ չինուած են սրբինգի ծակերի համար, չեն յարմարւում ջուրթակի լարերին... Արտասահմանեան թանկագին դործիքը իմ ձեռում կորցնում է կարծես իր չնորհքը, երաժշտական ամբողջ կարողուրթիւնը, ողբալիօրէն ճռռում է ու ճչում՝ ինչպէս արբանցու վաղուց չիւղած սայլը: Նուագելիս՝ ես տանջում եմ ինձ, տանջում եմ ջուրթակը, տանջում եմ հարեւաններիս, որոնք չգիտեն ո՛ւր փախչեն իմ երաժշտուրթիւնից:

Ահաւասիկ մի հանգամանք, որ բարդացնում

է խնդիրը ու ծանր տարակուսանքների մէջ ձըգում ինձ։

Գերմանացի չեմ կարող դառնալ ես, որքան էլ ցանկանամ — իմ կարողութիւնից վեր բան է դա։ Շատ որ աշխատեմ — ու լաւագոյն դէպքում — մի տեսակ imitation պիտի յաջողեցնեմ, ոչ աւելին։

Արդ՝ որքան էլ նախանձեմ չիկահեր ասպետ Լոհենգրինին, պէտք է հասկանամ — եթէ մի պատառ խելք ունեմ գլխումս — որ իմ բնական սեւը աւելի լաւ է, քան խանութից առնուած դեղինը։ Աւելի լաւ է թէկուզ այն մի հատիկ պատճառով, որ իմ կեղծ ոսկեքաշով չպիտի կարողանամ դրաւել ոչ մի տառապող իշխանուհու սիրտ, որովհետեւ իշխանուհին իսկոյն կուահելու է, որ ես Լոհենգրին չեմ, այլ միայն ներկուած եմ ըստ Լոհենգրինի. իշխանուհիները այնքա՜ն խորամանկ են...

Ես՝ իմ սեւ մազերով, չատ աւելի խելացի կը վարուեմ, եթէ կեանքի մեծ բեմի վրայ բաւականանամ Ռոմէոյի դերով ու իմ հոգու դանձերը Ջուլիետտային նուիրեմ։ Այդ է իմ անելիքը։ Պէտք չէ, որ ներկեմ մազերս — կորած աշխատանք ու անյուսալի գործ է դա, — այլ որոնեմ ու գտնեմ դեղեցկութիւն հենց իմ սեւի մէջ՝ խընամեմ, կոկեմ, փայլեցնեմ ու աճեցնեմ այն, ինչ իրօ՛ք իմն է եւ իրական արժէք ունի թէ ինձ, թէ ուրիշների համար։

Շա՛տ աւելի դերադասելի է, որ ես լաւ նը-
ւագեմ իմ սրինգը, քան վատ՝ ուրիշի ջութակը:
Ճիշդ է, իմ սրինգի diapasonը ուզածիս չափ ըն-
դարձակ չէ, ձայնն էլ մի քիչ սուր է, չունի ջու-
թակի թաւիշը... բայց եւ այնպէս՝ երաժշտա-
կան է ու հաճելի ականջի համար: Վերջապէս՝
մի բան կարող եմ նուագել սրինգի վրայ, մինչ-
դեռ ջութակի առջեւ մնում եմ չուար ու անօգ-
նական:

Դերադասելի է ե՛ւ օրքեստրի, ե՛ւ անձնապէս
ինձ համար:

Որքան էլ համեստ լինի իմ գործիքը, այնու
ամենայնիւ նա անհրաժեշտ է օրքեստրին, — ա-
ռանց սրինգի օրքեստրը օրքեստր չէ: Այստեղ է
իմ ու իմ գործիքի հանրային արժէքը: Միւս կող-
մից, որքան էլ սահմանափակ լինի (ջութակի հետ
համեմատած) սրինգի երաժշտական կարողու-
թիւնը՝ նա միակ գործիքն է, որ ընդունակ է հա-
րազատօրէն ու լրիւ արտայայտելու իմ հոգեկան
ուրոյն ապրումները, որովհետեւ իմ հոգին ինքը
կաղապարուած է «սրինգային» կաղապարով:
Այստեղ է իմ գործիքի արժէքը ինձ համար —
սրինգից զրկուած՝ վատ ու անպէտք երաժիշտ
եմ եւս:

Իմ սրինգը — այսինքն՝ ազգային մշակոյթն
ու ինքը ազգը — ժառանգական հարստութիւն է,
մի մեծ կապիտալ, որ պէտք է գործի մէջ դնեմ
ու չահեցնեմ հենց իմ օգտի համար: Իմ հոգեկան

կարողութիւնները ամբողջովին ու լայնօրէն յայտ բերելու, զարգացնելու եւ օգտագործելու համար՝ ամէնից մատչելի ու ամէնից ձեռնհաս միջոցը — ազգային մշակոյթն է: Ազգային մշակոյթը — հեռեւապէս եւ ինքը ազգը — պէտք են ինձ հենց իմ եսը հաստատելու համար:

Թիւրիմացութիւն է, թէ հայը կարող է դերմանացի դառնալ, եթէ նոյնիսկ սրտանց ցանկանայ ու շատ աշխատի: Ապա թիւրիմացութիւն է, թէ հայի համար «լաւ» է դերմանանալ — ո՛չ, դերմանացի լինելը լաւ է դերմանացու համար, իսկ հայը իր լաւը պիտի որոնի հայութեան մէջ:

Մատնանշելու է եւ մի երրորդ թիւրիմացութիւն — այն, թէ օրբեստրի մէջ սրինդ նուագելը զրկանք ու զոհաբերութիւն է ուրիշի օգտին: Սխալ բան է դա: Սրինդը ոչ միայն նուագում է, այլ եւ լսում է նուագը, ինքն էլ վայելում է երաժշտական երկը: Նրա համար մխեւնոյն չէ՝ լաւ է կազմուած թէ վատ, լրիւ է թէ պակասաւոր օրբեստրը: Նա ինքը չահագրգռուած է, որ ամէն դրծիք իր տեղում լինի, հնչեցնի իր ձայնը, լրացնի հարեւանի պակասը, այժ եւ արտայայտութիւն տայ խմբական նուագին: Օրբեստրը՝ իրրեւ ամբողջութիւն՝ պէտք է սրինդին, որովհետեւ սրինդը ինքն էլ սպառող է երաժշտական արժէքների:

Աշխատանքի բաժանման ու համագործակցութեան խնդիր է սա, — մի խնդիր, որի մէջ

չհագրդռուած է ամէն մի աշխատաւոր անձնա-պէս։

Հանուր-մարդկային կեանքն ու առաջադի-մութիւնը՝ վերացական դաղափար չէ, այլ իրա-կանութիւն — մի իրական արժէք, որով պայմա-նաւորում է նաեւ իմ անհատական կեանքը։ Ես պէտք է լրացնեմ — իմ գոյութիւնով ու ինձ յա-տուկ ստեղծագործութիւնով — այն մեծ ամբող-ջութիւնը, որի մի մասն եմ ես։ Ես պէտք եմ ամբողջութեան, բայց կ՛ւ աւելի ինքս կարիք ու-նեմ օգտուելու ամբողջութիւնից, ուստի եւ անձ-նագոհութիւն չէ ինձանից պահանջուածը, այլ պարզ ինքնօգնութիւն։

Գիտեմ, հարկաւ, որ այս կարգի դատողու-թիւնները անզօր են դեկավարելու մարդու անհա-տական կեանքը. անմիջական կարիքները չա՛տ են զգալի, իսկ հանրութեան կապը այնքա՛ն անչո-շափելի է, այնքան մութ ու անհասկանալի, հե-տեւապէս եւ անարժէք (անհատի գիտակցութեան սահմաններում)։ Զկան այն զգացողական նեարդ-ները, որ կապեն ինձ մարդկային ամբողջութեան հետ, ակներեւ անեն իմ ու հանրային շահերի փոխադարձ պայմանաւորումը...

Մարդը՝ իր աչքում անհատ է, ինքնամփոփ ու ինքնարժէք։

Աղաղակող «ես»ը անձահարելու համար հարկաւոր են ընկերային քնազդներ, — որոնք

կան, անչուչա, բայց որոնց ոյժն ու տարածողութիւնը անսահման չէ։

Մարդը ունի ընտանեկան ու թայֆայական, իսկ զարգացման բարձր աստիճանների վրայ՝ նաեւ ազգային ու պետական քնազդ (կամ դիտակցութիւն)։ բայց «հանուր-մարդկայնական» քնազդ չունի նա։ Նրա աչքը այդքան հեռու չի տեսնում, նրա եսականութիւնը չի հասնում այդ լայն սահմաններին, հետեւապէս եւ անելիքը չի կարող պայմանաւորուել՝ իր չրջահայեցողութիւնից դուրս դտնուած նպատակներով կամ կրիքներով։

Մարդկութեան ներկայ ու ապագայ կարիքների հոդսը չէ, անչուչա, որ պահում է ինձ ազդութեան մէջ։

Բայց ազգը պէտք է նաեւ ինձ, իմ սեփական եսը հաստատելու համար։

Ու ապա, ազգութեան հետ ես կապուած եմ չատ աւելի անմիջականօրէն, չատ աւելի սերտ ու դիւրըմբռնելի կապերով։ Ես ապրում եմ ազդի հետ ու ազդի մէջ — չատ աւելի զգալիօրէն, քան մարդկութեան հետ ու մարդկութեան մէջ։ Ազգը չատ աւելի սահմանափակ ու չատ աւելի կոնկրետ հաւաքականութիւն է, քան լայնատարած, անտեսանելի, անդիմագիծ «մարդկութիւնը»։ Ազգը իմն է ու ես՝ իրենը, մեր կարիքներն ու չահերը ընդհանուր են ու յաճախ անբաժանելի։

Ունե՞մ, սակայն, այդ դիտակցութիւնը, եւ այդ դիտակցութի՞ւնն է արդեօք, որ կեանք ու յարատեւութիւն է տալիս ազգերին: Ուրիշ խօսքով՝ եսի այդքան լայն ըմբռնումը (տարածումն ու մասամբ ձուլումը ազգային ամբողջութեան մէջ) մատչելի ու յատո՞ւկ է արդեօք ազգ կազմող անհատներին — յատուկ այն աստիճանի, որ կարողանայ անդրադառնալ նրանց առօրեայ անելիքների վրայ:

Ընդհանուր առմամբ՝ ոչ:

Յամենայն դէպս՝ ոչ միշտ ու ոչ հարկաւոր չափերով:

Ասի արդէն, որ զարգացման բարձր աստիճանների հասած ազգութիւններն են միայն, որ դիտեն ազգային արժէքների իսկական դինը, հետեւապէս եւ շատ արթուն ու շատ խանդոտ պահապաններ են իրանց հաւաքական եսի: Ցիշում եմ Թ. Կարլեյլի հետեւեալ խօսքը (որ սոսկ խօսք չէ, անշուշտ). եթէ մի օր անգլիական ազգը հարկադրուած լինի ընտրութիւն անելու Հնդկաստանի ու Շեքսպիրի միջեւ, ասում է Կարլեյլ, նա չի տատանուի ոչ մի րոպէ. աւելի լաւ կը համարի կորցնել Հնդկաստանը իր բոլոր հարստութիւններով, քան զրկուել Շեքսպիրից:

Այսպէս է ասում անգլիացին:

Պակաս հասունացած ազգերը չունեն այդ բարձր դիտակցութիւնը. նրանք ապրում են — ինչպէս եւ ծնունդ են առել — աւելի կամ պակաս

չափով անգիտակցօրէն, ենթարկուելով ամբողջովին կեանքի արտաքին պայմաններին ու պատմութեան ուրոյն ընթացքին: Եւ հեշտութեամբ ապազգայնանում են, երբ փոխուում են առարկայական պայմանները:

Ազգերի կենսունակութիւնն ու դիմադրական կարողութիւնը՝ առարկայական հաւասար տուեալների մէջ՝ համաչափ է նրանց ազգային գիտակցութեան, իսկ այս վերջինը՝ ընդհանուր զարգացման աստիճանին:

Զանգուածօրէն ապազգայնացնել այսօր անգլիացուն, ֆրանսիացուն կամ գերմանացուն — անկարելիութեան չափ դժուարին ձեռնարկ է: Մինչդեռ հերքչը Պոլսում կամ Անատոլիայում հեշտօրէն կորցնում է իր ազգային դիմագիծը եւ երկու–երեք սերունդ անցած՝ անճանաչելի է դառնում:

Իդէոլոգիան չէ, հարկաւ (կամ միայն իդէոլոգիան չէ), որ ապահովում է թոյլ ու անգիտակից ազգերի գոյութիւնը, այլ կենսական պայմանների այն չատ բարդ գումարը, որը՝ ընդհանուր խօսքով՝ միջավայր է անուանւում (նիւթական ու հոգեկան):

Դժուար չէ հասկանալ, որ ազգայնօրէն այլասերուելու համար հարկաւոր են նպաստաւոր պայմաններ, իսկ սրանք տրամադրելի են մարդուն ոչ ամէն տեղ, ոչ ամէն ժամանակ ու ոչ միշտ պատշաճ չափերով: Շիրակի հայ գիւղացին՝ իր գիւղում նստած չի կարող ապազգայ-

նանալ, — նրան կը պակասեն անհրաժեշտ միջոցները: Բայց նոյն չիրականացնելով՝ մեծ զանգուածներով Գալիցիա փոխադրուած՝ «լեհացել» է ժամանակի ընթացքում այն աստիճանի, որ այսօր գիտնականների գրքերից միայն կարող է իմանալ, թէ ինքը դարեր առաջ հայ է եղել:

Ընկերային աշխարհում — ինչպէս եւ քնախօսական աշխարհում — տիպերը կազմւում են ու հաստատւում անկախ անհատների կամ խըմբակցութիւնների դիտակցութիւնից, կամքից ու ընտրութիւնից: Գիտակցութիւնն ու իդէոլոգիան գալիս են հետագայում միայն, post factum:

Իդէոլոգիան կարող է ողջունել գիտակցած փաստը կամ խոնարհուել իրականութեան առջեւ: Բայց կարող է եւ ըմբոստանալ նրա դէմ:

Կրկնում եմ՝ ըմբոստանալու կարողութիւնը —մարդ անհատի ու մարդկային խմբակցութիւնների ամենամեծ առաւելութիւնն է ու առաքինութիւնը: Մարդը համեմատաբար գիտակից է, — աւելի քան ոեւէ ուրիշ կենդանի էակ երկրագնդի վրայ: Նա ընդունակ է, որոշ չափերով, քննադատելու ու գնահատելու կենսական երեւոյթները իր, մարդկային տեսակէտից, զանազանել ցանկալին ոչ–ցանկալիից եւ՝ որոշ սահմաններում՝ ուղղումներ մտցնելու իր անհատական ու խմբական կեանքի մէջ:

Եւ այստեղ մեզ հետաքրքրողը՝ յատկապէս

գիտակցութեան ու գիտակցութիւնից բխող դնահատման խնդիրն է:

Եթէ մենք հարցնում ենք՝ պէ՞տք են արդեօք ազգերը, ո՞ւմ են պէտք եւ ի՞նչի համար, — պարզ, որ հարցը դուրս իդէոլոգիական բնոյթ ունի:

Թէ ինչո՞ւ եւ ի՞նչպէս են դոյացել ազգային բաժանումները անցեալում, ինչո՞ւ եւ ի՞նչպէս պահել են դոյութիւնը մինչեւ այսօր ու պիտի վերանա՞ն ապագայում թէ ոչ, — այդ փաստական դրութիւնները չեն (անցեալում, ներկայում ու հաւանական ապագայում), որ զբաղեցնում են մեր միտքը, այլ այն թէ ի՞նչ արժէք պէտք է տալ փաստին («լաւի» ու «վատի» մեր ըմբռնումով) եւ հետեւապէս ի՞նչ դիրք բռնել նրա հանդէպ (մեր կարողութեան սահմաններում):

Ես հայ եմ ու միւս հայերի հետ միասին կազմում եմ հայ ազգը — սա պատմական փաստ է, ակներեւ ու անհերքելի իրողութիւն:

Մենք — հայ ազգը կազմող հայ մարդիկս — կարող ենք (ինչպէս ցոյց է տալիս պատմութիւնը, մեր եւ ուրիշ ազգերի անցեալն ու ներկան) ամրանալ ու ինքնահաստատուել ազգայնօրէն. բայց կարող ենք եւ՛ տկարանալ, չէզոքանալ, ապազգայնանալ աստիճանաբար: Կարելիութիւն է սա, — կարելիութիւն, որի մէջ ուրիչ բազմաթան գործօնների չարքում՝ որոշ տեղ ունի նաեւ մեր հաւաքական ցանկութիւնն ու կամքը:

Իսկ թէ ի՛նչ ուղղութեամբ են արտայայտուելու մեր կամքն ու ցանկութիւնը, — սա անմիջապէս կախուած է նրանից, թէ ի՛նչ արժէք ենք տալիս փաստին եւ թէ կարելիութիւններից ո՛րն ենք գերադասում. մեր իդէոլոգիան է սա:

Իդէոլոգիան՝ ինքնըստինքեան՝ չի կարող բնորոշել կեանքի ընթացքը, սպառել բոլոր կարելիութիւնները. նա անխուսափելիօրէն բախուելու է իրականութեան հետ: Իրականութեան մէջ — մեզանից դուրս — հանդիպելու ենք մեզ նպաստող ու մեզ խանգարող, ընդդիմադիր ոյժերի: Առաջինների հետ բնականօրէն պէտք է դաշնակցենք ու գործակցենք, իսկ վերջինների դէմ՝ զինուենք, պաշտպանողական դիրքեր բռնենք կամ յարձակողական գործողութիւններ ձեռնարկենք:

Բոլոր հետեւանքը՝ ամէն մի անջատ դէպքում՝ կարող է անյայտ լինել մեզ: Հաւատում ենք, սակայն (առանց այդ հաւատի անկարելի է որեւէ իդէոլոգիա), որ վերջի հաշուին ու ընդհանուր առմամբ՝ յաղթանակը մերն է լինելու, որովհետեւ մեր հասկացողութիւնով մեր իդէոլոգիան է ճշմարիտը, — այսինքն՝ կեանքից բխածն ու կեանքն առաջնորդողը, ցանկալին ու կարելին:

Ո՞րն է «ճշմարիտն ու բարին» մեր դէպքում — ազգերի կո՞ղմն է, թէ ազգերի դէ՞մ:

Ընթերցողը գուշակում է անշուշտ իմ պատասխանը. ազգերի օգտին է այն:

Այն բոլոր հիմնաւորումները, որ այնքա՛ն երկարօրէն աշխատեցի պարզել նախորդ էջերում — եւ չա՛տ ուրիշները, որ անկարելի է սպառել որեւէ դրութեան մէջ — վաղուց արդէն բերել են ինձ այն անխախտելի համոզման, որ ազգ–երեւոյթը՝ դրական երեւոյթ է պատմութեան մէջ:

Ինչ չափանիշ էլ ընդունելու լինենք գնահատման համար՝ հանրային կարիքների թէ անհատական պահանջների չափանիշը, — եզրակացութիւնը նոյնն է. ազգային միութիւնները պէտք են ե՛ւ հանրութեան, ե՛ւ անհատին:

Ազգութիւնը — հոգեկան մշակոյթի ամէնից յստակ աղբիւրն է ու ինքը մշակոյթ է արդէն: Հոգեկան մշակոյթի լաւագոյն նուաճումները կատարուել են մինչեւ այսօր ազգային չրջանակի մէջ ու ապագայումն էլ անհեւակայելի են այդ չրջանակից դուրս: Այն բոլոր առարկութիւնները, որ թիւրիմացութեամբ արւում են ազգերի դէմ — չեն բխում ազգի էութիւնից, այլ միայն արտայայտութիւնների ձեւից, որ կարող են փոխուել ու կը փոխուին անչուշտ առաջադիմութեան դալիք՝ աւելի բարձր աստիճանների վրայ:

1923 թ· Մայիսից սկսած, մինչեւ 1924 թ· Յունուար, ամսէ–ամիս, «*Հայրենիք*» ամսագրում լոյս տեսաւ Յովհ· Քաջազնունիի «Ազգ եւ Հայրենիք» յօդուածաշարքը: Հ· Ց· Դաշնակցութիւնից հրաժարուելուց յետոյ, Քաջազնունին խզեց իր աշխատակցութիւնը «*Հայրենիք*»ից, եւ յօդուածաշարքը մնաց անաւարտ:

Քաջազնունիի անտիպ թողած ձեռագիրների մէջ մնացել էր նաեւ «Ազգ եւ Հայրենիք»ի վերջին մասը՝ երկու գլուխ, որ տալիս ենք այստեղ:

Հաւանաբար, այդ մասը Քաջազնունին գրել է Դաշնակցութիւնից հեռանալուց յետոյ: Քաջազնունին առաջ էլ իրեն համարում էր համայնավարական — գրեթէ անիշխանական — փիլիսոփայութեան հետեւող: Իր եզրակացութիւնները ազգի մասին տարբեր չէին նրա համար առաջ էլ:

Ինչպէս միւս գրուածքները, այս յօդուածն էլ ներկայացնում ենք անփոփոխ, առանց որեւէ սրբագրութեան կամ յաւելումի բնագրին մէջ:

Ս· Վ·

Մարդկութիւնը, իր ամբողջութեան մէջ, կարելի է նմանեցնել մի մեծ ու բարդ օրգանիզմի…

Բայց այստեղ պիտի ընդհատեմ խօսքս՝ մի շատ կարեւոր նկատողութիւն անելու համար:

Ասի՝ նմանեցնել, բայց ոչ նոյնացնել: Եւ նմանեցնել որոշ տեսակէտներից միայն ու խոշոր վերապահումներով: Անցեալ դարում, բուրժուական իդէոլոգիա դաւանող ընկերաբանները չարն են գործադրել այն նմանութիւնը, անալոգիայի ճամբով դնացել են շատ աւելի հեռու, քան թոյլ

է տալիս երեւոյթների էութիւնը ու յանդել են սխալ կամ միտումնաւոր եզրակացութիւնների:

Այսպէս՝ նոյնացնելով հաւաքական ու անհատական օրգանիզմները, վոխանցելով ֆիզիոլոգիական կեանքի օրէնքները ընկերային կեանքի աշխարհը ու չփոթելով — գիտակցօրէն կամ անգիտակցօրէն — աշխատանքի բաժանման սկզբունքը դասակարգային բաժանումների հետ, — ուրեմն եւ դասակարգերը օրգանների հետ, — այդ կարգի ընկերաբանները արդարացրել են դասակարգերի գոյութիւնը անցեալում ու քարոզել նրանց անհրաժեշտութիւնը՝ ապագայում:

Բայց դասակարգերը օրգաններ չեն — ֆիզիոլոգիական իմաստով, — ինչպէս եւ մարդանհատները՝ բջիջներ չեն:

Համամարդկային հաւաքական օրգանիզմը կազմող բջիջների մէջ կայ մի շատ էական տարբերութիւն, — այն որ հաւաքական օրգանիզմի մէջ մարդ–անհատը գիտակցում է իր անհատական գոյութիւնը, ընդունակ է անհատօրէն ցանկանալու ու ձգտելու, անհատօրէն ապրելու գոհութեան ու դժգոհութեան ապրումները, մինչդեռ բջիջը չունի այդ յատկութիւնները, ինչպէս չունի այդ յատկութիւնը նաեւ համամարդկային հաւաքական օրգանիզմը — մարդկութիւնը:

Ընկնենք մեթաֆիզիքայի մութ աշխարհը — բիոլոգիան ու ընկերաբանութիւնը եւս ազատ չեն մեթաֆիզիքական անեզր ընդհանրացումնե–

ըից — ու մանաւանդ չչահագործենք մարդկային լեզուի անճշդութիւնը, որ, յաճախ, արտայայտում է նոյն բառերով տարբեր գաղափարներ: Այո՛, զուցէ բջիջն էլ ունի իր բջիջային ինքնագիտակցութիւնը եւ մարդուքիւնն էլ՝ իբրեւ ամբողջութիւն՝ ունի իր գերմարդկային կամ համամարդկային ինքնազգացութիւնը... Գուցէ՛: Բայց ես այդ չդիտեմ ու չեմ կարող պիտանալ: Գիտեմ միայն — եւ ինձ համար ա՛յս է կարեւորը — որ իմ ինքնադիտակցութիւնն ու ինքնագոյութիւնը ոչ բջիջային է, ո՛չ գերմարդկային, այլ պարզապէս ու յստակօրէն մարդկային: Հետեւաբար եւ իմ իդէոլոգիան կարող է լինել միայն մարդկային, — ոչ աւելի, ոչ պակաս: Մըննացածը պարապ խօսքեր են, մտքի պարապ մարզանքներ:

Դառնալով անալոգիաներին, պէտք է նկատել ամենից առաջ, որ օրգանիզմի մէջ բջիջների փոխադարձ կապը օրգանական է, մինչդեռ անհատի կապը հասարակութեան մէջ՝ ընկերային է:

Տարբերութիւնը մեծ է:

Բջիջը կապուած է օրգանիզմի հետ շատ աւելի սերտօրէն, քան անհատը՝ ընկերային հասարակութեան հետ — խօսքս այնպիսի բարդ օրգանիզմների մասին է, ինչպիսին է մարդկայինը: — Միւս կողմից, օրգանիզմը՝ իր ամբողջութեան մէջ՝ շատ աւելի կախում ունի բջիջնե-

բից: Օրգանիզմը անբաժանելի ամբողջութիւն է, աճիւռ է: Այդպէս չէ ընկերութիւնը: Եթէ մարդկային օրգանիզմը կազմող մօտ երեսուն միլիառ բջիջներից մեռնի այս կամ այն խումբը — առանց անմիջապէս փոխարինուելու նոյն կարգի նոր բջիջներով, — կը մեռնի նաեւ օրգանիզմը — այսինքն՝ կը մեռնին նաեւ բոլոր միւս բջիջները. մէկ բջիջը կամ բջիջային մի խմբակցութիւն չի կարող ապրել առանց միւսների: Այդպէս չէ անհատների ընկերային հաւաքականութեան մէջ: Եթէ մեռնի — առանց փոխարինուելու — մարդկային հաւաքականութիւնը կազմող մարդ-անհատների կէսը՝ երեք քառորդը, իննը տասներորդը — մարդկութիւնը կը շարունակէ ապրել: Տեսականօրէն՝ եթէ երկուքուկէս միլիառ մարդ անհատներից, որ այսօր չէնացնում են երկրագունդը ու կազմում մարդկութիւնը, մնաց մի զոյգ միայն — անկարելի չէ, որ այդ մի զոյգ էգ ու արուն ապրեն, սերունդ տան, բազմանան ու անկախ թուից՝ մարդկութիւն կազմեն: Մարդկային օրգանիզմ կազմելու համար հարկաւոր է անբաժանելիօրէն կապուած երեսուն միլիառ բջիջների սերտ աշխատակցութիւնը, մինչդեռ «մարդկութիւնը» կարող է կազմուած լինել մի հատիկ ընտանիքից միայն:

Նոյնքան մեծ է տարբերութիւնը նաեւ օրգանիզմը կազմող օրգանների ու մարդկութիւնը կազմող հասարակական այն բաժանումների մի-

ջեւ, որոնք դասակարգ են անուանւում:

Մարդկային հաւաքականութեան մէջ դասակարգերը բնորոշւում են ոչ միայն աշխատանքի բաժանման սկզբունքով, այլ նաեւ — ու գլխաւորապէս — սպառման խնդիրով: Սրա՛ դէմ է, որ ըմբոստանում է մարդու խիղճն ու միտքը եւ սա՛ է, որ անկարելի է անում՝ առանց խոշոր վերապահումների՝ անալոգիան հաստատել օրգանի ու դասակարգի միջեւ:

Օրգանիզմի մէջ — խօսքս առողջ օրգանիզմի մասին է, հարկաւ — բոլոր օրգանները աշխատում են եւ սպառում են ընդհանուր պահեստից այնքան միայն, որքան անհրաժեշտ է իրենց գոյութիւնը պահպանելու ու աշխատանքի ընդունակութիւնը ապահովելու համար: Այդպէս չէ դասակարգայնօրէն կազմակերպուած մարդկային հաւաքականութեան մէջ. այստեղ կան դասակարգեր, որոնք սպառում են առանց արդիւնաբերելու կամ սպառում են շատ աւելի՝ քան արդիւնաբերում: Եթէ որոնենք անալոգիաներ՝ այսօրուայ մարդկութիւնը պէտք է նմանեցնել հիւանդ օրգանիզմի՝ անպտուղ ու չհադրծող, իսկ դասակարգերը — այն աստւածատական կամ rudimentaires օրգաններին, որոնք ծանրաբեռնում են վատ կազմուած օրգանիզմները եւ որոնք ոչ միայն անպէտք են ու աւելորդ, այլ եւ ուղղակի վնասակար, այն աստիճանի, որ մարդիկ յաճախ դիմում են վիրաբուժական գործողու-



Նստած ձախէն աջ՝
Լ. Շանթ, Ց. Քաջազնունի եւ Ս. Վրացեան։

Ոտքի, կեդրոնը՝
Յովհ. Տէվէճեան, որուն երկու կողմերը Աղեքսանդրիոյ ընկերներէն Կարապետ Յակոբեան, Աւետիս Արեւեան, Երուանդ Սէֆէրեան եւ Աբրահամ Աբրահամեան։
1922ին, Աղեքսանդրիա

թիւններէն՝ այդ պարագիաներէն ազատուելու համար — օրինակ՝ կտրում, դէն են ձգում appendiceը։

Մի ուրիշ շատ էական տարբերութիւն. օրգանիզմի մէջ ազատելու հաճոյքը — ինչպէս եւ աշխատելու նեղութիւնը — չեն յատկացուած որոշ օրգաններու միայն, այլ տարածուում են ամբողջ օրգանիզմի վրայ։ Օրգանիզմի մէջ չի կարելի բաժանել հաճոյքը նեղութիւնից, աշխատանքը՝ ազատումից — անբաժանելի դործողութիւններ են սրանք. աշխատելը ազատել է արդէն ու ազատելը՝ աշխատել։ Չի կարելի ասել նաեւ, թէ աշխատանքը ինքնըստինքեան նեղութիւն է ու ազատումը՝ անպատճառ հաճոյք... Ցամենայն դէպս՝ հաճոյք թէ տհաճութիւն, — սրանք չեն պատկանում որոշ օրգանների միայն, այլ ընդհանուր են ամբողջ օրգանիզմի համար։

Եթէ ձեռքը յողնել է աշխատելուց, յողնութեան տհաճութիւնը զգում է ոչ թէ ձեռքը կամ ոչ միայն ձեռքը — ձեռքի մկանունքները, — այլ օրգանիզմը ամբողջովին։ Միւս կողմից՝ եթէ բերանը ծծում է մի կտոր չաքար կամ ստամոքսը մարսում է խորոված կաքաւի միս կամ աչքը տեսնում է մի դեղանկար տեսարան կամ ականջը լսում է երաժշտական նուագ, — բերանը, ստամոքսը, աչքն ու ականջը չէ՛ն որ վայելում են ճաշակելու, մարսելու, տեսնելու եւ լսելու հաճոյքը, այլ օրգանիզմը իբրեւ ամբողջութիւն։

Այդպէս չէ մարդկային հաւաքականութեան մէջ։

Եթէ ես ծամում եմ կաքաւի քնքոյշ միսը ու դոհունակութեամբ լիզում եմ ճարպոտ շրթունքներս, — որսորդը, որ այդ կաքաւը որսալու համար լոյսը չբացուած դուրս է եկել տնից, ժամերով քայլել է լեռներում, մագլցել է ժայռերի վրայ, յոգնել է երկար որոնումներից, տառապել է ցրտից ու տաքից, — այդ որսորդը ոչ մի հաճոյք չի ղգում, ամենևին չի բաժանում իմ ուտելու վայելքը։ Ես չեմ կարող ասել, թէ ես ու որսորդը բաժանեցինք աշխատանքը. նա որսաց, ես կերայ... Նոյն օրգանիզմի պատկանող ձեռքն ու ստամոքսը կարող են ասել այդ, որովհետեւ նրանց համար դոհութեան ու դժդոհութեան ըղդացումը ընդհանուր է, անբաժան, մինչդեռ ես ու որսորդը ունենք յատակօրէն բաժանուած անհատական ապրումներ։ Եւ որքան էլ աշխատեմ համոզել յոգնած ու քաղցած որսորդին, թէ նա պէտք է երջանիկ լինի, որովհետեւ ես մեծ ախորժակով կերայ նրա որսած կաքաւը, — որսորդը չի հաւատայ ինձ եւ իրաւացիօրէն կ'անուանի կեղծաւոր ու խաբեբայ։

Եթէ փափկասուն տիկինը՝ Պարիզի Մեծ Օպերայի ամենամեծ պարահանդէսում՝ զարդարել է իր մարմարեայ կուրծքն ու ուսերը գեղեցիկ ժանեակներով, թոքախտից հիւծուած այն աղջիկը, որ իր ցուրտ մանսարտում երկար ցե-

բեկներ ու երկար դիչերներ կուբացրել է իր աչքերը ժանեակը գործելիս՝ այդ աղջիկը մանանկից չէ տիկնոջ երջանկութեան, տիկնոջ յաղթականն ղեղեցկութիւնը չի լցնում հպարտութեամբ նրա արիւնաքամ սիրտը:

Եթէ նաւթարդիւնաբերութեան «թագաւորներից» մէկը՝ Նիցցայում կամ Բիարրիցում՝ վճռում է հարիւր հազար ֆրանկ այդ օրուայ հերոսուհի demi-mondaineի մի համբոյրի համար, — բանուորը, որ հեռաւոր Բադուայ կամ Պենսիլուանիի ցեխի ու մուրի մէջ հանել է դեռևի խորքերից այդ հարիւր հազարը, բնաւ չի զգում այդքան թանկագին համբոյրի քաղցրութիւնը. համբոյրը մնում է «խոզէին»ին, իսկ բանուորին՝ ցեխն ու մուրը...

Ասել, թէ մարդկային հասարակութեան մէջ աշխատաւոր, արդիւնաբերող դասակարգերը նոյնն են ինչ որ օրգանիզմի մէջ ձեռներն ու ոտները, իսկ իշխող ու վայելող դասակարգերը՝ ուղեղն ու ստամոքսը — սա կամ չատ խոշոր թիւրիմացութիւն է, կամ փարիսեցիութիւն կամ լրբենի ծաղրանք:

Այս այսպէս լինելով հանդերձ — վերսկսում եմ ընդհատած խօսքս՝ — կայ այնուամենայնիւ որոշ նմանութիւն անհատական ու հասարակական օրգանիզմների միջեւ եւ մարդկութիւնը կազմող որոշ խմբաւորումները կամ բաժանումները իրօք կարելի է նմանեցնել օրգաններին: Եւ այս կարգի

անալոգիաների մէջ առաջին տեղը պիտի տրուի ազգային խմբաւորումներին, որ կարելի է նկատել իբրեւ մի ուրոյն ու չատ կարեւոր օրգան համամարդկային օրգանիզմի մէջ, — հոգեկան կեանքի եւ հոգեկան մշակոյթի օրգան:

Ազգ–օրգանը պարագիտ չէ: Նա ոչ միայն սպառում է, այլ եւ առատօրէն արտաբերում՝ կուտակում է, խտացնում, զարգացնում եւ անընդհատ ստեղծագործում հոգեկան արժէքներ, — արժէքները, առանց որի մարդը մարդ չէ:

Եւ ազգը համամարդկային օրգան է այն մտքով, որ ամէն մի ազգային ստեղծագործութիւն ոչ միայն ազգային է, այլ նաեւ համամարդկային, որովհետեւ ազգային արժէքների սպառողը ոչ միայն ազգն է, այլ եւ մարդկութիւնը իր ամբողջութեամբ:

Միտքս պարզելու համար դիմեմ մի անգամ եւս լեզուի օրինակին:

Ասել եմ արդէն, որ լեզուները անփոխարինելի են ու անթարգմանելի... բնականօրէն հարց է ծագում. եթէ ճիշդ է իմ ասածը, ապա ուրեմն ի՞նչ համամարդկային արժէք կարող են ունենալ այդ աներեւակայելի ազգային լեզուները: Օրինակ՝ ի՞նչ արժէք կարող են ունենալ ռուսի համար անգլիական լեզուի հարստութիւնները, եթէ ռուսը չի հասկանում անգլիերէն ու անգլիացու խօսքն էլ չի կարելի թարգմանել ռուսերէնի...

Հակասութեան մէջ չէ՞մ ընկնում արդեօք:

Ոչ, հակասութիւն չկայ։

Անգլիերէնն ասուած խօսքը չի կարելի թարգմանել ռուսերէն, — դա ճիշդ է։ Բայց դա չի նշանակում, թէ անգլիերէնից թարգմանուած կամ անգլիական ազդեցութեան տակ կազմուած ռուսական խօսքը չի պարունակում իր մէջ ազգային տարրեր։ Պարունակում է անպայման, անհրաժեշտօրէն — չի կարող չպարունակել։ Որքան էլ թարգմանութիւնը ռուսերէն լինի, այնուամենայնիւ թարգմանական ռուսերէնի վրայ մնում է բնագրի կնիքը — ինչ որ մի բան, որ թերեւս անկարելի լինի բացատրել, բայց որ ըզգացւում է յստակօրէն։ Երբ ես կարդում եմ՝ ռուսերէն լեզուով՝ անգլիերէնից թարգմանուած մի վէպ — առանց դիտենալու հեղինակի ազգութիւնը եւ անկախ վէպի բովանդակութիւնից — զլխի եմ ընկնում — համարեա առանց վրիպումների, — որ կարդացածս անգլիական գրուածք է. բնագրի լեզուն կարծես թափանցում է թարգմանութեան տողերի տակից։ Անուշադիր, անպատրաստ կամ լեզուային նրբութիւնները նկատելու անընդունակ ընթերցողը կարող է չտեսնել, չհասկանալ տարբերութիւնը, բայց տարբերութիւնը այնուամենայնիւ կայ եւ անխուսափելիօրէն ազդում է ընթերցողի մտքի վրայ, ընդարձակում է ու զօրացնում խօսելու կարողութիւնը, լեզուային նոր կարելիութիւններ է պատրաստում նրան։

Ցավ. Թումանեանը թարգմանել է ռուս ժողովրդական «բիլինաներից» մէկը — «Մուրոմի Իլիան Վլադիմիր իշխանի պալատում»: Արտակարգ յաջողութեամբ է կատարել այս խիստ դժուար գործը, լեզուն անվիճելիօրէն հայերէն է — ինչպէս եւ առհասարակ Թումանեանի ամէն մի ասած կամ գրած խօսքը, — բայց եւ այնպէս սա այն լեզուն չէ, որով նոյն Թումանեանը պատմած է, օրինակի համար, Սասմայ ծուռ Դաւթի վէպը:

Երկուսն էլ հայերէն են, մի քիչ տարբեր տեսակի... Եւ եթէ մեր տաղանդաւոր բանաստեղծը գիտենար անգլիերէն ու թարգմանած լինէր նաեւ անգլիական «բալլադ»ներից մէկը — այս նոր թարգմանութեան լեզուն էլ, իր հերթին՝ չէր նմանի ոչ Մուրոմցի Իլիայի, ոչ Սասմայ Ծուռի լեզուին. մի նոր բան կը լինէր սա՝ միշտ հայերէն մնալով հանդերձ:

Եւ մեր լեզուն շատ բան չահած կը լինէր անգլիական «բալլադ»ի թարգմանութիւնից, ինչպէս չահել է ռուսական «բիլինայ»ի թարգմանութիւնից. թարգմանիչը, չափան գալով անգլիական լեզուի հետ, նոր գծեր ու նոր չեչտեր կը մտցնէր իր հայերէնի մէջ, ինչպէս մտցրել է՝ չափան գալով ռուսերէնի հետ:

Թերեւս անգիտակցօրէն ու ակամայից, բայց անխուսափելիօրէն անելու էր այդ:

Հայ լեզուն, որ արդէն իր կազմակերպման չրջանում բարդ է եղել, կրել է դարերի ընթաց-

քում չատ զօրեղ ազդեցութիւններ դրսից. պարսկական, յունական, քրդական, վրացական, արաբական, թուրքական, իսկ վերջերս նաեւ ռուսական լեզուները դրել են յաջորդաբար իրենց դրոշմը մեր խօսքի վրայ:

Եւ դա լա՛ւ է եղել. մենք հոգեպէս հարստացել ենք, առնելով օտար լեզուներից այն, ինչ պակասել է մերինին — ընդարձակել ենք, զօրեղացրել ու բազմացրել արտայայտուելու մեր սեփական միջոցները:

Դարձեալ պիտի հրաւիրեմ ընթերցողի ուշադրութիւնը. մի որոնէք հակասութիւն՝ այստեղ ու նախընթաց էջերում ասածներիս մէջ — երբ խօսքս բազմալեզուանի կամ կէս-լեզուանի մարդկանց մասին էր. — օտար լեզուներից օգտուելը չի նշանակում անպատճառ կորցնել կամ փչացընել սեփականը, — ամբողջ խնդիրը նրանում է, թէ ի՛նչ է փոխ առնւում դրսից, ինչպէս եւ ինչ ճանապով:

Եղիշէն, Նարեկացի Գրիգորը, Նահապետ Քուչակը, Սայաթ Նովան ու Գ. Սունդուկեանը — սրանք բոլորն էլ հայերէն են գրել ու երգել, թէեւ բոլորն էլ մեծապէս ազդուած են եղել օտար լեզուներից եւ այդ պատճառով է նաեւ, որ նրանց խօսքը այնքան լիահնչուն է, այնքան արտայայտիչ ու ազդու:

Տարբեր բան է՝ իւրացնել, օրգանապէս կապելով իւրացրածը սեփականի հետ, եւ տարբեր

բան է՝ մեքանիքօրէն խառնել իր լեզուին օտար բառարան, օտար քերականութիւն, օտար ու խորթ ոճ: Առաջի դէպքում լեզուն սնւում է, մինչդեռ երկրորդ դէպքում՝ հիւանդանում է ու այլասերում:

Ես ընկել եմ ռուսերէնի տիրական աղդեցութեան տակ այն հասակում, այնպիսի պայմանների մէջ, երբ իւրացնել՝ պահելով հանդերձ իմ սեփականը՝ անկարող եմ եղել: Բայց այդ մի օրինակի կողքին կարող եմ դնել իսկոյն մի ուրիչ օրինակ — իմ հանդուցեալ բարեկամ Թումանեանի օրինակը: Թումանեանը մօտեցել է ռուսերէնին այն ժամանակ միայն, երբ անխորտակելիօրէն հաստատուած է եղել հայերէնի մէջ եւ միանդամայն տարբեր արդիւնք է ստացել. այնտեղ, ուր ես ունեցել եմ ողբալի կորուստ, Թումանեան չահել է մեծապէս. ես փչացրել եմ ընդմիշտ իմ լեզուն, Թումանեանը աւելի եւս պինել է իրենը:

Ռուսի լեզուն Թշնամի չէ իմ հայերէնին, ոչ էլ վտանդ կամ սպառնալիք:

Վտանդ ու սպառնալիք դառնում է այն դէպքում միայն, երբ ես չդիտեմ նրանից օգտուելու ձեւն ու չափը կամ երբ ռուսը յարձակողականի է դիմում եւ, օգտուելով կողմնակի այժերից ու հանդամանքներից, արդելքներ է դնում իմ լեզուի աղատ զարգացման ու արհեստականօրէն պատուաստում է ինձ իր ռուսերէնը:

Հարկաւ, այդ դէպքում վտանգ կայ եւ ինձ չի մնում ուրիշ բան, քան տէր կանգնել իմ ժառանգական սեփականութեան, դիմել ինքնապաշտպանութեան ամէն հնարին միջոցի ու թոյլ չտալ, որ թալանեն ինձ:

Բոլոր լեզուային կամ, ընդհանրապէս, ազգային պայքարի այդ ձեւը չի բխում երեւոյթների էութիւնից եւ եթէ իրականութեան մէջ յաճախ տեղի է ունենում, պայմանաւորւում է կողմնակի պատճառներով:

Էապէս՝ ռուսը բնաւ չի չհաղորդուած, որ խեղդուի կամ արմատախիլ արուի իմ հայերէնը: Ընդհակառակը, մեծապէս չհաղորդուած է, որ իմ լեզուն էլ — միւս լեզուների չարքում — ապրի ու զարգանայ: Շահաղրդուած է, որովհետեւ ինքն էլ կարող է մի բան սովորել, մի բան փոխ առնել ու իւրացնել իմ լեզուից — այնպիսի մի բան, որ չի կարող տալ ոչ իր ռուսերէնը, ոչ գերմաներէնը, ոչ ֆրանսերէնը: Ոլքան էլ հարմեսա ու աղքատ լինի այսօրուայ հայ գրականութիւնը, այնուամենայնիւ նա ունի այնպիսի էջեր, որ ռուսը չի դանի իր սեփական չատ ճոխ գրադարանի մէջ: Ի՞նչ չահ ունի նա ցամաքացնելու այդ ինքնայատուկ ստեղծագործութեան աղբիւրը, եթէ ինքն էլ կարող է խմել — ու խըմում է — նոյն ջրերից:

Ազգերն ու լեզուները — իրրեւ այդպիսիներ — թշնամիներ չեն, այլ բնածին դաշնակիցներ,

որ մեծ կարիք ունեն համագործակցելու եւ, փոխադարձաբար, միմեանց պակասը լրացնելու:

Կայ անշուշտ մի յատուկ պայքար, որ բնական է ու անխուսափելի նաեւ ազգերի միջեւ: Դա նոյն պայքարն է, որով առաջնորդւում է — եւ առաջադիմում — կեանքն առհասարակ, բոլոր կենդանի էակներն ու հաւաքականութիւնները ընդհանրապէս. — պայքար, որը բխում է ապրելու, ինքնահաստատուելու եւ զարգանալու, մեծանալու առողջ բնազդից: Հարկաւ, այստեղ լինելու են յաղթողներ ու յաղթուածներ. թոյլերը, անպէտքները, անկենսունակները բնաջնջուելու են ու տեղ են տալու աւելի ուժեղներին, աւելի կենսունակներին, աւելի օժտուածներին:

Այդ պայքարը ոչ միայն անխուսափելի է, այլ եւ ցանկալի, քանի որ «բնական ընտրութեան» ճանապարհով հաստատւում են միշտ աւելի ու աւելի բարձր ազգային տիպեր:

Մի պայմանով սակայն, պայքարը պէտք է կատարուի ազատ մրցման չրջանակում, պէտք է պայքարեն իրօք ազգային տարրերը, որպէսզի յաղթութիւնը տանի իրօք ազգայնօրէն ուժեղը ու պարտուի իրօք ազգայնօրէն անպէտը: Ուրիչ խօսքով՝ պէտք է պայքարեն, յաղթեն ու յաղթուին մշակոյթները, զինուած մշակութային միջոցներով եւ ոչ ուրիչ կարգի դէնքերով:

Բնագիտական աշխարհում կեանքի կռիւը կենդանական կամ բուսական տեսակների մէջ դե-

կավարտում է՝ մխիթյան ու ամբողջովին՝ բնական օրէնքներով. ամէն բան տարերային է այնտեղ կամ զուտ բնաղդային. չկայ ոչ դիտակցող միտք, ոչ դիտակցած կամք: Ուրիշ բան է սոցիալական աշխարհը. այստեղ մարդ ճգտում է ու դէթ մի փոքր չափով, կարող է հակազդել բնութեան կոյր ոյժերին իր դիտակցութիւնն ու կամքը:

Սոցիալական աշխարհում կատարուող երեւոյթների վերաբերմամբ մարդը պէտք է ու դէթ մասամբ կարող է ունենալ իր պահանջները, արտայայտել իր կամքը, տարբերել ցանկալին ոչ ցանկալիից, բարին չարից:

Պատմամշակութային խմբաւորումների մէջեւ տեղի ունեցող անխուսափելի պայքարը պէտք է դրուի ու դէթ մասամբ կարող է դրուել այնպիսի պայմանների մէջ, որ ապահովուած լինի լաւագոյն եղքը — լաւագոյնը՝ մարդկային հասկացողութեամբ, հարկաւ: — Եւ որքան աւելի բարձր ու յստակ է դիտակցութիւնը, որքան աւելի կազմակերպուած է մարդու հաւաքական կամքը — այնքան աւելի դինուած է նա՝ իր իդէալները իրականացնելու համար:

Պէտք է տարբերել պայքարի դէնքն ու ձեւերը, յաղթելու ու պարտուելու պայմանները:

Եթէ հայ լեզուն այնքան թոյլ է ներքուստ, կարելիութիւններով այնքան աղքատ, պարզանալու անընդունակ ու այնքան անկենսունակ, որ

յաղթում է, բախման դալով ռուս կամ թուրք լեզուների լեզուային կարողութեան հետ, — բնական է ու լաւ, որ մեռնի աստիճանաբար ու աստարէդը թողնի թուրքերէնին կամ ռուսերէնին կամ նոր կազմակերպուող մի լեզուի:

Բայց եթէ հայ լեզուն մեռնում է, իսկ ռուս կամ թուրք լեզուն յաղթանակում է այն պատճառով միայն, որ ռուսը կամ թուրքը փակում է հայ երեխայի առջեւ իր մայրենի դպրոցի դռները ու բռնի դնում ձեռքը ռուսերէն կամ թուրքերէն դասագիրք, — սա արդէն հիւանդ կամ անկենսունակ հայերէնի բնական մահը չէ, այլ մի պարզ սպանութիւն: Դպրոց փակել կամ ոստիկանական միջոցներով օտար լեզու պատուաստել, մի լեզու իրաւազուրկ անել, իսկ միւսը մենաշնորհ կամ արտօնեալ դիրքի մէջ դնել· սա աղգային — այսինքն՝ մշակութային — պայքար չէ, այլ բոլորովին տարբեր բան:

Եւ այսպիսի պայքարի մէջ կարող է յաղթել, բնաջնջուել լաւագոյնը, աւելի արժէքաւորը՝ յօդուտ պակաս արժէքաւորի: Որովհետեւ ժողովուրդների ազգային կարողութիւնը ոչ միշտ համաչափ է իրանց միւս կարողութիւնների, — օրինակ՝ պետական կամ դիւանագիտական կարողութեան:

Ահա մի օրինակ·

Եթէ համեմատութեան դնէք հայկական ճարտարապետութիւնը միջին դարերում եւ մեր օրե-

րում — ասենք՝ համեմատէք Անիի Մայր Եկեղեցին Ալեքսանդրապոլի Սուրբ Փրկիչ Եկեղեցու հետ, — կը տեսնէք, որ մեր ազգային արուեստը ութը հարիւր տարուայ ընթացքում ոչ միայն չի արել որեւէ յառաջդիմութիւն, այլ ակներեւօրէն յետադիմել է — թէ դեղարուեստի եւ թէ նոյնիսկ արհեստի տեսակէտից —:

Ի՞նչու է եղել այդպէս, ի՞նչ պատահեց Անին կառուցանող մեծ վարպետների ժառանգներին, ի՞նչու սրանք չէարունակեցին — անընդունակ եղան չարունակելու — հայրերի սկսած այնքան գեղեցիկ գործը: Թերեւս հայկական ճարտարապետութիւնը ԺԱ.–ԺԲ. դարերում ասել էր արդէն իր վերջի խօսքը, սպառել էր բոլոր կարողութիւնները — ինչպէս ասենք սպառել են իրենց ժամանակին եգիպտական կամ դոթական ճարտարապետութիւնները — սնանկացել էր ներքուստ, ուրեմն եւ բնականօրէն պիտի մեռնէր, տեղ տար աւելի կենսունակ մի արուեստի...

Ոչ, ԺԱ. դարում հայկական ճարտարապետութիւնը դեռ նոր էր դուրս եկել իրեն, դեռ չատ բան ունէր ասելու, լի էր կարողութիւններով, առողջ էր ու կենսունակ:

Բայց դրսից մի ոյժ — Թուրքերի գինուորական ոյժ որ իր ձիերի սմբակների տակ տրորեց հայ մշակոյթի ծաղիկները ու դարերով կասեցրեց ամէն մի յառաջդիմութիւն:

Մշակոյթների պայքար չէր սա, այլ մշակոյթի բնաջնջում:

Թուրքերի երկարատեւ տիրապետութեան տակ հայ ազգը վայրենացաւ, ղրկուեց նախորդ սերունդների ջանքերով կուտակուած մշակութային բոլոր արժէքներից եւ իր հոգու անթափանցելի խորքերում հազիւ կարողացաւ փրկել պապենական ճոխ ժառանգութեան բեկորներն ու սաղմերը միայն՝ հեռաւոր ապագայում նոր ծիլեր տալու համար:

Թուրքերից առաջ Հայաստան տեսել է ուրիշ աշխարհակալներ՝ պարսիկներ, յոյներ, հռոմէացիներ, արաբներ... Սրանք եւս ոյժի մարդիկ էին, որ զէնքով տիրացան մեր երկրին ու երկար ժամանակներ պահեցին մեզ իրենց իշխանութեան տակ: Բայց սրանք բերել էին, զինական ոյժի հետ միասին, նաեւ մշակոյթի ոյժ եւ սրանց ձեռով ներմուծուած մշակութային նոր արժէքների չնորհիւ բեզմնաւորուել ու լաւագոյն պտուղներ էր տուել մեր սեփական ազգային մշակոյթը: Անոնք՝ դերազանցօրէն հայկական լինելով հանդերձ՝ ունի իր մէջ է՛ւ պարսկական, է՛ւ յունական, է՛ւ արաբական տարրեր:

Որքան էլ կորստաբեր եղած լինի մեր երկրի համար այս օտարների տիրապետութիւնը, անհերքելի է, սակայն, որ նա ունեցել է եւ դրական հետեւանքներ: Կորցնելով քաղաքական անկախութիւն, մենք հարկաւ ղրկուել ենք ազգային մշակոյթը զարգացնելու չատ կարեւոր միջոցներից: Բայց, միւս կողմից, չիման դալով օտար

մշակոյթների հետ, մենք շատ բան ենք սովորել, ընդօրինակել ու իւրացրել:

Այսպէս չի եղել թուրք-թաթարական ցեղերի յաղթանակն ու տիրապետութիւնը. սրանք ամէն բան քանդել են եւ փոխարէնը չեն տուել ոչինչ: Չեն տուել, որովհետեւ ոչինչ չեն ունեցել տալու: Ո՛չ միայն մի նոր բան չեն սովորեցրել մեզ, այլ եւ ծանր փականքներ դրել մեր սեփական ստեղծագործութեան վրայ, զրկել են յառաջդիմելու ամէն հնարաւորութիւնից: Իսկ ով չի յառաջդիմում՝ արդէն յետադիմում է: Եւ ահա՝ Անիի ճարտարապետական գոհարներից ուղիղ դար յետոյ մենք չենք կարողացել չինել մի ուրիշ բան, քան Ալեքսանդրապոլի կոպիտ ու տգեղ Սուրբ Փրկիչը, իսկ Տրդատ ճարտարապետի այլասերուած ժառանգները կառուցել են Բոսֆորի ափերին այնքան զռեհկօրէն ճոխ ու պեղարուեստականօրէն այնքան անճաշակ, այնքան անհեթեթ պալատներ...

Մենք շատ բան կորցրինք թուրքական լուծի տակ:

Բայց կորուստը մերը չէր միայն. թուրքական տիրապետութիւնը հայ երկրի վրայ, կործանելով հայ ազգային մշակոյթը — միաժամանակ — եւ այդ իսկ պատճառով — թուլացրեց նաեւ համամարդկային օրգանիզմը, որովհետեւ անգործութեան եւ յետադիմութեան մատնեց նրա ստեղծագործող օրգաններից մէկը:

Ահա մի հանգամանք, որ լրջօրէն հաշուի պիտի առնուի ամէն անգամ, երբ դրւում է ազգային պայքարի խնդիրը:

Եթէ ազգերի մէջ տեղի ունեցող պայքարի ելքը որոշւում է միմիայն ֆիզիքական ոյժի գերազանցութեամբ, յաղթանակը կարող է լինել — ու յաճախ լինում է — կորստաբեր ամբողջ քաղաքակրթութեան համար առհասարակ, ուրեմն, նաեւ հենց իրեն՝ յաղթողի համար:

Պէտք է մի քայլ էլ առաջ գնալ:

Կորուստը տեղի է ունենում ոչ միայն այն ժամանակ, երբ ստորին աստիճանի կամ անպըտուղ մշակոյթը զալիս է խեղդելու աւելի բարձր աստիճանի մշակոյթ, այլ եւ այն ժամանակ, երբ խեղդուողը՝ աւելի թոյլ լինելով հանդերձ՝ ինքնըստինքեան կենսունակ է ու առողջ, ընդունակ է զարգանալու եւ իր ուրոյնութիւնը հաստատելու:

Այսօր ռուս ազգը չատ աւելի զօրեղ է, քան հայ ազգը, — եւ ոչ միայն ֆիզիքապէս — իր ծաւալով, նիւթական կարողութիւններով, պետական կազմով ու դինուորական ոյժով, — այլ նաեւ ազգայնօրէն, այսինքն՝ իր ազգային մշակոյթով: Այսպէս՝ ռուսական դրականութիւնը չատ աւելի զօրեղ է — եւ ըստ քանակի, եւ ըստ որակի — քան հայկականը: Բայց եթէ — ինչ-ինչ պատճառներով ու ինչ-ինչ միջոցներով, նոյն իսկ զուտ մշակութային միջոցներով, առանց ոս-

տիկնական, տնտեսական կամ օրէնսդրական ճնշումների — ռուսական դրականութիւնը դար խեղդելու հայկականը՝ սա եւս կը լինէր կո–րուստ, անպայման կորուստ:

Որովհետեւ այն հանգամանքը, թէ ռուսա–կանի հետ համեմատած հայ դրականութիւնը պակաս ուժեղ ու պակաս հարուստ է — դեռ ա–պացոյց չէ, թէ նա ինքնըստինքեան անկենսու–նակ է, անպէտք ու անարժէք, անպտուղ... Եթէ այս ճամբու վրայ կանգնելու լինէինք, պէտք է մահուան դատապարտէինք նաեւ ռուս դրակա–նութիւնը, որովհետեւ սա եւս իր հերթին պա–կաս զօրեղ ու պակաս հարուստ է անգլիականի հետ համեմատած:

Համամարդկային տնտեսութեան ու յառաջ–դիմութեան տեսակէտից, հայ դրականութեան — ուրեմն եւ հայ լեզուի, ուրեմն եւ հայ ազգի — մահը ողջունելի կը լինէր այն դէպքում մի–այն, երբ նա սպառած լինէր իր բոլոր կարողութիւն–ները, ստեղծագործելու ամբողջ ընդունակու–թիւնը եւ իբրեւ մի պարապիտ քաշ–տալիս լինէր կեա–կենդան զոյութիւն: Կենդանի դիակներ կամ դիակացած կեանքեր հարկաւոր չեն մարդկու–թեան — եւ խակ դիակներին իրենց — ու որքան չուտ յանձնուած հողին — այնքան լաւ:

Ազգերը անմահական չեն: Եւ եթէ մի ազգի մահուան պատճառը իր իսկ ներսից է — ասենք՝ օրգանական է, — ոչ վրդովուելու, ոչ էլ ցաւե–

լու պատճառ ունենք. մահը այն մեծ սանիտարն է, որ մաքրում է երկրագունդը անպէտքացած էակներից ու տեղ պատրաստում նոր կեանքի համար:

Ուրիշ բան է, երբ կատարւում է սպանութիւն:

Այստեղ արդէն չատ բան ունենք ասելու, որովհետեւ սա ամենից սկզբ ոճիրն է՝ ոչ միայն սպանուողի, այլ եւ ամբողջ մարդկութեան համար:

Եւ եթէ մարդկութիւնը անտարբեր ականատես է մնում կատարուող ոճիրին կամ փորձ չի անում պատասխանատուութեան կանչելու ազդապանին՝ մարդկութիւնը ինքը արդէն ոճրագործ է ու մեծ կարիք ունի ինքնաքուժման:

Իսկ եթէ մարդկութիւնը չունի միջոցներ՝ ազգերի կեանքը ապահովելու կամ նրանց դէմ կատարուած ոճիրները պատժելու համար — ինչպէս պետութիւնները՝ օրէնքի, դատարանի ու զինուած ոյժերի միջոցով՝ ապահովում են քաղքացիների կեանքը ու պատժում ոճրագործներին — ապա ուրեմն մարդկութիւնը վատ է կազմակերպուած ու պէտք ունի հիմնովին վերակազմուելու՝ լաւագոյն սկզբունքներով:

Պահանջը ուտոպիական չէ:

Ինքնապաշտպանութեան ու վտանգաւոր օգնութեան անհրաժեշտութիւնը, որ ծնունդ է տալու ու կազմակերպել բոլոր կարգի հաւաքակա-

նուիրեալները առհասարակ, — այդ նոյն անհրաժեշտութիւնը տանելու է անխուսափելիօրէն դէպի միջազգային մի մեծ կազմակերպութիւն։ Հարկաւոր է միայն մի քիչ աւելի լայն տեսութիւն, մի փոքր աւելի խոր գիտակցութիւն ու կազմակերպուելու աւելի մեծ կարողութիւն, քան ունի մարդկութիւնը այսօր։ Այդ գիտակցութեան եւ կարողութեան օրը դալու է անշուշտ ու թերեւս այնքան էլ հեռու չէ...

Ազգերի ինքնորոշման իրաւունքը, որ բարձրաձայն յայտարարուեց Մեծ Պատերազմի ընթացքում եւ ազգային փոքրամասնութիւնների խնդիրը, որ դրուեց խաղաղութեան դաշնագիր մշակելու չրջանում, — սրանք առաջին քայլերն են այդ ճամբու վրայ — թող որ հեղինակները կոզմնակի կամ յետին մտքեր ունեցած լինէին... յայտարարման վաստը ինքնըստինքեան ապացոյց է արդէն, որ խնդիրը հասունացած է ու լուծում է պահանջում —։

Եւ «Ազգերի Լիգա» կոչուած մարմինը, որ այսօր մի դատարկ հնչիւն է միայն, — վաղը դառնալու է իրական ոյժ, փոխադարձ ապահովագրութեան մի հզօր կազմակերպութիւն...

Բայց ի՞նչպէս որոշել, թէ ո՞ր ազգն է կենսունակ ու, հետեւաբար, իրաւունք ունի ապրելու եւ ո՞րը՝ անբուժելի հիւանդ ու, հետեւաբար, լաւ է որ մեռնի։

Ես այդ չգիտեմ եւ չկայ մէկը, որին վստա-

հեմ յանձնել հանելուկի լուծումը։

Առաջին ենթադրութիւնը պէտք է լինի այն, որ ամէն մի ազգ, որ ունի ազգային դիտակցութիւն ու ազգայնօրէն ապրելու կամք — ամէն մի այսպիսի ազգ, միանգամայն անկախ իր այսօրուայ կարողութեան չափից — կենսունակ է ու պիտանի, հետեւաբար, պէտք է ունենայ ապրելու հնարաւորութիւն։

Հակառակը կարող է ապացուցանել մահուան փաստը միայն։

Եթէ մի ազգ՝ ունենալով հանդերձ ապրելու օբեկտիւ բոլոր պայմանները՝ այնուամենայնիւ չապրեց, մեռաւ, — ահա այդ ժամանակ միայն, եւ ոչ դրանից առաջ — կարելի կը լինի ասել, թէ նա անանկ էր, ապրելու անարժան եւ հանդիստ սրտով դագաղը դնել։

Եթէ ես, մի անհատ, ուզում եմ ապրել — ոչ ոք իրաւունք չունի զրկել ինձ օդից, արեգակի լոյսից ու անունդից՝ պատճառաբանելով, թէ անընդունակ եմ ապրելու։ Ունենալ ապրելու տարրական միջոցներ — սա իմ իրաւունքն է։ Զրկել ինձ այդ միջոցներից — նշանակում է սպանել ինձ։

Նոյնն է եւ ազգերի վերաբերմամբ։

Անչուշտ, ազգերը, ինչպէս եւ անհատները, պայքարում են կեանքի ու ապրելու միջոցների համար։ Եւ պայքարի հետեւանքը բնականօրէն լինում է ուժեղների յաղթանակը՝ ի հաշիւ թոյ-

լերէ: Բայց մարդկայնօրէն կազմակերպուած մարդկային հասարականութիւնների մէջ ոյժի եւ թուլութեան դաղափարը մի քիչ տարբեր իմաստ ունի — եւ պէտք է ունենայ, — քան բիոլոգիական աշխարհում: Մարդիկ կազմակերպւում են հենց նրա համար, որ սահման դնեն բիոլոգիական կռուի մարդկայնօրէն անհանդուրժելի ձեւերին, փոխանակ կոյր ու բիրտ ոյժերը աւելի բարձր կարդի ոյժերով, անուանեն մարդկային կեանքերը՝ ընդհանուր չինարարութեան համար:

Եթէ փողոցում մի մարդ, իմ քաակին կամ վերարկուին տիրանալու համար, սպանում ու կողոպտում է ինձ, սա եւս պայքար է եւ ուժեղի յաղթանակ թոյլի հաշուին — յարձակուողը ատրճանակ է ունեցել ձեռին — այսինքն՝ ուժեղ է եղել: — Իսկ ես վերարկուիս տակը պողպատեայ զրահ չեմ ունեցել — այսինքն թոյլ եմ եղել: — Բայց այս ձեւի պայքար եւ այսպիսի յաղթանակ չի հանդուրժում մարդկային հասարակութիւնը, անթոյլատրելի ու վնասակար է համարում եւ արգիլելու համար՝ դինուած պահակներ է կանգնեցնում փողոցների անկիւններում: Իսկ եթէ սպանութիւնն ու թալանը այնուամենայնիւ տեղի են ունենում՝ հետապնդում է ու պատում ոճրագործին, ձերբակալում է, դատի է տալիս ու կախաղան հանում:

Ճիշդ նոյն միջոցները — ու ճիշդ նոյն պատճառներով — պէտք է ունենայ կազմակերպուած

մարդկութիւնը նաեւ աղդերի կեանքը ապահովելու համար:

Մարդասպանը չի կարող արդարացնել իր արածը այն առարկութիւնով, թէ ինքը ուժեղ է եղել, իսկ ես թոյլ — ապացոյց, որ ինքը կարողացել է ինձ սպանել, իսկ ես չեմ կարողացել պաշտպանել իմ կեանքն ու գոյքը: Իմ այս կարգի թուլութիւնը դեռ ապացոյց չէ, թէ ես անպէտք եմ եղել կեանքի համար, ընդունակ չեմ եղել ու, հետեւապէս, իրաւունք չեմ ունեցել ապրելու: Եւ հակառակը՝ աւազակի յաղթութիւնը դեռ ապացոյց չէ, թէ նա իրօք աւելի կենսունակ է, աւելի պիտանի է կեանքի համար եւ ուրեմն իրաւունք ունի ապահովելու իր գոյութիւնը՝ իմ հաշուին:

Նոյնը եւ աղդերի միջեւ տեղի ունեցող պայքարի վերաբերմամբ:

Աղդերի մշակութային կարողութիւնը — հետեւապէս եւ աղդային արժէքը — ոչ միշտ համապատասխանում են իրենց ֆիզիկական կարողութեան — քանակային, պետական կամ ռազմական ոյժին: — Փոքր կոչուած աղդերը յաճախ մեծ դեր են խաղացել ու անդնահատելի ծառայութիւններ են մատուցել մարդկութեան: Պատմութիւնը վայլուն ապացոյցներ է տալիս այս ուշագրաւ ճշմարտութեան:

Երբայեցիները շատ փոքրիկ ու շատ անկապատկերալ աղդ են եղել, բայց տուել են մարդկու-

թեան Հին ու Նոր Ուխտը, Միջոցառումներու դաշտերը։ Հելլադայի յոյները հազիւ մի քանի դաւառակի տէր աղգ են եղել, բայց արել են քաղաքակրթութեան համար աւելի, քան մարդկային այնպիսի ովկիանները, ինչպիսի Հին ու են Չինական ու Հնդկական ազգերը — էլ չեմ խօսում Թուրք-Թաթարական ցեղերի մասին։ — Անգլիական ազգը՝ կէս-վայրենի ցեղերից հազիւ կազմակերպուած՝ տուել է մարդկութեան Շէքսպիրի թատրոնը ու այսօրուայ լուսաւորեալ պետութիւնների քաղաքական կազմը։ Նիդերլանդները, որ ԺԶ. դարում եղել են սպանական հզօր կայսրութեան ծայրագաւառներից մէկը միայն, արել են հետեւեալ դարում այնպիսի մի ճոխ դարուեստ — նկարչութիւն, — որին հաւասարը թերեւս միայն Իտալիան տուած լինի։ Նորվեգիական փոքրիկ ազգը տուեց մեզ մեր օրերում այնպիսի համաչխարհային դէմքեր, ինչպիսի են Իբսենն ու Կնուտ Համսունը...

Դիտմամբ ընտրում եմ այնպիսի օրինակներ, որոնց ազգային բնոյթը անվիճելի է. երբ յեցի-նների կրօնը, հելլէնների քաղաքակրթութիւնը — պետութիւնը, փիլիսոփայութիւնը եւ արուեստը, — Շէքսպիրի թատրոնը, անգլիական պետական սահմանադրութիւնը, Նիդերլանդների նկարչութիւնը, Իբսենի ու Համսունի դրական երկերը — սրանք բոլորն էլ անկասկածելիօրէն ազգային ստեղծագործութիւններ են։

Ազգերի վերաբերմամբ «մեծի» ու «փոքրիկի», ուժեղի ու թույլի, պետականի ու անպետքի խնդիրներ պետք չէ որ ըլլուին. բոլորն էլ ցանկալի են, բոլորն էլ պետանի — ամէն մէկը իր յատուկ սահմաններում եւ իր կարողութեան չափերով:

Քանի կենդանի է ազգը, ոչ ոք չի կարող ասել, թէ ինչ կարելիութիւններ, ինչ թագնուած, ներկայումս դեռ անյայտ զանճեր սնուցանում է նա ապագայի համար:

Քանի կենդանի է ազգը — ամենից փոքրն իսկ, ամենից համեստը — նա իրաւունք ունի ապրելու, ինքնահաստատուելու ու զարգանալու, իրաւունք ունի իր տեղն ունենալու արեւի տակ:

Ազգերի պահպանումը — մշակութային տեսակների պահպանումն է:

Վերացական արդարութեան կամ անառարկելի սանդիմենտալիզմի խնդիր չէ սա, այլ լայնօրէն գիտակցած իրական չահերի պահանջ, ոյժերի տնտեսութեան ու աշխատանքի լաւագոյն բաժանման պահանջ:

Ազգային իրաւազրկութիւնների ու ազգային ճնշումների պատճառով, մարդկութեան կէսը անդամալոյծ է այսօր, անպատուղութեան դատապարտուած: Սա ոչ միայն ոճիր է, այլ եւ բացարձակ յիմարութիւն:

Պահանջը հասունացած է, գիտակցուած ու հրապարակ հանուած: Մենք ապրում ենք մի

պատմական չրջան, ուր սոցիալական — դասակարգային — մեծ պրոբլեմի կողքին ծառացել է նոյնքան մեծ ազգային պրոբլեմը: Երկուսն էլ պէտք է գտնեն բաւարար ու անյապաղ լուծում: Աչխարհի տէրերը — իչխող դասակարգերն ու իչխող ազգերը — պէտք է հասկանան դրութիւնը ու հարթեն ճամբան պատմութեան առջեւ: Հակառակ դէպքում հին ու հնացած աչխարհին ըսպառնում է այնպիսի մի աղէտ (catastrophe), որի նմանը դուցէ դեռ չի տեսել մարդկութիւնը Հռովմի անկումից յետոյ:

Ազգայնօրէն կազմակերպուելու, ինքնահաստատուելու, զարգանալու, յառաջդիմելու եւ լրիւ արտայայտուելու համար՝ ազգ կազմող մարդիկ պէտք է ունենան իրենց Հայրենիքը:

Ի՞նչ ասել է Հայրենիք:

Նկատեցէք մի չատ բնորոչ հանգամանք. որքան սովորական են մեր լեզուի մէջ «ազգ» ու «ազգասիրութիւն» բառերը, նոյնքան անսովոր, օտարոտի ու խորթ են «հայրենիք» ու «հայրենասիրութիւն» բառերը: Տառնեւիններորդ դարում տեղի ունեցած մեր վերածնունդի չրջանում այնքան ենք խօսել «ազգից» ու «ազգասիրութիւնից», խօսել ենք տեղի ու, մանաւանդ, անտեղի, ճիշդ ու, մանաւանդ, սխալ իմաստով, անկեղծօրէն ու, մանաւանդ կեղծաւորաբար — ու բառերը մաչուել են մչտական գործածութիւնից, կորցրել են արժէքը ու խոչոր չափերով վարկաբեկ-

ուել... Մինչդեռ «հայրենիքն» ու «հայրենասիրութիւնը» այն աստիճանի խորթ են եղել մեր լեզուին ու ականջին, որ՝ օրինակ՝ եւրոպական patriotismeը թարգմանել ենք «ազգասիրութիւն» բառերով:

Եթէ չարքաշին հայ մարդու բերանից լսում էք ամէն-ամէն «հայրենիք» բառը, եթէ դրագէտ մշեցին «հայրենիք» է անուանում Տարօնի հովիտը, կարնեցին՝ կարնոյ Բարձրաւանդակը, երեւանցին՝ Արարատեան դաշտը, զանգեզուրցին, Սիւնիքի ձորերը — այստեղ բառը ունի առանձնավայրի իմաստ, ոչ աւելին:

Բայց ծննդավայրը դեռ հայրենիք չէ եւ նոյն իսկ ոչ միշտ հայրենիքի մի մասը, ինչպէս եւ «ազգասիրութիւն»ը patriotisme չէ. տարբեր բովանդակութեան ու տարբեր ծաւալի գաղափար են սրանք:

Ի՞նչու է եղել այսպէս, ինչո՞վ պէտք է բացատրել բառերի այս չփոթումը մեր մէջ «ազգ»ի ժողովրդականութիւնը եւ «հայրենիք»ի անժողովրդականութիւնը:

Պատասխանը դժուար չէ գտնել:

Դարերից ի վեր մենք կազմել ենք Ազգ, դարեր շարունակ — աւելի կամ պակաս ուժգնօրէն — ապրել ենք ազգային կեանք, ունեցել ենք հնուց ու այսօր էլ ունենք շատ չեչտուած ազգային դիտակցութիւն: Եւ բնական է ու հասկանալի, որ մտցրել ենք մեր ամէնօրեայ բառարանի մէջ

այդ գիտակցութիւնն արտայայտող բառը:

Իսկ Հայրենի՞ք:

Հայրենիք վաղուց է որ չունենք: Աւելին — բառի իսկական իմաստով դուցէ երբեք էլ չենք ունեցել: Եւ եթէ ունեցել ենք հեռաւոր անցեալում Հայրենիքի նման մի բան՝ այդ Հայրենիքը եղել է այնքան թերի, անկայուն ու անցողակի, իսկ զաղափարը — այնքան աղօտ, այնքան սաղմնային, որ չի ձգել ամուր արմատներ մեր հաւաքական գիտակցութեան խորքում ու չի ձուլուել անջնջելի բառի մէջ: Իրի ու զաղափարի անգոյութեան կամ երկարատեւ բացակայութեան պատճառով, մենք մոռացել ենք բառը — եթէ մինչեւ գիտցել ենք երբեւիցէ — մոռացել ենք այնքան հիմնովին, որ այսօր վերստին սովորելու կարիք ունենք:

Հարկաւ, գործածութեան մէջ մենք ունեցել ենք «Հայաստան» բառը: Բայց — մինչեւ երէկ-ուայ օրը — ի՞նչ բովանդակութիւն ենք դրել այդ բառի մէջ:

Մինչեւ երէկ մենք հասկացել ենք «Հայաստանը» իբրեւ աշխարհագրական, պատմական կամ, առաւելն՝ իբրեւ ցեղագրական (éthnographie) դերմիւն: Հայրենիք չէ դա: Անշուշտ, Հայրենիքը պարունակում է իր մէջ անհրաժեշտօրէն եւ՛ աշխարհագրական, եւ՛ պատմական, եւ՛ ազգագրական տարրերը, բայց իր ամբողջութեան մէջ մի բան աւելի է, քան այդ տարրերը — հա-

պէս բաղաքական դաշտիար է Հայրենիքը: Եւ ահա այդ էականն է, որ պահասել է մեր ըմբռնողութեան, որովհետեւ պահասել է մեր պատմական կեանքին:

Քաղաքացիի համար Հայրենիքը այն երկիրն է, որի տէրն ու տնօրէնը ինքն է, իր համաքաղաքացիների հետ միասին:

Ազգի համար Հայրենիքը — ազգային պետութիւնն է:

Հայրենիք կազմելու, այսինքն՝ մի երկրի տէր ու տնօրէն լինելու միակ միջոցը պետութիւն հաստատելն է: Այսպէս է եղել անցեալներում, այսպէս է ներկայում եւ, հաւանօրէն, ու, դրժբախտաբար, այդպէս է լինելու դեռ երկար ժամանակ:

Տեսականօրէն դժուար չէ պատկերացնել մարդկային համակեցութեան այնպիսի մի ձեւ, որի մէջ զանազան կարգի խմբաւորումներ — սըբանց թւում նաեւ ազգերը, իբրեւ պատմա-մշակութային ուրոյն միութիւններ, — կազմեն արտապետական — անիշխանական — հայրենիքներ — այսինքն՝ այնպիսի հայրենիքներ, որոնք կապուած չեն պետական կառուցուածքից անբաժան բռնութեան հետ: Այդպիսի մի կացութիւն ոչ միայն դժուար չէ պատկերացնել, այլ եւ լուրջ տուեալներ կան ենթադրելու, թէ այդ ուղղութեամբ է ընթանում պատմութիւնը եւ այդտեղ է բերելու ի վերջոյ:

Անհերքելի է, սակայն, որ անիշխանական ապագայի հնարաւորութիւնները ենթադրում է այնպիսի խոր, այնպիսի արմատական փոփոխութիւններ թէ մարդու անհատական հոգեբանութեան եւ թէ գոյութիւն ունեցող ընկերային փոխյարաբերութիւնների մէջ, որ պետութիւնների իրաւասութեան ամբիճանական սահմանափակումը կատարում է շատ դանդաղօրէն եւ ի սպառ վերացումը պահանջելու է շատ երկար ժամանակ։ Եւ ինչ հեռանկարներ էլ դուշակի կամ ծրագրի ապագայի համար անիշխանականը, անհերքելի է, որ պատմական ներկայ շրջանում պետութիւնն է — ու միայն պետութիւնը — որի մէջ կարող է մարմնանալ — դէթ մասամբ — քաղաքացիի ու աղգի Հայրենիքը։

Ասում եմ՝ դէթ մասամբ, որովհետեւ անցեալ ու ներկայ պետութիւններից եւ ոչ մէկը չի եղել իսկական ու լրիւ Հայրենիք պետութիւնը կազմող բոլոր անհատների ու ամբողջ աղգի համար։

Պետութեան կազմի մէջ լինելը — ինքնըստինքեան — դեռ չի նշանակում տէր լինել այդ պետութեան, ուրեմն, եւ չի նշանակում՝ Հայրենիք ունենալ։ Պետութիւններ կազմող աղգերն ու մարդ–անհատները միշտ բաժանուած են եղել — եւ դեռ այսօր էլ մնում են բաժանուած — երկու տարբեր դասերի, իշխողների ու իշխուածների, իշխանութեան տէրերի ու իշխանութեան ենթա–

կանների։ Մի կողմից՝ աւելի կամ պակաս իրաւատէր «քաղաքացիներ», միւս կողմից՝ աւելի կամ պակաս իրաւազուրկ «հպատակներ» — իսկ հին աշխարհում նաեւ ճորտեր — ահա պետութեան կազմը։

Քաղաքացին քաղաքացի է եւ, հետեւապէս, ունի Հայրենիք այն չափով մեայն, ինչ չափով տէր է երկրին։ Պարզ հպատակը, այսինքն՝ քաղաքականապէս իրաւազուրկ մարդը Հայրենիք չունի, ինչպէս չունի Հայրենիք նաեւ քաղաքականապէս իրաւազուրկ ազգը։

Ճունի, բայց ճգտում է ունենալու եւ, ժամանակի ընթացքում, մեծ նուաճումներ է կատարել — ու չարունակում է կատարել — այս ուղղութեամբ։

Անշուշտ, այսօրուայ ամենից աւելի ազատաշունչ պետութիւնների մէջ անդամ — այն պետութիւնների, որ «ամկավար» հանրապետութիւններ են անուանւում եւ ուր, ըստ օրէնքի, բոլոր քաղաքացիները ու քաղաքացիների բոլոր կարգի խմբաւորումները վայելում են հաւասար իրաւունքներ — այդ պետութիւնների մէջ անդամ փաստօրէն չարունակում է գոյութիւն ունենալ իշխողների ու իշխուածների դրութիւնը, ուրիշ խօսքով՝ հայրենատէրների ու հայրենազուրկների դրութիւնը։

Բայց, այս այսպէս լինելով հանդերձ, եթէ համեմատենք ժամանակակից հանրապետութիւն-

ները՝ Ռամսէս Բ.ի, Նաբուզոդոնոսորի, Ասուր-բանիքալի, Վչտասպեան Դարեհի, Ալեքսանդր Մակեդոնացու, Օկտաւ Աւգուստոսի, Յուստինիանի, Շարլեմանի, ազանական Կարլոս Ե.ի, Մեծն Լուի ԺԴ.ի կամ Մեծն Պետրոսի կայսրութիւնների հետ, չենք կարող չտեսնել, թէ որքան մեծ տարբերութիւն կայ ներկայի ու անցեալի մէջ, եւ պետական հին ու նոր իրաւակարգերի, իշխելու եւ իշխուած լինելու ձեւի ու չափի մէջ: Եթէ պետութիւնը դեռ այսօր էլ լրիւ հայրենիք չէ բոլոր քաղաքացիների համար հաւասարապէս, այնուամենայնիւ այդ գրութեան շատ աւելի մօտ է, քան եղել է հին ժամանակներում — եւ նոյնիսկ մօտակայ անցեալում, օրինակ՝ դեռ երէկ գոյութիւն ունեցող Հաբսբուրգների կամ Ռոմանովների կայսրութեան մէջ: — Նոյնն է եւ ազգերի վերաբերմամբ. որքան էլ հեռու են գոյութիւն ունեցող պետութիւնները «ազգային տներ» կամ «ազգային հայրենիքներ» լինելու պահանջից, այնուամենայնիւ շատ աւելի ազգային են, քան եղել են երբեւէ:

Մի կողմից՝ ազգայնացնել պետութիւնները ու պետականացնել ազգութիւնները, իսկ միւս կողմից՝ պետութեան ներսը բարձրացնել նախկին «հպատակ»ը իրաւատէր «քաղաքացու» աստիճանի — ահա այն ճամբան, որի վրայ կանգնել է վճռականօրէն պատմութիւնը, եւ չկայ ոչ մի պատճառ կարծելու, թէ ապագայում պիտի

չեղուի այդ չիտակ ճամբից կամ կանդ առնի, չդնայ մինչեւ վերջը։

Ազգերը, ինչպէս եւ անհատ քաղաքացիները, սկսել են հասկանալ իրենց կարիքները, հետեւապէս եւ իրաւունքները — որովհետեւ իրաւունքը ուրիշ բան չէ, քան դիտակցած կարիքի ճեւակերպումը։ Ազգերը ուզում են ապրել ազգայնօրէն եւ գիտեն — կամ գիտենալու վրայ են, — որ դրա համար պէտք է ունենան Հայրենիք — մի տուն, մի անկիւն, ուր կարողանան կենտրոնացնել իրենց ստեղծագործական կարողութիւնը եւ ազատօրէն կարգաւորել հասարակական կեանքը — ուրիշ խօսքով՝ պէտք է կազմեն Ազգային Պետութիւն։

Պէտք է կազմեն պետութիւն, որովհետեւ՝ ներկայ պատմական շրջանում՝ ուրիշ ոչ մի կազմակերպութիւն չի կարող ապահովել ազգային կեանքի իսկապէս ազատ, իսկապէս անկաշկանդ զարգացումը։ Ազգայնօրէն ապրելու ու զարգանալու համար ազգը պէտք է ընչի ազգային մթնոլորտի մէջ։ Դպրոց, լեզու, առօրեայ ու պետական կեանքի մէջ, ու գիտական հաստատութիւններ, պատմական ու հնագիտական ուսումնասիրութիւններ, գրադարաններ ու թանգարաններ, թատրոն ու լսարան, գրականութիւն ու մամուլ, արուեստ ու գեղարուեստական արդիւնաբերութիւն — սրանք են, որ սնունդ են տալիս հոգեկան մշակոյթին, այսինքն՝ սրանք են, որ

ապրեցնում են Աղգը: Իսկ այս ամէնը ունենալու համար հարկաւոր են այնպիսի միջոցներ — նիւթական ու ոչ-նիւթական, — որ մատչելի են միմիայն պետութիւններին:

Եթէ ազգը չի կազմում պետութիւն, եթէ չունի իր տրամադրութեան տակ պետական միջոցներ, անյաղթելի դժուարութիւնների է հանդիպում յառաջդիմութեան ճամբի վրայ: Եւ ուրիշ ոչ մի կազմակերպութիւն չի կարող փոխարինել պետութիւնը, որովհետեւ ուրիշ ոչ մի կազմակերպութիւն չի կարող ունենալ պետութեան իրաւասութիւնն ու կարողութիւնը:

«Հպատակ» ազգը օտար պետութեան մէջ — նոյնիսկ ամենից աւելի ազատամիտ ու լայնախոհ պետութեան մէջ — անխուսափելիօրէն մնալու է զրկուած սնունդից: Եւ սրա համար անհրաժեշտ չէ, որ իշխող ազգը — պետութեան տէրը — անպատճառ անբարեացակամ լինի իշխուածի հանդէպ. զրկանքը առաջանալու է ինքնըստինքեան, իբրեւ բնական հետեւանք քաղաքական աննպաստ կացութեան: Իշխող ազգը չատ բնականօրէն — նոյնիսկ ակամայից — պիտի ձգտի հաստատելու իր սեփական ազգային դէմքն ու ծաւալուելու ազգայնօրէն: Բնազդի պահանջ է սա: Ապա պիտի ձգտի ազգայնացնելու իր պետութիւնը, որովհետեւ կեանքը ամէն օր նոր ապացոյցներ է տալիս, թէ որքան օտար տարրերի գոյութիւնը պետութեան ներսում բարդացնում ու դժուարա-

ցընում է պետական մեքանիզմի աշխատանքը, որքան թուլացնում է մեքանիզմը: Ինազգն ու կարիքը՝ լրացնելով մխմեանց ու յենուած ոյժի վրայ՝ կաշկանդելու են իշխուած ազգերի զարգացումը յօգուտ իշխողի: Սա անխուսափելի է: Ու կը մնայ անխուսափելի, քանի գոյութիւն ունեն ազգայնօրէն բարդ պետութիւններ:

Պետութիւնը շատ զօրեղ գործօն է՝ իշխող ազգի անհատականութիւնը հաստատելու համար: Եւ նոյնքան զօրեղ գործօն է՝ իշխուած ազգերը ապազգայնացնելու կամ — առնուազն — նրանց բնական զարգացումը նեղ ու խեղդիչ չրջանակների մէջ սահմանափակելու համար:

Ահա մի պարզ — շատ պարզ, բայց եւ շատ կարեւոր խնդիր — լեզուի խնդիրը:

Ահա մի պետութիւն ունի իր պետական լեզուն, որով օրէնսդրում է, դատում, կարգադրում, վարում պետական բազմաթիւ ու բազմազան գործերը: Քաղաքացին ամէն օր ու ամէն մի քայլափոխին չփւում է այդ լեզուի հետ, որովհետեւ ամէն օր ու ամէն մի քայլափոխին չփւում է պետութեան հետ — գործ է ունենում պետական հաստատութիւնների մէջ, հարկադրուած է լինում դիմելու պետութեան գործակալներին կամ նրանց հրամանները լսելու, կարդալու: Եւ որքան աւելի զարգացած է պետական կեանքը, այնքան աւելի մեծ է պետական լեզուի չրջառութիւնը, հետեւապէս, եւ ազդեցութիւնը: Կարելի

է ասել առանց չափազանցութեան, որ քաղաքակիրթ երկրներում քաղաքացին չարունակ ապրում է ու շնչում պետական լեզուի մթնոլորտի մէջ։

Արդ՝ պետական լեզուն իշխող ազգի լեզուն է։

Սա շատ բնական է։ Բայց այս մի հատիկ հանգամանքը արդէն ինքնըստինքեան՝ նոյնիսկ անկախ պետութեան ցանկութիւնից ու դիտաւորութիւններից՝ բացառիկօրէն արտօնեալ դրութեան մէջ է դնում իշխող ազգութիւնը ի հաշիւ իշխուածների, նրա լեզուին արւում է դործադրութեան մի շատ կարեւոր ասպարէզ, որից միւս լեզուները մնում են զուրկ։ Իսկ դործադրելու անհրաժեշտութիւնը բնականօրէն տանում է դէպի ղարգացում — ինչպէս եւ անդործադրութիւնը կամ սահմանափակ դործադրութիւնը տանում է դէպի անկում, — որովհետեւ կարիքը ամէն մի ստեղծադործութեան հիմնական պայմանն է, նրա դլխաւոր խթանը։

Հայաստանի Հանրապետութեան հաստատման օրից, շատ կարճ ժամանակամիջոցում, հայ լեզուն մտաւ զարգացման այնպիսի մի չրջանի մէջ, որը դարեր չարունակ մնում էր վակ իրեն առջեւ։ Հայաստանցի հայը հարկադրուած է մրչակելու իր լեզուն, որովհետեւ այդ լեզուով պէտք է վարէր իր պետական կեանքը։ Օրէնքներ սահմանադրէր, մեղադրէր ու պաշտպանէր դատական տեհեաններում, բանախօսէր պետական

խնդիրների վրայ, տեսակէտներ ձեւակերպէր ու դեկուցումներ կազմէր, հրամայէր ու կարգադրէր, հաշիւ պահէր ու հաշիւ տար:

Մինչեւ երէկուայ օրը այս բոլորը կատարուում էր կամ ռուսերէն կամ թուրքերէն լեզուով, հայերէնը մնում էր պետական չրջառութիւնից դուրս եւ այս իսկ պատճառով չէր զարգանում ռուսերէնի կամ թուրքերէնի հետ հաւասար թափով: Ընդհակառակը՝ տեղի էր տալիս, տկարանում էր ու նոյնիսկ մոռացւում: Չեմ ուզում ասել, հարկաւ, թէ պետական կեանքից դուրս՝ անուելու ուրիչ աղբիւր չունի լեզուն: Եթէ այդպէս լինէր, չատ լեզուներ — սրանց թւում նաեւ հայերէնը — չատոնց արդէն անհետացած պիտի լինէին: Ո՛չ, ուզում եմ ասել միայն, որ լեզուի զարգացման համար պետական կեանքը խիստ կարեւոր գործօն է — ամենակարեւորներից մէկը: Առանց սրան լեզուն չի կարող զարգանալ հարկաւոր թափով ու մանաւանդ չի կարող դրսեւորել իր լրիւ, ամբողջական արտայայտութիւնը: Մի չա մնալու է մի բաց, մի խոշոր պակաս, որը չի լրացուի ուրիչ ճանապարհներով, որովհետեւ ընկերային կեանքի տարրերը տարբեր պահանջներ են դնում լեզուին, հետեւապէս եւ տարբեր ուղղութիւններով են մղում նրա զարգացումը: Պետական խօսքը, ուրոյն բնոյթի խօսքը, պահանջում է լեզուից այնպիսի յատկութիւններ եւ այնպիսի կարողութիւններ, որ չունի ո՛չ ընտա-

նիքում կամ չուկայում գործադրուող առօրեայ խօսակցութիւնը, ո՛չ լրագրական, ո՛չ դեղարուեստական եւ ոչ իսկ դիտական լեզուն: Սրանց բառարանը, ոճը, նոյնիսկ քերականութիւնը — որքան էլ զարգացած լինեն — բաւական չեն պետական գործերը վարելու եւ պետութեան առելիքը ձեւակերպելու համար: Բառարանը պէտք է լրացուի նոր կամ մոռացուած բառերով, ոճը պէտք է ազատուի անճկութիւնից ու անորոշութիւնից, կարուկ ու աներկրայելի չեչտ առնի, քերականութիւնը պէտք է չրջառութեան մէջ դնի յատուկ ձեւեր...

Համեմատեցէք ուշադրութեամբ որեւէ պետական դրութիւն — մի օրինագիծ, կառավարական մի յայտարարութիւն, մի դեկուցագիր, դատական մի որոշում, վարչական մի հրաման կամ կարգադրութիւն — ուրիշ կարգի դրութիւնների հետ — օրինակ՝ լրագրական յօդուածի, վիպական պատմուածքի, բարեկամական նամակի կամ քարոզների ժողովածուի հետ — եւ կը տեսնէք, թէ որքան տարբեր են սրանց լեզուները:

Լեզուի այս ուրոյն կողմը չի կարող մշակուել պետական կեանքից դուրս, հետեւապէս, ոչ-պետական լեզուները դատապարտուած են մնալու առնուազն կիսատ ու պակասաւոր:

Արդէն այս մի հատիկ հանդամանքը — կըրկնում եմ խօսքս, — արտօնեալ դրութեան մէջ է դնում իշխող լեզուն՝ ի հաշիւ իշխուածների:

Բայց սրանով դեռ չի սահմանափակւում անհաւասար դրութիւնից բխող ամբողջ վտանգը. կան եւ ուրիշ վտանգներ, աւելի սպառնալի, աւելի մահաբեր: Պետութեան մէջ ոչ միայն օրէնսդրական, դատական ու վարչական գործառնութիւնները, այլ եւ ընկերային կեանքի բոլոր արտայայտութիւնները ընդհանրապէս կրում են իրենց վրայ, — աւելի կամ պակաս մեծ չափով, աւելի կամ պակաս ստիպողականութեամբ, — պետական լեզուի ազդեցութիւնը: Դպրոցը, մամուլը, դրականութիւնը, թատրոնը, արդիւնաբերութիւնը, առեւտուրը եւ նոյնիսկ ընտանեկան կեանքը — սրանք բոլորը կապուած են հազար ու մի կապերով պետական կեանքի հետ, հետեւապէս բոլորն էլ ենթակայ են պետական լեզուի դերիշխանութեան: Քաղաքացին հարկադրուած է գիտենալ ու գործադրել պետական լեզուն ոչ միայն պետական հիմնարկութիւնների մէջ, այլ եւ սրանից դուրս, իր առօրեայ կեանքի ամէն մի քայլափոխին: Պարզ է, որ այսպիսի պարագաներում ազգային լեզուն՝ պետականի հետ համեմատած նեղմանում է, ետ է մղւում մի անկիւն, նկատւում է անկարեւոր ու փոքրարժէք եւ այդ իսկ պատճառով՝ արհամարհելի: Անգործադրութեան կամ սահմանափակ գործադրութեան հետեւանքով նա չի զարգանում, ետ է մնում կեանքից, մոռացւում է աստիճանաբար կամ վերլուծւում է միայն «ազգասիրաբար»... Իսկ վերացա-

կան ազգասիրութիւնը — նոյնիսկ եթէ անկեղծ է ու լուրջ, բայց չունի ամուր յենարաններ կեանքի մէջ — այն ոյժը չէ, որ կարողանայ փրկել լեզուն:

Իսկ լեզուն — ազգային կեանքի ամենից էականն, ամենից անհրաժեշտ տարրն է: Առանց լեզուի չկայ ազգային կեանք: Միւս կողմից՝ առանց պետական կազմակերպութեան լեզուն վտանգուած է մեծապէս: Եթէ նոյնիսկ գոյութիւն չունենային ուրիշ կարգի մտահոգութիւններ ու կրիքներ, այս մէկն արդէն բաւական է՝ պետութեան նշանակութիւնը ըմբռնելու համար:

Եւ հասկանալի է, թէ ինչու դիտակցութեան եկած, բայց սեփական պետութիւնից զուրկ ազգերը այդքան բուռն թափով ձգտում են պետականօրէն կազմակերպուելու, ուրիշ խօսքով ազգային հայրենիքներ հաստատելու:

Պետութեան ու հայրենիքի այն հասկացողութիւնը, որ փորձ արի պարզել այստեղ, համեմատաբար նոր է պատմութեան մէջ: Անցեալներում պետութիւնը նկատուել է նուաճողների եւ իշխողների սեփականութիւն, մի որոշ խմբակցութեան՝ մի դասի, մի տոհմի, նոյնիսկ մի ընտանիքի կալուածք — յիշեցէք որ հին ժամանակներում Հայաստանի պետութիւնը անուանուել է յաճախ թագաւորական տների անունով — «Արշակունիների հարստութիւն», «Բագրատունիների հարստութիւն»...: Ժողովուրդը կամ ազգը չեն

նկատուել պետութեան տէր, ուստի եւ նրանց կամքն ու ցանկութիւնը հաշուի չեն առնուել՝ պետութեան սահմանները զծելու, նոր պետութիւններ կազմելու կամ հինները կազմալուծելու ժամանակ: «Հպատակները» — այսինքն՝ պետութիւն կազմող մարդկանց ինքնուրոյն ինքը առ հասարիւրը — նկատուել են իբրեւ իր, որ կարող է անցնել ձեռքից ձեռք այնպէս, ինչպէս անցնում է սարը, հովիտը, լիճը, անտառը, լճում ապրող ձուկը եւ անտառում թափառող կենդանին:

Ժողովուրդների ու ազգերի «ինքնորոշման» իրաւունքը — հետեւապէս եւ անջատուելու, սեփական պետութիւն կազմելու իրաւունքը — նոր դաղափար է, որ հրապարակ է եկել ու մասամբ իրականացել միայն ԺԹ. դարում եւ ուժգնօրէն չեչտուել միայն մեր ապրած օրերում: Բայց՝ այս այսպէս լինելով հանդերձ՝ սխալ կը լինէր կարծել, թէ դաղափարը բոլորովին անծանօթ է եղել հին աշխարհին: Ոչ, մեզանից դարեր առաջ — դեռ վերածնունդի չրջանում — որոշակի արտայայտութիւն է դտել այն միտքը, թէ մարդկային հաւաքականութիւնները ինչ որ իրաւունքներ ունեն, որ պիտի հաշուի առնուեն ու յարգուեն պետութիւններ կազմելիս:

Ահա մի օրինակ.

ԺԵ. դարի երկրորդ կէսում լեհական թագաւոր Կազիմիր Դ. պահանջ է դրել՝ կցել Լեհաստանին Պոմերանիա նահանգը, որ այդ ժամանակ

դանուելիս է եղել Տեւտոնական Ուխտի — ապա-
պայ Պրուսիայի — գերիվանութեան տակ: Պա-
հանջը հիմնաւորել է այսպէս.

ա.— Պոմերանիան քնակեցրել ու չէնացրել են Լեհաստանի հիմնադիր Լեհ թագաւոր ու իր յա-
ջորդները եւ հետագայում — երկար ժամանակ — տիրապետել են երկրի վրայ լեհ վերապետնե-
րը: Այս արդումենտը այսօր մենք կ'անուանէինք պատմական:

բ.— Պոմերանիայի աշխարհագրական դիրքն ու կազմը ցոյց են տալիս, որ նա Լեհաստանի քնական շարունակութիւնն է ու անբաժանելի մասը: Սա աշխարհագրական արդումենտ է: «Քնական սահմանների» պահանջ: Եթէ լեհ. քա-
ղաքագէտները աւելացնէին սրա վրայ նաեւ այն, որ Պոմերանիայի ազգաբնակութիւնը՝ չնորհիւ երկրի աշխարհագրական դիրքին՝ անտեսապէս սերտօրէն կապուած է Լեհաստանի հետ — սա կը լինէր տնտեսական արդումենտ:

գ.— Պոմերանիայում ապրող ժողովուրդը ազ-
գայնօրէն լեհ է ու միշտ լեհ է եղել — ապացոյց՝ լեռների, դետերի, քաղաքների ու գիւղերի ա-
նունները, որ ամբողջովին լեհական են: Սա ազ-
գային արդումենտ է, յենուած լեզուական տը-
ւեալների վրայ:

դ.— «Պոմերանիայի ազնուականութիւնը, բաղթեթիութիւնը եւ բոլոր կարգի հպատակները չեն ուզում տանել օտար տիրապետութիւն եւ ու-

զում են միանալ Լեհաստանի հետ, համաձայն աստուածային ու մարդկային օրէնքների»։ *Ահա ինքնորոշման իրաւունք, յստակօրէն ձեւակերպուած եւ որակուած իբրեւ աստուածային ու մարդկային օրէնք։*

Նոյն կարգի մի ուրիշ օրինակ՝ աւելի եւս քնորոշ։

ԺԶ։ դարի առաջին կիսում վէճ է ծագել Ֆրանսայի ու Սպանիայի միջեւ՝ Բուրգունդիայի վերաբերմամբ։ Ֆրանսական թագաւոր Ֆրանսուա Ա։ նեղին դրուած՝ կնքել է Մադրիդում սպանական թագաւոր Կարլոս Ե։ի հետ մի դաշնագրութիւն, որով հրաժարուել է Բուրգունդական դքսութիւնից յօդուտ Սպանիայի։ Կարլոսը դրել է իր պահանջը ու Ֆրանսուան տեղի է տուել այն հիման վրայ, որ Կարլոսը — մօր կողմից — բուրգունդական վերջին դուքս Շարլ Ցանդուզնի թոռն է, մինչդեռ Ֆրանսուայի աղգակցական կապերը նոյն իշխանական տան հետ աւելի հեռաւոր են եղել։ Այսինքն, դաշնագրութիւնը հիմնաւորուել է ընտանեկան կապակցութեան ու ժառանգելու իրաւունքի վրայ։

Ֆրանսիական իրաւաղէտները — անշուշտ Ֆրանսուայի թելադրութեամբ — ապօրինի են յայտարարել Մադրիդի դաշնագրութիւնը։ Ինչո՞ւ։ Որովհետեւ — բացատրել են Սորբոնի պատուն վարդապետները — չի կարելի բաժանել մի նահանգ այսինչ պետութիւնից ու կցել այնինչ

պետութեան առանց հարցնելու ազգաբնակութեան կամքը: Ուրիշ խօսքով՝ իրենք բուրգունդացիները են — եւ ոչ թագաւորները, — որ պիտի որոշեն, թէ Բուրգունդիան ո՞ր պետութեան է պատկանելու — Ֆրանսիայի՞ն թէ Սպանիային: Ազատական ժառանգելու իրաւունքին հակադրուում է խիզախօրէն ժողովուրդների ինքնորոշման իրաւունքը:

Ցանուն այս իրաւունքի եւ վէճը արդարօրէն լուծելու համար, դումարուում է Դիժոն քաղաքում բուրգունդական Etatների ժողովը — այսինքն՝ առաջին երեք դասակարգերի — հոգեւորականութեան, աշնուականութեան եւ քաղքենիութեան ներկայացուցիչների ժողովը — որ այն ժամանակ համարուում էր ամբողջ ազգաբնակութեան ներկայացուցչութիւն, քանի որ այդ արտօնեալ դասակարգերից դուրս գտնուող զանգուածները մարդու տեղ չէին դրուում: — Etatները արտայայտուեցին Ֆրանսիայի օգտին եւ Մագրիդի դաշնագրութիւնը այդպիսով բեկանուեց:

Նման մի գործողութիւն այսօր մենք Պլեբիսցիտ (հանրաքուէ) կ'անուանենք:

Մեզ հետաքրքրող խնդիրի տեսակէտից կարեւոր չէ, թէ Etatները ո՞ր աստիճանի էին ներկայացնում Բուրգունդիայի ազգաբնակութիւնը եւ թէ ո՞ր աստիճանի ազատ ու անկեղծ է եղել Դիժոնի համագումարը:

Շատ հաւանական է, որ Բուրգունդացիների

ահագին մեծամասնութիւնը իսկի տեղեկութիւն էլ չի ունեցել վէճի ձայնատուութեան մասին եւ եթէ իրեն հարցնելու լինէին՝ թերեւս մեծ տարբերութիւն չդնէր Սպանիայի ու Ֆրանսիայի միջեւ. անդիտակից ու իրաւազուրկ հպատակի, մի պարզ ճորտի համար ի՞նչ տարբերութիւն, թէ ո՞ւմ է վճարում հարկը եւ ո՞ւմից է ուտում ծեծը՝ բարեպաշտ ու խնամատար Ֆրանսուա թագաւորի՞ց թէ՞ բարեպաշտ ու խնամատար Կարլոս թագաւորից: Շատ հաւանական է նաեւ, որ Ֆրանսուա թագաւորի դործակալները ազատ չեն ձգել Etatները, նախապատրաստել են ընտրութիւնը, բարդ իւտրիգների, սպառնալիքների, խոստումների ու կաշառքի ճանապարհով...

Բայց, ասում եմ, սա չէ կարեւորը: Կարեւորն այն է, որ արդէն ԺԶ. դարում ձեւակերպուել է ազդարնակութեան ինքնորոշուելու իրաւունքը եւ հակադրուել՝ երկիրներ ժառանգելու, նուաճելու, ծախելու, նուիրելու ու փոխանակելու վաղեմի իրաւունքներին:

Կազիմիր Դ.ի ու Ֆրանսուա Ա.ի իրաւական հիմնաւորումները Պոմերանիայի ու Բուրգունդիայի չուրջ ծագած վէճերի մէջ — բացառիկ ելրեւոյթ է այն ժամանակների համար, ամբացած ու ընդհանրացած հասկացողութիւնների կատարեալ յեղաշրջում: Հետագայ դարերում — ու մասնաւորապէս Ֆրանսիական մեծ յեղափոխութիւնից յետոյ, որ ապշեցուցիչ թափով խորտա-

կեց հին աշխարհը, հին կարգերն ու հասկացողութիւնները եւ խիզախօրէն հռչակեց «մարդու ու քաղաքացիի իրաւունքները», գաղափարը աստիճանաբար ամրացաւ, այժ առաւ, ծորեց վերին չերտերից ժողովրդական լայն զանգուածների խորքերը, քաղաքական ընդհանուր պահանջ դարձաւ ու խոշոր չափերով իրականացաւ:

Այլեւս ոչ ոք չի հերքում ինքնորոշուելու իրաւունքը իբրեւ իրաւասիք — տարբեր բան է գործադրութիւնը, գործադրելու եղանակը, չափն ու ձեւը: — Ժամանակակից քաղաքագէտները, Ժ֊Թ. դարից սկսած, ամէն մի փոփոխութիւն պետական սահմանների — ինչ էլ լինի իսկական չարժառիթը — աշխատում են քողարկել այս քողի տակ, հիմնաւորել ու արդարացնել ժողովուրդների կամքով, իսկական կամ կեղծ:

Ժ֊Թ. դարի չէմքին ռուսական ցար Ալեքսանդրը Ա.ը, միացնելով Վրաստանը իր կայսրութեան, հանդիսաւոր հրովարտակով յայտարարեց, որ անում է այդ ոչ թէ նոր երկրների տիրապետելու եւ իր իշխանութիւնը տարածելու համար, այլ միմիայն ղիջանելով վրաց թագաւորի ու ազգի ջերմագին աղերսանքներին:

Բալկանեան ազգերի անջատումը Թուրքիայից ու սեփական պետութիւններ կազմելը, Բելգիայի անջատումը Նեդերլանդներից, Հիւսիսային Իտալիայի ազատագրումը աւստրիական լուծից ու ապա ամբողջ Իտալիայի հաւաքումը համազգա֊

յին մի պետութեան չրջանակի մէջ, Կուբայի անջատումը Սպանիայից, Նորվեգիայի անջատումը Սուէտիայից, Իսլանդիայի անջատումը Դանեմարքայից, — սրանք բոլորը կատարուեցին ազդերի ինքնորոշման դրօչակի տակ:

Պրուսիան, խլելով Ֆրանսիայից 1871 թուականին Էլզաս-Լոտարինգիան, պատճառաբանեց, թէ այդպիսով նա իրականացնում է ազգաբնակութեան կամքը, վերահաստատում է արդարութիւնը ու պաշտպան կանգնում իրաւունքի, որովհետեւ դերմանական այդ երկիրը՝ իր դերման ազգաբնակութիւնով՝ տառապում էր դառնօրէն օտար լուծի տակ եւ օր-դիշեր երազում էր, թէ ե՞րբ պիտի միանայ մայր Պրուսիայի հետ: Ֆրանսիան, վերագրաւելով 1918 թուականին նոյն Էլզաս-Լոտարինգիան, ասաց որ այդ նահանգների ա-նունը Էլզաս-Լոտարինգիա չէ, այլ Ալզաս-Լորէն, որ դա Գերմանիա չէ, այլ Մերձ-Հռենոսեան Ֆրանսիա, որի ազգաբնակութիւնը արդէն վաղուց դադարել է դերման լինելուց, Ֆրանսիական է հոգով եւ իմպերիալիստական ու միլիտարիստական Պրուսիայի երկաթէ բռունցքն էր միայն, որ կարողացել էր այսքան տարի խեղդել ընդհանուր բողոքի ձայնը...

Մեծ պատերազմի ու հետագայ դաշնագրի հետեւանքով կազմուեցին — կամ վերակազմուեցին — մի չարք ազգային պետութիւններ՝ նախկին ռուսական, Աւստրօ-Հունգարական ու Օս-

մանեան մեծ կայսրութիւնների բեկորներից։ Եւ նորակազմ այս բոլոր պետութիւնների հրաւական հիմքը ինքնորոշուելու սկզբունքն է։

Այսօր ոչ ոք չի վորձում հերքել ազգերի ինքնորոշման իրաւունքը եւ ամէն ոք աշխատում է իր օգտին ծառայեցնել քաղաքական այս նոր դէնքը։

1918 թուականի գարնան Թուրքիան — այն իսկ օսմանեան Թուրքիան, որի պետական նշանաբանը մինչեւ երէկ եղել էր «սրով եմ նուաճել, սուրին միայն կը տամ» — պահանջեց Անդրկովկասեան դաշնակցային Հանրապետութիւնից Բաթումի, Արզահանի ու Կարսի շրջանները, պատճառաբանելով որ դա ազգաբնակութեան ցանկութիւնն է։ Եւ սուպելու համար առաջարկեց նոյն իսկ հանրաքուէ կատարել — հարկաւ, իր յաղթական զօրքերի ներկայութեամբ ու զինուորական վարչութեան հսկողութեան տակ։

Այսօր նոյն Թուրքիան պահանջում է Անգլիայից դատարկել Մուսուլի շրջանը(*), որովհետեւ, ասում է, տեղական քուրդ ազգաբնակութիւնը ուզում է Թուրքիայի հպատակ լինել եւ ոչ Իրաքի — Միջագետքի, որ ազգայնօրէն ստրած է։ Անգլիան պատասխանում է, թէ քուրդերը

(*) Լօզանի դաշնագրով միացուեցաւ Իրաքին։

Ս. Վ.

ճիշդ հակառակն են ցանկանում եւ դրա համար է, որ լինքը մնում է Մուսուլում։

Ռումանիան ու Ռուսաստանը վէճի մէջ են, թէ ո՞ւմ պէտք է պատկանի Բեսարաբիան։ Ռուսները ասում են, թէ Ռումանիան հակառակ պաշտաբնակութեան կամքին՝ ղէնքի ուժով գրաւել է երկիրը ու ղէնքի ուժով հաստատուել է այնտեղ։ Ռումիններն պատասխանում են, թէ Բեսարաբիան լինքը, իր ազատ կամքով ու առանց որեւէ ճնշման, միացել է մայր-երկրին, այսինքն՝ Ռումանիային եւ ուզում է, որ այնտեղ մնան ռումանական զօրքերը՝ ռուսական ոտնձգութիւններին առաջն առնելու համար։ Ազգաբնակութեան իրաւունքը յարգելու եւ ցանկութիւնը իմանալու համար, ռուսները առաջարկում են հանրաքուէ։ Ռումիններն չեն հերքում բեսարաբցիների լինքնորոշուելու իրաւունքը, բայց հանրաքուէից հրաժարուում են, որովհետեւ — ասում են — այսինչ ու այնինչ դործողութիւններով բեսարաբցիները աներկբայօրէն արտայայտել են արդէն իրենց կամքը եւ նոր ստուգման կարիք չկայ... Ու ապա՝ յարձակողականի դիմելով՝ ասում են ռուսներին. դուք, որ այդքան սիրահար էք լինքնորոշումների, լինչո՞ւ չէք անում հանրաքուէ ձեր տիրապետութեան տակ գտնուող երկիրներում, օրինակ՝ Վրաստանում, որ գրաւել էք պատերազմով ու կցել Ռուսաստանին՝ հակառակ վրաց ազգի կամքին։ Ռուսները պատասխանում են, թէ

ոչ ոք չի գրաւել Վրաստանը, թէ Վրաստանը այսօր էլ մնում է Վրաստան ու փոխուել է միայն պետական վարչաձեւը — մի բան, որ ամէն մի պետութեան կատարեալ իրաւունքն է: Վրաստանի աշխատաւորական զանգուածները, բանուորութիւնն ու ընչազուրկ գիւղացիութիւնը — այսինքն՝ ազգաբնակութեան ճնշող մեծամասնութիւնը — ըմբռնացել է մանր-բուրժուական վարչաձեւի դէմ, տապալել է մենշեւիկների լուծը, հաստատել է բանուորա-գիւղացիական իշխանութիւն ու տալա կապուել է դաշնակցական կապերով խորհրդային միւս պետութիւնների հետ... Սա ինքնորոշման սկզբունքին հակառակ բան չէ, այլ փայլուն ու լրիւ իրագործումը:

Զվիճենք ռուսների ու ռումիններէ հետ — դա բեսարաբցիների ու վրացիների գործն է, — այլ արձանագրենք, մի անգամ եւս, որ վիճող կողմերը — երկուսն էլ — աշխատում են յենուել երկրների ազատ կամքի վրայ, որ երկուսն էլ յայտարարում են անբռնաբարելի:

Այսպէս ուրեմն, սկզբունքի վերաբերմամբ վէճ չկայ այլեւս: Ժողովուրդների, ազգերի ու ազգային հատուածների ինքնորոշման իրաւունքը — հեռեւապէս եւ սեփական պետութիւններ կազմելու իրաւունքը — ճանաչուած է, յայտարարուած ու ընդունուած: Միջազգային ու միջպետական կնճռոտ վէճերը փոստաբանւում են այսօր, պաշտպանւում ու հերքւում այդ իրաւունքի անունով:

Արդեօք անկե՞ղծ են ազգերը, պետութիւններն ու կառավարութիւնները, արդեօք իսկապէ՞ս դաւանում են նրանք այդ սկզբունքը, իսկապէ՞ս ցանկանում են նրա իրագործումը — եւ ոչ այլ բան — եւ չունե՞ն արդեօք յետին միտքերը, երբ պահանջում են կամ կատարում քաղաքական նոր քայլանումներ ու նոր միութիւններ:

Դժուար չէ տեսնել, որ յաճախ — նոյնիսկ շատ յաճախ — ինքնորոշման պահանջի յետեւ թաղնուած են ուրիշ կարգի ակնկալութիւններ: Բայց այս հանգամանքը չի կարող նսեմացնել իսկական արժէքը այն ահագին յեղաշրջման, որ կատարուել է արդէն մտքերի մէջ եւ չի կարող չանդրադառնալ — դէթ մասամբ — իրականութեան վրայ: Գաղափարներն ու իրաւահասկացողութիւնները — մանաւանդ երբ ընդհանրացած են, լայնօրէն տարածուած ժողովրդական մեծ զանգուածների մէջ — մի ոյժ են, որը այսինչ ու այնինչ պայմանների մէջ կարող է հարկաւ խեղդըւել, խեաթիւրուել, կեղծուել կամ չհագործուել, բայց որը, ի վերջոյ, գտնելու է իր ուղիղ ճամբան եւ արտայայտուելու է իրրեւ կենսական մի նոր ու զօրեղ գործօն:

Եւ այսօր մենք ականատես վկաներ ենք խնդրի նիւթ դաղափարի յաղթանակին:

Այնուհետ, քաղաքական բաժանումներն ու պետական միութիւնների կազմը դեռ այսօր էլ, 1924 թուականին, չեն համապատասխանում զանգ-

ուածների ինքնորոշման պահանջին, լրիւ ու կատարեալ չեն — դեռ շատ հեռու են լրիւ ու կատարեալ լինելուց: Մնում են բազմաթիւ վէճեր ու խնդիրներ, որ տակաւին չեն լուծուած, կամ լուծուած են անբաւարար, կէս-կատար ձեւով՝ նոյնիսկ ակներեւօրէն հակառակ ինքնորոշման իրաւունքին: Բայց եւ այնպէս՝ դրութիւնը այսօր անհամեմատ աւելի բաւարար է, քան էր տասը տարի առաջ, 1914 Թուականին, եւ 1914ին շատ աւելի բաւարար էր, քան հարիւր տարի առաջ, Ֆր. դարի սկզբում:

Գաղափարը ամրանում է ու մարմնանում արագօրէն աճող թափով:

Եւ ազատան ապահովուած է, որովհետեւ այն նոր իրաւակարգը որ գալիս է — ու մասամբ արդէն եկել է — հիմնովին յեղաշրջելու կապիտալիստական աշխարհը — վաղուան սոցիալիստական իրաւակարգը — նոր ոյժ է տալու սկըսուած պրոցեսին: Նոր ոյժ է տալու, որովհետեւ ազգերի քաղաքական եւ դասակարգերի անհետացման ազատագրումը միմեանցից անբաժան խընդիր է, նոյն կարգի պահանջներ, երկուսն էլ հիմնուած մարդու եւ քաղաքացիի իրաւունքների վրայ եւ ապա երկուսն էլ ունեն թիկունքում նոյն յենարանը՝ դանդուածների աճող գիտակցութիւնը ու պայքարի համար կազմակերպուելու կորովը:

Ազգերը կարիք ունեն ազգային պետութիւն-

ներ կազմելու, պիտակցել են կարիքը, պահանջները են ըրել, մասամբ բաւարարուել եւ չարունակում են պայքարը՝ լրիւ բաւարարուելու համար։

Մինչեւ ո՞ւր կարելի է տարածել ինքնորոշման այս անժխտելի իրաւունքը, արդեօք ամէ՞ն մի ազգ կամ ամէն մի ազգային հատուած — ինչ էլ լինի կարողութիւնների չափը — պիտի օգտուի՞ այս իրաւունքից՝ մինչեւ սեփական պետութիւն կազմելու աստիճանը։

Տեսականօրէն, իրրեւ սկզբունք, ոչ մի սահմանափակում, ոչ մի արգելք պիտի չդրուի ոչ ոքի կամքի վրայ։ Տեսականօրէն ամէն մի զաւառակ, ամէն մի դիւղական համայնք իրաւունքը պիտի ունենայ ազատօրէն ինքնորոշուելու եւ ինքնորոշման ճանապարհով գնալու այնքան հեռու, որքան կը ցանկանայ — մինչեւ պետական առանձին միաւորիւն կազմելը։

Ակներեւ է, սակայն, որ գործադրութեան ժամանակ այս զուտ տեսական իրաւունքը հանդիպելու է յաճախ անյաղթելի արգելքների։ Բաւական չէ ցանկալը ու իրաւունք ունենալը. պէտք է եւ կարողանալ։ Կայուն ու կենսունակ լինելու համար՝ պետութիւնը պէտք է ունենայ ներքին կարողութիւններ եւ ապա արտաքին պայմանների բարեյաջող զուգաւորում — դէթ նուազագոյն չափով։ Հակառակ պարագաներում պետութիւն չի կարող կազմուել։ Իսկ եթէ պատահաբար կազմը-

ւեց՝ հետեւեալ օրն եւեթ պիտի խորտակուի կամ — բարիքի փոխարէն — մի մեծ աղէտ պիտի դառնայ աղատագրուած քաղաքացիներէ դլխին։

Բայց ի՞նչպէս որոշել, թէ ո՞րն է կարողութեան անհրաժեշտ նուազագոյնը։

Եւ առաջին հերթին՝ ո՞րչափ հող ու ո՞րքան մարդ է հարկաւոր կենսունակ մի պետութիւն կազմելու համար։

Պատմութիւնն ու քաղաքական արդի կացութիւնը որոշակի պատասխան չեն տալիս հարցին։ Աւելի ճիշդը՝ պատասխանում են այն մտքով, թէ պետութիւններ կարող են լինել չատ տարբեր չափերի, ամէն մի չափի։

Զինաստանը — բուն Զինաստանը, առանց Մանչուրիայի ու հպատակ մեւս երկիրների — ունի 370 միլիոն աղգաբնակութիւն — մարդկային մի անծայրածիր բազմութիւն, որ եթէ ձեռք ձեռքի տար, կը կազմէր մի չղթայ, որը տասնը-հինդ անդամ կը չղթայէր երկրադնդի չուրջը, բեւեռից բեւեռ անցնելով։ Այդպէս է Զինաստանը, իսկ Լուքսեմբուրգի դքսութեան սահմաններում ապրում է ընդամէնը 200 հազար մարդ — հազիւ մի մէջակ քաղաքի բնակչութիւն։ Նոյնը եւ տարածութեան վերաբերմամբ. ցարական Ռուսաստանը բռնել էր ամբողջ երկրագնդի մի վեցերորդ մասը, Բալթեան ծովից մինչեւ խաղաղ ովկիանը ու Թիան-Շանի փէչերից մինչեւ բեւեռային սառոյցները, մինչդեռ Մո-

Նակոյի իշխանութիւնը այնքան փոքր է, որ եթէ մէկ ծայրում փռչտաս մի քիչ բարձր, ձայնդ միւս ծայրը կը հասնի...

Ահա թէ որքան անեղը են կարելիութեան սահմանները:

Կարելի է առարկել, թէ Լիւքսեմբուրգի դըքսութիւնը ու Մոնակոյի իշխանութիւնը օպերետային պետութիւններ են, քաղաքական թիւրիմացութիւն կամ գաւեշտ, դուրկ որեւէ իրական արժէքից... Թերեւս: Բայց ո՞րը հաշուել իրական պետութիւն, ո՞րտեղից սկսել եւ ո՞ւր կանդ առնել: Չէ՞ որ միւս բոլոր պետութիւնները — որ պետութիւն ենք համարում ու չենք կարող չհամարել — դասաւորուում են այս երկու ծայրերի — Զինաստանի ու Մոնակոյի միջեւ՝ սկսած Գերմանիայից — իր 63 միլիոն ազգաբնակութիւնով — ու աստիճանաբար իջնելով մինչեւ Սալբանիա — որի ազգաբնակութիւնը մի միլիոնի էլ չի հասնում:

Ահաւասիկ մի քանի թուեր.

Մեծն Բրիտանիան (Անգլիա) ունի 45 միլիոն ազգաբնակութիւն, Ֆրանսիան՝ 39 միլիոն, Իտալիան՝ 33 միլիոն, Սպանիան՝ 20 միլիոն Լեհաստանը՝ 15 միլիոն, Հունգարիան՝ 12 միլիոն, Աւստրիան՝ 8 միլիոն, Բելգիան՝ 7 ու կէս միլիոն, Հոլանդիան՝ 6 միլիոն, Սուէդիան՝ 5 ու կէս միլիոն, Բոլգարիան՝ 5 միլիոնից պակաս, Ցունաստան՝ 4 միլիոն, Դանեմարքը՝ 3 միլիոնից պա-

կաս, Նորվեգիան՝ 3 միլիոնից պակաս։ Լաթվիան՝ մօտ 2 միլիոն, Ալբանիան՝ մի միլիոնից պակաս։ Կենտրոնական Ամերիկայում Գուատեմալա ու Սալվատոր ունեն մէկ ու կէսից մինչեւ երկու միլիոն աղգաբնակութիւն, Նիկարագուա, Հոնտուրաս ու Պանամա մօտ կէս միլիոն ամէն մէկը(*)...

Արդ՝ ո՞րն է թուային անհրաժեշտ նուազագոյնը, ո՞րն է կարելին եւ ո՞րը՝ անկարելին։

Սահմաններ չկան։

Իրականութիւնն այն է, որ պետութիւն կազմում են եւ չորս հարիւր միլիոն մարդը — Չինաստանը — եւ քսան հազար մարդը — Մոնակօ — եւ քանիերկու միլիոն քառակուսի կիլոմեթր տարածութեան վրայ — նախկին Ռուսաստան — եւ երկու կիլոմեթրի վրայ — Մոնակօ։

Պարզ է, որ մարդկանց թիւը ու հողի տարածութիւնը չեն — կամ միայն սրանք չեն — որ որոշում են պետականօրէն կազմակերպուելու կարելիութիւնը կամ անկարելիութիւնը։ Կան եւ ուրիշ պայմաններ — ներքին եւ արտաքին — որոնք, թերեւս, աւելի կարեւոր են, քան թուա-

---

(*) Չպէտք է մոռնալ, որ Ֆաջզունիի այս յօդուածը գրուած է 1924ին, հետեւաբար, այս թուերն էլ 1924ի վիճակին են համապատասխանում։

Ս. Վ.

բանական չափերը: Տեսէք, երեք հարիւր միլիոն հնդիկները չեն կարողանում ազատագրուել անգլիական դերիշխանութիւնից, մինչդեռ ութ հարիւր հազար ալբանացիներին յաջողուեց սեփական պետութիւն կազմել:

Պարզ է նոյնպէս, որ մեծութիւնը — ինքնըստինքեան — չի որոշում պետութեան արժանիքը, նրա «լաւ տեսակի» կամ «վատ տեսակի» լինելը: Փոքրիկ Նորվեգիան, իրրեւ պետական մեքանիզմ աւելի վատ չի կազմակերպուած, պակաս ճեռնհաս չէ իր ներքում ինքնուրոյն պետական կեանք վարելու, քան հսկայական Զինաստանը: Եւ փոքրիկ Դանեմարքում քաղաքացին, իր երկրի մէջ, բաւարարուած է ոչ պակաս, ան ռուսը հըսկայական Ռուսաստանում:

Քաղաքակրթական աստիճանների տարբերութիւնը չէ միայն, որ այս համեմատութեան մէջ առաւելութիւնը տալիս է Նորվեգիային ու Դանեմարքին: Ահա Ֆրանսիան ու Բելգիան, երկու հարեւան պետութիւններ, որ կանգնած են քաղաքակրթական նոյն աստիճանի վրայ: Այստեղ եւս կարելի է ասել, թէ քառասուն միլիոնանոց Ֆրանսիան — իր նեղսում ու անկախ արտաքին գործօններից — աւելի լաւ չի կազմակերպուած, աւելի լաւ չի կառավարւում ու աւելի լրիւ չի բաւարարում իր քաղաքացիներին, քան ութը միլիոնանոց Բելգիան:

Պետութեան մեծութիւնը անպայման ու բա-

ցարճակ առաւելութիւն չէ։ Նոյնիսկ թերութիւն է ու արդելք՝ պետական կեանքը կանոնաւորելու համար։ Եւ եթէ պետութիւնները ապահովուած լինէին արտաքին վտանգներից ու ճնշումներից, նրանց մեծութիւնը կը դառնար մի աւելորդ բեռ կամ — առնուազն — մի անարժէք հանգամանք։

Զգուշաբար ու վերապահումներով եմ գրում, որովհետեւ մտածողութեան այս ուղին կարող է խոշոր սխալմունքների մէջ ձգել։

Իմ գրութեան նիւթը — ազգն է։ Բնական է, որ ուշադրութիւնս մնում է չարունակ կենտրոնացած յատկապէս այդ մէկ նիւթի վրայ եւ որ պետական խնդրին էլ մօտենում եմ ազգային կարիքների տեսակէտից, որովհետեւ եմ պետութեան ամենից առաջ ազգային Հայրենիքը... Բայց պետութիւնը միմիայն ու սոսկ ազգային կազմակերպութիւն չէ, այլ նաեւ — ու չատ խոշոր չափերով — տնտեսական, քաղաքական ու ռազմական կազմակերպութիւն է։

Եւ այս հանգամանքը խիստ բարդացնում է խնդիրը։

Քանի դեռ միջպետական փոխյարաբերութիւնները կը մնան այնպէս, ինչպէս են այսօր — իսկ սրանց արմատական փոփոխումը, որքան էլ հասունացած լինի, վաղը չէ որ պիտի կատարուի, — քանի դեռ դոյութիւն կ'ունենան սահմանային արգելքները, մաքսային գծերը, տնտեսական ճնշումները, իրար խեղդելու ու թալանելու

սխտեմը, քաղաքական ինտրիգները, այդ ինտրիգները սերմանող դիւանագիտական մարմինները ու սրանց քամակում կանգնած բանակները, — քանի դոյութիւն ունի այս ամէնը, պետութեան ծաւալը, նրա ֆիզիքական կշիռը՝ է ու կը մնայ եթէ ոչ բացարձակօրէն վճռական՝ յամենայն դէպս խիստ կարեւոր գործօն:

Հասկանալի է, թէ ինչո՛ւ:

Պետութիւնները անընդհատ պայքարի մէջ են իրար հետ եւ պայքարը — քանի դեռ չկայ միջպետական ոչ մի սանձահարող ոյժ — յանգում է վերջին հաշուին պատերազմի, լուծուում է զէնքով, յօդուտ աւելի լաւ զինուածի: Իր խօսքը լսելի անելու, իր շահերը պաշտպանելու եւ գոյութիւնը ապահովելու համար, պետութիւնը պէտք է պատկառանք ներշնչի հարեւաններին, պէտք է միշտ պատրաստ լինի կասեցնելու ամէն մի ոտնձգութիւն, յետ մղելու ամէն մի յարձակում, ապա նաեւ պէտք է ընդունակ լինի ինքն եւս սպառնալու:

Պաշտպանուելու ու սպառնալու, իր կամքը արժեցնելու ու իրաւունքները յարգել տալու համար, պետութիւնն ունի իր տրամադրութեան տակ բազմազան ձեւեր ու միջոցներ: Սրանց մէջ ամենից տարբերականը, ամենից բիրտը, բայց եւ ամենից ազդուն ու յաճախ անփոխարինելին ռազմական կարողութիւնն է, զօրեղ բանակը: Պետութիւնը պէտք է զինուած լինի, այլ կերպ չի կա-

րող ապրել։ Զինական ոյժը, բանակը — ի՛նչ ա-նուն էլ կրի ու ի՛նչ սիստեմով էլ կազմուած լինի — մի չարիք է, որից չի կարող ազատ մնալ ոչ մի պետութիւն, նոյնիսկ այն պետութիւնները, որոնք դաշնագրերով չէզոք են յայտարարուած։ Բանակը պահանջում է ամենից առաջ մարդ ու նիւթական միջոցներ։ Եւ որքան մեծ է մի պետութիւն, այնքան աւելի ընդունակ է մատակարարելու մարդկային ու նիւթական ոյժ՝ զօրաւոր բանակ կազմելու համար։

Ահա մի հանգամանք, որ արդէն ինքը մենակ ու անկախ ուրիշ հանգամանքներից չատ կարեւոր առաւելութիւն է տալիս մեծ պետութիւններին՝ հանդէպ փոքրերի։

Հարկաւ, մարդու ու նիւթի հետ քանակը դեռ չի բնորոշում բանակների կարողութեան չափը։ Պէտք են, հարկաւ, եւ ուրիշ կարողութիւններ. կազմակերպուելու ընդունակութիւն, ռազմական դաստիարակութիւն, պարտաճանաչութիւն ու խիստ կարգապահութիւն, հոգեկան կրթով, դիտութիւն, տեխնիկա. կատարելագործածը-ւած զէնք... բայց եւ այնպէս՝ քանակի արժէքը մնում է ակներեւ, անժխտելի։

Եթէ վարպետօրէն կազմակերպուած, դաստիարակով մարզուած, չատ հարուստ ու տեխնիկական բոլոր միջոցներով զինուած Անգլիան կարողանում է պահել իր բռունցքի մէջ ահագին Հնդկաստանը — պատճառը քաղաքակրթական աստի-

ճաննելի անչափ մեծ տարբերութիւնն է. քանի անդլիացու դէմ կանգնած է անկազմակերպ, աղքատ, մերկ ու տգէտ հնդիկը՝ որակը կարող է դերակշռել քանակը: Բայց եթէ պետութիւնների քաղաքակրթական աստիճանը մօտաւորապէս նոյնն է — ինչպէս է, օրինակ, ամբողջ Արեւմտեան Եւրոպայում — ծաւալը, մեքանիքական զանգուածը դառնում է անփոխարինելի ոյժ, իրական ու շատ արժէքաւոր առաւելութիւն:

Փոքր պետութիւնները, — աւելի կամ պակաս չափով, բայց միշտ ու անխուսափելիօրէն — կախում ունեն մեծերից, հարկադրուած են յարմարուելու մեծերի ցանկութիւններին կամ ուղղակի կատարելու նրանց պահանջները: Մշտական սպառնալիքի տակ են փոքրերը, մշտական վտանգի մէջ:

Այս անապահով դրութիւնը անդրադառնում է, հարկաւ, պետական կեանքի վրայ, դժուարացընում է այն, կաշկանդում է ազատ զարգացումը, ղրկանքների ու նեղութիւնների է ենթարկում քաղաքացիներին: Մեծն Բրիտանիայի քաղաքացին — առանց որեւէ անհատական արժանիքների ու միմիայն այն պատճառով, որ մեծ պետութեան քաղաքացի է — ունի բաւարարուելու այնպիսի կարելիութիւններ ու միջոցներ, որոնցից զուրկ է ոչ միայն յետամնաց պարսիկը, այլեւ լաւ քաղաքակրթուած ու ընդունակութիւններով օժտուած Նորվեգիացին, Ֆինն ու Զեխը: Պետու-

թիւնը իր ամբողջ թափով կանգնած է քաղաքացու թիկունքում եւ հազարապահակում է նրա անձնական կարողութիւնները: Բրիտանական քաղաքացի լինելը այնպիսի մի առաւելութիւն է, որին Նորվեգիացին, Ֆինը կամ Զեխը չունեն ոչինչ հակադրելու:

Եւ ահա խնդիր է ծագում:

Քանի որ պետութեան մեծութիւնը զօրութիւն է, եւ քանի որ պետութեան զօրութիւնը քաղաքացու զօրութիւնն է եւ հակառակը՝ պետութեան տկարութիւնը քաղաքացու տկարութիւնն է, խմաստութիւն չէ՞ր լինի արդեօք, որ փոքր ու տկար ազգերը հրաժարուէին սեփական ազգային պետութիւն կազմելու պահանջից ու մնային թէեւ օտար, բայց հզօր պետութիւնների մէջ, նրանց հովանիի տակ:

Պետութիւնները կազմող մարդիկ — պետութեան հպատակները կամ քաղաքացիները — իրենց ազգային պահանջների ու կարիքների հետ միասին ունեն նաեւ ուրիշ կարգի, ոչ-ազգային կարիքներ, օրինակ՝ տնտեսական: Եթէ առաջին կարգի կարիքները լայնօրէն բաւարարելու համար պետութիւնը պէտք է ազգային լինի, երկրորդ կարգի կարիքները պահանջում են, որ նա լինի մեծ ու հզօր: Լաւ է, եթէ պետութիւնը միեւնոյն ժամանակ եւ՛ ազգային է եւ մեծ — Ռուսաստան՝ ռուսների համար, Գերմանիա՝ գերմանների համար, Անգլիա՝ անգլիացիների հա-

մար, ճափոնիա՝ ճափոննե՛րի համար։ Բայց եթէ ազգը այնքան փոքր է, որ չի կարող ազգային մեծ պետութիւն կազմել — նորվեգիացին, սուէտը, դանեմարքցին, հոլանդացին, պորտուգալցին, յոյնը, բոլգարը, Ֆինը, էստոնը, լատիչը, լիթուինը, վրացին, հայը — եւ հարկադրուած է՝ կամ մնալ փոքր ու անզօր, ճնշուած ու զրկուած կամ հրաժարուել պետականօրէն ապրելու իրաւունքից — այդպիսի մի ազգ, ո՞րը պիտի դերադասէ, ո՞րը ընտրէ եւ ո՞րից հրաժարուի։

Հարցը կը լինէր շատ վտանգաւոր փոքր ազգերի պետական ձգտումների համար, եթէ իրականութեան մէջ դրուէր այդպիսի մերկ պարզութեամբ, այդքան սխեմայօրէն։

Բայց իրականութեան մէջ, բարեբախտաբար, այդպէս չէ։ Պետութիւնների կեանքն ու փոխադարձ յարաբերութիւնները շատ աւելի բարդ են, պայմանաւորուած են բազմազան հանգամանքներով, որոնք յաճախ կաչկանդում են մեծերի ոտընձգութիւնները եւ հնարաւորութիւն են տալիս փոքրերին ապրելու։

Փոքր պետութիւնները այնքան էլ անզօր ու անպաշտպան չեն մեծերի հանդէպ։

Եւ եթէ իրօք անզօր ու անպաշտպան լինէին, ի՞նչպէս կարող էին ապրել մեծերի կողքին։ Ի՞նչպէս կարող էին ապրել Դանեմարքն ու Հոլանդիան՝ Գերմանիայի կողքին, Բելգիան՝ Ֆրանսիայի կողքին, Ռումանիան ու Բոլգարիան՝

Ռուսաստանի ու Բոլգարիան՝ Ռուսաստանի կողքին, Զուիցերիան չորս հզօր պետութիւնների — Գերմանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի ու Աւստրօ-Հունգարիայի — արանքում սեղմուած:

Պարզ է, որ կան լինչ որ հանդամանքներ, որոնք արգելում են, անհնարին են անում կամ չատ դժուարացնում մեծերի աշխարհակալ ձգտումները:

Հարիւր տարուայ ընթացքում Ռուսաստանը երեք անգամ մտաւ Էրզրում եւ երեք անգամ, առանց ռազմական պարտութեան, հարկադրուած եղաւ դուրս գալու այնտեղից: Կանգնեց Պոլսոյ չէմքի վրայ — Սան Ստեֆանօ — ու ապա յետ քաշեց իր յաղթական բանակը: Հաստատեց Բոլգարիայում իր փաստական իշխանութիւնը ու իսկոյն տեղի տուեց... Ուժասպառ, «հիւանդ» Թուրքիան ու նորածին Բոլգարիան այնքան անզօր էին թւում հսկայական Մոսկուայի հանդէպ, որ կարծես թէ Ռուսաստանը ամենայն հեշտութեամբ պիտի հաստատուէր Էրզրումում, Պոլսում ու Դանուբի վրայ: Բայց չկարողացաւ: Ի՞նչու: Որովհետեւ արդիլեցին ուրիշ մեծ պետութիւնները, հրապարակ բերին այսպէս անուանուած «քաղաքական հաւասարակշռութիւնը» չխախտելու պահանջը: Մեծերի մշտական մրցումը ու փոխադարձ անվստահութիւնը, երկիւղը, նախանձը հակազրութեան — ահա մի կարեւոր հանդամանք, որ որոշ չափերով ապահովագրում է փոքրերի գոյութիւնը:

Ուրիշ կարգի մի օրինակ.

Մեծ պատերազմի սկզբին, երեք չաբաթուայ ընթացքում, Գերմանիան գէնքով նուաճեց, տիրացաւ ամբողջ Բելգիային, իսկ չորս տարի անցած, պատերազմի վերջին, հարկադրուած եղաւ ոչ միայն դատարկել երկիրը, այլեւ ենթարկուեց առաջելական տուգանքի՝ բելգիացիների աւերուած անտեսութիւնը վերաշինելու անուան տակ: Փոքրիկ Բելգիան յաղթեց պատերազմի դաշտում ահարկու Գերմանիային եւ լիուլի օգտուեց յաղթողի բոլոր հնարաւորութիւններից: Ի՞նչպէս պատահեց այս հրաշքը, ինչո՞ւ Գերմանիան — ամենազօր Գերմանիան — տուեց իր օձիքը անզօր հարեւանի ձեռքը, որ այսօր խեղդում է իրեն, թալանում ու ցեխին հաւասարեցնում: Որովհետեւ Բելգիայի հետ էին — ու մասամբ են — Ֆրանսիան, Անգլիան, Իտալիան, Հիւսիսային Ամերիկան, Ճափոնիան... Այս է իր ոյժի գաղտնիքը: Եւ սա բացառիկ դէպք չէ, այլ չատ ընդհանրացած երեւոյթ. իրականութեան մէջ փոքր պետութիւնները չեն մնում մեկուսացած, աշխարհից կտրուած ու մխիթարին սեփական կարողութեան ապաւինած: Քաղաքական չատ բարդ ու կնճռոտ combinaisonների մէջ նրանք կապուած են լինում, աւելի կամ պակաս հաստատուն, աւելի կամ պակաս տեւողական կապերով, ուրիշ պետութիւնների կամ պետական խմբակցութիւնների հետ՝ ընդհանուր չահերը ընդհանուր ոյժե-

րով պաշտպանելու համար: Այսինչ մեծերի ո-
րընճգուխիններին վոքրերը հակադրում են
այնինչ մեծերի պաշտպանութիւնը ու այսպիսով
ապահովում են իրենց դրութիւնը — գէթ մա-
սամբ:

Կայ եւ մի երրորդ հանդամանք, հետեւեալը.
Հպատակեցնել կամ հպատակութեան մէջ
պահել մի երկիր, երբ ազգաբնակութիւնը հա-
կառակ է օտար իշխանութեան, այնքան էլ հեշտ
քան չէ, նոյնիսկ շատ մեծերի համար՝ շատ վոք-
րերի հանդէպ: Եւ որքան աւելի զօրեղ է հակա-
ռակութիւնը, այնքան աւելի մեծ է հպատակեց-
նելու կամ հպատակութեան մէջ պահելու դժուա-
րութիւնը: Այդպիսի մի դէպքում յանճն առ-
նելու համար, մեծերը պէտք է ունենան իրական
շահեր — եւ այնքան լուրջ շահեր, որ արժենան
դէպքացանքին: Հարկաւ, պետութիւնները ձըգ-
տում են լայնացնելու իրենց սահմանները կամ
պինդ պահելու արդէն ունեցածները: Բայց մի-
եւնոյն ժամանակ նրանք խոյս են տալիս նեըքին
ու արտաքին բարդութիւններից, կառավարելու
դժուարութիւններից, ոյժերի ապարդիւն վատ-
նումից — մի բան, որ անբաժանելիօրէն կապ-
ուած է ամէն կարգի բռնութեան հետ: Թերեւս
Գերմանիան կարողանար դէնքի ոյժով կցել Հո-
լանդիան եւ, թերեւս, Անգլիան կարողանար ար-
դիլել Իրլանդիայի անջատումը: Բայց ի՞նչ գնով
ու ակնկալած արդիւնքը պիտի արժենա՞ր արդ-

եօք այդ դինը: Այս հարցի պատասխանը յաճախ լինում է բացասական եւ յաճախ պարզ խոհեմութիւնը դալիս է սահման դնելու մեծերի աչխարհակալական ձգտումներին, հետեւապէս եւ յարդել տալու փոքրերի անկախութիւնը: Եւ որովհետեւ այսպիսի դէպքերում դլխաւոր դործօնը՝ փոքրերի ընդդիմութիւնն է — ներդործական կամ կրաւորական — եւ քանի որ ժողովուրդների ու ազդերի ինքնակառավարուելու պահանջը, հետեւապէս եւ դիմադրելու կարիքը աճում են օր օրի վրայ, օր օրի վրայ աճում են նաեւ նրանց հպատակեցնելու դժուարութիւնները: Այսօր չատ աւելի դժուար է, քան սրանից երկու դար առաջ՝ նուաճել մի երկիր կամ իրաւագուրկ դրութեան մէջ պահել մի ազգ:

Այս այսպէս է: Բայց եթէ փոքր ազդերը իրենց պետական կեանքը ապահովելու համար չունենային ուրիշ միջոցներ բացի յիշածներից, նրանց դրութիւնը կը լինէր չատ անստոյգ, չատ անկայուն, մշտապէս ենթակայ ամէն տեսակ պատահարների:

Զօրեղների փոխադարձ մրցումը, քաղաքական հաւասարակչռութիւնը պահպանելու կարիքը կամ ժամանակաւոր դաչինքներ կապելու հնարաւորութիւնը — սրանք այնպիսի բաներ են, այս կամ այդ դէպքում, որ կարող են տեղի չունենալ, կարող են չյաջողուել եւ կամ կարող են դադարեցնել փոքրերին աննպաստ ձեւով...

Մեծ պետութիւնները թոյլ չտուին Ռուսաստանին հաստատուելու Պոլսում ու նեղուցների վրայ, բայց Անգլիան իւրացրեց Կիպրոսն ու Եգիպտոսը, Աւստրիան գրաւեց Բոսնիա-Հերցոգովինան, իսկ դրանից հարիւր տարի առաջ, Ժ.Ը. դարի վերջերում, երեք մեծ պետութիւններ — Ռուսաստան, Պրուսիա ու Աւստրիա — համաձայնութեան եկան ու բարեկամաբար բաժանեցին իրար մէջ Լեհաստանը: Բելգիան ունեցաւ այնպիսի հզօր դաշնակիցներ, որ ոչ միայն դուրս քշեց իր երկրից Գերմանիային, այլեւ ինքը նստել է այսօր Հռենոսի ափին, բայց 60 տարի առաջ Պրուսիան խլեց Դանեմարքից Շլեզուիգ-Հոլշտեյնը եւ ոչ ոք չբռնեց գիշատիչի ձեռքը, ոչ ոք չկանգնեց պաշտպան փոքրիկ Դանեմարքին...

Միւս կողմից, ժողովուրդների կամքը, ինքնահաստատուելու եւ ինքնակառավարուելու տենչը նոյնպէս բաւական չեն մեծերին ու իշխողներին զսպելու համար: Եգիպտոսն ու Իրլանդիան կարծրացան ազատագրուել Անգլիայի գերիշխանութիւնից, բայց նոյն Անգլիան արեան ծովերի մէջ խեղդեց Հնդկաստանի ապստամբութիւնը եւ Թուրքիան ընդհանուր կոտորածով, ֆիզիքական բնաջնջումով պատասխանեց հայերի քաղաքական ձգտումներին:

Պատմութիւնն ու այսօրուայ իրականութիւնը ցոյց են տալիս, որ եթէ պետականօրէն արդէն կազմակերպուած կամ պետական կեանքի ձգտող

փոքր ազգերը այնքան էլ անզօր ու անօգնական չեն մեծերի հանդէպ, որ եթէ նրանց յաջողւում է յաճախ օգտագործել միջազգային հակառակութիւնները, յենուել արտաքին ոյժերի վրայ կամ նոյնիսկ ներքին դիմադրութեան կարողութիւններով դժուարացնել ու անչահեկան անել մեծերի ոտնձգութիւնները, — այնուամենայնիւ նրանք մնում են մշտական սպառնալիքի տակ եւ ապագան ապահովելու համար պէտք է որոնեն ուրիշ միջոցներ, աւելի վստահելի, աւելի հաստատուն ու աւելի տեւողական:

Այդ միջոցներից մէկը — շատ զօրեղը — դանուած է արդէն ու մասամբ իրականացած կեանքի մէջ. դա պետութիւնների դաշնակցութիւնն է, միացեալ պետութիւններ կազմելու սիստեմը:

Զուիցերիական կոնֆեդերացիան, գերմանական դաշնակցութիւնն ու Յորհրդային Հանրապետութիւնների Միութիւնը Եւրոպայում, ապա Կանադան, Հիւսիս-ամերիկեան Միացեալ Նահանգները, Մեքսիկան, Վենեցուելլան, Բրազիլիան ու Արգենտինան Ամերիկայում, ապա ամբողջ Աւստրալիան ու Հարաւ-աֆրիկեան միութիւնը — դաշնակցային բարդ պետութիւններ են սրանք, որոնց մէջ անդամակցում ու ապահովութիւն են գտնում յաճախ շատ փոքր, շատ անզօր պետական միաւորներ:

Օլդենբուրգը գերմանական միութեան մէջ

ունի ընդամէնը չորս հարիւր հազար քաղաքացի, իսկ Մակլենբուրգ–Ստերլիցը հազիւ մի հարիւր հազար — Երեւան քաղաքի ազգաբնակութեան չափ: Արիզոնա նահանգը Հիւսիս–ամերիկեան միութեան մէջ ունի երկու հարիւր քառասուն հազար քաղաքացի, Նեւադան՝ ութսուն հազար — հայկական մի գաւառ: Զուիցերիական միութեան մէջ կան կանտոններ, որ բաղկացած են մի քանի գիւղական համայնքներից միայն. պատմական Շուիցը ընդդրկում է իր սահմանների մէջ մօտ չիսուն հազար մարդ, պատմական Ուրին՝ մօտ քսան հազար մարդ...

Ահա, ուրեմն, պետական մի սխեմա, որի մէջ կարող են դանել ու գտնում են ապահովութիւն ամենատիօքրերն անդամ:

Օլդենբուրգը, Մակլենբուրգ–Ստերլիցը, Արիզոնան, Նեւադան, Շուիցն ու Ուրին եւ չատ ուրիշ մանր պետութիւններ ամէն մէկն առանձին ու միմիայն սեփական ոյժերին ապաւինած, կամ պիտի չկարողանային ապրել, պիտի խորտակուէին առաջին իսկ հարուածի տակ կամ պիտի լինէին խաղալիք հարեւանների ձեռին, անխնայ չհաղորդման ու ստորնացուցիչ անարդանքի առարկայ: Բայց իրրեւ անդամ Հիւսիս–ամերիկեան, գերմանական ու նոյնիսկ զուիցերիական միութիւնների, այս փոքրերը ներկայացնում են արդէն այնպիսի ոյժ, ունեն ապրելու ու յառաջադիմելու այնպիսի կարողութիւններ եւ իրենց ի–

լաւունքները յարգել տալու այնպիսի ազդու մի-ջոցներ, որ կարող են անվախ, համարձակօրէն նայել ամենից զօրեղների երեսին: Նրանք այլեւս վոջը չեն, նրանք մեծ են՝ մեծ հաւաքականու-թեան մէջ... Այսօր Թուրքիան չի կարող սպառ-նալ Հայաստանին, որովհետեւ Հայաստանի կող-քին կանգնած է Խորհրդային Միութիւնը՝ քա-ղաքական իր ամբողջ կշիռով, նիւթական բոլոր կարողութիւններով ու ռազմական բոլոր ոյժե-րով:

Տեւական դաշնակցութիւններ կազմելու սիս-տեմը լաւագոյնն է մինչեւ հիմա գործադրուած բոլոր քաղաքական սիստեմների մէջ: Լաւագոյնն է, որովհետեւ բաւարարում է միաժամանակ եր-կու հիմնական պահանջ, այն է. մի կողմից հնա-րաւորութիւն է տալիս անհատ պետութիւններին մանրանալ անսահման, ուրիշ խօսքով՝ հնարաւո-րութիւն է տալիս ամենափոքր խմբաւորումնե-րին անգամ «ինքնորոշուել» պետականօրէն, ինք-նամփոփուել ու ինքնակազմակերպուել համա-ձայն իրենց ազգային, պատմական, աշխարհա-դրական, անտեսական կամ որեւէ այլ պահանջի, մեւս կողմից՝ կապելով իրար հետ մանրացած պետական միաւորները ու կազմելով այդ հաւա-քականութիւնից քաղաքական մեծ միութիւններ՝ բազմապատկում է պետական կարողութիւնները թէ՛ իր ներքին կեանքը կարգաւորելու ու զար-

դացնելու համար եւ թէ՛ արտաքին վտանգներից ապահովելու համար:

Հարց է ծագում.

Դաշնակցութիւններին անդամակցող միաւորները կարո՞ղ են նկատուել իբրեւ պետութիւններ, քաղաքական «աղատ ու անկախ» մարմիններ: Դաշնակցային կազմի մէջ մտնելը չի՞ նշանակում արդեօք հրաժարուել պետական ինքնուրոյն կեանքից, զրկուել պետական ազատութիւնից ու անկախութիւնից: Պետութիւնե՞ր են արդեօք Նիւչատել կանտոնը Զուիցերիական կոնֆեդերացիայի մէջ, Վիւրտեմբերգի նախկին թագաւորութիւնը Գերմանիայի մէջ, Կալիֆորնիա նահանգը Միացեալ Նահանգների մէջ, Հայաստանի հանրապետութիւնը Խորհրդային Միութեան մէջ... Ուրիշ խօսքով՝ մանր պետութիւնների վրկութիւնը մեծ դաշնակցութիւնների մէջ չի՞ նշանակում արդեօք մեռցնել այդ պետութիւնները:

Այս հարցին կարելի է տալ տարբեր պատասխան, նայելով թէ ո՛վ ու ի՛նչ պահանջներ է դնում պետութեան, ի՛նչպէս է սահմանում պետութեան իմաստն ու արժէքը:

Պարզ է, որ Կալիֆորնիան ու Վիւրտեմբերգը պետութիւններ չեն նոյն իմաստով, ինչ իմաստով պետութիւններ են Ֆրանսիան ու Իտալիան: Տարբեր ձեւի, քաղաքական տարբեր իրաւասութեան կազմակերպութիւններ են սրանք, թէեւ Վիւրտեմբերգը մի քանի տարի առաջ կը-

րում էր նոյն «թագաւորութիւն» անունը ինչ եւ Իտալիան, եւ Կալիֆորնիան կրում է նոյն «State», «Etat» անունը ինչ եւ Ֆրանսիան:

Կարո՞ղ է Կալիֆորնիան պատերազմ յայտարարել Ճափոնիային: Չի կարող: Կարո՞ղ է սեփական դեսպանատուն հիմնել Բեռլինում: Չի կարող: Կարո՞ղ է դաշն կապել Մեքսիկայի հետ՝ Խաղաղական Ովկիանոսի վրայ իր ազդեցութիւնը հաստատելու կամ ապահովելու համար: Չի կարող: Կարո՞ղ է Սրիզոնայում արդիւնաբերուած ապրանքների վրայ իր ցանկացած մաքսային տուրքերը դնել, կարո՞ղ է Օրեգոնի քաղաքացիներին արգիլել իր երկիրը մտնել: Ոչ, չի կարող:

Ահա, ուրեմն, մի չարք պետական դործողութիւններ, որ Կալիֆորնիան չի կարող կատարել, իրաւասու չէ կատարելու, մինչդեռ Ֆրանսիան կամ Իտալիան կարող են անել այդ ամէնը, յամենայն դէպս իրաւունք ունեն անելու:

Բայց՝ միւս կողմից՝ Կալիֆորնիան ունի իր սեփական օրէնսդիր մարմինը, որ օրէնքներ է սահմանում երկրի համար. ունի դատարաններ, որ դատում ու պատժում են քաղաքացիներին ըստ այդ օրէնքների. ունի սեփական կառավարութիւն, որ կառավարում է երկիրը նոյն տեղական օրէնքների համաձայն. ունի ամէն կարգի պետական հասոյթներ ու սեփական բիւդջէ, որ դանձւում է երկրում ու ծախսւում տեղական կա-

բիքները հոգալու համար... Յետոյ, Կալիֆորնիան ունի իր տեղն ու ձայնը կենտրոնական այն իշխանութիւնների մէջ, որոնք պատերազմ են յայտարարում ու խաղաղութիւն կնքում, դեսպանատներ հաստատում ու դաշնագրեր ստորագրում, մաքսային օրէնքներ մշակում ու արտաքին, միջպետական յարաբերութիւններ վարում:

Արդ, ի՞նչպէս անուանել Կալիֆորնիան. պետութի՞ւն է այդ «State»ը, թէ պետութեան մի «նահանգ» միայն — ինչպէս թարգմանում ենք հայերէն անգլիական «State» բառը, երբ խօսքը վերաբերում է Հիւսիս-ամերիկեան մեծ Միութեան: Եւ եթէ «նահանգ» անուանենք Կալիֆորնիան, ապա ի՞նչ անուն տանք թուրքական «վիլայէթ»ին, ռուսական «դուբեռնիա»յին, ֆրանսիական «տէբարթման»ին, անգլիական «ունթի»ին, որոնք զուտ վարչական միաւորներ են, առանց պետական որեւէ իրաւասութեան:

Տերմինոլոգիայի խնդիրը է սա, որ պէտք է ճշդուի հասկացողութեան դալու համար, որովհետեւ բառերը յաճախ փոխում են իրենց բովանդակութիւնը ու տարբեր պարագաների մէջ դրծածւում են տարբեր իմաստով:

Ներկայ դէպքում ճիշդը կը լինէր այսպէս.

«Պետութիւն է Կալիֆորնիան, թէեւ ոչ բացարձակապէս ազատ ու ոչ բացարձակապէս անկախ: Պետութիւն է, որովհետեւ ունի պետութեան ամենակարեւոր ադդրիպիները, իրաւա-

տութիւններն ու հաստատութիւնները — երկրա-մաս ու քաղաքացիները, պետական սահմանադր-րութիւն ու վարչաձեւ, դատարան ու կառավա-րութիւն: Մինչեւ որոշ աստիճանի եւ որոշ սահ-մաններից դուրս նրա ազատութիւնը կաշկանդ-ուած է իր հետ գոյակցող միւս պետութիւննե-րի իրաւասութիւններով: Կալիֆորնիան ունի պե-տական կեանք, բայց այդ կեանքը նա պէտք է յարմարեցնի, յաճախ նոյնիսկ ենթարկի Միու-թեան հաւաքական կեանքի պահանջներին: Պե-տութիւն է Կալիֆորնիան, բայց սահմանափակ իրաւասութիւններով»:

Այս կարգի պետութիւնը — ինչ անուն էլ կրի — State, ոդյոմ, դքսութիւն, կանտոն, նա-հանգ... — կարո՞ղ է բաւարարել մարդու այն յատուկ պահանջները, որ ծնունդ են տուել պե-տութիւններին, հարկադրել են մարդուն կազմա-կերպուել պետականօրէն:

Նկատեմ անցողակի, որ իրօք անկախ պե-տութիւններ դոյութիւն չունեն ու չեն կարող ու-նենալ, մանաւանդ պատմական ներկայ շրջա-նում, երբ միջպետական կեանքը չաղկապուած է ա՛յնքան սերտ կապերով: Եւ ապագայում էլ ա-ւելի անկարելի պիտի լինի պետութիւնների ի-րական անկախութիւնը, որովհետեւ ապագայում էլ աւելի պիտի բարդանան, ամրանան ու հրա-մայական դառնան այդ փոխադարձ կապերը:

Ապագայի մասին կարելի է, հարկաւ, տար-

քեր կարծիքներ ունենալ, բայց չի կարելի չտես-նել, որ արդէն այսօր իսկ պետութիւնների ան-կախութիւնը աւելի վերացական իրաւունք է, քան իրական փաստ, իրական ղրուիթիւն կամ կա-րողութիւն: Եւ սա ճիշդ է ոչ միայն փոքր, այլ նաեւ մեծ պետութիւնների վերաբերմամբ:

Այնուհետ, ազատ ու անկախ Ֆրանսիան իրա-ւունք ունի առանց մէկի կամքը հարցնելու, ա-ռանց մէկից թոյլտուութիւն առնելու, պատե-րազմ յայտարարել Գերմանիային՝ վերջայլի դաշնագրով ապահովուած առնելիքները ղէնքով ստանալու եւ իր վտանգուած ապագան ապահո-վելու համար: Բայց եթէ Անգլիան դէմ է այդ պատերազմին, Ֆրանսիան չի կարող կիրառել իր անժխտելի իրաւունքը:

1914 թուականին եթէ Գերմանիան հակառակ լինէր՝ Աւստրօ-Հունգարիան չէր յարձակուի Սերբիայի վրայ եւ Ռուսաստանը չէր խառնուի պատերազմի մէջ, եթէ կանխապէս չունենար Ֆրանսիայի համաձայնութիւնը: Ազատ ու անկախ պետութիւնները էին Աւստրօ-Հունգարիան, Գեր-մանիան, Ռուսաստանն ու Ֆրանսիան՝ պատե-րազմելու կամ չպատերազմելու լիակատար իրա-ւունքով, բայց փաստօրէն սրանցից եւ ո՛չ մէկը չէր կարող օգտուել այդ իրաւունքից, առանց սրա կամ նրա համաձայնութեան:

Շուէդիան իրաւունք ունի չճանաչել Խորհըր-դային Ռուսաստանը, անտեսել նրա գոյութիւնը,

խզել ամէն կապակցութիւն ու յարաբերութիւն — դիւանագիտական, առեւտրական, նոյնիսկ վոսա-հեռագրական... իր իրաւունքն է այդ: Բայց իրաւունքի գործադրութիւնը կապուած է այնպիսի դժուարութիւնների, դրկանքների ու վտանգների հետ, որ վաստօրէն Շուէդիան հարկադրուած է ճանաչելու, չի կարող չճանաչել Ռուսաստանը:

Ռումանիան — ինչպէս եւ ամէն մի ուրիշ անկախ պետութիւն — իրաւունք ունի չհաղորդակցելու իր երկրի բնական հարստութիւնները այնպէս, ինչպէս ինքն է ցանկանում, օրինակ՝ իրաւունք ունի համապատասխան օրէնսդրութիւնով պաշտպանել իր նաւթը օտար կապիտալի ոտնձգութիւններից: Բայց տեսէք, որ գործի մէջ չհաղորդուած արտասահմանեան կապիտալը այնպիսի մի սպառնական դէրք է բռնում, որ ահաբեկուած պարլամենտը էական ուղղումներ է մտցնում իր օրէնսգծերի մէջ՝ դրսից թելադրուած պահանջներին բաւարարութիւն տալու համար:

Ռուսաստանը իրաւունք ունի դնել գերմանական մեքենաների վրայ այնքան մեծ մաքս, որքան ինքը կը ցանկանայ, իրաւունք ունի նոյնիսկ ի սպառ փակել իր սահմանները Գերմանիայից եկած ապրանքների առջեւ: Բայց չի կարող դադարեցնել այդ իրաւունքը, որովհետեւ Գերմանիան էլ իր հերթին կը փակէ դռները Ռուսաստանի առ-

ջեւ եւ հացն ու կաչին, բամպակն ու բենզինը կ'երթայ որոնելու Արգենտինայում, Աւստրալիայում, Հիւսիսային Ամերիկայում...

Կարծում եմ որ կարիք չկայ երկարացնելու այս ուղղութեամբ: Թէ «անկախ» անուանուած պետութիւնները իրօք անկախ չեն — բառի իսկական իմաստով, — թէ նրանց անտեսական իրաւասութիւնը սահմանափակուած է իրականութեան մէջ գործադրելու կարողութիւնով, «կախուած» է խոշոր չափերով ուրիշ պետութիւնների բարեհաճ կամքից ու ընդհանրապէս ենթակայ օտար ազդեցութիւնների — ակներեւ ճշմարտութիւն է սա: Եւ այնքան աւելի ակներեւ, որքան աւելի փոքր ու տկար է պետութիւնը:

Այսուհանդերձ, Ֆրանսիայի կախումը օտար պետութիւններից նոյնը չէ, ինչ է Կալիֆորնիայի կախումը Միացեալ Նահանգներից. տարբեր ձեւի ու տարբեր չափի կախումներ են սրանք: Հետեւապէս, վերեւում տրուած հարցը մնում է իր ոյժի մէջ, այսինքն.

Այն սահմանափակ ու պայմանական անկախութիւնը, որ դաշնակցային միութիւնների մէջ վայելում են Կալիֆորնիայի դրութիւնն ունեցող պետական միաւորները, — այդ չափի ու այդ ձեւի անկախութիւնը կարո՞ղ է նկատուել գոհացուցիչ, կարո՞ղ է կալիֆորնիացին ասել, թէ բաւարարուած է պետականօրէն:

Իմ պատասխանը դրական է: Քանի դեռ գո-

յութիւն ունեն պետութիւնները իրենց ներկայ քնոյթով, դիւանագիտական ինտրիգներով ու ռազմական բանակներով, դաշնակցելու սիստեմը լաւագոյն քաղաքական սիստեմն է: Եւ որքան աւելի ընդհանրանայ սիստեմը, որքան աւելի ընդարձակուի Միութիւնների ծաւալը ու կրճատուի թիւը, այնքան աւելի լաւ: Հեռանկարում — հեռաւոր ապագայում — այս նոր ուղին՝ աստիճանաբար զրաւելով նորանոր բարձունքներ, բերելու է մինչեւ մի հատիկ Համաշխարհային Միութիւն, որ ուրիշ բան չէ, հարկաւ, քան պետական անջատումների վերացում, պետութեան բացասում...

Բայց այս խնդիրները դուրս են ներկայ զբոսութեան սահմաններից: Այստեղ մեզ զբաղեցնողը յատկապէս ազգային պահանջներն են ու պետութեան էլ մօտենում ենք ազգային տեսակէտից, պետութեան մէջ մենք որոնում ենք եւ ուզում ենք դտնել ամենից առաջ Ազգի Հայրենիքը:

Արդ՝ կարո՞ղ են ազգերը դտնել դաշնակցային միութիւնների մէջ իրենց որոնածը — Ազգային Տուն, Հայրենիք:

Կարող են անտարակոյս: Դաշնակցելու սիստեմը, որ հնարաւորութիւն է տալիս կիրառել «ինքնորոշման» սկզբունքը ամենալայն չափերով, ազգային կեանքը ապահովելու լաւագոյն միջոցն է, իսկ փոքր ու տկար ազգերի համար յաճախ նաեւ միակ կարելին:

Ահա Հայ Ազգը, որ ազգայնօրէն ապրելու, ինքնահաստատուելու ու զարգանալու համար հրամայական պահանջ ունի ազգային պետութիւն, Հայրենիք կազմելու:

Ի՞նչպէս բաւարարի այդ պահանջը:

Հայութեան կէսը անջատուած է, պոկուած մայր-երկրից, փոչիացած է, ցրուած աշխարհի չորս կողմը: Պետութեան համար սա — լաւագոյն դէպքում — օժանդակիչ կամ պահեստի ոյժ է միայն, ոչ աւելին: Իբրեւ պետական գործօն տարրը մնում է երկրորդ մասը՝ մի միլիոն հայ մարդ, որ հայրենի հողի վրայ — Ախալցխեան գաշտում ու նրա չուրջը — պէտք է կառուցանի իր սեփական պետութեան հիմքը:

Փոքր է Հայաստանը, դուրկ հարստութիւններից, կտրուած հազարդարիցութեան մեծ ճանապարհներից, սեղմուած ու փակուած իր խստաշունչ լեռնաստանի մէջ:

Փոքր է թուով հայաստանցի հայը, աղքատ է, տգէտ, մխանգամային անվարժ պետական կեանքի ու պետական չինարարութեան:

Կարո՞ղ է սեփական պետութիւն կազմել այդպիսի մի թոյլ ժողովուրդ, այդպիսի մի անհամբոյր երկրում:

Պէտք է կարողանայ, հարկադրուած է կարողանալու, եթէ ուզում է ապրել:

Եւ իրականութիւնն այն է, որ կանգնել է արդէն այդ ճամբի վրայ, դրել է պետութեան

հիմնաքարը 1918 թ. Մայիս 28ին ու այսօր մենք ունենք Հայաստանի Խորհրդային Հանրապետութիւնը:

Բայց պետութի՞ւն է արդեօք այս հանրապետութիւնը:

Այո՛, պետութիւն է այն իմաստով, ինչ իմաստով պետութիւններ են Վիւրտեմբերգի Հանրապետութիւնը դերմանական Միութեան մէջ, Նեւչատէլ կանտոնը Զուիցերիական կոնֆեդերացիայի մէջ կամ Կալիֆորնիա ստէյտը Հիւսիսամերիկեան Միացեալ Նահանգների մէջ: Եւ աւելի ճիշդը՝ պետութիւն է այն իմաստով, ինչ իմաստով պետութիւններ են Վիկտորիան Աւստրալիական դաշնակցութեան մէջ, Օնտարիոն՝ կանադական ու Տրանսվալը՝ Հարաւ-աֆրիկեան դաշնակցութեան մէջ:

Ինչպէս Օնտարիոն կապուած է դաշնակցային կապերով կանադական միւս նահանգների հետ ու սրանց հետ միասին մտնում է Անգլիայի շուրջը խմբուած Միութեան մէջ, այնպէս էլ Հայաստանը կապուած է դաշնակցային սերտ կապերով անդրկովկասեան միւս հանրապետութիւնների — Վրաստանի ու Ադրբէջանի — հետ ու սրա՝ սրանց հետ միասին՝ մտնում է Ռուսաստանի շուրջը խմբուած Խորհրդային Միութեան մէջ(*):

(*) Այժմ Հայաստանը ուզղակի անդամ է Խորհրդային Միութեան:

Այս կէս–անկախ դրութիւնը կարո՞ղ է բաւարարել Հայաստանի պետականօրէն կազմակերպուելու պահանջը, — այն հասունացած պահանջը, որ քաղաքական հրապարակ է նետել ու մեծամեծ փորձանքներէ ենթարկել հայաստանցի հային: Կամ՝ վերադառնալով դրուած հարցի նախորդ ձեւին՝ կարո՞ղ է Խորհրդային Հայաստանը նկատուել իբրեւ հայ մարդու Ազգային Տունը, Հայրենիքը:

Կարող է, անշուշտ, եթէ ոչ ամբողջովին՝ գէթ շատ խոշոր չափերով:

Եւ աւելին, պետականօրէն ապրելու համար՝ քաղաքական այն կացութիւնը, որի մէջ դրուած է Խորհրդային Հայաստանը ոչ միայն բաւարար, այլ նաեւ՝ միակ հնարաւոր է:

Հայաստանի ծաւալը — նրա մեքանիքական զանգուածը — աշխարհագրական դիրքը, քաղաքակրթական աստիճանը, տնտեսական կարողութիւնները, ապա նաեւ պատմական անցեալն ու քաղաքական ներկայ վիճակը — այս հիմնական տուեալները այնքան աննպաստ են, որ թոյլ չեն տալիս կազմելու ինքնակալ պետութիւն, ինչպիսին է Ֆրանսիան, կամ համեստ Հոլանդիան, կամ շատ համեստ Նորվեգիան կամ նոյնիսկ նորածին, աւելի քան համեստ Ալբանիան: Հայաստանում գոյութիւն չունեն այն յատուկ պայմանները — ներքին ու արտաքին, — որոնք հնարին

են անուամ երկու ու կէս միլիոն ազգաբնակութիւն ունեցող Նորվեգիայի իրաւական — մասամբ էլ իրական — ինքնակալութիւնը: Գոյութիւն չունեն նոյնիսկ այն պայմանները կամ մի քանիսը այն պայմաններից, — որոնք հնարին են անուամ մի միլիոնից էլ պակաս ազգաբնակութիւն ունեցող, աղքատ ու կէս վայրենի Ալբանիայի՝ թէկուզ սոսկ անուանական անկախութիւնը:

Հայաստան չի կարող ապրել միայն սեփական ոյժերով՝ նա պէտք է իրենից դուրս որոնի օժանդակ ոյժեր, հաստատուն ու վստահելի նեցուկներ: Այսինքն՝ պէտք է դաշնակցի ուրիշ պետութիւնների հետ, որովհետեւ միայն տեւական ու սերտ դաշնակցութիւնն է, որ կարող է նկատուել հաստատուն նեցուկ. պատահական կապերն ու ժամանակաւոր, մասնակի համաձայնութիւնները ապահովութիւն չեն ներքուստ թոյլ մի պետութեան համար:

Ո՞ւմ հետ պիտի դաշնակցի Հայաստանը:

Բնականօրէն, իր անմիջական դրացիների՝ Վրաստանի ու Ադրբեջանի հետ, քանի որ սրանց հետ արդէն կապուած է աշխարհագրական ու տնտեսական չատ ոլորեղ կապերով — մասամբ իսկ պատմական անցեալով:

Հայաստան, Վրաստան, Ադրբեջան ու մի չարք աւելի փոքր ազգային–քաղաքական միաւորներ — Աբխազիա, Աջարիա, հարաւային Օսեթիա, Ջաքաթալ, մասամբ իսկ Դաղստան —

բնական դաշնակիցներ են սրանք՝ պետական մի մխութիւն կազմելու համար։

Այդպիսի մի միութիւն — Անդրկովկասեան դաշնակցական Խամկավար Հանրապետութեան անուան տակ — կազմուեց 1918 թ. սկզբներում, ռուսական Մեծ Յեղափոխութեան առաջին շրջանում։ Կազմուեց, խակոյն լուծուեց եւ, երեք տարի անցած, վերակազմուեց — արդէն բոլշեւիկեան դրօշակի տակ։

1918 թուականին միութիւնը քանդուեց, որովհետեւ կային ներքին անհամաձայնութիւններ ու կային դրսում չհաղթուած ոյժեր, որոնք խրախուսեցին, բորբոքեցին ու չհաղորդեցին այդ անհամաձայնութիւնները։

Դաշնակցութիւնը կազմող երեք պետութիւնների մէջ կային սահմանային չատ կնճռոտ վէճեր, կար հնուց սնուած հակառակութիւն, փոխադարձ անվստահութիւն, կասկած ու երկիւղ եւ ապա՝ արմատական տարբերութիւն արտաքին քաղաքականութեան վերաբերմամբ։

Եթէ Անդրկովկասի ժողովուրդները լինէին քաղաքականապէս մի քիչ աւելի հասունացած, եթէ մի փոքր փորձառութիւն ունենային պետական կեանքի, թերեւս դանէին մի ելք՝ ներքին վէճերը խաղաղութեամբ ու սեփական ոյժերով լուծելու համար։

Բայց այդ հասունութիւնն ու փորձառութիւն չունէին նրանք ու դաշնակցութիւնը քանդուեց,

որպէսզի հետագայում վերաչինուի արտաքին ոյժի ճնշման տակ։

Իրականութիւնն այն է, որ Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը — ոչ միայն ամէն մէկը առանձին վերցրած, այլեւ իրար հետ դաշնակցած — ի վիճակի չեն, ղէթ ներկայում, ինքնակալ պետական կեանքով ապրելու։ Սրանց մէուրիւնն եւս, իր հերթին, անհրաժեշտ կարիք ունի մի յենարան դառնալու իրենից դուրս, այսինքն՝ դաշնակցելու մի ուրիշ պետութեան կամ պետական խմբակցութեան հետ։

Ո՞ւմ հետ կարող է դաշնակցել Անդրկովկասը, իրրեւ քաղաքական ամբողջութիւն։

Թուրքիայի կամ Ռուսաստանի հետ։ Երկրի անցեալն ու ներկան, նրա աշխարհագրական, տնտեսական ու քաղաքական պայմանները անկարելի են անում որեւէ երրորդ դաշնակցութիւն, ինչպէս անկարելի են անում նաեւ ապրել Ռուսաստանի ու Թուրքիոյ արանքում, առանց յարելու մէկին կամ մէուսին։

Այս երկու հնարաւորութիւններից կամ անհրաժեշտութիւններից Անդրկովկասը նախընտրեց — մասամբ կամովին, մասամբ ակամայից — Ռուսաստանը ու մտաւ Մորհրդային Միութեան մէջ։

Այսպիսով, երեք կարճ տարիների ընթացքում, Հայաստանն արդէն անցաւ կազմակերպման մի շարք կայաններ. նախ մի անիշխա-

նական չրջան ապրեց — 1917 թուականի Նոյեմբեր–Դեկտեմբեր ու 1918 թուականի Յունուար ու Փետրուար ամիսներուն, — ապա Ռուսաստանէն անջատուած յայտարարեց իրեն՝ Անդրկովկասեան դաշնակցութիւնը, ապա մնաց մենակ՝ այդ դաշնակցութեան կազմալուծուելու պատճառով ու անուանօրէն անկախ պետութիւն կազմեց, ապա տեղի տուեց բոլշեւիկեան զրոհի առջեւ, փոխեց պետական ռեժիմը — խորհրդայնացաւ, — նորէն դաշնակցեց հարեւաններուն հետ, նորէն կապուեց Ռուսաստանի ու բոլոր խորհրդային երկիրներուն հետ...

Այս ելքը բնական էր, անխուսափելի ու անհրաժեշտ — միակ հնարին ելքն էր սա պետականօրէն կազմակերպուող Հայաստանի համար:

Ապա նաեւ բաւարար՝ չատ խոչոր չափերով:

Հայաստանի նման անբարեյաջող պայմաններուն մէջ գտնուող, Հայաստանի նման թոյլ ու անկազմակերպ մի երկիր չի կարող տանել պետականութեան ամբողջ բեռը միակն իր ուսերի վրայ — կ՚ընկնի կէս ճամբին՝ իր ուժերից վեր ծանրութեան տակ:

Դաշնակցութիւնը, իր վրայ է վերցնում բեռի մի մասը ու այսպիսով հնարին է անում տանել միւսը:

Տեսէք, արտաքին յարձակումների դէմ պաշտպանուելու համար Հայաստան հարկադրուած չէ պահել ուժերից վեր բանակ, զէնքի տակ

առնել ամբողջ երիտասարդութիւնը և բիւղջէի ե-
րեք քառորդը յատկացնել զինուորական նախա-
պարութեան. նա կարող է բաւականանալ չատ
փոքր բանակով, որովհետեւ վտանգի րոպէին իր
կողքին է դաշնակցութեան ամբողջ զօրքը: Մի-
պետական յարաբերութիւնների մէջ նա այլեւս
այն ոյժը չէ, որի խօսքը լսւում էր սոսկ քաղա-
քավարութեան համար — եթէ միայն լսւում էր
երբեւէ — եւ որին չի տրւում ոչ մի արժէք. այ-
սօր իր անունից խօսում է դաշնակցութիւնը եւ
խօսքը արժէքաւորւում է իր ամբողջ թափով՝ քա-
ղաքական, տնտեսական ու ռազմական: Եւրոպա-
յի, արեւելեան Ռուսաստանի ու Պարսկաստանի
հետ հաղորդակցելու հնարաւորութիւնը կախուած
չէ այլեւս Վրաստանի, Ադրբեջանի կամ Նախի-
ջեւանի քմահաճոյքից. Երեւան–Բաթում, Երե-
ւան–Ջուլֆա երկաթուղիները Հայաստանի տրա-
մադրութեան տակ են: Ապրանքների փոխանա-
կութիւնը, երկրից դուրս հանելն ու երկիր ներս
բերելը, չի կաշկանդուած մաքսային խեղդիչ
դծերով, Ծորհրդային Միութեան ամբողջ տարա-
ծութիւնը բաց չուկայ է Հայաստանի առջեւ:
Տնտեսապէս քայքայուած ու խոշոր եկամուտնե-
րից զուրկ Հայաստանը մինչեւ այսօր չի կարո-
ղացել — եւ դուցէ դեռ երկար ժամանակ չի կա-
րողանայ — հաւասարակշռել իր պետական բիւդ-
ջէն, ծածկել ելքը սեփական մուտքերով. դաշ-
նակցութիւնը օգնութեան է գալիս ու պակասի մի

մասը լրացնում է կենտրոնական դրամարկղից...

Հարկաւ, այս օդնութիւններն արւում են Հայաստանին ոչ ձրիաբար, իբրեւ մի նուէր իր պեղեկ աչքերին. Հայաստանն ինքն եւս պարտականութիւններ ունի կատարելու Միութեան հանդէպ եւ այս իսկ պատճառով իր պետական ազատութիւնը չատ դժալիօրէն սահմանափակուած է Միութեան դերագոյն իրաւասութիւններով: Միութեան բանակն ու դիւանագիտութիւնը — Հայաստանի սեփականութիւնը չէ, որ գործադրի իր ուզածի պէս: Միութեան անդամներից մէկն է միայն Հայաստան — ու չատ փոքրը, — հետեւապէս հարկադրուած է յարմարեցնել — յաճախ նաեւ ստորադրել — իր մասնակի պահանջները՝ Միութեան ընդհանուր պահանջներին ու չահերին:

Ինչ խօսք, որ սա կաշկանդում է Հայաստանի պետական ազատութիւնը: Բայց իրողութիւնն այն է — չատ տխուր իրողութիւն, հարկաւ, որ անկաշկանդ ազատութիւնը վեր է Հայաստանի թոյլ կարողութիւններից. Միութիւնից դուրս ոչ նրա բանակը՝ բանակ է, ոչ դիւանագիտութիւնը՝ դիւանագիտութիւն, — այսինքն՝ այն ոյժերը չեն սրանք, որոնց վրայ կենուած Հայաստան կարողանայ ապահովել իր գոյութիւնը ու պաչտպանել կենսական չահերը:

Միութիւնը չատ որոչակի սահմաններ է դնում Հայաստանի անկախութեան, բայց այսու-

հանդերձ — կամ այս իսկ պատճառով — հնարաւորութիւն է տալիս նրան ապրելու՝ պետականօրէն ու ազգայնօրէն:

Պետականօրէն՝ կէս–պատ, ազգայնօրէն՝ ամբողջ, — այնքան ազատ ու անկաշկանդ, որ հայաստանցի հայը կարող է ասել — առանց մեծ վերապահումների — որ ունի այսօր իր Հայրենիքը, իր Ազգային Տունը:

Հայաստանի հանրապետութիւնը խորհրդային է եւ իր պետական ռեժիմը — դասակարգային — աւելի ճիշդը՝ կուսակցական — դիկտատուրա է: Ամէն մի դիկտատուրա բռնութիւն է աւելի կամ պակաս խոշոր չափերով, ազատութիւնների կաշկանդում. իր էութիւնն է դա: Բայց պէտք չէ չափազանցել տուեալ ռեժիմը՝ դասակարգական դրութեան հետ եւ մէկի պակասութիւնները վերագրել միւսին. դասակարգութիւնը չի կապուած անհրաժեշտօրէն այս կամ այն ռեժիմին հետ. գերմանական, գուիցերիական, Հարաւ–Աֆրիկեան ու խորհրդային միութիւնները տարբեր ռեժիմներ ունեն, բայց բոլորն էլ դասակարգութիւններ են: Ապա պէտք չէ չափազանցել դասակարգային իրաւազրկութիւնները ու քաղաքական անազատութիւնները՝ ազգային անազատութիւնների հետ: Խորհրդային Հայաստանում սոցիալական այս կամ այն խմբակցութիւնը կարող է նեղուած ու ճնշուած լինել — եւ է իրօք, — բայց ազգը, իբրեւ մշակութային հաւաքակա–

նութիւն, դանդաղելու պատճառ չունի։ Խորհըրդային իրաւակարգի մասին կարելի է ունենալ չատ տարբեր կարծիքներ, սկսած ծայրայեղ բացասականից։ Բայց չի կարելի ժխտել, որ ազգային պահանջների ու իրաւունքների վերաբերմամբ այս իրաւակարգը ոչ միայն համբերատար, այլ եւ անվերապահօրէն բարեացակամ է։

Խորհրդային Հայաստանում պետական լեզուն — օրէնսդրութեան, դատավարութեան ու վարչութեան լեզուն, — դպրոցը — ամէն կարգի դպրոցը՝ վարից վեր, — մամուլը գրականութիւնը թատրոնը — բոլոր ազգային են։ Պետական բոլոր տրամադրելի միջոցները — նիւթական ու ոչ նիւթական — դրուած են ի սպաս ազգային մշակոյթի։ Ազատութեան այն սահմանափակումները, որոնք բնականօրէն ու անխուսափելիօրէն բխում են դաշնակցային կապերից ու մասնաւորապէս դասակարգային դիկտատուրայից, — սրանք չունեն ազգային բնոյթ. ազգը մնում է անկաշկանդ, աւելին՝ ազգը լայնօրէն օգտագործում է պետութեան բազմազան կարողութիւնները իր կեանքը ապահովելու, կարգաւորելու ու բարգաւաճելու համար։

Խորհրդային Հայաստանը — հայ ազգային պետութիւն է հայի Հայրենիքը։

Այն հանգամանքը, որ հանրապետութիւնը կապուած է դաշնակցական կապերով Խորհրդային Միութեան հետ, չի բացառում — ոչ իսկ

նսեմացնում — նրա ազգային բնոյթը: Դաշնակցել՝ չի նշանակում ձուլուել, կորցնել սեփական դէմքը. Զուիցերիական դաշնակցութեան մէջ գերմանական, ֆրանսիական ու իտալական կանտոնները ապրում են նոյն պետական յարկի տակ, բայց ամէն մէկը մշակում է անարդել իր սեփական ազգային մշակոյթը:

Ազգայնօրէն ապրելու համար՝ Հայ Ազգը պէտք է ունենայ իր պետութիւնը, իսկ Պետութիւնը ապահովելու համար՝ պէտք է դաշնակցի ուրիշ պետութիւնների հետ: Մաթեմաթիկայի լեզուով այս պայմանը կ'որակուէր իբրեւ անհրաժեշտ ու բաւարար:

Կանգ առի յատկապէս Հայաստանի Հանրապետութեան վրայ, որովհետեւ այս կարգի թոյլ պետութիւնների համար դաշնակցելը՝ ապրելու միակ ձեւն է: Պէտք չէ, սակայն, եզրակացնել, թէ աւելի զօրեղ պետութիւնները կարիք չունեն դաշնակցութիւններ կազմելու: Ռուսաստանը, Պրուսիան կամ Մեծն Բրիտանիան չատ զօրեղ պետութիւններ են, բայց սրանք էլ չրջապատում են իրենց դաշնակիցներով՝ աւելի եւս զօրեղ ու կենսունակ լինելու համար: Այժերը բազմապատկելու եւ, միւս կողմից, ապարդիւն վատնումները չիջ աղատ մնալու լաւագոյն միջոցն է դաշնակցելը, հաւաքական պետութիւններ կազմելը: Իսկ

ոյժերի անտեսութիւնը — գերադոյնն է կենսական խնդիրների չարքում եւ սրա մէջ մեծապէս չհագրդռուած են ամենից զօրեղներն անգամ:

Դաշնակցելու սիստեմը, աստիճանաբար զարգանալով ու ծաւալուելով, տանում է տրամաբանօրէն դէպի համամարդկային մի ընդհանուր միութիւն, մի համաշխարհային պետութիւն — հաւաքական կեանքի մի նոր ձեւի կազմակերպութիւն, առանց բանակների ու պատերազմների, առանց փոխադարձ կոտորածների, նուաճումների, թալանի ու աւերումների, դիւանագիտական խարդախութիւնների, քաղաքական ու տնտեսական բլոկադների...

Այս հեռանկարը — որքան էլ ուտոպիական թուի այսօրուայ իրականութեան դիմաց — մի լուսաւոր փարոս է, որ գծում է յառաջդիմութեան ուղիղ ճամբան՝ մթութեան մէջ խարխափող ու վատ կազմակերպութիւնից տառապող մարդկութեան առջեւ:

Համաշխարհային պետական դաշնակցութիւն — սա ուրիշ բան չէ, քան պետութիւնների բացառում, պետական բաժանումների ու սահմանազծերի վերացում:

Եւ այս հեռանկարի առջեւ Ադգը պատճառ չունի մտահոգուելու, իր ապագան վտանգուած նկատելու:

Այսօրուայ իրականութեան մէջ Ազգը հարկադրուած է կազմակերպուել պետականօրէն —

չի կարող ապրել առանց պետական կազմակերպութեան: Բայց սխալ կը լինէր եզրակացնել, թէ ուրեմն, Ազգն ու Պետութիւնը, ազգային կեանքն ու պետական կեանքը — անբաժանելի են միմեանցից, անկարելի՝ մէկը առանց միւսի: Սրանց սերտ կապակցութիւնը հետեւանք է միայն քաղաքական որոշ պայմանների, որոշ կացութեան: Տարբեր պայմանների մէջ կապը կարող է թուլանալ կամ իսպառ վերանալ, որովհետեւ ըստ էութեան տարբեր բնոյթի ու տարբեր արժէքների երեւոյթներ են Ազգն ու Պետութիւնը:

Ազգը դրական երեւոյթ է ընդհանրապէս ու անպայմանօրէն, մինչդեռ պետութիւնը — գաղափարի ներկայ իմաստով — բացասական երեւոյթ է ինքնըստինքեան, չարիք է, թէեւ անհրաժեշտ որոշ պայմանների մէջ՝ վատթար չարիքների առաջն առնելու համար: Ազգը՝ իբրեւ պատմա-մշակութային դաս ու մշակոյթի ղորձօն՝ պէտք է մարդկութեան միշտ, ամէն պարագաների մէջ, մինչդեռ Պետութիւնը պէտք է մինչ այն ժամանակ միայն, քանի դեռ չի դադուել ու չի իրականացել աւելի բարձր կարգի քաղաքական կազմակերպութիւն: Հոգեկան արժէքներ ստեղծագործելու համար չկան ու հեռանկարում էլ չեն պատկերանում ուրիշ հաւաքականութիւններ, որ կարողանային փոխարինել ազգերը, մինչդեռ արդէն այսօրուանից դժուար չէ նախա-

տեսել — թէկուզ հեռաւոր ապագայի համար — քաղաքական կեանքի կազմակերպութիւն՝ առանց պետութիւնների։

Այսօր, քանի դեռ դոյութիւն ունի պետական բաժանումների ու պետական հակամարտութիւնների դրութիւնը, ամէն մի ազգ հարկադրուած է իր սեփական պետութիւնը կազմելու, որովհետեւ այլ կերպ չի կարող ունենալ իր Տունը, իր Հայրենիքը։

Ապապետական ապագայում հայրենիքները — ազգային մշակոյթի օջախները — կարիք չեն ունենայ պետական մեքանիզմի՝ իրենց կենսատու կրակը միշտ վառ պահելու համար։

ՎԵՐՋ

Գին

Լիբանան 10 լ· ոսկի

Արտասահման 4 տոլար

Կեդրոնատեղի

Librairie HAMASKAïNE
10, Rue Hussein Beyhoum
Beyrouth — LIBAN

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ
ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ**

Պատուէր	507
Տպաքանակ	2000
Պրակ	23
Աւարտում	20–9–79

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՎԱՀԷ ՍԷԹԵԱՆ ՏՊԱՐԱՆ

PRINTED IN LEBANON — HAMASKAïNE W. SETHIAN PRESS

■ Ազգը — մշակոյթ է: Ազգի կորուստը — մի ուրոյն մշակոյթի ու ամենից առաջ մի ուրոյն լեզուի կորուստ է: Իսկ լեզուի կորուստը — գրականութեան կորուստ է, այսինքն՝ մտածելու, զգալու եւ արտայայտուելու մի յատուկ ձեւի կորուստ:

Կորցնելով այս կամ այն ազգութիւնը, մարդկութիւնը կորցնում է մշակութային տիպերից մէկը, մարդկութիւնը աղքատանում է:

■ Ազգերը գոյութիւն ունեն ու մշտական պայքարի մէջ են գոյութեան համար: Ամէն մարդ ինքը պատկանում է ո՛եւէ ազգի, ինքը անհատապէս պայքարի մէջ է, պայքարի առարկայ է ու ենթակայ, գործող ու գործի հետեւանքները կրող — ուզի թէ չուզի:

■ Ամէն մի ազգային միութիւն, ամէն օր ու շարունակ, ենթակայ է — աւելի կամ պակաս չափերով — երկու կարգի ազդեցութիւնների, երկու հակադիր, միմեանց հետ մրցող ոյժերի: Ազդեցութիւնների ու ոյժերի մի խումբ ձգտում է վերացնել կամ թուլացնել ազգային տարրերը, ապազգայնացնել ազգը. մի ուրիշ խումբ՝ պաշտպանել, հաստատել, զօրեղացնել ազգային անհատականութիւնը...